Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

- պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
- ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

- **Share** — copy and redistribute the material in any medium or format
- **Adapt** — remix, transform, and build upon the material

2518

Գործնական
քերականութիւն
հայերէն. լեզուի

491.99-5
Գ - 34

Կ Պոլիս
1890

2010

491.99-5
28
Գ-34

# ԳՈՐԾՆԱԿԱՆ
# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՅՕՐԻՆԵԱՑ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

ՅԱՒԵԼԵԱԼ ԵՒ ՍՐԲԱԳՐԵԱԼ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



7/XI—1922
Публичная Библиотека имени А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
(14660-57)
Հ0017-59

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՎԱՖԵԱՆ

1890

36477-Ա.Ճ.

# ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՎԱՖԵԱՆ

ՉԻՄՊԻԼԼԻ-ԽԱՆ ՎԱՐԻ ՅԱՐԿ ԹԻՒ 22

Եւ

*Գրավաճառ Չագմագճըլար փողոց թիւ 20*



Ս. Սահակ եւ Թարգմանիչ վարդապետք

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

## ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Այս Քերականութեան ընթացքը տարբեր է մինչեւ ցարդ հրատարակեալ քերականութեանց ընթացքէն: Սորա գլխաւոր տարբերութիւնն, եւ, ինչպէս կը յուսանք, առաւելութիւնն եւս զոր պիտի ունենայ, գէթ ի մասին գործնական կրթութեան, յայնմ է, որ այս քերականութիւն կը պարունակէ գործնական հրահանգներ: Ի սմա աշակերտն այն օրէն որ կը սկսի անունը եւ բայը ճանչնալ, պիտի սկսի նաեւ վարժիլ զանոնք ի գործ ածել:

Դարձեալ յընթացս այս Քերականութեան աշակերտն ոչ թէ, որպէս մինչեւ ցարդ գրեթէ առհասարակ լինէր, պիտի յոգնի ի միտ առնուլ, միանգամայն եւ տեսականապէս միայն, իւրաքանչիւր մասին բանի այլ եւ այլ ձեւերը եւ բոլոր գիտելիքը, եւ Համաձայնութեան կանոններուն երկայն շարքը, կամ թէ ըսենք, քերականական ուսման երկայն ճանապարհն պիտի երթայ ծայր ի ծայր վազելով առանց զկայ եւ ոգի առնլոյ ուրեք, այլ իւրաքանչիւր հրահանգ պիտի լինի աշակերտին, այն երկայն ընթացից մէջ, իբրեւ մէն մի օթեւան, թէ՛ շունչ եւ հանգիստ առնուլ տալու նմա, եւ թէ՛ ստէպ դառնալով նայելու կարճ ճանապարհին վրայ զոր ըրաւ, եւ աւելի լաւ ճանչնալու զայն քան զոր ճանչցած էր

երբ կ'անցնէր առաջին անգամ: Զոր օրինակ, քերականութեան բոլորովին անտեղեակ աշակերտն հօս ոչ թէ ի բերան քան թէ ի միտ պիտի առնու անուանց բոլոր հոլովները եւ հոլովումներն միանգամայն եւ թուաքաղորէն, այլ, երբ ուղղականը կը սորվի, պիտի չյոգնի հասկնալ միանգամայն սեռականը, տրականը, բացառականը, ընդհականական յետ ուսանելոյ եւ լաւ ի միտ առնլոյ նոցա մին եւ ընելու նորա գործնական կրթութիւնը, պիտի անցնի միւսին: Այսպէս քերականութիւնը դադրելով ի լինելոյ խառն եւ տեսական, լինի լաւ ուսանելի տակաւ եւ գործնականապէս:

Որովհետեւ այս քերականութիւնը մասնաւոր կերպով գրաւած է շատերուն ուշադրութիւնը եւ բարւոք ընդունելութիւն գտած է յաջողակ ուսուցիչներէ, կը յաւելունք այս իններորդ եւ նոր տպագրութիւնը, եւ մեր այս աշխատութեան գործնական օգուտը կը համարինք լրումն մեր փափաքանաց:

ՀԵՂԻՆԱԿՆ

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

## ԴԱՍ Ա.

### ԼԵԶՈՒ, ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

ՀԱՐՑՈՒՄՆ. Ի՞նչ է լեզու:

ՊԱՏԱՍԽԱՆ. Լեզու կ'ըսուին այն արտաքին նշանները որով մարդիկ կը յայտնեն իրենց գաղափարները, խորհուրդները և զգացումները:

Հ. Ո՞րք են այս արտաքին նշաններուն գլխաւորներն:

Պ. Այս արտաքին նշաններուն գլխաւորներն են ձայն և գիր:

Հ. Ի՞նչ կը կոչուի ձայնիւ կամ գրով բացատրութիւնը:

Պ. Ձայնիւ կամ գրով բացատրութիւնը կը կոչուի խօսք:

Հ. Ի՞նչ բաներէ կը կազմուի խօսքը:

Պ. Ամէն խօսք կը կազմուի բառերէ. զոր օրինակ՝ Ամէն մարդ կը սիրէ երջանկութիւն, բայց շատ սակաւ կը գտնեն զայն. այս խօսքը կազմուած է ինը բառէ, որ են՝ ամէն, մարդ, սիրել, երջանկութիւն, բայց, շատ, սակաւ, գտնել, զայն:

Չ. Ի՞նչպէս խօսք կը կազմեն բառերը։

Պ. Բառերը խօսքի մէջ օրինօք իրարու քով գալով կը կազմեն խօսքը։

Եթէ այն օրինաց համաձայն չկազմուին կամ չշարուին, նոցա իրարու քով գալով բան չհասկցուիր։ Այս օրէնքը լեզուի օրէնքն է։

Չ. Ի՞նչ է քերականութիւն։

Պ. Քերականութիւնն այն գիտութիւնը կամ արուեստն է որ կ'ուսուցանէ այս օրինաց կանոնները։ Այսինքն՝ քերականութեամբ կ'ուսանինք թէ բառերն ինչպէս շարուելու են որ կազմուի իմաստ կամ նշանակութիւն ունեցող խօսք։

Չ. Քանի՞ տեսակի կը վերածուին բառերը։

Պ. Լեզուի մէջ հազարաւոր բառեր կը գտնուին, բայց ամէնքն ինը տեսակի կը վերածուին։

Չ. Ի՞նչ կը կոչուին այս ինը տեսակ բառք։

Պ. Այս ինը տեսակ բառք կ'ըսուին Մասունք բանի, և են՝ Անուն կամ Գոյական, Ածական, Բայ, Յօդ, Դերանուն, Նախադրութիւն, Մակբայ, Շաղկապ, Միջարկութիւն։

2002



# ԴԱՍ Բ.

## ԱՆՈՒՆ ԵՒ ԱԾԱԿԱՆ

---

### ԱՆՈՒՆ

Չ. Ի՞նչ է անուն։

Պ. Անուն կամ գոյական կ'ըսուին այն տեսակ բառեր որ իրերու անուններ են. ինչպէս՝ ծառ, ծաղիկ, շուն, մարդ, ևն։ Անուններէն ոմանք յատուկ կ'ըսուին, այսինքն մարդոց և տեղերու անուններ, ինչպէս՝ Մովսէս, Երուսաղէմ։ Ասոնք գլխագրով կը գրուին։

Չ. Քանի՞ բան ունի անունը։

Պ. Անունն ունի 1. Հոլով և 2. Թիւ։

Չ. Ի՞նչ է հոլովն և քանի՞ է։

Պ. Հոլովն անուան մը վերջաւորութեան փոփոխումն է, և վեց է. Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական և Գործիական։

Չ. Ի՞նչ է թիւն և քանի՞ է։

Պ. Թիւն անուան մի կամ աւելի իր ցուցնելն է, և երկու է, եզակի և յոգնակի։ Զոր օրինակ՝ մարդ եզակի է, մարդեր՝ յոգնակի։

Այն անուններն որոց եզակին չգործածուիր՝ անեզական կ'ըսուին, ինչպէս՝ երկինք, դժոխք, կամք, միտք, ևն։

Չ. Ի՞նչպէս կը հոլովին հայերէն անունները։

Պ. Հայերէն անուններուն մի մասը կը հոլովի, բաց ուղղականէն և հայցականէն, միւս հոլովներուն մէջ առնլով վերջը գիր մը կամ վանկ մը, զոր օրինակ.

## Ա. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | Բան. | Բան-ք. | Քաղաք. | Քաղաք-ք. |
| Սեռ. | Բան-ի. | Բան-ից. | Քաղաք-ի. | Քաղաք-աց. |
| Տրակ. | Բան-ի. | Բան-ից. | Քաղաք-ի. | Քաղաք-աց. |
| Հայց. | զԲան. | զԲան-ս. | զՔաղաք. | զՔաղաք-ս. |
| Բաց. | 'ի Բան-է. | 'ի Բան-ից. | 'ի Քաղաք-է. | 'ի Քաղաք-աց. |
| Գործ. | Բան-իւ. | Բան-իւք. | Քաղաք-աւ. | Քաղաք-օք. |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ այս հոլովման վրայ։

Պ. Այս հոլովման եզակի գործիականն է, ոմանց՝ իւ, և ոմանց՝ աւ։

Իսկ յոգնակի սեռականը, տրականը և բացառականը, ոմանց՝ ից, և ոմանց՝ աց. գործիականը՝ ոմանց իւք, և ոմանց՝ օք։

Պէտք է գիտնալ 2. որ ամէն անուան հայցականին վրայ սովորաբար կը դրուի (զ) նախդիրը, և բացառականին վրայ՝ ('ի) նախդիրը։

Պէտք է գիտնալ 3. որ ք գիրը յոգնակի ուղղականի նշանն է, ս գիրն՝ յոգնակի հայցականի։

## Բ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Գետ. | Գետ-ք. |
| Ս. | Գետ-ոյ. | Գետ-ոց. |
| Տ. | Գետ-ոյ. | Գետ-ոց. |
| Հ. | զԳետ | զԳետ-ս. |
| Բ. | 'ի Գետ-ոյ. | 'ի Գետ-ոց. |
| Գ. | Գետ-ով. | Գետ-ովք. |

## Գ. ՀՈԼՈՎՈՒՄ

| Եզակի | Յոգնակի |
|---|---|
| Ծով. | Ծով-ք. |
| Ծով-ու. | Ծով-ուց. |
| Ծով-ու. | Ծով-ուց. |
| զԾով. | զԾով-ս. |
| 'ի Ծով-է. | 'ի Ծով-ուց. |
| Ծով-ու. | Ծով-ուք. |



Հ. Ի՞նչ գիտելիք կայ Գ. Հոլովման վրայ։

Պ. Գ. Հոլովման անուններէն ոմանց բացառականը կը լինի ուէ, զոր օրինակ՝ զարդ, 'ի զարդ-ուէ։

## Դ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | | Եզակի |
|---|---|---|---|
| Ո. | Մակար. | Ո. | Հռիփսիմէ. |
| Ս. | Մակար-այ. | Ս. | Հռիփսիմ-եայ. |
| Տ. | Մակար-այ. | Տ. | Հռիփսիմ-եայ. |
| Հ. | զՄակար. | Հ. | զՀռիփսիմէ. |
| Բ. | 'ի Մակար-այ. | Բ. | 'ի Հռիփսիմ-եայ. |
| Գ. | Մակար-աւ. | Գ. | Հռիփսիմ-եաւ. |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ այս հոլովման վրայ։

Պ. Այս հոլովման տակ կ'երթան յատուկ անուններ, այսինքն՝ մարդոց կամ տեղերու անուններ, որոց յոգնակին ընդհանրապէս չգործածուիր։

---

## ԱԾԱԿԱՆ

Հ. Ի՞նչ է ածական։

Պ. Ածական կ'ըսուին այն անունները որ իրի մը յատկութիւնները, այսինքն՝ անոր որպիսութիւնը կը ցուցնեն. զոր օրինակ՝ բարձր (ծառ), անուշահոտ (ծաղիկ), կատաղի (շուն), կենդանի (մարդ)։

### 1. Հրահանգ

Աշակերտք հետևեալ անուններուն մէջ գոյականը և ածականը որոշեն։

Ընծայ, ժամանակ, նշան, գործ, մեծ, քաջ, հողմ, մեղմ (կամաց), մարդ, տղայ, չար, զգօն (խոհեմ), կարդ.

ձագ, հող, լի, ունայն (պօշ), հաց, նոր, հոտ, հօտ (սիւրիւ), լայն, նեղ, ոչխար, արջառ (էօքիւզ, ինէկ), հրաման, դատարկ, հրապարակ, ամբոխ, աղքատ, թըշուառ, աղտ, երկաթ, արծաթ, զգեստ, զարդ, Գնէլ, Տիրան, Միհրան, զոհ, հաճոյ, տգեղ, կանաչ, յօդ (կապ), ազգ, զօրաւոր, տկար, ժամ, ծառ, արդար, հեզ, ցեղ, քահանայ, մահ, ծեր, լեզու, թաւ (մաղլը), չքեղ, վատ, աւազան, խրատ, Արամ, Վահան, Գայիանէ, Եսայի, ծայր, իր, ուս, ուխտ, գանձ, զօր, ճրագ, լուսաւոր, աղօտ, պայծառ, պատերազմ, գայլ (գուրթ), գեղ, որթ (տանա), որթ (ասմա), սան (կազան), սան (աշակերտ), փող (պօրու), փող (պարա), աղօթք, խօսք, միտք, պարտք, կամք, դժոխք, մեղք:

2. Հրահանգ

Աշակերտք հոլովեն վերի անունները:

# ԴԱՍ Գ.

## ԲԱՅ

Հ. Ի՞նչ է բայ:

Պ. Բայ կ'ըսուին այն բառերը որ բան մը ընել կամ բան մը լինել կը ցուցնեն, ինչպէս՝ գրել, կարդալ, քալել, ննջել, որ բան մը ընել կը ցուցնեն, և մեռնիլ, սեւնալ, զօրանալ, որ բան մը լինել կը ցուցնեն:

Հ. Քանի՞ բան ունի բայը:

Պ. Բայն ունի եղանակ, ժամանակ, դէմք և թիւ:

Հ. Քանի՞ է եղանակը:

Պ. Եղանակը չորս է՝ սահմանական, հրամայական, ստորադասական և աներեւոյթ:



Հ. Քանի՞ է ժամանակը:

Պ. Ժամանակը բուն երեք է՝ ներկայ, անցեալ և ապառնի: Ներկան կը ցուցնէ այն որ հիմա է, ինչպէս կը գրեմ (կոր). Անցեալը կը ցուցնէ այն որ արդէն եղաւ, ինչպէս՝ գրեցի. Ապառնին կը ցուցնէ այն որ դեռ պիտի լինի, ինչպէս՝ պիտի գրեմ:

Անցեալը կրկին է, անկատար անցեալ և կատարեալ անցեալ: Կը գրէի (կոր)՝ անկատար անցեալ է. Գրեցի՝ կատարեալ անցեալ:

Դարձեալ ժամանակները երկու տեսակ են, պարզ և բաղադրեալ: Պարզ ժամանակը մի է, բաղադրեալն ուրիշ (Եմ) բայով կը շինուի: Զոր օրինակ սիրեմ, սիրեցի, պարզ են. սիրեալ եմ, սիրեալ էի, սիրեալ իցեմ բաղադրեալ են:

Հ. Քանի՞ է դէմքը:

Պ. Դէմքը երեք է, առաջին, երկրորդ և երրորդ: Ես՝ առաջին դէմք է, Դու՝ երկրորդ, Նա (այն)՝ երրորդ:

Հ. Քանի՞ է թիւը:

Պ. Թիւը երկու է, եզակի, որ կը ցուցնէ մի միայն գործող, ինչպէս՝ (կը) սիրեմ, (կը) սիրես, (կը) սիրէ, և յոգնակի որ կը ցուցնէ աւելի գործող, ինչպէս՝ (կը) սիրենք, (կը) սիրէք, (կը) սիրեն:

Հ. Քանի՞ տեսակ են բայերը:

Պ. Բայերը երկու տեսակ են՝ գոյական կամ էական բայ, և ածական բայ: Էական բայն է Եմ բայը. ուրիշ բոլոր բայերն ածական բայ են:

Հ. Ի՞նչպէս կը խոնարհի էական բայը:

Պ. Էական բայն այսպէս կը խոնարհի:

Սահմանական եղանակ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ներկայ ժամանակ. | Եմ, ես, է. | Եմք, էք, են: |
| | Եմ, էս, է, էն: | |

Անկատար անցեալ. Էի, էիր, էր. Էաք, էիք, էին. Չէի, չէիր, եւն։

Կատարեալ անցեալ. Եղէ, եղեր, եղեւ. Եղաք, եղէք, եղեն. Եղայ, եւն։

Ապառնի. Եղէց, եղիցիս, եղիցի. Եղիցուք, եղիջիք, եղիցին. Պիտի ըլլամ, եւն։

Հրամայական եղանակ

Եզ. Լեր, մի լինիր. Եղիր, մի ըլլար.
Յոգ. Լերուք, մի լինիք. Եղէք, մի ըլլաք։

Ստորադասական եղանակ

Եզ. Իցեմ, իցես, իցէ. Եմ կամ ըլլամ, ըլլաս, եւն.
Յոգ. Իցեմք, իցէք, իցեն։

Անորոշ դերբայ

| Աներեւոյթ | Անց. ընդուն. | Ապ. ընդուն. |
| --- | --- | --- |
| Լինել, ըլլալ. | Լեալ, եղեալ, եղած. | Լինելոց, ըլլալու։ |

Բաղադրեալ ժամանակներ

Յարակ. Եղեալ եմ, եղեալ ես, եւն. Եղած եմ, եւն.
Գերակ. Եղեալ էի, եղեալ էիր, եւն. Եղած էի, եւն.
Ստ. անց. Եղեալ իցեմ, եղեալ իցես, եւն. Եղած եմ, կամ եղած ըլլամ, եւն.
Ներկ. ապ. Լինելոց եմ, լինելոց ես, եւն. Պիտի ըլլամ, պիտի ըլլաս, եւն.
Անկա. ապ. Լինելոց էի, լինելոց էիր, եւն. Պիտի ըլլայի
Ստոր. ապ. Լինելոց իցեմ, լինելոց իցես, եւն. Պիտի ըլլամ, եւայլն։



# ԴԱՍ Դ.

## ԼՈՒԾՈՒՄ ԵՒ ՅՕԴ

## ԼՈՒԾՈՒՄ

Հ. Ի՞նչ է նախադասութիւն։

Պ. Նախադասութիւն կ'ըսուի խօսք մը որուն մէջ դիմաւոր էական բայ, տէր բային եւ ստորոգելի կայ։ Բանը մեծ է, նախադասութիւն է. է՝ դիմաւոր էական բայ է, բանը՝ տէր բային է, մեծ՝ ստորոգելի է։

Հ. Ի՞նչ է դիմաւոր եւ անդէմ բայ։

Պ. Բային մը այն ժամանակները որ եզակի եւ յոգնակի երեք դէմքը կը ցուցնեն՝ դիմաւոր կ'ըսուին. այսպէս են ներկայ, անկատար, կատարեալ, ապառնի ժամանակները, եւ հրամայականն ու ստորադասականը. իսկ անորոշ դերբայը, այսինքն, աներեւոյթը եւ անցեալ եւ ապառնի ընդունելութիւնները որ դէմք չեն ցուցներ՝ անդէմ են։

Հ. Նախադասութեան մէջ, բայը, տէր բային եւ ստորոգելին ի՞նչպէս կը գտնուին։

Պ. Բայը միշտ յայտնի է, որ է եմ բայը։ Տէր բային ո՞վ կամ ի՞նչ հարցմամբ կը գտնուի։ Ստորոգելին ինչպէ՞ս, որպիսի՞ հարցմամբ։ Յ. Հրահանգին առաջին խօսքին կամ նախադասութեան մէջ, բանը մեծ է, այս հարցումներն ընենք։ Է. — ո՞վ կամ ի՞նչ է. — բանը է. — Բանը ինչպիսի՞ է. — մեծ է։ Ապա բանը տէր բային է եւ մեծ՝ ստորոգելի է բանին։

Այսպէս պէտք է լուծել ամէն նախադասութիւն։ Տէր բային գրեթէ միշտ գոյական է, այսինքն, անձ մը կամ իր մը։ Ստորոգելին եւս գրեթէ միշտ ածական է։

## ՅՕԴ

Հ. Ի՞նչ է յօդ ։

Պ. Յօդ կը կոչուի ն գիրը՝ հին լեզուին կամ գրաբարին մէջ, իսկ արդի լեզուին կամ աշխարհաբարին մէջ ն կամ ը գիրը․ ինչպէս , աշխարհաբար՝ տունը , կինը․ գրաբար՝ տունն , կինն ։

Հ. Ո՞ւր կը դրուի յօդ ։

Պ. Յօդը թէ գրաբարին և թէ աշխարհաբարին մէջ կը դրուի անուան ծայրը ։

Հ. Բառ մը գրաբարին մէջ ե՞րբ յօդ չառնուր ։

Պ. 1. Երբ անուն մը սեռ կամ տեսակ կը ցուցնէ , գրաբարին մէջ յօդ չառնուր , աշխարհաբարին մէջ՝ կ՚առնու ։ Անուն մը սեռ կը ցուցնէ , երբ ամէն բառը զօրութեամբ կ՚իմացուի , զոր օրինակ՝ Բանտը մթին է․ Շունը հաւատարիմ է․ Ձին արագ է․ Մարդը մահկանացու է , կը նշանակեն՝ ամէն բանտ , ամէն շուն , ամէն ձի , ամէն մարդ․ ուստի այս խօսքերուն մէջ՝ Բանտ , Շուն , Ձի , Մարդ , սեռ կը ցուցնեն , ուստի և գրաբարին մէջ յօդ չեն առնուր , թէպէտ աշխարհաբարին մէջ կ՚առնուն , զոր օրինակ․

| | |
|---|---|
| Բանտը մթին է․ | Մթին է բանտ |
| Շունը հաւատարիմ է․ | Հաւատարիմ է շուն |
| Մարդը մահկանացու է․ | Մահկանացու է մարդ |
| Առաքինութիւնը սիրելի է․ | Սիրելի է առաքինութիւն |

2. Երբ անուամբ նշանակուած իրը բնութեան մէջ մէկ է , նոյնպէս գրաբարին մէջ յօդ չառնուր , բայց աշխարհաբարին մէջ՝ կ՚առնու ։ Աստուած բարի է․ Արեգակը լուսատու է․ Լուսինն աղօտ է․ Երկիրը գնդաձեւ է , խօսքերուն մէջ՝ Աստուած , Արեգակ , Լուսին , Երկիր , որ միակ առարկաներ են , գրաբարին մէջ յօդ չեն առնուր , զոր օրինակ․



| | |
|---|---|
| Աստուած բարի է․ | Բարի է Աստուած |
| Արեգակը լուսատու է․ | Լուսատու է արեգակն |
| Երկիրը գնդաձեւ է․ | Գնդաձեւ է երկիր |
| Լուսինն աղօտ է․ | Աղօտ է լուսին |

### 3. Հրահանգ (*)

Բանտը մթին է․ Լուսինն աղօտ է․ Ձիւնը թանձր է․ Անձրեւը լոյծ է․ Շունը հաւատարիմ է․ Ձին արագ է․ Երկիրը գնդաձեւ է․ Ծովն ընդարձակ է․ Մարդը մահկանացու է․ Ջուրը պաղ է․ Օդը թեթեւ է․ Առաքինութիւնը սիրելի է․ Արեգակը լուսատու է․ Աստուած բարի է․ Հոգին անմահ է․ Մարմինը նիւթեղէն է․ Քարը կարծր է․ Ցամաքը պինդ է․ Մելանը սեւ է․ Ձիւնը ճերմակ է․ Խոտը կանանչ է․ Ցակինթը կարմիր է․ Երկինքը կապուտ է․ Անիւը կլոր է․ Խաղողը քաղցր է․ Ագռաւը թթու է․ Թռչունը թեւաւոր է․ Ձուկը թեփոտ է․ Ոչխարը չորս ոտքով է․ Հաւը երկու ոտքով է․ Առիւծը հպարտ է․ Վագրը անգութ է․ Որդը գարշելի է․ Նապաստակը շուտ վազող է․ Եղջերը դիւրաւ կոտրող է․ Աղիւսը փռան մէջ եփած է․ Աստուած վարձատրող է․ Շնորհքը ձրի է ։

| | |
|---|---|
| Պաղ , ցուրտ | Ճերմակ , սպիտակ |
| Մելան , թանաք | Կանանչ , կանաչ |
| Սեւ , սեաւ | Կապուտ , կապոյտ |

---

(*) Այս հրահանգին մէջ այն բառերը որ ստորեւ դրուած բառերուն մէջ չկան՝ գրաբարին հետ նոյն են ։

Աշակերտը թող վերի հրահանգը դարձունէ գրաբարի , ստորոգելին բայէն առաջ , եւ տէր բային յետոյ դնելով ։ Թող աշակերտք չմոռնան այս կանոնը , այսինքն՝ ստորոգելին առաջ դնել․ այս կերպը գրաբարին մէջ սովորական եւ դիւրին է ։

Աշակերտք կրնան այս հրահանգին ամէն խօսքը (նախադասութիւնը) վերի լուծման կանոնին համեմատ լուծել ։

| | |
|---|---|
| Կլոր , բոլորակ | Գարշելի , զազիր |
| Թեփոտ , թեփամորթ | Շուտ վազող , արագոտն |
| Ձուկ , ձուկն | Եղէգ , եղէգն |
| Չորս ոտքով , չորքոտանի | Դիւրաւ կոտրող , դիւրաբեկ |
| Երկու ոտքով , երկոտանի | Փռան մէջ եփած , թրծուն |
| Անգութ , անագորոյն | Վարձատրող , պարգեւատու |
| Որդ , որդն | Շնորհք , շնորհք |

## ԴԱՍ Ե.

*(Նախընթաց դասին շարունակութիւնը)*

### ՏԷՐ ԲԱՅԻ ԵՒ ՅՈԴ

### ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Գրաբարին մէջ անեզական տէր բայիներուն ի՞նչ բայ կը դրուի։

Պ. Անեզական տէր բայիներուն կը դրուի յոգնակի բայ։

| | |
|---|---|
| Երկինքը բարձր է . | Բարձր են երկինք |
| Աղօթքը զօրաւոր է . | Հզօր են աղօթք |
| Ապարանքը (պալատը) փառաւոր է . | Շքեղ են ապարանք |

Հ. Բայը եզակի՞ թէ յոգնակի կը դրուի, երբ երկու կամ աւելի եզակի տէր բայիներ կան։

Պ. Երբ երկու կամ աւելի եզակի տէր բայիներ կան բայը նոյնպէս կը դրուի յոգնակի։

Շոգին և ծուխը թեթեւ են. Թեթեւ են [illegible] և ծուխ
Քարն ու երկաթը ծանր են. Ծանր են քար և երկաթ

---



### ՅՈԴ

Հ. Վերը (Դաս Դ.) ըսիր թէ, երբ անուն մը կը ցուցնէ սեռ կամ տեսակ, յօդ (ն գիրը) չառնուր. ապա ե՞րբ անուն մը կ'առնու յօդ գրաբարին մէջ։

Պ. Երբ անուն մը կը ցուցնէ ոչ թէ սեռ, այլ որոշեալ անհատ կամ անհատներ, այն ատեն կ'առնու յօդ գրաբարին մէջ։ Անուն մը որոշեալ անհատ ցուցած կ'ըսուի, երբ կը նշանակէ ոչ թէ ամէն, այլ այս ինչ, այս անուն. զոր օրինակ, Աստղերը լուսատու են, խօսքին մէջ, աստղերը բառով կ'իմացուի ամէն աստղ. բայց՝ դուռները բաց էին, ճամբաները նեղ են, դատաւորն անաչառ է, խօսքերուն մէջ, դուռները, ճամբաները, դատաւորը ըսելով՝ չհասկցուիր ամէն դուռ, ամէն ճամբայ, ամէն դատաւոր, այլ՝ կը նշանակէ այս ինչ դուռները, այս ինչ ճամբաները, այս անուն դատաւորը։

| Սեռ. ցուցնող | Որոշեալ անհատ ցուցնող |
|---|---|
| Օդը բարակ է , Նուրբ է օդ | Օդն ապականած է , Ապականեալ է օդն |
| Ջուրը վազուն է , Հոսանուտ է ջուր | Ջուրը պղտոր է , Պղտոր է ջուրն |
| Ձին չորքոտանի է , Չորքոտանի է ձի | Ձին կաղ է , Կաղ է ձին |

Այս և նախընթաց դասին կանոններուն համեմատ աշակերտք գրաբարի դարձունեն հետեւեալ հրահանգները։

#### 4. Հրահանգ

Երկինքը բարձր է. Աստղերը լուսատու են. Դուռները բաց էին. Ճամբաները նեղ են. Փողոցները շիտակ են. Ապակին ջինջ է. Ջուրը յստակ է. Աղբիւրն առատ է. Սովը սաստիկ է. Հիւանդութիւնը ծանր է.

Կրակն այրող է. Դատաւորն անաչառ է. Իշխանը խիստ է. Պալատը շքեղ է. Շէնքերը փառաւոր են. Պարտէզը գեղեցիկ է. Ժողովուրդը շատ է. Զինուորները քիչուոր են. Մարդը հարուստ է. Աստուած ստեղծող է. Հրեշտակները հոգի են. Սատանաները չար են. Դրախտը երանաւէտ է. Տղաք անմեղ են. Իմաստութիւնը յարգի է. Գիտութիւններն օգտակար են. Եզը, ձին և էշը պիտանի են. Որդիները ժառանգ են. Ծառաներն հնազանդ ըլլան. Թագաւորն յաղթող է. Զօրավարը քաջ է. Զինուորներն հաւատարիմ են. Առիւծը զօրաւոր է. Գետինը խոնաւ է. Փայտը չոր էր. Հիւանդութիւնը մահացու է. Բեռը ծանր է. Զգոյշ եղիք. Վստահ եղիր. Ժողովուրդն աղքատ է. Իշխաններն հարուստ են. Մարդը ո՞ր է. Անոնք ո՞վ են. Տղան ո՞վ է. Ուսումն օգտակար է. Մոլութիւնն ատելի է. Աղքատներն հարուստ եղան. Պատմութիւնը ճշմարիտ է. Վկայութիւնները սուտ են. Ճամբան երկայն է. Ժամանակը կարճ է։

| | |
|---|---|
| Աստղ, աստղ, Յգ. աստեղք | Մարդ, այր |
| Դուռ, դուռն, Յգ. դրունք | Հարուստ, ճոխ, մեծատուն |
| Ճամբայ, ճանապարհ | Ստեղծող, արարիչ |
| Շիտակ, ուղիղ (ուղիղ) | Սատանայ, դեւ |
| Հիւանդութիւն, ախտ | Տղայ, մանուկ, Յգ. մանկունք |
| Կրակ, հուր | Ցարգի, պատուական |
| Այրող, կիզիչ | Եզ, եզն, Յգ. եզինք |
| Պալատ, ապարանք | Զօրաւոր, հզօր |
| Շէնք, շինուած, Յգ. շինուածք | Բեռ, բեռն, Յգ. բեռինք |
| Փառաւոր, հոյակապ | Անոնք, նոքա |
| Շատ, բազում | Ուսում, ուսումն |
| Քիչուոր, սակաւ | Մոլութիւն, յոռութիւն |



# ԼՈՒԾՈՒՄ

Բաց են դրունքն. Են՝ էակ. բայ. սահմ. ներկ. յոգ. գ. դէմք. — Ո՞վ են. — Դուռները, Դրունքն. Դրունքն տէր բային է Են ին. այս բառին՝ գիրը յոգ. է, վասն զի դրունները հոս ոչ թէ մէկ դուռ կը նշանակէ, այլ՝ այս ինչ որոշեալ դուռները։ — Դուռները ինչպէ՞ս են. — Բաց են. Բաց՝ ածական, ստորոգելի է Դրունքին։

## 5. Հրահանգ

Գրագիրը շուտ գրող է. Եզը, ոչխարը և այծը եղջերաւոր են. Պատմուճանը ծիրանի է. Բնակիչները սեւ են. Քաջ եղիք. Հնազանդ եղիր. Շռայլ մի՛ ըլլար. Հաւատարիմ ըլլայ. Զգոյշ եղիք. Եղեւինը բարձր է. Եղէգը դիւրաբեկ է. Տօսախը ցած է. Ձիւնն ու եղեամը ճերմակ են. Գետինը սահուն (խոյղան) է. Խեղճ եմ. Ողորմելի է. Երանելի ես. Նապաստակը շուտ քալող է. Ապերախտ մ'ըլլար. Մարդը բարերար է. Երամակը (հօտերն) մեծ էր. Ես վկայ եմ. Դուն երաշխաւոր (քէֆիլ) ես. Նա ամբաստանող (դատախազ) է. Անոնք դատաւոր են. Նա դահիճ է. Տէրը վրէժխնդիր է. Պարգեւը ձրի է. Այս շնորհք է. Գիրքը պարգեւ է. Պտուղներն ընծայ են։

| | |
|---|---|
| Գրագիր, դպիր | Շուտ քալող, արագագնաց |
| Շուտ գրող, արագագիր | Ապերախտ, երախտամոռաց, ապաշնորհ |
| Եղէգ, եղէգն, եղեգան | Բարերար, երախտաւոր |
| Ցած, խոնարհ | Ամբաստանող, դատախազ |
| Ճերմակ, սպիտակ | Շնորհք, ձիր |
| Սահուն, լպիրծ | Գիրք, մատեան |
| Խեղճ, եղուկ | |

# ԴԱՍ Զ.

Հ. Վերը (Դաս Բ.) ըսիր թէ անուններուն մի մասը կը հոլովի վերջը ճէր կամ վանկ մը առնլով. Կա՞ն ուրիշ անուններ որ ուրիշ կերպ կը հոլովին։

Պ. Կան անուններ որ հոլովելու ատեն կը փոխեն իրենց վերջին վանկը. այսպէս են ի, ըն, իւն և ու կամ ուն վերջաւորած անուններ։

## Ե. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Եկեղեցի. | Եկեղեցի-ք. |
| Ս. | Եկեղեց-ւոյ. | Եկեղեց-եաց. |
| Տ. | Եկեղեց-ւոյ, -ւոջ. | Եկեղեց-եաց. |
| Հ. | զԵկեղեցի. | զԵկեղեցի-ս. |
| Բ. | *յԵկեղեց-ւոյ, -ւոջէ. | յԵկեղեց-եաց. |
| Գ. | Եկեղեց-եաւ. | Եկեղեց-եօք. |

Հ. Այս հոլովման վրայ ի՞նչ գիտելիք կայ։

Պ. 1. Այս հոլովման տակ կ'երթան բազմավանկ (որ աւելի քան մի վանկ ունին) ի վերջաւորած անուններ. ինչպէս ջորի, կոչի, ճիճի, ևն.

2. Հոգի և որդի բառերուն, և ցի վերջաւորած տեղւոյ կամ ազգի վերաբերեալ անձ ցուցնող անուններուն, ինչպէս՝ Իտալիացի, Հռոմայեցի, եւայլն. գործիականը կ'ըլլայ ով և ոչ եաւ. և յոքնակին փոխանակ եաց, եօք ըլլալու, կ'ըլլայ ոց, ովք. Զոր օրինակ՝ որդի, որդւոյ. Գործիական որդւով. որդիք, որդւոց, որդւովք.

(*) Զայնաւորով սկսած անուններուն վրայ փոխանակ ի ի՝ յ նախդիրը կը դրուի։



## Զ. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոքնակի | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Հիմն. | Հիմ-ունք. | Գառն. | Գառ-ինք. |
| Ս. | Հիմ-ան. | Հիմ-անց. | Գառ-ին. | Գառ-անց. |
| Տ. | Հիմ-ան. | Հիմ-անց. | Գառ-ին. | Գառ-անց. |
| Հ. | զՀիմն. | զՀիմ-ունս | զԳառն. | զԳառ-ինս. |
| Բ. | 'ի Հիմ-անէ. | 'ի Հիմ-անց. | 'ի Գառ-անէ. | 'ի Գառ-անց. |
| Գ. | Հիմ-ամբ. | Հիմ-ամբք. | Գառ-ամբ. | Գառ-ամբք. |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ այս հոլովմանց վրայ։

Պ. 1. Կան անուններ որ ըն չեն վերջաւորիր, բայց այս հոլովման պէս կ'ըլլան, ինչպէս. Տուն, տան. Շուն, շան. Մանուկ, մանկան. Աղջիկ, աղջկան. Անուն, անուան. Պաշտօն, պաշտաման. և այլք։

2. Կան քանի մը ըն (*) վերջաւորած անուններ, որոց սեռականը և տրականը ին կ'ըլլայ. և յոքնակի ուղղականն՝ ինք, ինչպէս, [illegible]առն, գառինք։

Այս զարտուղութիւնները վարժութեամբ կը սորվուին։

## Է. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Նեղութիւն. | Նեղութիւն-ք. |
| Ս. | Նեղութ-եան. | Նեղութ-եանց. |
| Տ. | Նեղութ-եան. | Նեղութ-եանց. |
| Հ. | զՆեղութ-իւն. | զՆեղութ-իւնս. |
| Բ. | 'ի Նեղութ-ենէ. | 'ի Նեղութ-եանց. |
| Գ. | Նեղութ-եամբ. | Նեղութ-եամբք. |

(*) Քանի մը ըն վերջաւորած անուններուն յոքնակի ուղղականը ունք, եւ հայցականը ունս կը վերջաւորին, ինչպէս՝ Սերմն, սերմունք, զսերմունս. Ակն, ականք, զականս (գոհար), եւ այլք։



14660-57

Հ. Ի՞նչ գիտելիք կայ Է. հոլովման վրայ:

Պ. Շատ իւն վերջաւորած անուններ այսպէս կը հոլովին, ինչպէս. արիւն, կորիւն, անկիւն, որ կ'ըլլան արեան, կորեան, անկեան, եւն. Նաեւ ուրիշ քանի մը բառեր, ինչպէս. Ծնունդ, ծննդեան. Խորհուրդ, խորհրդեան. Ժողովուրդ, ժողովրդեան. Գալուստ, գալստեան:

## Ը. ՀՈԼՈՎՈՒՄ

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Տարր. | Տար-երք. |
| Ս. | Տար-եր. | Տար-երաց կամ երց. |
| Տ. | Տար-եր. | Տար-երաց » ». |
| Հ. | զՏարր. | զՏար-երս. |
| Բ. | 'ի Տար-երէ. | 'ի Տար-երաց » » |
| Գ. | Տար-երբ. | Տար-երօք » երբք. |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Աստղ. | Աստ-եղք. |
| Ս. | Աստ-եղ. | Աստ-եղաց կամ եղց. |
| Տ. | Աստ-եղ. | Աստ-եղաց » » |
| Հ. | զԱստղ. | զԱստ-եղս. |
| Բ. | յԱստ-եղէ. | յԱստ-եղաց » » |
| Գ. | Աստ-եղբ. | Աստ-եղօք » եղբք. |

Հ. Ի՞նչ գիտելիք կայ ըր վերջաւորած անուններէն ոմանց վրայ:

Պ. Ըր վերջաւորած անուններէն ոմանք հետեւեալ կերպով կը հոլովին:



| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Փոքր. | Փոք-ունք. |
| Ս. | Փոք-ու. | Փոք-ունց. |
| Տ. | Փոք-ու. | Փոք-ունց. |
| Հ. | զՓոքր. | զՓոք-ունս. |
| Բ. | 'ի Փոք-ուէ. | 'ի Փոք-ունց. |
| Գ. | Փոք-ումբ կամ փոք-ու. | Փոք-ումբք. |

Այսպէս կը հոլովին մանր, կարճ, նուազ, բազում ածականները, և մեղր, ասր, ծաղր գոյական անունները: Վերջին երեք բառերուն գործիականը կ'ըլլայ մեղու, ասու, ծաղու, և յոգնակին չգործածուիր:

Բազում բառին յոգնակի սեռականը, տրականը և բացառականը կ'ըլլան բազմաց, և գործիականը՝ բազմամբք:

### Ե. Հրահանգ

(*) Գոտի, ձիթենի, հոգի, ոսկի, ատամն, բեռն, կողմն, տուն, լաւութիւն, կոճղ, մեծատուն, վերնատուն, ճշմարտութիւն, տարի, անձն, տարր, արկղ, խաշն, դաշն, ուստր (մանչ զաւակ), դուստր, կղզի, փարիսեցի, սադուկեցի, Անեցի, ասր (բուրդ), մեղր, եզր (քէնար), ափն (քէնար՝ ծովու, գետի), ձմեռն, ամառն, ձեղուն, տտուն (պոչ ձկան եւն), ագի (պոչ ձիու եւն), մասն, մրջիւն, սիւն, կորիւն (ձագ գազանի), թոռն, համր:

(*) Աշակերտք հոլովեն հոս նշանակեալ անունները:

# ԴԱՍ Է.

## ՀՈԼՈՎՄԱՆ ՄԷՋ ՁԱՅՆԱՒՈՐ ԳԻՐԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Հ. Հոլովման մէջ անուններուն ձայնաւոր գիրերը կը մնա՞ն միշտ անփոփոխ։

Պ. Բաղաձայնով վերջաւորուած անուններուն վերջին վանկին է, եա, ոյ, ի և ու գիրերը, խոտորնակ հոլովներուն մէջ, այսինքն՝ ուղղականէն և հայցականէն զատ ուրիշ հոլովներուն մէջ, կը փոխուին.

Հ. Ի՞նչ բանի կը փոխուի է գիրը.

Պ. Է կը փոխուի ի ի. ինչպէս՝

Հանդէս, հանդիսի, հանդիսիւ. Հանդէսք, հանդիսից, հանդիսիւք։

Պարտէզ, պարտիզի, պարտիզիւ. Պարտէզք, պարտիզից, պարտիզիւք։

Էշ, իշոյ, իշով. Էշք, իշոց, իշովք։

Ձէն, ձինու. Ձէնք, ձինուց, ձինուք։

Հ. Ի՞նչ բանի կը փոխուի եա։

Պ. Եա կը փոխուի ե ի, ինչպէս՝

Սենեակ, սենեկի, սենեկաւ. Սենեակք, սենեկաց, սենեկօք։

Մատեան, մատենի, մատենիւ. Մատեանք, մատենից, մատենիւք։

Հ. Ի՞նչ բանի կը փոխուի ոյ։

Պ. Ոյ կը փոխուի ու ի, ինչպէս՝

Ողջոյն, ողջունի, ողջունիւ. Ողջոյնք, ողջունից, ողջունիւք։

Թոյն, թունոյ, թունով. Թոյնք, թունոց, թունովք։



Հ. Ի՞նչ բանի կը փոխուին ի և ու։

Պ. Ի և ու կը փոխուին ը ի (*), ինչպէս՝

Գիծ, գըծի, գըծիւ. Գիծք, գըծից, գըծիւք։

Բուն, բընոյ, բընով. Բունք, բընոց, բընովք։

Ինձ, ընձու. Ինձք, ընձուց, ընձուք։

---

## ՈՒՐԻՇ ԳԻՏԵԼԻՔ

Հ. Ուրիշ ի՞նչ գիտելիք կայ ձայնաւորներու փոփոխութեան վրայ։

Պ. 1. Իւ վերջաւորած անուններուն իւ մասնիկը խոտորնակ հոլովներուն մէջ ու ի կը փոխուի, ինչպէս՝

Հովիւ, հովուի, (կարդա՝ հովվի), հովուաւ. Հովիւք, հովուաց, հովուօք։

Թիւ, թուոյ, թուով. Թիւք, թուոց, թուովք։

2. Դեւ անունին մէջ ե գիրը կը փոխուի ի ի, ինչպէս՝ Դեւ, դիւի, դիւաց, դիւօք։

3. Աստուած բառին վերջին ա գիրը կը կորսուի. ինչպէս՝ Աստուած, աստուծոյ, աստուծով։

Հ. Եայ մասնիկն ի՞նչ բանի կը փոխուի։

Պ. Եայ վերջաւորած անուններուն եայ մասնիկը է ի կը փոխուի, ինչպէս՝ Փախստեայ, փախստէի, փախըստէիւ. Փախստեայք, փախստէից, փախստէիւք, ևն։

Բայց եայ վերջաւորած տեղացի ցուցնող անուններուն նոյն եայ մասնիկը ւոյ ի կը փոխուի, ինչպէս՝ Ասորեստանեայ, Ասորեստանւոյ, Ասորեստանւով կամ եաւ։ Ասոնց յոգնակին լինի եայք. Ասորեստանեայք, Ասորեստանեայց, Ասորեստանեօք։

---

(*) Այս ը սովորաբար չգրուիր.

## 7. Հրահանգ

(*) Թուղթ , սէր , պատիւ , Թիւ , անիւ , գրիչ , հուր , մատուռն , Թռչուն , մատեան , ատեան , շունչ , մարմին , մուկն , շուրթն , հովիւ , ջուր , պանիր , հունձ , պտուղ , երէց , պղինձ , գէն , կոչումն , գալուստ , շէն , լոյս , յոյս , ամիս , վայրկեան , սուրբ , մեհեան , հանդէս , ողջոյն , էշ , մանուկ , աղջիկ , դուստր , ծիր , խունկ , ինձ (քափլան) , խոստումն , ուսումն , սկիզբն , քիրտն , աշուն , գարուն , մարդիկ , ձեղուն , սենեակ , գլուխ , փոքրիկ , տնիկ , հանդիստ , փախուստ , Թաքուստ , իղձ , ունչ , ունդ , քրիստոնեայ , փախստեայ , աշտեայ , ծնունդ , ժողովուրդ , խորհուրդ ։

## 8. Հրահանգ .

Տունը նոր է . Եկեղեցին հին է . Շոգին և ծուխը Թեթեւ են . Անձրեւն և կարկուտը ծանր են . Հոգին զգացող , իմացող , և գործող է . Կինը տրտում էր . Մայրը վշտագին էր . Քոյրը զուարթ է . Մարդիկ և կենդանիները քալող են . Հողը խոնաւ է . Երկիրը բարեբեր է . Դաշտը բերքով լեցուն է . Արտը և պարտէզը պտղաբեր են . Հրեշտակները հոգի են . Ձին կրակոտ է . Շունը հաւատարիմ է . Վարժապետը հմուտ և փորձ է . Աշակերտները կրթեալ են . Կառավարը վարժ է . Էշը դանդաղ է . Նապաստակն արագ է . Քացախը սաստիկ և կծու է . Իւղը լոյծ է . Կարագը Թանձր է . Փայտը պինդ է . Քարն և երկաթը կարծր են . Նարինջը գնդակերպ է . Սկաւառակն և անիւը կլոր են . Թաթը կակուղ է . Սմբակն և կճղակը կարծր

(*) Աշակերտք հոլովեն հոս նշանակեալ անունները ։



են . Լեմոնը Թթու է . Թեւերն և ոտքերը շարժող են . Լեզուն և աչքերն աստին անդին դարձող են . Ակռաները հաստատ են . Պատանին հասուն է . Տղան տհաս է . Թռչունները Թռչող են . Չորքոտանիները քալող են . Եղջերուն և նապաստակն արագընթաց են . Առիւծն ուժով է . Վագրը փարատող և անգութ է . Ոչխարը հեզ է . Ուղտը հանդարտ է . Էշը համբերող է . Դաւիթ հովիւ էր և Թագաւոր եղաւ . Հայկը դիւցազն էր . Արամ քաջ էր . Աստուած կարող է . Պաշտօնեայն հաւատարիմ է . Լեռը դժուարին է ։

Զգացող , զգայուն
Իմացող , իմաստուն
Գործող , գործօն
Կենդանի , անասուն
Քալող , գնայուն
Բարեբեր , բերրի
Բերքով լեցուն , յուռթի
Կրակոտ , ջերմ
Վարժապետ , վարդապետ
Կրթեալ , կիրթ
Սաստիկ , բուռն
Կարագ , կոգի
Կլոր , բոլորշի
Լեմոն , կիտրոն
Շարժող , շարժուն
Աստին , անդին դարձող , ճեղճեղուկ
Ակռա , ատամն , յգ. ատամունք
Հաստատ , հաստ
Տհաս , խակ
Թռչուն . հաւ
Թռչող , թռչուն
Փարատող , փարատիչ
Անգութ , անողորմ
Ուժով , հզօր

# ԴԱՍ Ը·

## ԱՆԿԱՆՈՆ ՀՈԼՈՎՄՈՒՆՔ

Հ· Ամէն անուն վերը յիշուած հոլովմա՞նց պէս կը հոլովի։

Պ· Կան քանի մը սովորական անուններ որոց հոլովմունքը բոլորովին տարբեր են։

Հ· Ո՞րոնք են այս անունները և ի՞նչպէս կը հոլովին։

Պ· Այս անուններն են՝ այր, տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, օր, գիւղ, տիւ, և կը հոլովին սապէս։

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո· | Այր · | Արք · | Տէր · | Տեարք · |
| Ս· | Առն · | Արանց · | Տեառն · | Տերանց, տեարց · |
| Տ· | Առն · | Արանց · | Տեառն · | Տերանց, տեարց · |
| Հ· | ըԱյր · | ըԱրս · | ըՏէր · | ըՏեարս · |
| Բ· | յԱռնէ · | յԱրանց · | ՚ի Տեառնէ · | ՚ի Տերանց · |
| Գ· | Արամբ · | Արամբք · | Տերամբ · | Տերամբք · |

| | Եզակի | Յոգնակի | | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|---|
| Ո· | Հայր · | Հարք · | | Քոյր · | Քորք · |
| Ս· | Հօր · | Հարց, հարանց · | | Քեռ · | Քերց · |
| Տ· | Հօր · | Հարց, | » | Քեռ · | Քերց · |
| Հ· | ըՀայր · | ըՀարս · | | ըՔոյր · | ըՔորս . |
| Բ· | ՚ի Հօրէ · | ՚ի Հարց · | » | ՚ի Քեռէ · | ՚ի Քերց · |
| Գ· | Հարբ · | Հարբք · | | Քերբ · | Քերբք · |

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո· | Կին . | Կանայք · | Օր · | Աւուրք · |
| Ս· | Կնոջ · | Կանանց · | Աւուր . | Աւուրց · |
| Տ· | Կնոջ · | Կանանց · | Աւուր · | Աւուրց · |
| Հ· | ըԿին | ըԿանայս · | ըՕր · | ըԱւուրս · |
| Բ· | ՚ի Կնոջէ | ՚ի Կանանց · | յՕրէ · | յԱւուրց · |
| Գ· | Կանամբ, կնաւ · | Կանամբք · | Աւուրբ · | Աւուրբք · |



| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Գիւղ · | Գիւղք · |
| Ս· | Գեղջ · | Գիւղից · |
| Տ· | Գեղջ · | Գիւղից · |
| Հ· | ըԳիւղ · | ըԳիւղս · |
| Բ· | ՚ի Գեղջէ · | ՚ի Գիւղից · |
| Գ· | Գիւղիւ · | Գիւղիւք · |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո· | Տիւ · | Տիւք · |
| Ս· | Տուընջեան · | Տուընջեանց · |
| Տ· | Տուընջեան · | Տուընջեանց · |
| Հ· | ըՏիւ · | ըՏիւս · |
| Բ· | ՚ի Տուէ, ՚ի Տուընջենէ · | ՚ի Տուընջեանց · |
| Գ· | Տուընջեամբ · | Տուընջեամբք · |

Հայր ին պէս կը հոլովին մայր և եղբայր · Կին ին պէս կը հոլովին տիկին և տանտիկին ։

# ԴԱՍ Թ·

## ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հ· Ի՞նչ կը ցուցնէ սեռական հոլովը ։

Պ· Սեռական հոլովը անուան մը քով դրուելով կը ցուցնէ անոր որու վերաբերելը · զոր օրինակ՝ Պարտէզին դուռը, խօսքին մէջ՝ պարտէզին սեռական հոլովը կը ցուցնէ թէ դուռը պարտէզին կը վերաբերի կամ պարտէզինն է ։

Սեռական հոլովը է պատասխան որո՞ւն (քիմի՞ն) հարցման · Որո՞ւն դուռը · — Պարտէզին ։

Հ· Ի՞նչ կը կոչուի սեռական հոլովը ·

Պ· Սեռական հոլովը հայերէն կը կոչուի յատկացուցիչ, և անոր վերաբերեալ բառը կ'ըսուի յատկացեալ ։

Հ. Յատկացեալէն առա՞ջ թէ ետքը կը դրուի յատկացուցիչը։

Պ. Գրաբարին մէջ յատկացուցիչը կը դրուի սովորաբար յատկացեալէն ետքը, թէպէտ աշխարհաբարին մէջ ասոր հակառակն է, զոր օրինակ.

| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Պարտէզին դուռը | Դուռն պարտիզին |
| Թագաւորին եղբայրը | Եղբայր Թագաւորին |

Հ. Գրաբարին մէջ յօդը (ն գիրը) յատկացուցչի՞ն թէ յատկացելոյն վրայ կը դրուի։

Պ. 1. Գրաբարին մէջ յօդը կը դրուի յատկացուցչին վրայ. աշխարհաբարին մէջ՝ երկուքին վրայ եւս, զոր օրինակ.

| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Թագաւորին որդին | Որդի Թագաւորին |
| Մարգարէին խօսքը | Բան մարգարէին |

2. Բայց եթէ յատկացուցիչը յատուկ անուն է, գրաբարին մէջ յօդը յատկացելոյն վրայ միայն կը դրուի. աշխարհաբարին մէջ՝ երկուքին վրայ եւս, ինչպէս.

| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Յոյներուն պատերազմը | Պատերազմն Յունաց |
| Դաւթին թագաւորութիւնը | Թագաւորութիւնն Դաւթի |

3. Գրաբարին մէջ ո՛չ յատկացուցչին և ոչ յատկացելոյն վրայ յօդ կը դրուի, եթէ երկուքն եւս յօդ առնող անուններ չեն, զոր օրինակ երբ «ն» կը ցուցընեն (տես Դաս Դ.) կամ բնութեան մէջ միակ գտնուող բանի մը անուն են, ինչպէս՝ Աստուած, Արեգակն, Լուսին, Երկիր, եւն. իսկ աշխարհաբարին մէջ երկուքին վրայ եւս կը դրուի յօդ, զոր օրինակ.



| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Աստուծոյ դատաստանները | Դատաստանք Աստուծոյ |
| Արեւին ճառագայթները | Ճառագայթք արեգական |
| Լուսնին լոյսը | Լոյս լուսնի |
| Երկրին շուքը | Ստուեր երկրի |
| Մարդուն հոգին | Հոգի մարդոյ (ոմն. մարդու) |
| Դպրոցներուն տղաքը | Մանկունք դպրոցաց (ոմն. դպրոցի) |

9. Հրահանգ

**ԳՈՅԱԿԱՆ ՅԱՏԿԱՑՈՒՑՉՈՎ**

Պարտէզին դուռը բաց է. Տանը պատուհանները գոց են. Երկրին բնակիչները վայրենի էին. Ծառին պտուղը գեղեցիկ էր. Արեւին լոյսը պայծառ է. Լուսնին լոյսն աղօտ է. Տղուն հայրը ծեր է. Թագաւորին զօրքերը հաւատարիմ են. Տէրոջը կամքն այս է. Քրոջը տունը մօտ է. Կնոջը որդիքը ստահակ են. Մարդուն խօսքերը խիստ էին. Հօրը բարկութիւնը սաստիկ էր. Օրուան հանդէսը մեծ էր. Ցորեկուան ժամերը կարճ են. Գիշերուան ժամերը երկայն են. Կէսօրուան տաքն աւելի է. Գարնան օրերը զով են. Ամառուան օրերը տաք են. Գեղին բնակիչները մարդասէր են. Թագաւորին հրամանը ստիպողական էր. Քաղքին դուռները պղնձէ էին. Գետին ջուրերը քաղցր են. Ծերին խօսքերը խելքով են. Ասոնք քաղաքներուն իշխաններն են. Ծովին ձուկերը տեսակ տեսակ են. Գինիին կարասը ծակ է. Եղին սրուակը լեցուն է. Կաթին ամանները պարապ են. Տեղւոյն դիրքը բարձր է. Որդիներուն պարծանքը հայրերն են. Մայրերը աղջիկներուն պաշտպանն են. Արդարներուն հոգիները երանելի են. Հռովմայեցւոց պետութիւնն ահագին էր.

Իսրայելացւոց ազգն ընտրեալ էր · Խրատին խօսքերն ազդու էին · Նոյի որդիները և Թոռները քաջ էին · Դաւթի պատմութիւնը զարմանալի է · Հոփփսիմէի ընկերները կուսանք էին · Ձեռուըներուն և ոտուըներուն մատուըները հինգ հինգ են · Այսօր ուրախութեան տօն է · Ձիթենին հաշտութեան նշան է · Այս տնկուած քարը քաջութեան յիշատակ է · Շաբաթը Հրէից հանգստեան օրն էր · Անոր արիւնին հեղումը փրկութիւն եղաւ · Աստղերուն Թիւն անհամար է · Կայսրին իշխանութիւնն առելի էր · Աղբիւրին ջուրը զառն էր · Անիկա անկիւնի քար եղաւ · Այրերուն և կիներուն Թիւը շատ էր ։

| | |
|---|---|
| Գոց , փակեալ | Պարապ , ունայն |
| Արեւ , արեգակն | Աղջիկ (զաւակ)· դուստր , դստեր |
| Մօտ , մերձ | Թոռ , Թոռն յոգ· Թոռունք, Թոռանց |
| Ցորեկ , տիւ , տունջեան | Ձեռք , ձեռն , ձեռին , յոգ· ձեռք , ձեռաց |
| Կէս օր , միջօրեայ , բեհ | Ոտք , ոտն , ոտին , յոգ· ոտք , ոտից |
| Տաք (գոյ·) , տապ · (ած)· ջերմ | Մատ , մատն , յոգ· մատունք |
| Աւելի , առաւել | Նշան , նշանակ |
| Ստախօսական , բանսարկու | Տնկուած քար , արձան |
| Պղնձէ , պղնձի | Հանգիստ , հանգիստ , հանգստեան |
| Խելքով, հանճարեղ | Քար , վէմ |
| Ասոնք , սոքա | |
| Տեսակ տեսակ , ազգի ազգի | |
| Եղ, իւղ կամ եւղ, իւղոյ | |
| Կաթ , կաթն , կաթին | |

## ԼՈՒԾՈՒՄ

Բաց է դուռն պարտիզին · Է , բայ էակ · սահմ · ներկ · եզ · գ · դէմք ։ Ո՞վ է · — Դուռը · Դուռն՝ գոյ · անուն · ուղղ · հոլով · տէր բայի է ին ։ Որու կամ ի՞նչ բանի դուռը — Պարտիզին · Պարտիզին՝ գոյ · ան · սեռ · հոլ · յատկացուցիչ դրանն է ։ Դուռն է՝ ինչպիսի՞ · —Բաց · բաց ածակ · ստորեգելի դրանն է ։

---



## 10· Հրահանգ ·

### ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒՆ ՑԱՏԿԱՑՈՒՑՉՈՎ

Յովհաննէսի եղբայրն իմաստուն է · Արշակայ որդին չար է · Պետրոսի զոքանչը հիւանդ էր · Յովսեփայ աները ծեր է · Սաւուղի որդին կաղ էր · Դաւթի զօրավարները քաջ և հաւատարիմ էին · Դեկոսի կեանքը կարճ եղաւ · Յակոբայ որդիքը նախանձոտ էին · Երուսաղեմի պարիսպներն ամուր (անառիկ) էին · Պարսից երկիրը պտղաբեր է · Հնդկաց լեռները բարձր են · Շապհոյ Թագաւորութիւնը երկար եղաւ · Եփրատայ ջուրերը յորդ են · Սոդոմի բնակիչներն անզգամ (չար · անօրէն) էին · Աբրահամու ծառաներն հաւատարիմ էին · Արեգական ճառագայթներն այրող են · Լուսնին լոյսն աղօտ է · Աստուծոյ դատաստաններն արդար են · Հովին զօրութիւնը ուժով է · Ծովին ալիքներն ահագին են · Լոյսին բնութիւնը բարակ է · Արդարներուն ճամբաները չխտակ են · Առիւծին մռնչիւնը սոսկալի է · Աստուծոյ խօսքը ճշմարիտ է · Երկրիս կողմերը չորս են · արեւելք , արեւմուտք , հիւսիս և հարաւ · Ծովին ջուրն աղի է · Լեռներուն գլուխները բարձր են · Երկրիս անդունդները խորունկ են · Աստղերուն հեռաւորութիւնն անբաւ է · Տիեզերքին ընդարձակութիւնն անհուն է · Անձրեւին , ձիւնին և հովերուն օգուտը մեծ է · Արեւին լոյսը և տաքութիւնը շատ կարեւոր են ։

| | |
|---|---|
| Լեռ , լեառն , յոգ · լերինք , լերանց | Այրող , հրդեհ |
| | Հով , հողմ , հողմոյ |

| | |
|---|---|
| Ուժով, զօրաւոր | Խօսք, բան |
| Բարակ, նուրբ | Խորունկ, խոր |
| Ճամբայ, ճանապարհ | Տիեզերք, տիեզերք, բոց |
| Շիտակ, ուղիղ | Տաքութիւն, ջերմութիւն |
| Ոսկալի, ահեղ | Շատ (մակբայ), յոյժ |

## Դ Ա Ս Ժ.

### ԱԾԱԿԱՆՆԵՐՈՒՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հ. Վերը (Դաս Բ.) ըսիր թէ ածական կ'ըսուի անուն մը որ իրի մը որպիսութիւնը կամ ինչպէս ըլլալը կը ցուցնէ. ամէն ածական որպիսութի՞ւն կը ցուցնէ։

Պ. Իրի մը որպիսութիւնը ցուցնող ածականներուն կ'ըսուի որակական ածական. մեծ, փոքր, իմաստուն, տգէտ, բարի, չար, աղքատ, սեւ՝ որակական ածականներ են։ Բայց կան թուական ածականներ որ բանի մը թիւը կամ քանի հատ ըլլալը կը ցուցնեն, ինչպէս են մի, երկու, երեք, տասն, հարիւր, հազար, եւն։

Հ. Բանի մը որու ըլլալը ցուցնող ածականք ի՞նչ կը կոչուին։

Պ. Կան տեսակ մը ածականներ եւս որ բանի մը որուն ըլլալը կը ցուցնեն, ինչպէս են իմ, քո, մեր, ձեր, իւր, և կը կոչուին ստացական ածական։

Հ. Ուրիշ ի՞նչ ածականներ կան։

Պ. Կան 1. ցուցական կոչուած ածականներ որ են. այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն։

2. Կան տեսակ մը ածականներ եւս որ անորոշ ածական կը կոչուին, և ասոնք են՝ ամենայն, այլ, իւրաքանչիւր, միւս, ոմն, ոք, իմն, ինչ։

3. Կան վերջապէս՝ հարցական կոչուած ածականներ. ասոնք են՝ ո՞վ, ո՞, ո՞ր, ի՞նչ։



Հ. Ուրեմն քանի՞ տեսակ ածական կայ։

Պ. Վեց տեսակ. 1. Որակական. 2. Թուական. 3. Ստացական. 4. Ցուցական. 5. Անորոշ և 6. Հարցական։

### 2. ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Քանի՞ տեսակ են թուական ածականք։

Պ. Թուական ածականք երեք տեսակ են՝ 1. Բացարձակ. 2. Դասական և 3. Անձներական։

Հ. Որո՞նք են բացարձակ թուական, և ի՞նչպէս կը հոլովին։

Պ. 1. Բացարձակ թուականներն են՝ մի, երկու, երեք, եւն մինչև հազար, բիւր, և կը հոլովին անուններուն հոլովմանց պէս որ վերը դրուեցան։

Հ. Մէ ի՞նչպէս կը հոլովի։

Պ. Մէ եզակի միայն կրնայ հոլովիլ, այսպէս.

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Մի. | Հ. | զՄի. |
| Ս. | Միոյ, միոջ. | Բ. | ՚ի Միոջէ. |
| Տ. | Միում. | Գ. | Միով. |

Հ. Երկու, երեք, չորք ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Երկու, երեք, չորք՝ յոգնակի միայն ունին և կը հոլովին այսպէս. հինգէն անդին թէ եզակի ունին և թէ՛ յոգնակի։

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Երկու. | Երեք. | Չորք. |
| Ս. | Երկուց. | Երից. | Չորից. |
| Տ. | Երկուց. | Երից. | Չորից. |
| Հ. | զԵրկուս. | զԵրիս. | զՉորս. |
| Բ. | յԵրկուց. | յԵրից. | ՚ի Չորից. |
| Գ. | Երկուք. | Երիւք. | Չորիւք. |

Հ. Հինգ և վեց ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Հինգ և վեց կը հոլովին այսպէս.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Հինգ . | Հինգք . | Վեց . | Վեցք . |
| Ս. | Հնգի . | Հնգից . | Վեցի . | Վեցից . |
| Տ. | Հնգի . | Հնգից . | Վեցի . | Վեցից . |
| Հ. | զՀինգ . | զՀինգս . | զՎեց . | զՎեցս . |
| Բ. | 'ի Հնգէ . | 'ի Հնգից . | 'ի Վեցէ . | 'ի Վեցից . |
| Գ. | Հնգիւ . | Հնգօք . | Վեցիւ . | Վեցիւք . |

Հ. Վեցէն անդին մնացեալ թուականք ի՞նչպէս կը հոլովին ։

Պ. Վեցէն անդին մնացեալ թուականք կը հոլովին այսպէս .

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Եօթն . | Եօթանք . | Ութ . | Ութք . |
| Ս. | Եօթան . | Եօթանց . | Ութի . | Ութից . |
| Տ. | Եօթան . | Եօթանց . | Ութի . | Ութից . |
| Հ. | զԵօթն . | զԵօթանս . | զՈւթ . | զՈւթս . |
| Բ. | յԵօթանէ . | յԵօթանց . | յՈւթէ . | յՈւթից . |
| Գ. | Եօթամբ . | Եօթամբք . | Ութիւ . | Ութիւք . |

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Ինն . | Իննանք . | Տասն . | Տասանք . |
| Ս. | Ըննի . | Ըննից . | Տասին . | Տասանց . |
| Տ. | Ըննի . | Ըննից . | Տասին . | Տասանց . |
| Հ. | զԻնն . | զԻննանս . | զՏասն . | զՏասանս . |
| Բ. | յԸննէ . | յԸննից . | 'ի Տասնէ . | 'ի Տասանց . |
| Գ. | Ըննիւ . | Ըննիւք . | Տասամբ . | Տասամբք |

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Մետասան . | Մետասանք . |
| Ս. | Մետասանի . | Մետասանից . |
| Տ. | Մետասանի . | Մետասանից . |
| Հ. | զՄետասան . | զՄետասանս . |
| Բ. | 'ի Մետասանէ . | 'ի Մետասանից . |
| Գ. | Մետասանիւ . | Մետասանիւք . |



Այսպէս կը հոլովին նաեւ երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան ։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Եօթնեւտասն . | Եօթնեւտասանք . |
| Ս. | Եօթնեւտասին . | Եօթնեւտասանց . |
| Տ. | Եօթնեւտասին . | Եօթնեւտասանց . |
| Հ. | զԵօթնեւտասն . | զԵօթնեւտասանս . |
| Բ. | յԵօթնեւտասնէ . | յԵօթնեւտասանց . |
| Գ. | Եօթնեւտասամբ . | Եօթնեւտասամբք . |

Այսպէս կը հոլովին Ութեւտասն եւ Իննեւտասն ։

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Քսան . | Քսանք . | Հարիւր . | Հարիւրք . |
| Ս. | Քսանի . | Քսանից . | Հարիւրոյ . | Հարիւրոց . |
| Տ. | Քսանի . | Քսանից . | Հարիւրոյ . | Հարիւրոց . |
| Հ. | զՔսան . | զՔսանս . | զՀարիւր . | զՀարիւրս . |
| Բ. | 'ի Քսանէ . | 'ի Քսանից . | 'ի Հարիւրոյ . | 'ի Հարիւրոց . |
| Գ. | Քսանիւ . | Քսանիւք . | Հարիւրով . | Հարիւրովք . |

Երեսուն, քառասուն, եւն, մինչեւ իննսուն կը հոլովին քսանի պէս ։

Երկերիւր, երեքհարիւր, եւն, մինչեւ իննհարիւր կը հոլովին հարիւրի պէս ։

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Հազար . | Հազարք . | Բիւր . | Բիւրք . |
| Ս. | Հազարի . | Հազարաց . | Բիւրու . | Բիւրուց . |
| Տ. | Հազարի . | Հազարաց . | Բիւրու . | Բիւրուց . |
| Հ. | զՀազար . | զՀազարս . | զԲիւր . | զԲիւրս . |
| Բ. | 'ի Հազարէ . | 'ի Հազարաց . | 'ի Բիւրէ . | 'ի Բիւրուց . |
| Գ. | Հազարաւ . | Հազարօք . | Բիւրու . | Բիւրուք . |

Հ. Որո՞նք են դասական թուականք, և ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Զ. Դասական թուականք կը ցուցնեն գոյականին կարգը կամ ուրիշներու մէջ քանիերորդ ըլլալը.

Առաջին կամ առաջներորդ.
Երկրորդ.
Երրորդ.
Չորրորդ.
Հինգերորդ.
Վեցերորդ.
Եօթներորդ.
Ութերորդ.
Իններորդ.
Տասներորդ.
Մետասաներորդ.
Երկոտասաներորդ.
Երեքտասաներորդ.
Չորեքտասաներորդ.
Հնգետասաներորդ.
Վեշտասաներորդ.

Եօթնեւտասներորդ.
Ութեւտասներորդ.
Իննեւտասներորդ.
Քսաներորդ.
Երեսներորդ.
Քառասներորդ.
Յիսներորդ.
Վաթսներորդ.
Եօթանասներորդ.
Ութսներորդ.
Իննսներորդ.
Հարիւրերորդ.
Երկերիւրերորդ.
Հազարերորդ.
Բիւրերորդ.
Վերջին.

Ասոնք բաց առաջին և վերջին բառերէն, կը հոլով[ին] քաղաք բառին պէս. իսկ առաջին և վերջին կը հոլով[ին] գէթ բառին պէս.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Երկրորդ. | Երկրորդք. | Առաջին. | Առաջինք |
| Ս. | Երկրորդի. | Երկրորդաց. | Առաջնոյ. | Առաջնոց |
| Տ. | Երկրորդի, կամ Երկրորդում. | Երկրորդաց. | Առաջնոյ կմ. Առաջնում. | Առաջնոց |
| Հ. | զԵրկրորդ. | զԵրկրորդս. | զԱռաջին. | զԱռաջինս |
| Բ. | յԵրկրորդէ. | յԵրկրորդաց. | յԱռաջնոյ կմ. յԱռաջնմէ. | յԱռաջնոց |
| Գ. | Երկրորդաւ. | Երկրորդօք. | Առաջնով. | Առաջնովք. |



Հ. Որո՞նք են անձներական թուականք, և ի՞նչպէս կը հոլովին։

Պ. Անձներական կը կոչուին եքին կամ եքեան վերջաւորած թուականներ որ այս ինչ թուոյն ամենն ալ կը նշանակեն, ինչպէս՝ Ամենեքին, ամենն ալ, երկոքին, երկոքն ալ, եւն։

Ասոնք յոգնակի միայն կը հոլովին հետեւեալ կերպով.

Երկոքին կամ երկոքեան, երկոցունց կամ երկոցուն, երկոցունց կամ երկոցուն. զերկոսին կամ զերկոսեան, յերկոցունց, երկոքումբք.

## 3. ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ի՞նչպէս կը հոլովին Ստացական ածականք։

Պ. Ստացական ածականք, իմ, քո, մեր, ձեր, իւր, կը հոլովին գէթ բառին պէս փոքր տարբերութեամբ այսպէս.

Եզ. իմ, իմոյ, իմում, զիմ, յիմմէ, իմով. Յոգ. իմք, իմոց, իմոց, զիմս, յիմոց, իմովք։

Իմին պէս կը հոլովին քո, մեր, ձեր, իւր։

## 4. ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ի՞նչպէս կը հոլովին Ցուցական ածականք։

Պ. Ցուցական ածականք այս, այդ, այն. սոյն, դոյն, նոյն, կը հոլովին այսպէս.

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Այս. | Այսք, այսոքիկ. |
| Ս. | Այսր, այսորիկ. | Այսց, այսոցիկ. |
| Տ. | Այսմ, այսմիկ. | Այսց, այսոցիկ. |
| Հ. | զԱյս. | զԱյս, զայսոսիկ. |
| Բ. | յԱյսմ, յայսմանէ. | յԱյսց, յայսցանէ. |
| Գ. | Այսու, այսուիկ. | Այսու, այսոքիւք. |

Այսպէս կը հոլովին նաեւ այդ, այն։

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Սոյն . | Սոքին . |
| Ս. | Սորին . | Սոցին , սոցունց . |
| Տ. | Սմին . | Սոցին , սոցունց . |
| Հ. | զՍոյն . | զՍոսին . |
| Բ. | 'ի Սմին . | 'ի Սոցունց . |
| Գ. | Սովին , սովիմբ . | Սոքիմբք , սոքումբք . |

Այսպէս կը հոլովին նաեւ դոյն , նոյն ։

---

### 5. ԱՆՈՐՈՇ ԱԾԱԿԱՆՔ

Հ. Ի՞նչպէս կը հոլովին անորոշ ածականք ամենայն , այլ , միւս , իւրաքանչիւր ։

Պ. Անորոշ ածականք ամենայն, այլ, կը հոլովին այսպէս .

| | Եզակի | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|---|
| Ո. | Ամենայն . | Այլ . | Այլք . |
| Ս. | Ամենայնի . | Այլոյ . | Այլոց . |
| Տ. | Ամենայնի . | Այլոյ , այլում . | Այլոց . |
| Հ. | զԱմենայն . | զԱյլ . | զԱյլս . |
| Բ. | յԱմենայնէ . | յԱյլմէ . | յԱյլոց . |
| Գ. | Ամենայնիւ . | Այլով . | Այլովք . |

Ամենայն ածականին յոգնակին չէ սովորական ։
Միւս , իւրաքանչիւր կը հոլովին այլին պէս ։

Հ. Ի՞նչպէս կը հոլովին ոմն , ոք , իմն և ինչ ։

Պ. Ոմն , ոք , իմն և ինչ կը հոլովին այսպէս .

| | Եզակի | | Յոգնակի | Եզ. Յոգ. |
|---|---|---|---|---|
| Ո. | Ոմն . | Ոք . | Ոմանք . | Իմն , ինչ . |
| Ս. | Ուրուեմն . | Ուրուք . | Ոմանց . | Իրիք . |
| Տ. | Ումեմն . | Ումեք . | Ոմանց . | Իմիք . |
| Հ. | զՈմն . | զՈք . | զՈմանս . | զԻմն , զինչ . |
| Բ. | յՈւմեմնէ . | յՈւմեքէ . | յՈմանց . | յԻմեքէ . |
| Գ. | Ոմամբ . | Ոմամբ . | Ոմամբք . | Իւիք . |



### 6. ՀԱՐՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆ

Հ. Ի՞նչպէս կը հոլովին հարցականք ո՞վ , ո՞ , զի՞նչ ։

Պ. Ո՞վ , ո՞ , զի՞նչ հարցականք կը հոլովին այսպէս .

| | Եզակի | Յոգնակի | Եզակի | Յոգնակի | |
|---|---|---|---|---|---|
| Ո. | Ո՞վ, ո՞ . | Ո՞յք . | Ո՞ր . | Ո՞րք . | Զի՞նչ . |
| Ս. | Ո՞յր . | Ո՞յց . | Որո՞յ . | Որո՞ց . | Է՞ր . |
| Տ. | Ո՞ւմ . | Ո՞յց . | Որո՞ւմ . | Որո՞ց . | Ի՞մ . |
| Հ. | զՈ՞վ , զո՞ . | զՈ՞յս . | զՈ՞ր . | զՈ՞րս . | Զի՞նչ . |
| Բ. | յՈւմէ՞ . | յՈ՞յց . | յՈրմէ՞ . | յՈրո՞ց . | յԻմէ՞ . |
| Գ. | Որո՞վ . | Որո՞վք . | Որո՞վ . | Որո՞վք . | Ի՞ւ . |

## ԴԱՍ ԺԱ.

### ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԱԾԱԿԱՆԱՑ

Հ. Գոյականէն առա՞ջ թէ ետքը կը դրուի ածականը , և ի՞նչպէս կը համաձայնի անոր հետ ։

Պ. Ածականն աշխարհաբարի մէջ կը դրուի գոյականէն առաջ . գրաբարի մէջ սովորաբար կը դրուի ետքը , և գոյականին հետ կը համաձայնի թուով և հոլովով . զոր օրինակ . Իմաստուն որդի , Որդի իմաստուն , կը հոլովի այսպէս .

| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Որդի իմաստուն . | Որդիք իմաստունք . |
| Ս. | Որդւոյ իմաստնոյ . | Որդւոց իմաստնոց . |
| Տ. | Որդւոյ իմաստնոյ . | Որդւոց իմաստնոց . |
| Հ. | զՈրդի իմաստուն . | զՈրդիս իմաստունս . |
| Բ. | յՈրդւոյ իմաստնոյ . | յՈրդւոց իմաստնոց . |
| Գ. | Որդւով իմաստնով . | Որդւովք իմաստնովք . |

## 11· Հրահանգ ·

### ԳՈՅԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Խաբեբայ մարդը խորշելի է · Հնազանդ որդին սիրելի է · Վատ զինուորն անարգ է · Զափաւոր աշխատութիւնը օգտակար է · Շատ հարստութիւնը վտանգաւոր է · Սաստիկ բարկութիւնը վնասակար է · Մազերը ճերմկած մարդը պատկառելի է · Արդար օրէնքը մեծարոյ է · Խօսք մտիկ չընող աշակերտը պատժելի է · Խօսք խառնող մարդն անարգ է · Համատարած ծովն ահագին է · Մատակ առիւծը կատաղի է · Գիշակեր թռչունները յափշտակող են · Իմ մէկ հատիկ աղջիկս հոս է · Քու աստուածավախ մայրդ հիւանդ է · Վախկոտ զինուորը վնասակար է · Մեծ որդին խելացի է · Խելօք տղան սիրելի է · Պզտիկ եղբայրս խոհեմ է · Զուխայէ վերարկուն պատռտած է · Վերի սենեակը մութ է · Ներսի սրահն ընդարձակ է · Անմարդի տեղերը վտանգաւոր են · Մեր նոր տունը շատ հանգիստ է · Խօսք մտիկ ընող տղան յառաջադէմ է · Պարապ խօսքերն ի՞նչ են · Անառիկ լեռները մեր ապաւէնն են · Ծովեզերեայ երկիրը բարեօդ է · Հասուն պտուղներն համով են, տհասներն՝ անհամ · Երկայն ճամբան խորտուբորտ է ։

Անարգ , խոտան
Զափաւոր , համեստ
Հարստութիւն , մեծատնութիւն
Բարկութիւն , ցասումն
Մազերը ճերմկած , ալեւոր
Խօսք մտիկ չընող, անսաստ
Խօսք խառնող, [illegible]
Յափշտակող, յափշտակիչ
Աղջիկ (զաւակ) , դուստր
Մէկ հատիկ , միամօր
Հոս , աստ
Աստուածավախ , երկիւղած
Վախկոտ , երկչոտ
Մեծ (որդի) , երէց
Խելացի , հանճարեղ
Խելօք , մտավարժ



Տղայ , մանուկ
Պզտիկ (եղբայր) · կրտսեր
Խոհեմ, զգօն
Զուխայէ , ասուէ
Պատռտած , պատառատուն
Վերի , վերին
Ներսի , ներքին
Անմարդի , ամայի
Տեղ, տեղի
Շատ , յոյժ
Հանգիստ , անդորր
Խօսք մտիկ ընող, հլու
Պարապ , ունայն
Խօսք , բան
Ի՞նչ , զի՞նչ
Անառիկ , ամուր
Բարեօդ , հովասուն
Համով, ախորժելի
Տհաս , խակ
Անհամ, անախորժ
Խորտուբորտ , դժուարին ·

---

## ԼՈՒԾՈՒՄ

Խաբեբայ մարդը խորշելի է · Խորշելի է այր խաբեբայ ։ Է · էակ· բայ· սահմ· ներկ· եզ· Գ· դէմ· — Ո՞վ է ։ — Խաբեբայ մարդը, այր խաբեբայ · մարդը, այր՝ տէր բայի է · Խաբեբայ ածական է և մարդուն որպիսութիւնը կը ցուցնէ ։ — Խաբեբայ մարդն ի՞նչ է · — Խորշելի է · Խորշելի՝ ստորոգելի է խաբեբայ մարդուն ։

Հ· Ածականը գրաբարին մէջ գոյականէն առաջ կըրնա՞յ գրուիլ ։

Պ· Կրնայ գրուիլ, և անատեն կը մնայ անփոփոխ, եթէ բազմավանկ է, իսկ եթէ միավանկ է, առաջ գրուելով եւս կրնայ համաձայնիլ · զոր օրինակ ·

| Բազմավանկ ածական առաջ դրուած | Միավանկ ածական առաջ դրուած |
|---|---|
| Իմաստուն որդի · | Քաջ որդի · |
| Իմաստուն որդւոյ · | Քաջի որդւոյ · |
| զԻմաստուն որդի · | զՔաջ որդի · |
| յԻմաստուն որդւոյ · | 'ի Քաջէ որդւոյ · |
| Իմաստուն որդւով · | Քաջիւ որդւով · |

Հ. Ի՞նչպէս կը համաձայնին թուական ածականք գոյականին հետ։

Պ. Թուական ածականք կրնան գոյականէն թէ՛ առաջ և թէ՛ ետքը դրուիլ, և կը համաձայնին անոր հետ, բայց կ'ուզեն յոգնակի գոյական, բաց ի՛ մէկէ որ կ'ուզէ միշտ եզակի գոյական, զոր օրինակ.

| | | | |
|---|---|---|---|
| Ո. | Այր մի. | կամ | Մի այր. |
| Ս. | Առն միոջ, միոյ. | » | Միոյ առն. |
| Տ. | Առն միում. | » | Միում առն. |
| Հ. | զԱյր մի. | » | զՄի այր. |
| Բ. | յԱռնէ միոջէ. | » | 'ի Միոջէ առնէ. |
| Գ. | Արամբ միով. | » | Միով արամբ. |

Ո. Արք երկու, երեք, չորք, հինգ, վեց, եօթն (ու. հինգք, վեցք, եօթանք).

Ս. Արանց երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց.

Տ. Արանց երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց.

Հ. զԱրս երկուս, երիս, չորս, հինգ, վեց, եօթն (ու. հինգս, վեցս, եօթանս).

Բ. յԱրանց երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց.

Գ. Արամբք երկուք. երիւք, չորիւք, հնգօք, վեցիւք, եօթամբք.

կամ

Ո. Երկու, երեք, չորք, հինգ, վեց, եօթն արք.

Ս. Երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց արանց.

Տ. Երկուց, երից, չորից, հնգից, վեցից, եօթանց արանց.



Հ. զԵրկուս, զերիս, զչորս, զհինգ, զվեց, զեօթն արս.

Բ. յԵրկուց, յերից, 'ի չորից, 'ի հնգից, 'ի վեցից, յեօթանց արանց.

Գ. Երկուք, երիւք, չորիւք, հնգօք, վեցիւք, եօթամբք արամբք։

## 12 Հրահանգ.

### ԳՈՅԱԿԱՆ՝ ԹՈՒԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Երեք որդիներու հայր եմ. Մէկ մարդու որդիներ ենք. Այսօր քառասուն մանկանց տօն է. Հինգ մարդու բաժին էր. Երկու եղբայրներու ժառանգութիւն է. Տասուերկու որդւոց հայր էր. Հոն բիւր զօրաց բանակ կար. Տասը ծառայի տէր էինք. Եօթը քաղքի իշխան էր. Երեք մարդով եկաւ. Չորս սպասաւորօք գացին. Տասը ընկերներով ինկաւ. Չորս կողմանէ վազեցին. Յիսուն մղոն գացին. Ջուրը քառասուն կանգուն բարձրացաւ. Երեսուն օր ետքը տեսանք. Հինգ հազար մարդ կերակրեց. Երկու հարիւր մարդով եկաւ մեր վրայ. Վեց մարդ սպաննեցին. Հոն տասն արմաւենիներ կային. Մէկ բանով պակաս եմ. Անիկայ ութսուն տարուան էր. Առատութեան եօթը տարիներէն ետքը՝ եօթը տարի սով եղաւ. Տարւոյն մէջ տասուերկու ամիս կայ. Երեք որդիքն ալ մէկ օրուան մէջ մեռան. Տասնումէկ աշակերտներուն երեւեցաւ. Այս են տասուերկու մարգարէից անունները. Ահա չորս մարգարէներուն գիրքերը. Երկրի չորս ծայրերէն պիտի գան. Երկու աւազակներու մէջտեղ խաչուեցաւ. Եօթանասուն ծերերու ժողով էր. Երկրորդ ամսոյն վերջանալու ատենը. Վեցերորդ տարւոյն լրացած ատենը. Առաջին տղուն անունն ի՞նչ էր. Առաջին տղուն անունը Արշակ էր։

| | |
|---|---|
| Մարդ , այր | Անիկա , նա |
| Կար , էր | Տարւոյն մէջ , ՚ի տարւոջ |
| Հոն , անդ | Մէկ օրուան մէջ , ՚ի միում աւուր |
| Եկաւ , եկն | Երեքն . . . ալ , երեքին |
| Գացին , գնացին | Երեւցաւ , երեւեցաւ |
| Ինկաւ , անկաւ | Գիրք , մատեան |
| Կողմ , կողմն , կողման | Ծայր , ծագ |
| Վազեցին , ընթացան | Պիտի գան , եկեսցեն |
| Ետքը , յետ (սեռականով) | Մէջտեղ , ՚ի մէջ |
| Կերակրեց , կերակրեաց | Խաչուեցաւ , խաչեցաւ |
| Մեր վրայ , ՚ի վերայ մեր | Վերջանալու ատենը , ՚ի կատարել |
| Սպաննեցին , սպանին | Լրացած ատենը , ՚ի լրանալ |
| Կային , էին | Տղայ , մանուկ |
| Մէկ բանով , միով իւիք | |
| Տարի , ամ | |

---

# ԼՈՒԾՈՒՄ

Երեք որդիներու հայր եմ. Հայր եմ որդւոց երից. Եմ բայ էակ. սահմ. ներկ. եզ. Ա. դէմ. Ո՞վ է. — Ես եմ, ես էակ. դեր. Ա. դէմ. եզ. ուղղ. տէր բային եմին։ Ես եմ, ի՞նչ. — Հայր. հայր գոյ. ան. եզ. ուղ. ստորոգելի եմին։ Ես եմ հայր. որո՞ւ. — Որդւոց երից. որդւոց գոյ. ան. յք. սեռ. յատկացուցիչ հայրին, երից Թուակ. ածական որդւոցին։

Հ. Ի՞նչպէս կը համաձայնին իրենց գոյականներուն հետ Ստացական ածականք։

Պ. Ստացական ածականք գոյականէն թէ առաջ և թէ ետքը դրուելով կը համաձայնին անոր հետ թուով և հոլովով, զոր օրինակ.



| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Տուն իմ. | Տունք իմ (ով իմք). |
| Ս. | Տան իմոյ. | Տանց իմոց. |
| Տ. | Տան իմում. | Տանց իմոց. |
| Հ. | զՏուն իմ. | զՏունս իմ (զիմս). |
| Բ. | ՚ի Տանէ իմմէ. | ՚ի Տանց իմոց. |
| Գ. | Տամբ իմով. | Տամբք իմովք. |

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Իմ տուն. | Իմ տունք. |
| Ս. | Իմոյ տան. | Իմոց տանց. |
| Տ. | Իմում տան. | Իմոց տանց. |
| Հ. | զԻմ տուն. | զԻմ տունս. |
| Բ. | յԻմմէ տանէ. | յԻմոց տանց. |
| Գ. | Իմով տամբ. | Իմովք տամբք. |

Հ. Անոր, անոնց, իրենց բառերուն գրաբարն ի՞նչպէս է։

Պ. Անոր, անոնց, իրենց բառերուն գրաբարն է նորա, նոցա, իւրեանց. ասոնք յատկացուցիչ (սեռական) են և միշտ անփոփոխ կը մնան, գոյականն ինչ հոլով որ ըլլայ. ուստի կ'ըսուի, տուն նորա, տան նորա, ՚ի տանէ նորա, տամբ նորա, տունք նորա, տանց նորա, եւն։

Հ. Ստացական ածական ունեցող գոյականը յօդ կ'առնո՞ւ։

Պ. Երբ անուն մը ստացական ածական ունի, յօդ այսինքն ն գիրը սովորաբար չառնուր գրաբարին մէջ, ուստի՝ Տուն իմ, Եղբայր քո, ըսել բաւական է, փոխանակ ըսելու, Տունն իմ, Եղբայրն քո։

## 13· Հրահանգ

### ԳՈՅԱԿԱՆ՝ ՍՏԱՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Տունս (*) մեծ է. Ձեր քաղաքն ընդարձակ է. Մեր փողոցը լայն է. Քու ճամբադ շիտակ է. Անոնց երկիրը պտղաբեր է. Եղբայրներս գիտուն են. Ձեր որդիքը յիմար են. Քու ծառաներդ անմիտ են. Բարեկամներդ տգէտ են. Մեր տուները բարձր են. Իմ որդիս անուշահոտ է. Քու աղջիկդ տգեղ է. Մայրս աստուածավախ է. Եղբայրդ վախկոտ է. Իմ աշակերտս ծոյլ է. Մեր կեանքը կարճ է. Ձեր խօսքերը երկայն են. Մեր նոր տունը գեղեցիկ է. Ձեր հին հանդերձները պատռտած են. Քու մեծ որդիդ խելօք և խոհեմ է. Իմ պզտիկ եղբայրս զուարթ է. Մեր վերի սրահը լուսաւոր է. Անոր ներսի սենեակը խաւարին է. Անոր աղջիկը մէկ հատիկ է. Ձեր գիրքն աղէկ է. Քու քոյրդ պարկեշտ է. Մեր տղան խելօք է. Անոնց որդին անառակ էր. Մեր գիրքերն օգտակար են. Իմ բարեկամս աղքատ է. Մեր շունը հաւատարիմ է. Անոր լեռները բարձր են. Քու դասդ դըժուարին է. Մեր ծառան հիւանդ է. Իմ անձս տըրտում է. Մեր ճամբան կարճ է. Քու ստակդ շատ է. Անոնց գինին աղէկ է. Իմ հարստութիւնս անչափ է.

(*) Աշխարհաբարին մէջ ևս իմ, քու, մեր, ձեր, իր ստացականները կը գործածուին, ս, դ, ն, գրերն ևս գոյականին վերջը կ՚աւելցուին, կամ, եզակիին մէջ մանաւանդ, ս, դ, ն միայն կը գործածուին՝ առանց իմ, քու, իր, անոր բառերուն, ինչպէս՝ իմ տունս, քու տունդ, իր կամ անոր տունը. եւ կամ լոկ՝ տունս, տունդ. տունը. Բայց գրաբար իմ, քո, մեր ևայլն, միայն դնել բաւական է. ս, դ, ն, գիրերը գոյականին վերջն աւելցնել հարկաւոր չէ. ուստի չըսուիր, տունս իմ, կամ տունս, տունդ քո կամ տունդ ևայլն։ Այս ս, դ, ն գիրերն ուրիշ նշանակութիւն ունին գրաբարին մէջ, ինչպէս ետքը պիտի տեսնենք։



Որդիս արի և ժրաջան է. Մեր կեանքը երանելի է. Ձեր հանդերձները նոր են. Քու գոհարներդ մեծագին են. Քու կինդ ապերախտ է. Անոնց հանդերձները սեւ էին։

| | |
|---|---|
| Շիտակ, ուղիղ | Ներսի, ներքին |
| Անոնց, նոցա | Մէկ հատիկ, միամօր |
| Եղբայր, եղբայր, յք. եղբարք | Գիրք, մատեան |
| Աղջիկ (զաւակ), դուստր | Աղէկ, ազնիւ |
| Աստուածավախ, երկիւղած | Դաս, ուսումն |
| Վախկոտ, երկչոտ | Ստակ, արծաթ |
| Խօսք, բան | Հարստութիւն, մեծութիւն |
| Պատռտած, պատառատուն | Արի, քաջ |
| Մեծ (որդի), երէց | Ժրաջան, ժիր |
| Խելօք, մտավարժ | Գոհար, ակն, յք. ականք |
| Խոհեմ, զգօն | Մեծագին, պատուական |
| Պզտիկ (եղբայր), կրտսեր | Ապերախտ, ապաշնորհ |
| Վերի, վերին | Հանդերձ, զգեստ |

---

### ԼՈՒԾՈՒՄ

Տունս մեծ է. Մեծ է տուն իմ. Է բայ էակ. սահմ. ներ. եզ. Գ. դէմ: Ո՞վ է. — Տուն իմ է. տուն՝ գոյ. ան. եզ. ուղղ. տէր բայի է ին. իմ ստացական ածական տուն ին: Տուն իմ է ի՞նչ. — Մեծ, մեծ որակ. ած. ստորոգելի տուն ին:

Հ. Ցուցական ածականք ի՞նչպէս կը համաձայնին իրենց գոյականին հետ։

Գ. Ցուցական ածականք այս, այդ, այն գոյականէն թէ առաջ և թէ ետքը կրնան դրուիլ: Եթէ առաջ դրուին, կարճ հոլովները կը գործածուին (տես Դաս Ժ.) Ցուցական ածականաց հոլովման օրինակը). Իսկ եթէ (ինչպէս սովորաբար է) գոյականէն ետքը դրուին,

Երկուքն հոլովները կը գործածուին, եւ գոյականին վերջը ս, դ, ն գիրերը կ՚աւելցուին, այսինքն՝ եթէ ցուցականն այս է, ս գիրը կ՚աւելցուի գոյականին վերջը. եթէ ցուցականն այդ է, դ գիրը. եթէ այն է, ն գիրը, և Նախդիրները թէ գոյականին և թէ ածականին վրայ կը կրկնուին:

| | *Ցուցական՝ առաջ դրուած* | *Ցուցական՝ ետքը դրուած* |
|---|---|---|
| | Եզակի | Եզակի |
| Ո. | Այս տուն. | Տունս այս. |
| Ս. | Այսր տան. | Տանս այսորիկ. |
| Տ. | Այսմ տան. | Տանս այսմիկ. |
| Հ. | զԱյս տուն. | զՏունս զայս. |
| Բ. | յԱյսմ տանէ. | ՚ի Տանէս յայսմանէ. |
| Գ. | Այսու տամբ. | Տամբս այսուիկ. |
| | Յոգնակի | Յոգնակի |
| Ո. | Այս տունք. | Տունքս այսոքիկ. |
| Ս. | Այ՛ց տանց. | Տանցս այսոցիկ. |
| Տ. | Այսց տանց. | Տանցս այսոցիկ. |
| Հ. | զԱյս տունս. | զՏունսս զայսոսիկ. |
| Բ. | յԱյսց տանց. | ՚ի Տանցս յայսցանէ. |
| Գ. | Այսու տամբք. | Տամբքս այսոքիւք. |

Հ. Փոխանակ այս, այդ, այն ցուցականներու գրաբարին մէջ շատ անգամ ի՞նչ կը գործածուի:

Պ. Փոխանակ այս, այդ, այն ցուցականաց գրաբարին մէջ շատ անգամ ս, դ, ն (*) գիրերը միայն կը դրուին

(*) Ասկէ կը տեսնուի որ ս, դ, ն գիրերուն պաշտօնը գրաբարին եւ աշխարհաբարին մէջ տարբեր է. տունս, տունդ, տունն աշխարհաբարին մէջ կը նշանակէ իմ տունս, քու տունդ, անոր կամ էր տունը. իսկ գրաբարին մէջ՝ տունս, տունդ, տունն, կը նշա-



գոյականին վերջը. զոր օրինակ, փոխանակ ըսելու, Տունս այս, Տունդ այդ, Տունն այն, կրնայ ըսուիլ Տունս, Տունդ, Տունն:

## 14. Հրահանգ

### ԳՈՅԱԿԱՆ՝ ՑՈՒՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Այս տունը բարձր է. Այս մարդիկը թշնամի են. Այն երկիրն անմարդաբնակ է. Այս տեղս հանգիստ է. Այդ պարտէզը գեղեցիկ է. Այն տղաքը խօսք մտիկ ընող են. Այս զինուորներն հնազանդ են. Այդ խօսքերը պարապ են. Այն պարիսպներն անառիկ են. Այս ջուրերը յորդ են. Այն գետը պղտոր է. Այդ տեղը բարեխօս է. Այս պտուղներն հասած են. Այն կողմերը լեռնային են. Այս երկիրը դաշտային է. Այս ճամբաները խորտուբորտ են. Այդ խօսքերն հանճարեղ են. Այն մարդիկը պանդուխտ են:

Այս խօսքերը ճշմարիտ են. Այդ բարկութիւնը արդար է. Այն ստակը մերն է. Այս տղաք իմ են. Այս գիրքերը քուկդ են. Այդ կիներն ով են. Այս գիրքը լեցուն է. Այս քաղաքը պզտիկ է. Այդ պարտէզը մեծ չէ. Այս լեռները՞ բարձր են. Այդ տղան իմ եղբայրս է. Այդ աղջիկը մէկ հատիկ (աղջիկ) զաւակ է. Այս տղաքը ձեր որդիքն են:

| | |
|---|---|
| Մարդիկը, ադամ | Տեղ, տեղի |
| Անմարդաբնակ, ամայի | Խօսք մտիկ ընող, հլու |
| Հանդիստ, խաղաղ | Պարապ, անօթի |

նակէ այս տունը, այդ տունը, այն տունը: Կամ թէ ըսենք. ս, դ, ն աշխարհաբարին մէջ իմ, քու, անոր ստացական ածականաց տեղը կը բռնեն, իսկ գրաբարին մէջ՝ այս, այդ, այն ցուցական ածականաց տեղը:

| | |
|---|---|
| Անառիկ , ամուր | Քուկդ , քո |
| Բարէօդ , հոտաւէտ | Լեցուն , լի |
| Հասած , հասուն | Պզտիկ , փոքր |
| Խորտուբորտ , դժուարին | Չէ , չէ ինչ |
| Ճամբայ , ճանապարհ | Մէկ հատիկ , միամօր |
| Ստակ , արծաթ | (Աղջիկ) զաւակ , դուստր |
| Գիրք , մատեան | Որդիք , որդիք |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Այս տունը բարձր է · Բարձր է տունս ։ Է · բայ էակ· սահմ. ներկ· եզ· Գ· դէմ։ Ո՞վ է · — Տունն է · տուն գոյ· անուն եզ· ուղղ· տէր բայի է ին , ս ցուցական նշան , փոխանակ այս ցուցական ածականի։ Տունն է ի՞նչ · — Բարձր · բարձր որակ· ած· ստորոգելի տանն ին ։

15 Հրահանգ ·

### ՑԱՏԿԱՑՈՒՑԻՉ ՍՏԱՑԱԿԱՆ , ՑՈՒՑԱԿԱՆ ԵՒ ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Եղբօրս հանդերձները նոր են · Ձեր տղոցը կօշիկներն հին են · Մեր երկրին հողը պտղաբեր է · Ձեր պարտէզին ծառերը շատ են · Մեր Աստուծոյն ողորմութիւնը շատ է · Ձեր աղօթքին զօրութիւնը մեծ է · Քու ծառաներուդ խօսքերը տկար են · Այս տունին յարկը բարձր է · Այս քաղքին բնակիչները շատ են · Այն մարդոց ստակը քիչ է · Այն ծառաներուն տէրը խիստ է · Այն քաղքին պարիսպներն ամուր են · Այն գետին ջուրերը յորդ են · Այդ կնոջը որդին խելացի է · Այս աղբեր ակը պղտոր է · Այն աղբիւրին ջուրը պաղ է · Այդ բարեկամներուն խօսքերը քաղցր են · Այս ծառերուն պտուղներն հասուն են · Այն երկրին



օդն առողջ է · Այն ճամբուն երկայնութիւնը չափազանց է · Այն տղուն մահը ժամանակէն առաջ էր · Այս մարդուն չարութիւնը շատ մեծ է · Այս կնոջ բարեգործութիւններն հռչակեալ են ։

Քաջ մարդու որդի է · Իմաստուն ծառայի տէր է · Բարի մարդու կին է · Հարազատ եղբօր քոյր եմ · Մեծ քաղքի բնակիչ ենք · Բարեբարոյ կնոջ այր է · Հզօր թագաւորի բարեկամ եմ · Մեծամեծ բանակներու զօրավար է · Իմաստուն վարժապետի աշակերտ է · Ազնիւ հօր որդի է · Բարեպաշտ մօր աղջիկ էր · Երկնաւոր թագաւորին ծառաներն ենք · Աբրահամ շատ ծառաներու տէր էր · Հնազանդ որդիներու բնութիւնն այս է · Այս անտառը վայրենի գազաններու բնակարան է · Գէշ մարդու կին եմ · Արդար հոգիներու բնակարան է ։

| | |
|---|---|
| Շատ , բազում | Ժամանակէն առաջ , վաղաժամ |
| Խօսք , բան | Շատ մեծ , անհնարին |
| Ստակ , արծաթ | Բարեգործութիւն , լաւութիւն |
| Քիչ , սակաւ | Վարպետ, վարժապետ, վարդապետ |
| Խելացի , հանճարեղ | Բնութիւն , բարք |
| Ակ , ական | Աղջիկ , դուստր |
| Պաղ , ցուրտ | Բնակարան , բնակութիւն |
| Չափազանց , նոյն | Գէշ , ժանտ |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Նոր են հանդերձք եղբօր իմոյ · Են , բայ էակ· սահմ· ներկ· յք· Գ· դէմք · — Ո՞վ կամ ի՞նչ բաները են · — Հանդերձները · Հանդերձք , գոյ· ան· յոք· ուղղ· տէր բայի են ին ։ Որո՞ւն հանդերձները · — Եղբօրս · Եղբօր իմոյ , սեռ· հոլ· իմ ստաց· ածականով , յատկացուցիչ հանդերձքին ։ Հանդերձները են ի՞նչ · — Նոր · Նոր , ած· ստորոգելի հանդերձքին ։ Այսպէս միացածները ։

Հ. Անորոշ ածականք գոյականէն առաջ թէ՞ ետքը կը դրուին, և ի՞նչպէս կը համաձայնին։

Պ. Բաց ամենայնէ, որ սովորաբար գոյականէն առաջ կը դրուի և անփոփոխ կը մնայ, ուրիշ անորոշ ածականք սովորաբար գոյականէն ետքը դրուելով անոր հետ մէկտեղ կը հոլովին, այսպէս.

Եզակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Այր այլ. | Այր ոմն կամ ոք. |
| Ս. | Առն այլոյ. | Առն ուրուեմն կամ ուրուք. |
| Տ. | Առն այլում. | Առն ումեմն կամ ումեք. |
| Հ. | զԱյր այլ. | զԱյր ոմն կամ ոք. |
| Բ. | յԱռնէ այլմէ. | յԱռնէ ումեմնէ կամ ումեքէ. |
| Գ. | Արամբ այլով. | Արամբ ոմամբ. |

Յոգնակի

| | | |
|---|---|---|
| Ո. | Արք այլք. | Արք ոմանք. |
| Ս. | Արանց այլոց. | Արանց ոմանց. |
| Տ. | Արանց այլոց. | Արանց ոմանց. |
| Հ. | զԱրս այլս. | զԱրս ոմանս. |
| Բ. | յԱրանց այլոց. | յԱրանց ոմանց. |
| Գ. | Արամբք այլովք. | Արամբք ոմամբք. |

Ասոնցմէ ոմանք գոյականէն առաջ ևս կրնան դրըուիլ և հոլովիլ, զոր օրինակ.

Այլ տուն, այլոյ տան, այլով տամբ, ևն։

Հ. Ո՞ր հարցական անունն ի՛նչպէս կը համաձայնի գոյականին հետ։

Պ. Ո՞ր հարցական ածականը գոյականէն առաջ դրըուելով կը համաձայնի, զոր օրինակ.



| | Եզակի | Յոգնակի |
|---|---|---|
| Ո. | Ո՞ր տուն. | Ո՞ր տունք. |
| Ս. | Որո՞յ տան. | Որո՞ց տանց. |
| Տ. | Որո՞ւմ տան. | Որո՞ց տանց. |
| Հ. | զՈ՞ր տուն. | զՈ՞ր տունս. |
| Բ. | յՈրմէ՞ տանէ. | յՈրո՞ց տանց. |
| Գ. | Որո՞վ տամբ. | Որո՞վք տամբք. |

Հ. Ո՞վ կամ ո և զինչ, ի՞նչ բառի հետ մէկտեղ կը գործածուին։

Պ. Ո կը գործածուի ոք բառին հետ և կը նշանակէ ով, ո՛վ որ։ Զինչ կը գործածուի ինչ բառին հետ միայն, և կը նշանակէ ի՞նչ, բան։ Ո՞ ոք, և զի՞նչ ինչ կը հոլովին ի միասին այսպէս.

| | Եզակի | Յոգնակի | Եզակի |
|---|---|---|---|
| Ո. | Ո՞ ոք. | Ո՞յք ոմանք. | Զի՞նչ ինչ. |
| Ս. | Ո՞յր ուրուք. | Ո՞յց ոմանց. | Է՞ր իրիք. |
| Տ. | Ո՞ւմ ումեք. | Ո՞յց ոմանց. | Ի՞մ իմիք. |
| Հ. | զՈ՞ ոք. | զՈ՞յս ոմանս. | Զի՞նչ ինչ. |
| Բ. | յՈւմէ՞ ումեքէ. | յՈ՞յց ոմանց. | յԻմէ՞ իմեքէ. |
| Գ. | Որո՞վ ոմամբ. | Որո՞վք ոմամբք. | Ի՞ւ իւիք. |

## 16. Հրահանգ

### ԳՈՅԱԿԱՆ՝ ԱՆՈՐՈՇ ԵՒ ՀԱՐՑԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՈՎ

Ուրիշ աշխարհի բնակիչ են. Ուրիշ կերպով խօսեցաւ. Այրի կնկան մը որդի էր. Ուրիշ քաղաքներէ եկած ենք. Քանի մը մարդոց հանդիպեցանք. Ատիկա ուրիշ մարդու (տր.) տուէք. Ձերինը ո՞ր տունն է. Ո՞ր քաղքէ էք. Ո՞ր համարձակութեամբ անոր առջեւը պիտի ելնես. Դուն ի՞նչ մէկն ես. Ի՞նչ բանով կարօտ է. Ո՞ր (ի՞նչ) աչքով պիտի նայիս. Ո՞ր (կամ ի՞նչ) մար-

դու որդի է ատիկա. Անիկա բոլոր երկրիս տէրն է. Յունաստանի բոլոր քաղաքներէն եկան. Ուրիշ տիրոջ (տր.) ծառայենք. Ասիկա ուրիշ վարպետի գործ է. Ատիկա ի՞նչ բանի (տր.) օգտակար է.

| | |
|---|---|
| Կերպ, օրինակ | Ի՞նչ բանով, ի՞ւ իւիք |
| (Կնկան) մը, ումն | Ո՞ր, ի՞նչ, որպիսի՞ |
| Եկած ենք, եկեալ եմք | Բոլոր, ամենայն |
| Քանի մը, ոմանք | Յունաստան, Յոյնք |
| Հանդիպեցանք, հանդիպեցաք | Եկան, եկին |
| Անոր առջեւը, առաջի նորա | Ծառայենք, ծառայեսցուք |
| Պիտի ելլես, ելցես | Վարպետ, ճարտար |
| Ի՞նչ մէկը, որպիսի՞ ոք | Ի՞նչ բանի, ի՞մ իմիք |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Ուրիշ աշխարհի բնակիչ են. Բնակիչ են այլոյ աշխարհի։ Են, բայ. էակ. սհմ. ներկ. յք. Գ. դէմ։ Ո՞վ են. — Նոքա, էակ. դեր. Գ. դէմ. յք. ուղ. տէր բայի են ին, զօրութեամբ կ'իմացուի։ Նոքա են, ի՞նչ. — Բնակիչ, գոյ. ան. ուղ. ստորոգելի նոքա ին։ Նոքա են բնակիչ, ի՞նչ բանի. — Այլոյ աշխարհի. աշխարհի, գոյ. ան. եզ. սեռ. յատկացուցիչ բնակիչ ին, այլ անորոշ ած. աշխարհին։

## ԴԱՍ ԺԲ.

### ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է Դերանուն։

Պ. Դերանուն կը կոչուին քանի մը բառեր, որ կը դրուին խօսքին մէջ արդէն յիշուած անուան մը տեղ, զոր օրինակ.



Թագաւորը և նորա զինուորները.

Տեսա՞ք այն մարդը որոյ որդին իմ աշակերտս է։

Այս խօսքերուս մէջ. նորա, որոյ, դերանուն են. առաջինը կը յարաբերէ Թագաւորը, երկրորդը՝ մարդը, փոխանակ ըսելու. Թագաւորը և թագաւորին զինուորները. Տեսա՞ք այն մարդը, այն մարդուն որդին իմ աշակերտս է։

Հ. Քանի՞ տեսակ դերանուն կայ։

Պ. Չորս տեսակ դերանուն կայ. էական կամ անձնական, ստացական, ցուցական և յարաբերական։

Հ. Ո՞րք են էական դերանուն։

Պ. Էական դերանուն են, Ես, դու, նա։ Ես կը ցուցնէ առաջին դէմք, այսինքն՝ խօսողը. դու՝ երկրորդ դէմք, այսինքն՝ այն առ որ խօսքը կ'ուղղուի. Նա՝ երրորդ դէմք, այսինքն՝ այն որոյ վրայ կը խօսուի։

---

### 1. ԷԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչպէս կը հոլովին էական դերանուանք։

Պ. Էական դերանուանք կը հոլովին այսպէս.

| | Ա. ԴԷՄՔ Եզակի | Ա. ԴԷՄՔ Յոքնակի | Բ. ԴԷՄՔ Եզակի | Բ. ԴԷՄՔ Յոքնակի |
|---|---|---|---|---|
| Ո. | Ես. | Մեք. | Դու. | Դուք. |
| Ս. | Իմ. | Մեր. | Քո. | Ձեր. |
| Տ. | Ինձ. | Մեզ. | Քեզ. | Ձեզ. |
| Հ. | զԻս. | զՄեզ. | զՔեզ. | զՁեզ. |
| Բ. | յԻնէն. | ՚ի Մէնջ. | ՚ի Քէն. | ՚ի Ձէնջ. |
| Գ. | Ինեւ. | Մեօք. | Քեւ. | Ձեօք. |

Գ. ԴԷՄՔ

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | Նա. | Նոքա. |
| Ս. | Նորա. | Նոցա. |
| Տ. | Նմա. | Նոցա. |
| Հ. | զՆա. | զՆոսա. |
| Բ. | 'ի Նմանէ. | 'ի Նոցանէ. |
| Գ. | Նովաւ. | Նոքօք. |

Հ. Քանի՞ է երրորդ դէմքի դերանունը։

Պ. Երրորդ դէմքի դերանունն է երեք. սա, դա, նա։ Սա կը ցուցնէ այն որ մօտ է. դա՝ այն որ հեռուն է. նա՝ կը ցուցնէ այն որ բացակայ է։

Հ. Կա՞յ երրորդ դէմքի ուրիշ դերանուն։

Պ. Երրորդ դէմքի դերանուն է նաեւ ինքն, իւր, որ կը հոլովի այսպէս.

| | Եզակի | Յոքնակի |
|---|---|---|
| Ո. | ինքն. | ինքեանք կամ իւրեանք. |
| Ս. | ինքեան կամ իւր կամ իւրեան. | ինքեանց » իւրեանց. |
| Տ. | ինքեան կամ իւր կամ իւրեան. | ինքեանց » իւրեանց. |
| Հ. | զինքն. | զինքեանս » զիւրեանս. |
| Բ. | յինքենէ կամ յիւրմէ. | յինքեանց » յիւրեանց. |
| Գ. | ինքեամբ կամ իւրեւ կամ իւրեաւ կամ իւրեամբ. | ինքեամբք » իւրեամբք. |

---

## 2. ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ո՞րք են Ստացական դերանուն։

Պ. Ստացական դերանուն են, իմ, քո, մեր, ձեր, իւր։ (Ասոնց հոլովման կերպը տես Դաս Ժ. 3. Ստացական ածական)։



## 3. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ո՞րք են Ցուցական դերանուն։

Պ. Ցուցական դերանուն են, այս, այդ, այն։ (Ասոնց եւս հոլովման կերպը տես Դաս Ժ. 4. Ցուցական ածական)։

---

## 4. ՑԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է Ցարաբերական դերանուն։

Պ. Ցարաբերական դերանուն է որ կամ ո։ (Ասոր հոլովման կերպը տես Դաս Ժ. 6. Հարցական ածական)։

Հ. Ստացական դերանուանք իմ, քո, մեր, ձեր, իւր. և Ցուցական դերանուանք այս, այդ, այն դերանո՞ւն են թէ ածական։

Պ. Ստացական և Ցուցական դերանուանք թէ՛ ածական են և թէ գոյական։ Ածական են, երբ գոյականի մը հետ են. իսկ երբ առանց գոյականի մինակ կը գործածուին, դերանուն են։ Զոր օրինակ, երբ կ'ըսեմ, Տուն իմ, իմ տունս. իմ՝ ածական է. երբ կ'ըսեմ իմ է տունս։ Այս տունն իմն է, կամ, Տուր ինձ զիմս, իմս ինծի տուր, իմ՝ դերանուն է։ Նոյնպէս, երբ կ'ըսեմ, Տունս այս, այս տունը. այս՝ ածական է. երբ կ'ըսեմ, Այս է մատեան քո, այս է քու գիրքդ. այս՝ դերանուն է։

Հ. Ուրիշ ի՞նչ գիտելիք կայ ստացական դերանուանց վրայ։

Պ. Ստացական դերանուանք իմ, իմինս. քո, քուկինդ. մեր, մերինը. ձեր, ձերինը. իւր, իրենը. ինչպէս նաեւ նորա, անորը. նոցա, անոնցը. իւրեանց, իրենցը,

երբ ուժեր բայի են, յոգնակիի մէջ ք գիրը կ'առնուն, և միշտ ն յօդով կը գործածուին. բայց երբ ստորոգելի են, այս երկու գիրերը չեն առնուր. զոր օրինակ.

Իմինս աղէկ է, քուկինդ, Բարւոք է իմն, քոյն կամ քոյդ
անորը գէշ է. կամ նորայն՝ յոռի

Մերինները, ձերիններն հնազանդ են մերքն, ձերքն, նո-
հնազանդ են, անոնց- ցայքն՝ ապստամբ
ներն անհնազանդ.

Այս տղայքն իմս, քուկդ, իմ, քո, մեր, ձեր, նորա են
մերը, ձերը, անորն են. մանկունք

Այդ գիրքն անոնցն է. Նոցա է մատեանդ

17· Հրահանգ

ԷԱԿԱՆ ԵՒ ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒԱՆՔ

Ես քու բարեկամդ եմ. Դուն իմ ծառաս ես. Ան իմ եղբայրս է. Մենք ձեր ընկերներն ենք. Դուք մեր օգնականն էք. Անոնք իմ տղաքս են. Այս երկիրը ձերն է. Այդ գետը մերն է. Իմ որդիներս ասոնք են. Իմ որդիս գեղեցիկ է, քուկինդ տգեղ է. Ձեր խօսքերն արդար են, անոնցն անիրաւ են. Ատոնք ո՞վ են. Ասոնք իմ աղջիկներս են. Այս դպրոցին աշակերտներն ասոնք են. Իմ անունս այս է. Անոր խօսքերն ասոնք են. Ձեր որդւոյն վարպետն ես եմ. Այս եկեղեցւոյն շինիչն այս է. Դուն մարգարէ մի ես. Ատիկա մեղաւոր է. Մենք արդար ենք. Այս գեղեցիկ ամարանոցն իմս է. Այս տունին բոլոր կարասին անորն է. Այդ տղան քուկդ է. Անիկա իմ եղբօրորդիս է. Դուք մեր սիրելիներն էք. Քու տղաքդ անհնազանդ են, իմիններս խօսք մտիկ ընող են. Անիկա ճերմակ է. Իմինս սեւ (թուխ) էր:



Անոնք, նոքա — Վարպետ, վարժապետ
Ասոնք, սոքա — Մը, մի
Քուկինդ, քուկդ, քոյդ — Անհնազանդ, խեռ
Անոնցը, նոցայն — Խօսք մտիկ ընող, հլու
Ատոնք, դոքա — Ճերմակ, սպիտակ
Ասոնք, սոքա, այսոքիկ — Սեւ, Թուխ

ԼՈՒԾՈՒՄ

Ես քու բարեկամդ եմ. Բարեկամ քո եմ ես. Եմ, էակ. բայ. սահմ. ներկ. եզ. Ա. դէմք. — Եմ, ո՞վ, — Ես. ես, էակ. դեր. Ա. դէմք. Տէր բայի Եմ-ին. — Ես եմ, ի՞նչ. — Քու բարեկամդ, բարեկամ քո. բարեկամ, գոյ. ան. եզ. ուղղ. ստորոգելի եմ-ին. քո, ստաց. ած. բարեկամ-ին:

Ատոնք ո՞վ են. Ո՞վ են դոքա. Են, էակ. բայ սահմ. ներկ. յք. Գ. դէմք. Են, ո՞վ. — Ատոնք, Դոքա. դոքա՝ էակ. դեր. յք. ուղղ. Գ. դէմք, Տէր բայի Են-ին. Ո՞վ, հարցական անուն ստորոգելի դոքա-ին:

Այս գեղեցիկ ամարանոցն իմս է. Իմ է ամարանոցս գեղեցիկ. Է, էակ. բայ սահմ. ներկ. եզ. Գ. դէմք. — Ո՞վ է, — Այս գեղեցիկ ամարանոցը, ամարանոցս գեղեցիկ. Ամարանոց՝ Տէր բայի է-ին. ս ցուցական ած. այս-ի տեղ. գեղեցիկ՝ որակական ած. ամարանոցին: Այս գեղեցիկ ամարանոցը որո՞ւ է. Իմս, իմ է. իմ ստացական դեր. ստորոգելի ամարանոցին:

## ԴԱՍ ԺԳ.

### ԱԾԱԿԱՆ ԲԱՅ, ՍԵՌԻ ԽՆԴԻՐ

Հ. Քանի՞ տեսակ են ածական բայերն, այսինքն՝ եմ էական բայէն զատ ուրիշ բայեր (տես Դաս Գ.)։

Պ. Ածական բայերը երկու տեսակ են, Ներգործական և Չէզոք։

Հ. Ո՞ր բայերը ներգործական են։

Պ. Ներգործական են այն բայերը որ հայցական հոլով կ'ուզեն ամբողջ իմաստ տալու համար. զոր օրինակ երբ կ'ըսեմ՝ կը սիրեմ, կ'ուտեմ, կը գրեմ, չեմ յայտներ ամբողջ իմաստ. քանզի չեմ յայտներ թէ ո՞վ կը սիրեմ, ինչ բան կ'ուտեմ, կամ կը գրեմ. բայց երբ կ'ըսեմ՝ կը սիրեմ քաղցրաւենի. կ'ուտեմ հացը. կը գրեմ նամակը՝ քաղցրաւենի, հացը, նամակը բառերը կ'ամբողջացունեն կը սիրեմ, կ'ուտեմ, կը գրեմ բայերուն իմաստը։ Ամէն բայ որ կրնայ այսպէս հայցական հոլով ունենալ՝ Ներգործական բայ է։ Ներգործական բայերուն այս հայցականը կը կոչուի սեռի խնդիր։

Հ. Ո՞ր բայերը չէզոք են։

Պ. Չէզոք են այն բայերը որ չեն կրնար ունենալ Սեռի խնդիր, կամ կը յայտնեն ամբողջ իմաստ առանց սեռի խնդրոյ, ինչպէս՝ կը քնանամ, կը պտըտիմ, կը նստիմ, կը մեռնիմ։

Ուստի գիտնալու համար թէ բայ մը ներգործակա՞ն է թէ չէզոք, ընելու է ո՞վ կամ ի՞նչ բան հարցումը. եթէ կը յարմարի բային իմաստին, այն բայը ներգործական է. ապա թէ ոչ՝ չէզոք է։ Զոր օրինակ՝ կրնանք ըսել. Կը սիրեմ. — զո՞վ կամ ի՞նչ. Կ'ուտեմ — ի՞նչ. Կը գրեմ — ի՞նչ. Կը ծեծեմ — զո՞վ. Կը պատմեմ — ի՞նչ. ապա՝ կը սիրեմ, կ'ուտեմ, կը գրեմ, կը ծեծեմ,



կը պատմեմ, ներգործական են։ Բայց չենք կրնար ըսել. Կը քնանամ — զո՞վ կամ ի՞նչ. կը դառնամ — զո՞վ կամ ի՞նչ. Կը պտըտիմ — զո՞վ կամ ի՞նչ. Կը նստիմ — զո՞վ կամ ի՞նչ. ուրեմն կը քնանամ, կը դառնամ, կը պտըտիմ, կը նստիմ, չէզոք են։

Հ. Հայերէնի մէջ բայերը քանի՞ կերպ վերջաւորութիւն ունին։

Պ. Հայերէնի մէջ բայերը չորս կերպ վերջաւորութիւն ունին. Եմ, կը սիրեմ, Իմ, կը խօսիմ. Ամ; կ'աղամ. Ում, կը թողում։ Այս չորս կերպ վերջաւորութեանց Չորս Լծորդութիւն կ'ըսուի. Սիրեմ՝ առաջին լծորդութեան բայ է. Խօսիմ՝ երկրորդ լծորդութեան. Աղամ՝ երրորդ. Թողում՝ չորրորդ։

## ԴԱՍ ԺԴ.

### Ա. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅՆ. ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին առաջին լծորդութեան բայերը։

Պ. Առաջին լծորդութեան բայերէն ոմանք եմ կը վերջաւորին, ինչպէս՝ սիր-եմ. ոմանք ալ անեմ կը վերջաւորին, ինչպէս՝ հատ-անեմ։ Ասոնց խոնարհման կերպն է այս.

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Սիր-եմ, կը սիրեմ. | Հատ-անեմ, կը հատնեմ |
| Սիր-ես | Հատ-անես |
| Սիր-է | Հատ-անէ |
| Սիր-եմք | Հատ-անեմք |
| Սիր-էք | Հատ-անէք |
| Սիր-են | Հատ-անեն |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Սիր-էի , կը սիրէի · | Հատ-անէի , կը կտրէի · |
| Սիր-էիր | Հատ-անէիր |
| Սիր-էր | Հատ-անէր |
| Սիր-էաք | Հատ-անէաք |
| Սիր-էիք | Հատ-անէիք |
| Սիր-էին | Հատ-անէին |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Սիր-եցի , սիրեցի · | Հատ-ի , կտրեցի · |
| Սիր-եցեր | Հատ-եր |
| Սիր-եաց | Ե-հատ , հատ |
| Սիր-եցաք | Հատ-աք |
| Սիր-եցէք | Հատ-էք |
| Սիր-եցին | Հատ-ին |

### Ապառնի

| | |
|---|---|
| Սիր-եցից , պէտք սիրեմ · | Հատ-ից , պէտք կտրեմ · |
| Սիր-եսցես | Հատ-ցես |
| Սիր-եսցէ | Հատ-ցէ |
| Սիր-եսցուք | Հատ-ցուք |
| Սիր-եսջիք | Հատ-ջիք |
| Սիր-եսցեն | Հատ-ցեն |

### Հրամայական

| | |
|---|---|
| Սիր-եա , սիրէ · | Հատ , կտրէ · |
| Մի սիր-եր | Մի հատ-աներ |
| Սիր-եցէք | Հատ-էք |
| Մի սիր-էք | Մի հատ-անէք · |

### Ստորադասական

| | |
|---|---|
| Սիր-իցեմ, սիրեմ · | Հատ-անիցեմ, կտրեմ · |
| Սիր-իցես | Հատ-անիցես |
| Սիր-իցէ | Հատ-անիցէ |



| | |
|---|---|
| Սիր-իցեմք | Հատ-անիցեմք |
| Սիր-իցէք | Հատ-անիցէք |
| Սիր-իցեն | Հատ-անիցեն |

### Աներեւոյթ

| | |
|---|---|
| Սիր-ել, սիրել · | Հատ-անել, կտրել · |

### (*) Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Սիր-եալ, սիրած · | Հատ-եալ , կտրած · |

### Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Սիր-ելոց , սիրելու · | Հատ-անելոց , կտրելու · |

Հ. Գիտնալու հարկաւոր ի՞նչ բան կայ առաջին լծորդութեան բայերուն վրայ ։

Պ. Եմ վերջաւորած բայերէն ուտեմ, բերեմ և հանեմ՝ հատանեմին պէս կը խոնարհին , ուստի պէտք է ըսել՝ ած-է , բեր-է , հան-է · ած-էք , բեր-էք , հան-էք · Հրմ. ած , բեր , հան , փոխանակ ըսելու ած-եցի , բեր-եցի · ած-եցէք , բեր-եցէք · ած-եա , բեր-եա , ևն ։

Ընդհանրապէս քանի մը անեմ վերջաւորած բայեր , ինչպէս՝ դարմանեմ, սերմանեմ, ժամանեմ, կը խոնարհին սիրեմին պէս , դարման-եցի , սերման-եցի , ևն · քանզի ասոնց արմատներն են դարման , սերման , ժաման ։ Հարկանեմ բայը կատարեալին , ապառնոյն , հրամայականին և անցելոյն մէջ կը կորսնցնէ կ գիրը և կ'ըսուի՝ Հարի , հարից , հար , հարեալ · և ոչ հարկի , հարկից ևն ։

---

(*) Բայերուն արմատը ող կամ օղ մասնկամբ կը համարուի ընդունելութիւն ներկայ . ինչպէս՝ սիր-ող , գործ-ող , ստեղծ-ող · ասոր վրայ ուրիշ տեղ ։

## ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ

Հ· Շարադրութեան մէջ ի՞նչ կարգաւ շարուելու են տէր բային, բայը և սեռի խնդիրը։

Պ· Սովորաբար նախ տէր բայն կը դրուի, ապա բայը և ապա՝ սեռի խնդիրը։

Հ· Միշտ դրուելո՞ւ է տէր բային։

Պ· Հայերէն թէ՛ գրաբար և թէ աշխարհաբար դերանուն տէր բայերը, ես, դու, նա. մեք, դուք, նոքա, սովորաբար յայտնի չեն գրուիր, այլ լռելեայն, կամ զօրութեամբ կ՛իմացուին· ուստի կ՛ըսենք՝ Բարեկամս կը սիրեմ, Զանոնք կերակրեցին, Զիս խաբեցիր, փոխանակ ըսելու՝ Ես կը սիրեմ բարեկամս, Անոնք կերակրեցին զանոնք, Դուն խաբեցիր զիս։ Այսպէս իմացիր նաեւ գրաբարը։

| | |
|---|---|
| (*) Բժշկեմ, կը բժշկեմ | Բրեմ, երկիրը փորել |
| Արտասուեմ, կու լամ | Պեղեմ, փորուած հողը դուրս հանել |
| Կեղեքեմ, կը հարստահարեմ, կը կողոպտեմ | Մաղեմ, կը մաղեմ |

### 18· Հրահանգ

#### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ՝ ՍԵՌԻ ԽՆԴՐՈՎ

Կը սիրեմ բարեկամներս· Հայրը կը խրատէր իւր որդին· Ընկերներս զիս կ՛ատեն· Մայրն իւր աղջիկը կը խնամէ· Մեր ծառաներն ղրկեցինք· Եղբայրդ քեզ կը կանչէ· Զեզի (հյց.) կ՛աղաչեմ· Հայրս գրեց այս թուղթը (նամակ)· Սենեկին դուռը գոցեց· Մեր ընկերները սիրենք· Իւր բարեկամներն հրաւիրեց· Զանոնք կերակրեցին· Իմ օրէնքներս մերժեցին· Զիս խաբեցիր· Պահէ զանոնք· Մեզ պահպանէ· Ծառին պտուղները քաղեցինք (բրցունել)· Իւր տունը շինեց· Աշտարակը կործանեցին· Իրենց ուռկանները կազմեցին (պատրաստեցին, նորոգեցին)· Քուրձը պարպեցինք· Զանոնք արձակեմ (համբայ տալ, թողուլ որ երթայ)· Վարժապետն իւր ստահակ աշակերտը կը պատժէ· Աստուած մեզ պիտի փրկէ· Իրենց գերիներն ազատեցին· Ոստիկանները գողը կը փնտռեն· Ձին ծախեցի· Գիրքը գնեցինք· Մեր հայրն այս պարտէզը գնեց· Իւր բոլոր բարեկամները կանչեց· Կինն իւր դրացիները կը կանչէ· Հովիւներն ոչխարները կ՛արածեն· Ես կը մատնեմ զնա· Քահանայապետն իւր հանդերձը պատռեց· Այս կինն իւր տղաքը կը սիրէ· Իմ եղբայրներս և քոյրերս կը սիրեմ· Քու ծաղիկներդ ոռոգեցի՞ր· Իմիններս և քուկիններդ ոռոգեցի· Քոյրս իրեններն ոռոգեց· Մշակներն երկիրը կը գործեն· Իւր գործը կատարեց· Ցորենը ժողվենք· Ցարդն այրեցին· Ամբոխը (բազմութիւնը) ցրուեցին· Քաղաքը նուաճեց (առաւ, տիրեց)· Իւր արցունքները սրբեց· Լաթերդ մի աղտոտեր· փողոցը շտկեցին· Իւր տունը զարդարեց· Անոր ձեռքերն ու ոտքերը կապեցին· Մեր մեռելները թաղենք· Անոր ծնկուըները ջարդեցին· Այծին ձագն եփեց· Տանը դուռը կը զարնէր· Տղան մկրտեցին· Իւր բոլոր ունեցածը վաճառեց· Աստուած Աբրահամը օրհնեց։

(*) Աշակերտք այս բայերէն մի կամ աւելի գրով խոնարհեն։



| | |
|---|---|
| Աղջիկ, դուստր | Փնտռեմ, խնդրեմ |
| Ծառայ, սպասաւոր | Ծախեմ, վաճառեմ |
| Ղրկեմ, առաքեմ, յղեմ | Ոչխար, խաշն յգ. խաշինք |
| Կանչեմ, կոչեմ | Պատռեմ, պատառեմ |
| Գոցեմ, փակեմ | Տղայ, մանուկ յգ. մանկունք |
| Իրենց, իւրեանց | Իմիններս, իմքն հյց. զիմսն |
| Պարպեմ, թափեմ | Քուկիններդ, քոյքն հյց. զքոյսն |
| Ազատեմ, արձակեմ | Իրենները, նորքն հյց. զնորսն |

| | |
|---|---|
| Ցորեն, ցորեան | Ծնկուըները, ծունկք |
| Արցունք, արտասուք | Զարդեմ, խորտակեմ |
| Լաթ, քուրջ | Այծի ձագ, ուլ |
| Աղտոտեմ, աղտեղեմ | Զարնեմ, բաղխեմ |
| Շտկեմ, յարդարեմ | Բոլոր, ամենայն |
| Մեռել, մեռեալ | Ունեցածը, ինչք |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Սիրեմ զբարեկամս իմ. սիրեմ՝ բայ ներգ. Սահմ. ներկ. եզ. Ա. դէմ. —Ո՞վ կը սիրէ. —Ես. հակ. դեր. տէր բային Սիրեմին, զօրութեամբ կ'իմացուի։ Սիրեմ՝ զո՞վ. —զբարեկամս իմ, իմ բարեկամներս. զբարեկամս գոյ. ան. եզ. հայց. սեռի խնդիր Սիրեմին. իմ՝ ստաց. ածական բարեկամին։

| | |
|---|---|
| (*) Հարկանեմ, զարնեմ | Արկանեմ, կը ձգեմ (վրան ձգել) |
| Կլանեմ, կը կլլեմ | Հանեմ, կը հանեմ |
| Գտանեմ, կը գտնեմ | Ածեմ, կը բերեմ |
| Մուծանեմ, կը մտցնեմ, կը խոթեմ | Անիծանեմ, կ'անիծեմ |

## 19. Հրահանգ

### ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ՝ ՍԵՌԻ ԽՆԴՐՈՎ

Մարդը տեսա՞ր. Զանի տեսայ. Գեղեցիկ մարդաբիտը գտանք. Իւր սուրը հանեց. Զեր սպասաւորները և աղախինները տեսանք. Մեր ճամբորդները հասան. Սպասաւորը խօսքը յայտնեց. Հայրը որդին անիծեց. Զեր տղաքը բերէք. Լաթերդ հագիր. Կորսուած ոչխարս գտայ. Սուրդ կապէ. Զանոնք կլլենք. Զմեզ մոցուց. Մեր օրերը կ'անցնին. Մակոյկին չուանը

(*) Աշակերտք խոնարհեն այս բայերն զօրանս հարկանեմին պէս.



կտրեցին. Անոր կապերը քակեցին. Իւր իմաստութիւնը ցուցուց. Անձրեւներն իջան. Արեգակը կ'ելլէ. Լուսինը և աստղերը կը մտնեն. Քու եղբայրներդ գտայ. Զանոնք տեսնեմ. Սպասաւորները զանի զարկին. Այրն կնոջն աղջիկը սպաննեց. Ճրագը վառեցին (փունկցունել). Զանոնք զարնենք. Դուրս ելլեն. Ներս մտնենք. Ատիկա կտրէ. Այդ աւանակը մի քակեր. Երեսդ ինծի ցուցուր. Սպաննեցէք զանոնք։

| | |
|---|---|
| Տեսնեմ, տեսանեմ | Մտցնեմ, մուծանեմ |
| Գտնեմ, գտանեմ | Անցնիմ, անցանեմ |
| Ճամբորդ, ճանապարհորդ | Չուան, պարան |
| Աղախին, աղախին. յք. աղախնայք | Կտրեմ, հատանեմ |
| | Կապ, կապանք |
| Հասնիմ, հասանեմ | Քակեմ, լուծանեմ |
| Յայտնեմ, 'ի վեր հանեմ (երեւան հանել) | Ցուցնեմ, ցուցանեմ |
| | Իջնեմ, իջանեմ |
| Անիծեմ. անիծանեմ | Ելլեմ, ելանեմ |
| Բերեմ (ինչաւոր մը որ քալելով կու գայ), ածեմ | Մտնեմ, մտանեմ |
| | Զարնեմ, հարկանեմ. կտր. հարէ |
| Հագնիմ, արկանեմ | Սպաննեմ, սպանանեմ |
| Կորսուած, կորուսեալ | Վառեմ, լուցանեմ |
| Կապեմ (փաթթել գօտի եւն), ածեմ | Դուրս, արտաքս |
| | Ներս, 'ի ներքս |
| Կլլեմ, կլանեմ | Աւանակ, յաւանակ |

## ԼՈՒԾՈՒՄ

Տեսե՞ր զայրն. մարդը տեսա՞ր. Տեսեր՝ բայ ներգոր. կտր. եզ. Բ. դէմ. Տեսանեմին։ —Ո՞վ է տեսնողը. —Դու, դու. հակ. դեր. եզ. ուղղ. Բ. դէմ. տէր բային Տեսերին, զօրութեամբ կ'իմացուի։ Դու տեսեր՝ զո՞վ. Զայրն, մարդը. զայրն՝ գոյ. եզ. հայց. սեռի խնդիր Տեսերին։

# ԴԱՍ ԺԵ.

## Բ. ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐ, ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին երկրորդ լծորդութեան բայերը։

Պ. Երկրորդ լծորդութեան բայերէն ևս ոմանք իմ կը վերջաւորին, ինչպէս՝ խօս-իմ, և ոմանք՝ անիմ, ինչպէս՝ ուս-անիմ։ Ասոնց խոնարհման ձևը սա է։

Սահմանական եղանակ Ներկայ

| | |
|---|---|
| Խօս-իմ, կը խօսիմ. | Ուս-անիմ, կը սորվիմ. |
| Խօս-իս | Ուս-անիս |
| Խօս-ի | Ուս-անի |
| Խօս-իմք | Ուս-անիմք |
| Խօս-իք | Ուս-անիք |
| Խօս-ին | Ուս-անին |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Խօս-էի, կը խօսէի. եւն. | Ուս-անէի, կը սորվէի. եւն. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Խօս-եցայ, խօսեցայ. | Ուս-այ, սորվեցայ. |
| Խօս-եցար | Ուս-ար |
| Խօս-եցաւ | Ուս-աւ |
| Խօս-եցաք | Ուս-աք |
| Խօս-եցայք | Ուս-այք |
| Խօս-եցան | Ուս-ան |

Ապառնի

| | |
|---|---|
| Խօս-եցայց, պիտի խօսիմ. | Ուս-այց, պիտի սորվիմ. |
| Խօս-եսցիս | Ուս-ցիս |
| Խօս-եսցի | Ուս-ցի |



| | |
|---|---|
| Խօս-եսցուք | Ուս-ցուք |
| Խօս-եսջիք | Ուս-ջիք |
| Խօս-եսցին | Ուս-ցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Խօս-եաց, խօսէ. | Ուս-իր, սորվէ. |
| Մի խօս-իր | Մի ուս-անիր |
| Խօս-եցարուք | Ուս-արուք |
| Մի խօս-իք | Մի ուս-անիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Խօս-իցիմ, խօսիմ. եւն. | Ուս-անիցիմ, սորվիմ. եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Խօս-ել, խօսիլ. | Ուս-անել, սորվիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Խօս-եալ, խօսած. | Ուս-եալ, սորված. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Խօս-ելոց, խօսելու. | Ուս-անելոց, սորվելու. |

Հ. Գիտնալու հարկաւոր ի՞նչ բան կայ երկրորդ լծորդութեան բայերուն վրայ։

Պ. 1 Իմ վերջաւորած բայերէն նստիմ, ուսանիմին պէս, կ'ըլլայ նստ-այ, նստ-այց, նիստ. ոչ թէ խօսիմին պէս՝ նստ-եցայ, նստ-եցայց, եւն։

2. Իմ վերջաւորեալ բայերէն ոմանց անցեալը կ'ըլլայ նաեւ եցեալ, ինչպէս՝ խօսիմ, խօսեցեալ. կոչիմ, կոչեցեալ։

| | |
|---|---|
| (*) Տրջիմ, կը դողդղիմ | Անկանիմ, կ'իյնամ |
| Թուիմ, կ'երեւնամ | Տառապիմ, կը նեղուիմ |
| Երեւիմ, կ'երեւնամ | Սնանիմ, կը սնանիմ |
| Կարծիմ, կը կարծեմ | Ջերմանիմ, կ'տաքնիմ |

(*) Աշակերտք այս բայերէն զոմանս խոնարհեն գրով։

# ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆ

Հ. Ի՞նչ կը նշանակէ անորոշ և որոշեալ։

Պ. Երբ բան մը ընդհանուր մտօք կ'առնուի, կ'ըսուի անորոշ։ Զոր օրինակ, երբ կ'ըսեմ, Տղան հօս է, կամ, Տղաքը հօս են, տղան կամ տղաքը բառերն են որոշեալ, կը նշանակեն այս ինչ տղան կամ տղաքը. բայց երբ կ'ըսեմ, Ներսը տղայ կայ, հօս տղայ բառն առնուած է անորոշ մտօք, և կը նշանակէ ոչ այս ինչ այլ որ և իցէ տղայ։

Հ. Ի՞նչպէս կը տարբերին որոշեալ և անորոշ անուանք խօսքի մէջ։

Պ Անորոշ անուան վրայ չդրուիր յօդ, այսինքն՝ աշխարհաբարին մէջ՝ ը, և գրաբարին մէջ ն գիրը. իսկ որոշեալ անուանց վրայ կը դրուի յօդ. զոր օրինակ հացը, հացն, որոշեալ են. հաց, անորոշ է։

Հ. Ի՞նչ է անորոշ հայցական։

Պ. Անորոշ անուան մը հայցականը կը կոչուի անորոշ հայցական։ Անորոշ հայցականը գրաբարին մէջ չառնուր զ նախդիրը, իսկ որոշեալ հայցականը կ'առնու միշտ զ նախդիրը։ Սա խօսքին մէջ, Տուր ինձ զհացն, հացը ինծի տուր, զհացն որոշեալ հայցական է, քանզի ունի ն յօդը և զ նախդիրը։ Իսկ սա խօսքին մէջ, Տուր ինձ հաց. ինծի հաց տուր. հաց անորոշ հայցական է, ուստի և չունի ոչ ն յօդը ոչ զ նախդիրը։

## ՈՐՈՇԵԱԼ ԵՒ ԱՆՈՐՈՇ ՀԱՅՑԱԿԱՆԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ

—

*Որոշեալ*

| | |
|---|---|
| Տուր ինձ զհացն | Հացը տուր ինծի |
| Ետ զմանուկն ցհայր իւր | Տղան հօրը տուաւ |
| Սպանին զայրն | (Այն) մարդիկը սպաննեցին |



*Անորոշ*

| | |
|---|---|
| Տուք դոցա հաց | Ատոնց հաց տուէք |
| Կացոյց մանուկ մի 'ի միջի նոցա | Անոնց մէջտեղ տղայ մը կեցուց |
| Ընտրեա քեզ այրս հաւատարիմս | Քեզի հաւատարիմ մարդիկ ընտրէ |

---

## ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Ի՞նչ է բնութեան խնդիր։

Պ. Խօսքի մէջ բաց ուղղական հոլովէն՝ որ է տէր բայի, և հայցական հոլովէն՝ որ է սեռի խնդիր, ուրիշ հոլովներ, զոր օրինակ՝ տրականը, բացառականը, գործիականը կը կոչուին բնութեան խնդիր։

Հ. Ի՞նչ հարցման պատասխան է տրական հոլովը։

Պ. Տրական հոլովը պատասխան է որո՞ւ (ինչի՞) հարցման։ Զոր օրինակ՝ սա խօսքին մէջ, Մարդուն տուի, մարդուն է տրական, քանզի է պատասխան որո՞ւ (ինչի՞) հարցման։ Որո՞ւ տուի. — Մարդուն (*)։

ՕՐԻՆԱԿ

| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Մարդուն տուի | Ետու առնն |
| Քու եղբօրդ ըսի | Ասացի եղբօր քում |
| Անոր իր յանցանքները ներեցի | Թողի նմա զյանցանս իւր |
| Ինծի պարգևներ տուաւ | Ետ ինձ պարգևս |
| Իւր գանձերը ցուցուց անոնց [նեցի | Եցոյց նոցա զգանձս իւր |
| Գաղտնիքս քեզի յայտ- | Յայտնեցի քեզ զգաղտնիս իմ |

(*) Հայերէն սեռական եւ տրական հոլովներն ընդհանրապէս ունին միեւնոյն վերջաւորութիւնը, որոնք խօսքին իմաստէն միայն կ'որոշուին ։

## 20. Հրահանգ.

Շատ ստակ շահեցաւ. Երթալ կ'ուզեմ. Մարդիկ կը խօսին. Չորքոտանիները կը պտըտին. Մարդը գայթակղեցաւ. Ձեր եղբայրները մեկնեցան (ճամբայ ելան երթալ). Շատ բան խօսեցան. Ժողովուրդը գայթակղի. Խօսէ, ինչո՞ւ կը լռես. Աստուծոյ հրեշտակն անոր երեւցաւ (տեսնուեցաւ). Քու հայրդ կ'աշխատի և շատ բան կը շահի. Քու ծառաներդ յոգնեցան. Ինծի աղէկ երեւցաւ. Եթէ անոնց մայրը մեկնի. Աղբիւրը ցամքեցաւ. Իր որդին ծնաւ. Մեզի ողորմեցէք. Աստուած անոր ողորմեցաւ. Երկրին հիմերը շարժեցան. Արեգակը խաւարի. Ճրագը մարեցաւ. Այս ամէնը խորհեցայ. Ձեր վարժապետներուն հնազանդեցէք. Գրագրութեան (գիր գրելու) արուեստը սորվեցայ. Լեզուներ երեւցան (տեսնուեցան). Իր հանդերձներն հագաւ. Քու հայրդ մեռաւ. Տղաքը սկսան պոռալ. Բէլ ինկաւ. Մեր լապտերները կը մարին։

Շատ, բազում
Ստակ, արծաթ
Ուզել, կամիմ
Պտըտիլ, շրջիմ
Շատ բան, բազում ինչ
Ինչո՞ւ, ընդէ՞ր
Յոգնիլ, վաստակիմ
Աղէկ, բարւոք
Երեւիլ, երեւիմ (երբ տեսնուիլ), թուիմ (երբ կարծուիլ)
Ցամքիլ, ցամաքիմ
Մարիլ, շիջանիմ
Այս ամենը, այս ամենայն
Վարժապետ, վարդապետ
Գրագրութիւն, գրչութիւն
Սորվիլ, ուսանիմ
Երեւիլ (տեսնուիլ), երեւիմ
Հագնիլ, ագանիմ
Սկսիլ, սկսանիմ
Պոռալ, աղաղակեմ
Տղայ, մանուկ, յք. մանկունք, մանկտի
Իյնալ, անկանիմ

---



## ԼՈՒԾՈՒՄ

Հ. Ամէն նախադասութեան մէջ խօսքին բոլոր մասերը միշտ ներգործութեա՞մբ կը գրուին, թէ երբեմն խօսքին մի մասը կամ քանի մը մասերը կ'իմացուին լռելեայն.

Պ. Երբեմն նախադասութեան մէջ բայը կամ անոր խնդիրներէն մին կ'իմացուի լռելեայն, զոր օրինակ. Եղբայր իմ մեծատուն է, քոյդ՝ աղքատ. իմ եղբայրս հարուստ է. քուկինդ՝ աղքատ։ Այս խօսքին վերջին մասին մէջ եղբայր և է լռելեայն կ'իմացուին, ուստի պիտի ըլլար այսպէս. Եղբայր իմ մեծատուն է. եղբայր քո աղքատ է. իմ եղբայրս հարուստ է, քու եղբայրդ աղքատ է. Նոքա բնակին 'ի քաղաքի, մեք՝ 'ի շինի. Անոնք քաղաքը կը բնակին, մենք՝ գեղը։ Այս խօսքին եւս վերջին մասին մէջ բնակիմք բայը լռելեայն կ'իմացուի, և պիտի ըլլար. Նոքա բնակին 'ի քաղաքի, մեք բնակիմք 'ի շինի. Անոնք քաղաքը կը բնակին, մենք գեղը կը բնակինք։

Այս տեսակ նախադասութիւն մը զեղչեալ նախադասութիւն կը կոչուի։

Հ. Զեղչեալ նախադասութիւն մը լուծելու ատեն ի՞նչ ընելու է։

Պ. Զեղչեալ նախադասութիւն մը լուծելու ատեն, զեղչեալ կամ պակաս մասերը պէտք է ամբողջացնել, և այնպէս լուծել, զոր օրինակ.

Նոքա բնակին 'ի քաղաքի. մեք 'ի շինի. Բնակին, բայ չէզոք. սահմ. ներկ. յք. Գ. դէմք։ Ո՞վ է բնակողը. — Նոքա, անոնք. Նոքա, հակ. դեր. յոգ. ուղղ. Գ. դէմք. տէր բայի՝ բնակինին։ Նոքա բնակին. — ո՛ւր. — 'ի քաղաքի, քաղաքը. 'ի քաղաքի, գոյ. ան. եզ. տր. 'ի նախդրիւ տրական (ներքոյական) բնութեան խնդիր, բնակին բային, տեղւոյ պարագան կը ցուցնէ։

Մեք՝ 'ի շինի · Մենք՝ գեղը ։ Նախադասութիւն զեղչեալ, պիտի ըլլայ՝ Մեք բնակեմք 'ի շինի · Մենք գեղը կը բնակինք · Բնակեմք, բայ չէզ. սահմ. ներկ. յք. Ա. դէմ, զօրութեամբ կ'իմացուի · Ո՞վ են բնակողները · —Մեք · Դեր. հակ. դեր. յք. ուղղ. Ա. դէմ, տէր բայի բնակեմքին · Մեք բնակիմք · — ո՞ւր · — 'ի շինի, գեղը · 'ի շինի գոյ. եզ. տր. 'ի նախդրիւ տրական (ներքոյական) բնութեան խնդիր բնակեմք ին, տեղւոյ պարագան կը ցուցնէ ։

## ԴԱՍ ԺԷ·

### Գ· ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐ · ՄԱԿԲԱՅ

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին երրորդ լծորդութեան բայերը ։

Պ. Երրորդ լծորդութեան բայերէն ոմանք ամ կը վերջաւորին, ինչպէս՝ աղ-ամ, և ոմանք՝ անամ, ինչպէս՝ գող-անամ ։ Ասոնց խոնարհման ձեւն այս է ։

Սահմանական եղանակի ներկայ

| | |
|---|---|
| Աղ-ամ, կ'աղամ · | Գող-անամ, կը գողնամ · |
| Աղ-աս | Գող-անաս |
| Աղ-այ | Գող-անայ |
| Աղ-ամք | Գող-անամք |
| Աղ-այք | Գող-անայք |
| Աղ-ան | Գող-անան |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Աղ-այի, կ'աղայի · | Գող-անայի, կը գողնայի · |
| Աղ-այիր | Գող-անայիր |
| Աղ-այր | Գող-անայր |
| Աղ-այաք | Գող-անայաք |
| Աղ-այիք | Գող-անայիք |
| Աղ-ային | Գող-անային |



Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Աղ-ացի, աղացի · | Գող-ացայ, գողցայ · |
| Աղ-ացեր | Գող-ացար |
| Աղ-աց | Գող-ացաւ |
| Աղ-ացաք | Գող-ացաք |
| Աղ-ացէք | Գող-ացայք |
| Աղ-ացին | Գող-ացան |

Ապառնի

| | |
|---|---|
| Աղ-ացից, պիտի աղամ · | Գող-ացայց, պիտի գողնամ · |
| Աղ-ասցես | Գող-ասցիս |
| Աղ-ասցէ | Գող-ասցի |
| Աղ-ասցուք | Գող-ասցուք |
| Աղ-ասջիք | Գող-ասջիք |
| Աղ-ասցեն | Գող-ասցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Աղ-ա, աղա | Գող-ացիր, գողցիր · |
| Մի աղ-ար | Մի գող-անար |
| Աղ-ացէք | Գող-ացարուք |
| Մի աղ-այք | Մի գող-անայք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Աղ-այցեմ, աղամ · | Գող-անայցեմ, գողնամ · |
| Աղ-այցես | Գող-անայցես |
| Աղ-այցէ | Գող-անայցէ |
| Աղ-այցեմք | Գող-անայցեմք |
| Աղ-այցէք | Գող-անայցէք |
| Աղ-այցեն | Գող-անայցեն |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Աղ-ալ, աղալ · | Գող-անալ, գողնալ · |

Անցեալ ընդունելութիւն

Աղ-ացեալ, աղացած · Գող-ացեալ, գողցած ·

Ապառնի ընդունելութիւն

Աղ-ալոց, աղալու · Գող-անալոց, գողնալու ·

Հ. Գիտնալու հարկաւոր ի՞նչ կայ երրորդ լծորդութեան բայերուն վրայ ։

Պ. Երրորդ լծորդութեան բայերէն 1. Բանամ, Թանամ, կ'ըլլան կրճատեալ՝ բացի, թացի · ապառնի՝ բացից, թացից, հրամայական՝ բաց, թաց · ոչ թէ, աղամին պէս՝ բանացի, թանացի, եւն ։

2. Ցնծամ, յուսամ, հոգամ, որսամ, ջանամ կ'ըլլան ցնծացայ, յուսացայ, հոգացայ, որսացայ, ջանացայ, և ապառնի ցնծացայց, յուսացայց, եւն, ոչ թէ՝ ցնծացէ, յուսացէ. եւն · բայց հրամայականը կ'ըլլայ, ցնծա, յուսա, եւն ։

3. Լուանամ, խմանամ, մոռանամ բայերուն հրամայականը կ'ըլլայ, լուա, խմա, մոռա ։

4. Բառնամ և դառնամ բայերուն կրճատեալը, ապառնին, հրամայականը և անցեալը կ'ըլլան ։

| | Կտր. | Ապռ. | Հրմ. | Անց. |
|---|---|---|---|---|
| Բառնամ, | բարձի, | բարձից, | բարձ, | բարձեալ · |
| Դառնամ, | դարձայ, | դարձայց, | դարձ, | դարձեալ |

(*) Բառնամ, կը վերցնեմ
Թանամ, կը թրջեմ
Կարդամ, կը կանչեմ
Խաղամ, կը խաղամ, կը քալեմ յառաջ
Ստանամ, կը ստանամ
Իմանամ, կիմանամ, (կը լսեմ նոյնը)
Մերկանամ, կը հանուեցնեմ
Գոհանամ, շնորհակալ կ'ըլլամ

(*) Աշակերտք թող գրով խոնարհեն հետեւեալ բայերէն զոմանս ։



# ՄԱԿԲԱՅ

Հ. Ո՞ր բառերը կը կոչուին Մակբայ ։

Պ. Մակբայ կը կոչուին տեսակ մը բառեր, որ նախադրութեամբ խնդիրներու պէս (տես Դաս ԺԶ.) կը ցուցնեն գործողութեան պարագաները ։

Հ. Քանի՞ տեսակ են գլխաւոր մակբայք ։

Պ. Գլխաւոր մակբայք են հինգ տեսակ, տեղական, ժամանակական, եղանակական, քանակական և հարցական ։

Հ. Ո՞րք են գլխաւոր տեղական մակբայք ։

Պ. Գլխաւոր տեղական մակբայք են, աստ, հոս. անդ, հոն. 'ի ներքոյ, ներսը. արտաքոյ, արտաքս, դուրսը. շուրջ, բոլորտիքը. ի մէջ, մէջը, մէջտեղը. առաջի, առջեւը և այլք, և կը պատասխանեն ո՞ւր հարցման ։

Հ. Ո՞րք են գլխաւոր ժամանակական մակբայք ։

Պ. Գլխաւոր ժամանակական մակբայք են, այժմ, արդ, հիմա. յայնժամ, անատեն. այսօր, այսօր. վաղիւ, վաղը. յետոյ, ապա, ետքը. նախ, առաջ. երբեմն, ատեն ատեն, ատենօք. միշտ, հանապազ, ամէն ատեն, և ուրիշներ, և կը պատասխանեն ե՞րբ հարցման ։

Հ. Ո՞րք են գլխաւոր եղանակական մակբայք ։

Պ. Գլխաւոր եղանակական մակբայք են, բարւոք, աղէկ. չարաչար, գէշ. դառնապէս, դառն կերպով. քաղցրով, շուտով. փութով, կամաց. հաստատեալ, ճշդիւ, ստուգիւ և այլք, և կը պատասխանեն ի՞նչպէս հարցման ։

Հ. Ո՞րք են գլխաւոր քանակական մակբայք ։

Պ. Գլխաւոր քանակական մակբայք են. յոյժ, շատ. կարի, չափազանց. ստէպ, յաճախ, շատ անգամ. դարձեալ, նորէն, քիչ անգամ. այսչափ, այնչափ, և այլք, և կը պատասխանեն ո՞րչափ հարցման ։

Հ. Ո՞րք են գլխաւոր հարցական մակբայք ։

Պ. Գլխաւոր հարցական մակբայք են. ընդէ՞ր, չէ՞, հէ՞ն,

վասն է՞ր, կամ է՞ր վասն, ինչո՞ւ համար. զիա՞րդ, ուստե՞, ի՞նչպէս. ո՞րչափ, քանի՞. և կը հարցունեն գործին պատճառը, եղանակը, տեղը, ժամանակը։

Բ. Հայերէնի մէջ ի՞նչ մասնաւոր գործածութիւն ունին աստ, անդ, այդ, անդր, աստի, անտի, այտի. հոս, հոն, հոսկէ, հոնկէ, հոտկէ, մակբայները։

Գ. Աստ, անդ, այդ, անդր, այդր, աստի, անտի, այտի, հոս, հոն, հոսկէ, հոնկէ, հոտկէ, մակբայները կը գործածուին այս, այդ, այն ցուցական ածականներուն տրականին, հայցականին և բացառականին տեղ, այսպէս.

*Դադարում ցուցնելու համար*

Ի քաղաքի աստ, փոխանակ՝ 'ի քաղաքիս յայսմիկ կամ 'ի քաղաքիս (տես Դաս ԺԱ.), այս քաղքին մէջ. 'ի քաղաքի անդ, փոխանակ՝ 'ի քաղաքին յայնմիկ, կամ, ի քաղաքին, այն քաղքին մէջ։

*Շարժում ցուցնելու համար*

Ի քաղաք անդր, փոխանակ՝ 'ի քաղաքն յայն, կամ, 'ի քաղաքն, (դէպ) այն քաղաքը. 'ի քաղաք այսր. փոխանակ՝ 'ի քաղաքս յայս, կամ, 'ի քաղաքս, (դէպ) այս քաղաքը. 'ի քաղաք այդր, փոխանակ՝ 'ի քաղաքդ յայդ, կամ, 'ի քաղաքդ, (դէպ) այդ քաղաքը։

*Բացառականով*

Ի քաղաքէ աստի, փոխանակ՝ 'ի քաղաքէս յայսմանէ, կամ, 'ի քաղաքէս, այս քաղքէն. 'ի քաղաքէ անտի, փոխանակ՝ 'ի քաղաքէն յայնմանէ, կամ, 'ի քաղաքէն, այն քաղքէն. 'ի քաղաքէ այտի, փոխանակ՝ 'ի քաղաքէդ յայդմանէ, կամ, 'ի քաղաքէդ, այդ քաղքէն։



ՕՐԻՆԱԿ

| | |
|---|---|
| Այն դաշտը գնա. | Երթ 'ի դաշտ անդր. |
| Այս տունը եկէք. | Եկայք 'ի տուն այսր. |
| Այդ պարտէզը գացէք. | Երթայք 'ի պարտէզ այդր. |
| Այն կողմերը ղրկեցինք. | Յղեցաք 'ի կողմանս անդր. |
| Այս տան մէջ է. | Ի տան աստ է. |
| Այն երկրին մէջ. | Յերկրի անդ. |
| Այս աշխարհիս մէջ. | Յաշխարհի աստ. |
| Այն լեռներուն մէջ. | Ի լերինս անդ. |
| Այս տունէն ելան. | Ելին 'ի տանէ աստի. |
| Այն սովէն մեռան. | Մեռան 'ի սովէ անտի. |

## 22· Հրահանգ

Եղբայրներս իրենց վարժապետներուն միշտ մտիկ կ'ընեն, շատ անգամ կը սորվին, և քիչ անգամ կը խաղան. Այս տղան ինչո՞ւ համար կու լայ. Նոյ տապանին պատուհանը բացաւ. Անոնց քով կեցանք. Լաթերս լուացի. Կը փութար Երուսաղէմ երթալ. Ինչո՞ւ կը հեղգաս. Աճապարէ, դուրս ել. Զինուորները մէկդի կեցան. Երբ աս տեսան շատ ուրախացան. Անոր ոտուըները կը թրջէր. Անոնք պիտի լան, դուք պիտի ուրախանաք. Երբ խելքը գլուխն եկաւ, անատեն զգաց. Հաց առնելու մոռցան. Կը խոստանաք ու չէք կատարեր. Այս ամէնը իմացա՞ք. Գերեզմանը վաղեց. Իւր պատմուճանը հանեց. Մարդը հիւընտցաւ. Ձեր հանդերձները հանեցէք, և քուրձեր հագէք. Իւր անկողնին մէջ զօրացաւ. Սգացէք և ողբացէք. Աշակերտները գողցան զանի. Ամպը վերցաւ. Ինչո՞ւ կը զարմանաք. Անոր դպաւ. Ինծի մի դպչիր. Իրենց տեղերը դարձան. Ագարակ ստացաւ. Եթէ մէկը վշտանայ. Ձեր բեռերը վերցուցէք. Ո՞վ բացաւ քու աչքերդ. Ձեռուըները լուաց։

Վարժապետ, [illegible]
Մտիկ ընել, [illegible]
Շատ անգամ, [illegible]
Քիչ անգամ, [illegible]
Ինչու համար, [illegible]
Քով, [illegible] (անրչ. հյցկնով),
[illegible], անոնց քով
Կենալ, [illegible]
Լաթ, [illegible]
Ինչու, [illegible]
Դուրս, [illegible]
Մեկդի կենալ, [illegible]
Երբ, [illegible]
Շատ (մկ.), [illegible]
Թրջել, [illegible]
Ուրախանալ, [illegible]
Խելքը գլուխը գալ, [illegible]
Ան ատեն, [illegible]
Վազել, [illegible]
Հիւընտնալ, [illegible]
Հանել (հանդերձը), [illegible]
Հագնիլ, [illegible]
Վերնալ, [illegible]
Դպչիլ, [illegible]
Մէկը, [illegible]
Բեռ, [illegible], յոգ. [illegible]
Վերցունել, [illegible]

## 23. Հրապարակ

Տղաքը հրապարակին մէջ կը խաղային. Այս տան մէջ շատ հիւանդներ կան. Այն պատերազմին մէջ շատեր ինկան. Անապատէն դարձան. Այն հրապարակը վազեցին. Բազմութիւնը դաշտին մէջ ժողվուեցաւ. Այն ծովէն գազան մը ելաւ. Քաղքէն դուրս կը բնակին. Մեր առջեւը խօսեցան. Վաղը կը մտնենք այն քաղաքը. Այն տօնին ատենը շատերը հաւատացին անոր. Դուրս ելաւ, և դառն կերպով լացաւ. Անոր այն խօսքերէն շատերը գայթակղեցան. Երբ լեռնէն իջաւ. Շատ անգամ և շատ կ'աշխատին. Քիչ անգամ տունը կը գտնուի. Բանակը գացին զօրապետներուն. Հոս քանի՞ հաց (սօմուն) կայ. Բորբոքած հնոցէն զանոնք հանեցին. Զանոնք հոս մեզի բերէք. Ձեզի ինչպէս կ'երեւի. Մեզի աղէկ կ'երեւի. Երկիրը միշտ կը փորենք, և մեր աղբը հոն կը թափենք։



Տղայ, [illegible]
Կան, են, [illegible]
Խնամ, [illegible]
Վազիմ. [illegible]
Բազմութիւն, [illegible]
Ժողվուիմ. [illegible]
Դուրս (նխ.), [illegible]
Առջեւը (նխ.), [illegible]
Վաղը, [illegible]
Անոր, 'ի նա
Դառն կերպով, [illegible]
Զօրապետ, [illegible]
Քիչ անգամ, [illegible]
Հոս (դադրմ), [illegible]
Հաց (սօմուն), [illegible]
Հոս (չրժ), [illegible]
Բերել, [illegible]
Երեւիլ, [illegible]
Աղէկ (մկ.), [illegible]
Փորել (կակղցնել), [illegible]
Հոն (չրժ.), [illegible]
Թափել, [illegible]

---

## ԼՈՒԾՈՒՄ

[illegible] [illegible] 'ի հրապարակի անդ։ [illegible], խաղամ բային, անկ. յք. Գ. դէմք։ Խաղային՝ ո՞վ. — [illegible], տղաքը։ Մանկունքն; յք. գր. տէր բայի [illegible]։ Մանկունքն խաղային՝ ո՞ւր. — 'ի հրապարակի անդ, հրապարակին մէջ. 'ի հրապարակի անդ՝ է նախադրութեամբ խնդիր [illegible]. [illegible] հարցման պատասխան է, և տեղւոյն պարագան կը ցուցնէ։ Հրապարակ բառը է նախադրութեան քով տրական ([illegible]) հոլով դրուած է, քանզի [illegible] բային գործողութիւնը դէպ ի տեղ մը շարժում չցուցներ։ Անդ մակբայ է, և այն դերանուան կամ ն յօդին տեղ դրուած է. փոխանակ ըսելու՝ Խաղային 'ի հրապարակին [illegible] կամ 'ի հրապարակին։

# ԴԱՍ ԺԸ·

## Դ· ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐ

*Հ· Չորրորդ լծորդութեան բայերն ի՞նչպէս կը խոնարհին ։*

*Պ· Չորրորդ լծորդութեան բայերը որ ում կը վերջաւորին՝ կը խոնարհին այսպէս ·*

Սահմանական եղանակ , Ներկայ

| | |
|---|---|
| Թող-ում, կը թողում · | Զգեն-ում, կը հագնիմ · |
| Թող-ուս | Զգեն-ուս |
| Թող-ու | Զգեն-ու |
| Թող-ումք | Զգեն-ումք |
| Թող-ուք | Զգեն-ուք |
| Թող-ուն | Զգեն-ուն |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Թող-ուի , կը թողուէ · | Զգեն-ուի , կը հագնէի · |
| Թուղ-ուիր | Զգեն-ուիր |
| Թող-ոյր | Զգեն-ոյր |
| Թող-ուաք | Զգեն-ուաք |
| Թող-ուիք | Զգեն-ուիք |
| Թող-ուին | Զգեն-ուին |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Թող-ի , թողուցի · | Զգեց-այ , հագայ · |
| Թող-եր | Զգեց-ար |
| Ե-թող, թող | Զգեց-աւ |
| Թող-աք | Զգեց-աք |
| Թող-էք | Զգեց-այք |
| Թող-ին | Զգեց-ան |



Ապառնի

| | |
|---|---|
| Թող-ից , պիտի թողում · | Զգեց-այց , պիտի հագնիմ · |
| Թող-ցես | Զգեց-ցիս |
| Թող-ցէ | Զգեց-ցի |
| Թող-ցուք | Զգեց-ցուք |
| Թող-ջիք | Զգեց-ջիք |
| Թող-ցեն | Զգեց-ցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Թող , թող · | Զգեց-իր , հագիր · |
| Մի թող-ուր | Մի զգեն-ուր |
| Թող-էք | Զգեց-արուք |
| Մի թող-ուք | Մի զգեն-ուք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Թող-ուցում, թողում · | Զգեն-ուցում, հագնիմ · |
| Թող-ուցուս | Զգեն-ուցուս |
| Թող-ուցու | Զգեն-ուցու |
| Թող-ուցումք | Զգեն-ուցումք |
| Թող-ուցուք | Զգեն-ուցուք |
| Թող-ուցուն | Զգեն-ուցուն |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Թող-ուլ, թողուլ · | Զգեն-ուլ , հագնիլ · |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Թող-եալ , թողած · | Զգեց-եալ , հագած |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Թող-լոց , թողելու · | Զգեն-լոց , հագնելու · |

*Հ· Չորրորդ լծորդութեան բայերուն մէջ գիտնալու հարկաւոր ի՞նչ բան կայ ։*

*Պ· 1· Այս լծորդութեան նում վերջաւորած բայերուն մեծ մասը ն գիրը ց ի կը փոխէ կատարեալին , ապառնոյն , հրամայականին և անցեալին մէջ , զոր օրինակ՝*

| | Կտ. | Ապ. | Հր. | Անց. |
|---|---|---|---|---|
| Լնում, | լցի, | լցից, | լից, | լցեալ. |
| Խնում, | խցի, | խցից, | խից, | խցեալ. |
| Ընկենում, | ընկեցի, | ընկեցից, | ընկեա, | ընկեցեալ. |
| Զգենում, | զգեցայ, | զգեցայց, | զգեցիր, | զգեցեալ. |
| Յենում, | յեցայ, | յեցայց, | յեցիր, | յեցեալ. |
| Ընթեռնում, | ընթերցայ, | -ցայց, | -ցիր, | -ցեալ. |

Առնում, զբօսնում և հեղձնում բայերը յիշեալ ժամանակներուն մէջ ն գիրը կը կորսնցունեն. զոր օրինակ՝

| | Կտ. | Ապ. | Հր. | Անց. |
|---|---|---|---|---|
| Առնում, | առի, | առից, | առ, | առեալ. |
| Զբօսնում, | զբօսայ, | զբօսայց, | զբօսիր, | զբօսեալ. |
| Հեղձնում, | հեղձայ, | հեղձայց, | հեղձիր, | հեղձեալ. |

(*) Արգելում, կ'արգիլեմ — Զգենում, կը հագնիմ
Հեղում, կը թափեմ — Զբօսնում, կը զբօսնում
Յաւելում, կ'աւելցունեմ — Ընթեռնում, կը կարդամ
Առնում, կ'առնեմ — Լնում, կը լեցունեմ
Ընկենում, կը նետեմ — Հեղձնում, կը խեղդուիմ

### 24. Հրահանգ

Կ'ուզէր երթալ, բայց զանի արգիլեցին. Թողէք այդ մարդը. Անմեղ արիւն մի թափեր. Զանի թողուց և գնաց. Ոչխարներ և արջառներ կը մորթեմ. Նաւին կարասիները ծովը նետեցին. Այդ գաւաթները լեցուցէք. Գիրքը կարդացի՞ր. Դպիրները հրովարտակը կարդացին. Անոնց տեղը լեցուցին. Զիս մի թողուր. Իւր հանդերձները հագաւ. Իւր գաւազանին կը կրթնի. Տղաքը պարտէզին մէջ կը զբօսնուին. Ջուրին

(*) Աշակերտք գրով թող խոնարհեն հետեւեալ բայերէն ոմանք.



սափորն առ. Ստակն անկէ առի. Առիւծներուն բերանը գոցեցին. Անոր ցաւերը մի աւելցուներ. Ջուրերուն մէջ խղդուեցան. Ձեր հին լաթերը հանեցէք և նորեր հագէք. Ժողովուրդը դաշտին մէջ կը զբօսնուր. Անոր լուծը նետենք. Հայրդ սնուցուած (պէպլի) եզը մորթեց. Այդ թակոյկները (քիւփ) ջրով լեցուցէք. Զանոնք ասկէ վար նետենք. Զիս ինչո՞ւ թողուցիք. Ձեզ որբ պիտի չթողում. Անոր արիւնը գետինը թափես. Հիմա առ և քուկինդ ինծի տուր. Գաւաթդ մօտեցուր որ լեցունեմ. Ինկածներուն տեղը լեցուցէք. Ամէն ծակ գոցեցինք. Ո՞րն առնունք և ո՞րը թողունք. Սրահին վարագոյրը երկուք ըրաւ (ճեղքեց). Ի՞նչ բանով զբօսնունք. Եղբօրս արիւնը ի՞նչպէս թափեմ. Ո՞րկէ առնեմ ստակը. Զանի ո՞ւր տարիք. Զանի ո՞ւր դրին. Ո՞ւր կ'երթաս. Ո՞ւր է ձեր բնակարանը.

Ուզեմ, կամիմ — Գաւազան, ցուպ
Բայց, այլ — Ստակ, արծաթ
Արգիլեմ, արգելում — Գոցեմ (ծակ մը), խնում
Անմեղ, անպարտ — Աւելցունեմ, յաւելում
Թափեմ, հեղում — Հանել (լաթը), մերկանամ
Մորթեմ, զենում — Նետեմ, ընկենում
Նետեմ, ընկենում — Սնուցուած (պէպլի), զօրաւոր
Գաւաթ, բաժակ — Ասկէ, աստի
Լեցունեմ. լնում — Վար, ի վայր
Գիրք, մատեան — Ինչո՞ւ, ընդէ՞ր
Կարդամ, ընթեռնում — Հիմա, այժմ
Լաթ, հանդերձ — Քուկինդ, քոյդ
Խղդուիմ (շունչ չկրնալով առնուլ), հեղձնում — Մօտեցունեմ, մատուցանեմ
Հագնիմ, զգենում — Ինկած, անկեալ
Կրթնիմ, յենում — Երկուք ընել (ճեղքել), հերձում

Ի՞նչ բանիւ, նէ՞, նէ՞ շէյ Ո՞ւր (չրժմ.), յո՞
Ի՞նչպէս, նա՞սըլ Բնակարան, բնակութեան
Ո՞րկէ, ուստէ՞. Ո՞ւր (դդրմ.), ո՞ւր

---

# ԼՈՒԾՈՒՄ

Կոմեր էրրիալ, ալյ արքեվատ գնա։ Այս խօսքը երկու նախադասութենէ կը բաղկանայ, քանզի հոն երկու դիմաւոր բայ կայ։ Կոմեր էրրիալ, նախադասութիւն գլխաւոր. Այլ արքեվատ գնա, նախադասութիւն միջանկեալ, այլ շաղկապով կապուած՝ գլխաւոր նախադասութեան հետ։ Կոմեր, կամիմ բային, անկ. եղ. Գ. դէմք։ — Կամէր, ո՞վ. — Նա. դեր. տէր բայի կոմերին. զօրութեամբ կ՚իմացուի։ Նա կամէր. զի՞նչ. — Երրիալ. սեռի խնդ. կոմերին։

Արքեվատ, արգելում բային կատ. յք. Ա. դէմք։ — Ո՞վ է արգելողը. Մեք. դեր. տէր բայի, զօրութեամբ կ՚իմացուի։ — Մեք արգելաք, զո՞վ. — Զնա. դեր. եզ. Գ. դէմք, հյց. սեռի խնդ. արքեվատին. Այլ, շաղկապ. երկու նախադասութիւնը կը կապէ իրարու հետ։



# ԴԱՍ ԺԹ.

## Ի, ԱՌ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ. ԲԱՅԱՆՈՒՆ

Հ. Է նախադրութիւնը տեղւոյ և ժամանակի պարագայ միայն կը ցուցնէ (Դաս ԺԶ.). չունի՞ ուրիշ պաշտօն։

Պ. Է նախադրութիւնը նախ՝ շատ անգամ անորոշ հայցական խնդրով կը գործածուի իբր գործիական, ինչպէս՝ 'ի ձայն մեծ, մեծ ձայնով. երկրորդ՝ կը ցուցնէ նպատակ, առարկայ, ինչպէս. Լիցի ձեզ 'ի կերակուր. ձեզի կերակրոյ, ուտելու համար ըլլայ։

Հ. Նոյն է նախադրութիւնը, կամ առ է, առ նախադրութիւնները, բայերու աներևոյթին հետ ի՞նչ կը նշանակեն։

Պ. Է, առ 'ի, առ նախադրութիւնները բայերու աներևոյթին հետ կը գործածուին համար (վասն) նշանակութեամբ, զոր օրինակ, Եկեալ եմ 'ի լուել, կամ, առ 'ի լուել, կը նշանակէ՝ Եկած եմ մտիկ ընելու համար։

---

## ԲԱՑԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է Բայանուն։

Պ. Բայանուն կը կոչուին այն անունները որ բայերու արմատ են, ինչպէս՝ սէր, գործ, կեր, լուր որ սիրեմ, գործեմ, ուտեմ, լսեմ բայերուն արմատներն են։

Հ. Բայերու արմատ անուններ ինչո՞ւ համար բայանուն կ՚ըսուին։

Պ. Բայանուն կ՚ըսուին, քանզի բայի զօրութիւն ունին, և շատ անգամ 'ի նախադրութեամբ բայերուն աներևոյթին տեղ կը դրուին։ Այսպէս կ՚ըսենք.

Ի լուացումն, լուալու համար, փոխ. է լուանալ կամ առ է լուանալ

Ի զբօսանս, զբօսնելու համար, փոխ. 'ի զբօսնուլ, առ 'ի զբօսնուլ

Յոռոգումն, ջրելու համար, փոխ. յոռոգել, կամ առ ոռոգել

Ի լոյս, լոյս տալու համար, փոխ. 'ի, կամ, առ 'ի լուսաւորել

Յիշատակութիւն, յիշելու համար, փոխ. յիշել կամ առ յիշել

Հ. Աներևոյթներու հետ գործածուած 'ի, առ 'ի, առ նախադրութեանց վրայ ուրիշ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Է, առ 'ի, առ նախադրութիւններէն ետքը կրնայ աներևոյթը սեռական եւս դրուիլ. կրնան այս նախադրութիւնները նաեւ զանց առնուիլ. ուստի կ'ըսենք.

Առ 'ի լուանալոյ, կամ լոկ՝ լուանալ, լուալու համար:

Առ յիշելոյ կամ յիշել, յիշելու համար:

## 25. Հրահանգ

Լսելու համար եկած եմ. Դատաւորները նստան դատելու համար. Աչք ունին տեսնելու համար, ականջներ՝ լսելու համար, ռնգունք՝ օդ առնելու համար, ձեռք կամ մատուըներ՝ շօշափելու համար. Տեսարանը դիտելու եկած էին. Պիւթագորաս իւր աշակերտներուն օրէնք դրաւ լռել և միշտ հրաժարել. Ձիերուն բերանը սանձ կը դնենք որ մեզի հնազանդին. Անոնց ոտքերը լուալու համար ջուր բերին. Ուտելու համար անոնց հաց և արմաւ հանեց. Առատ ջուր ունինք խմելու. Իրիկուան դէմ դաշտը ելաւ զբօսնելոյ համար. Ջրհեղձներ շինեցին ոռոգելու հա-



մար արտերը որ անջուր էին. Զօրք զրկեց բերդը պահելու համար. Երկիրը սրով և հրով ապականեցին. Բոլոր օրը ուրախութեամբ և երգով անցուցին. Զօրքը կը մօտեցնէր փողի ձայնով. Խեղճ ձայնով կ'ըսէր. Ասիկա խորգով և մոլորով ապաշխարեցին. Այս ամենը լսեցաւ զանի մխիթարելու համար. Հիւանդները տեսնելու կ'երթանք. Ասիկա ըրին իրենց հաւատարմութիւնն ապացուցանելու համար. Այն տեղէն փախչելու կը նայէին. Զօրք պատրաստեցին թշնամին երկրէն դուրս ընելու. Տանը դուռը բացաւ ներս նայելու համար. Ամպեղէն սիւնով իջաւ անոնց. Հովերուն թեւովը թռաւ. Ասոնք գրեցի ետքը գալու ազգերուն յիշեցնելու համար. Անոր խօսքերը լսելու եկած էին. Բանիւ և գրով կ'աշխատէր. Այս գիրքը շինեցի տղոց գործածութեանը համար. Անոր բնակելու համար՝ տուն, և մշակելու համար արտեր տուաւ. Ոսկի և արծաթ բերաւ տաճարին նուիրելու համար: Թագաւորին ծառայելու համար մարդիկ զրկեց. Այդ ցորենը և այդ տնասունները ձեզի՝ ապրուստի համար, և այս կտաւն՝ հագուստի համար տուի:

| | |
|---|---|
| Եկած եմ, եկեալ եմ | Ջրհեղձ, ջրադարձ, ջրմուղ |
| Օդ առնել, ծծել զօդ | Արտ, անդ |
| Մատ, մատն, յք. մատունք | Անջուր, անջրդի |
| Տեսարան, տեսիլ, տեսլեան | Պահելու, 'ի պահ |
| Դիտելու, 'ի դէտ | Բոլոր օրը, զօրն ողջոյն |
| Դրաւ, եդ | Մօտեցնել, յառաջ մատուցանել |
| Հնազանդիլ, անսալ | |
| Ուտելու համար, 'ի կերակուր | Ձայն, բարբառ, ձայն |
| Խմել, ըմպել | Խեղճ, ողորմ |
| Իրիկուան դէմ, ընդ երեկս | Տեսնելու, տեսանել, այց առնել, յայցելութիւն |
| Շինել, առնել, կտ. արարի | |

Ըրին, արարին
Ապացուցանելու համար, 'ի հանդէս
Կը նայէին (փախչելու), ակն ածէին
Պատրաստել, հանդերձել
Զօրք · գունդ
Երկրէն, յաշխարհէն
Նայիլ, հայել
Ներս, 'ի ներքս
Ամպեղէն սիւնով, ի սեան ամպոյ
Թռչիմ, թռչիմ, կտ. թռեայ
Ետքը գալու ազգերուն, ազգաց եկելոց առ յապա
Լսելու, յունկնդրութեան

Ցիշեցնելու համար, 'ի յիշատակ
Գործածութիւն, պէտք, գործածութեան համար, 'ի պէտս
Բնակելու համար, 'ի բնակութեան
Մշակելու համար, 'ի մշակութեան
Նուիրելու համար, 'ի նուէր
Ծառայելու համար, 'ի սպաս
Ապրուստի համար, յապրուստ, 'ի պաշար
Հագուստի համար, 'ի հանդերձ
Տուի, ետու

---

## ԼՈՒԾՈՒՄ

Ի լսել եկեալ եմ. Եկեալ եմ, Եկած եմ, բայ. յարակատ. եզ. Ա. դէմք. — Ո՞վ եկած է. — Ես. Յակ. դեր. եզ. Ա. դէմք, զօրութեամբ կ'իմացուի, տէր բայի Եկեալ եմին. —Ես եկած եմ, ինչու համար. —Ի լսել, լսելու համար. 'ի լսել՝ 'ի նախադրութեամբ աներևոյթ խնդիր եկեալ եմին, գալուն պատճառը կամ նպատակը կը ցուցնէ։

Եկեալ էին 'ի գնել ցորեան. Եկեալ էին, Եկած էին. բայ գերակատ. յք. Գ. դէմք. Ո՞վ եկած էր. —Նոքա, անոնք. Նոքա՝ Յակ. դեր. յք. Գ. դէմք, զօրութեամբ կ'իմացուի, և տէր բայի է Եկեալ էին ին. —Եկեալ էին, ինչո՞ւ համար. — Ի գնել, գնելու. 'ի գնել՝ 'ի նախադրութեամբ խնդիր եկեալ էին ին, գալուն նպատակը կը



ցուցնէ. — Եկեալ էին 'ի գնել ցորեան. — Ցորեանն, տեսարանին. ցորեան, գոյ. անուն, սեռ. հոլ. յատ–կացուցիչ 'ի գնել բային. այսինքն՝ տեսարանին զննութեանը, տեսարանը դիտելու։

# ԴԱՍ Ի.

## ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԲԱՅ, ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Ի՞նչ է Կրաւորական բայ։

Պ. Կրաւորական բայը ներգործականին (տես Դաս ԺԳ.) հակառակն է. այսինքն՝ կը ցուցնէ ոչ թէ ուրիշին բան մը ընել, այլ ուրիշէն բան մը կրել. զոր օրինակ՝ կը սիրեմ ներգործական է, կը սիրուիմ կրաւորական։

Հ. Ի՞նչ կը հետեւի ասկէ։

Պ. Ասկէ կը հետեւի թէ ամէն ներգործական բայ կրաւորական կ'ըլլայ վերջաւորութիւնը փոխելով. զոր օրինակ աշխարհաբար կ'ըսենք.

| ՆԵՐԳՈՐ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|
| կը բժշկեմ. | կը բժշկուիմ. |
| կը բանամ | կը բացուիմ |
| կը թողում | կը թողուիմ |

Հ. Ըսիր թէ ամէն ներգործական բայ կրաւորական կ'ըլլայ, ըսէ ուրեմն, Առաջին լծորդութեան, այսինքն եմ վերջաւորած ներգործական բայ մը գրաբարին մէջ կրաւորականի ի՞նչպէս կը փոխուի։

Պ. Առաջին լծորդութեան, այսինքն եմ վերջաւորած բայերուն կրաւորականը կը փոխուի ներգործականի, ընելով եմը իմ, և խոնարհելով Բ. լծորդութեան պէս, այսպէս.

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

### Սահմանական եղանակ, ներկայ

| | |
|---|---|
| Սիրեմ, Կը սիրեմ. | Սիրիմ, Կը սիրուիմ. |
| Սիրես | Սիրիս |
| Սիրէ | Սիրի |
| Սիրեմք | Սիրիմք |
| Սիրէք | Սիրիք |
| Սիրեն | Սիրին |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Սիրէի, Կը սիրէի. | Նոյն ընդ ներգործ. |
| Սիրէիր, եւն | |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Սիրեցի, Սիրեցի. | Սիրեցայ, Սիրուեցայ. |
| Սիրեցեր | Սիրեցար |
| Սիրեաց | Սիրեցաւ |
| Սիրեցաք | Սիրեցաք |
| Սիրեցէք | Սիրեցայք |
| Սիրեցին | Սիրեցան |

### Ապառնի

| | |
|---|---|
| Սիրեցից, Պիտի սիրեմ. | Սիրեցայց, Պիտի սիրուիմ. |
| Սիրեսցես | Սիրեսցիս |
| Սիրեսցէ | Սիրեսցի |
| Սիրեսցուք | Սիրեսցուք |
| Սիրեսջիք | Սիրեսջիք |
| Սիրեսցեն | Սիրեսցին |

### Հրամայական

| | |
|---|---|
| Սիրեա, Սիրէ. | Սիրեաց, Սիրուէ. |
| Մի սիրեր | Մի սիրիր |
| Սիրեցէք | Սիրեցարուք |
| Մի սիրէք | Մի սիրիք |



### Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Սիրեցեմ, Սիրեմ. | Սիրեցիմ, Սիրուիմ. |
| Սիրեցես | Սիրեցիս |
| Սիրեցէ | Սիրեցի |
| Սիրեցեմք | Սիրեցիմք |
| Սիրեցէք | Սիրեցիք |
| Սիրեցեն | Սիրեցին |

| | | |
|---|---|---|
| Աներ. | Սիրել, Սիրել. | Սիրել (իլ), Սիրուիլ. |
| Անց. ընդ. | Սիրեալ, Սիրած. | Սիրեալ, Սիրուած. |
| Ապ. ընդ. | Սիրելոց, Սիրելու. | Սիրելի, Սիրուելու. |

---

| ՆԵՐԳ. | ԿՐԱՒ. |
|---|---|

### Սահմանական եղանակ, ներկայ

| | |
|---|---|
| Հատանեմ, Կը կտրեմ. | Հատանիմ, Կը կտրուիմ. |
| Հատանես | Հատանիս |
| Հատանէ | Հատանի |
| Հատանեմք | Հատանիմք |
| Հատանէք | Հատանիք |
| Հատանեն | Հատանին |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Հատանէի, Կը կտրէի. | Նոյն ընդ ներգ. |
| Հատանէիր եւն. | |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Հատի, Կտրեցի. | Հատայ, Կտրուեցայ. |
| Հատեր | Հատար |
| Եհատ, հատ | Հատաւ |
| Հատաք | Հատաք |
| Հատէք | Հատայք |
| Հատին | Հատան |

### Ապառնի

| | |
|---|---|
| Հատից, Պէտք կտրեմ. | Հատայց, Պէտք կտրուիմ. |
| Հատցես | Հատցիս |
| Հատցէ | Հատցի |
| Հատցուք | Հատցուք |
| Հատջիք | Հատջիք |
| Հատցեն | Հատցին |

### Հրամայական

| | |
|---|---|
| Հատ, Կտրէ. | Հատիր, Կտրուէ. |
| Մի հատաներ | Մի հատանիր |
| Հատէք | Հատարուք |
| Մի հատանէք | Մի հատանիք |

### Ստորադասական

| | |
|---|---|
| Հատանիցեմ, Կտրեմ ևն. | Հատանիցիմ, Կտրուիմ, ևն. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աներ. | Հատանել, | Կտրել. | Հատանել (իլ), | Կտրուիլ |
| Անց. ընդ. | Հատեալ, | Կտրած. | Հատեալ, | Կտրուած |
| Ապ. ընդ. | Հատանելոց, | Կտրելու. | Հատանելի | Կտրուելու |

---

## Բ. ԼԾՈՐԴՈՒԹԻՒՆ ԿՐ.

*Հ. Երկրորդ լծորդութեան՝ այսինքն իմ վերջաւորած բայից, ներգործականն ի՞նչպէս կը փոխուի կրաւորականի։*

*Պ. Երկրորդ լծորդութեան, այսինքն իմ վերջաւորած բայերուն կրաւորականը ներգործականէն ամենեւին չտարբերիր. ուստի, խօսիմ, ուսանիմ կը նշանակեն թէ՛ կը խօսիմ, կը սորվիմ, և թէ կը խօսուիմ, կը սորվուիմ։ Այս պատճառաւ քերականութիւններէն ոմանք իմ վերջաւորած բայերը հասարակ բայ կոչեցին։*



*Հ. Երրորդ լծորդութեան բայերուն ներգործականը կրաւորականի ի՞նչպէս կը փոխուի։*

*Պ. Երրորդ լծորդութեան, այսինքն՝ ամ և անամ վերջաւորած բայերուն ներգործականը կրաւորականի կը փոխուի այսպէս.*

### Սահմանական եղանակ, Ներկայ

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|
| Աղամ, Կ'աղամ. | Նոյն ընդ ներգ. Կ'աղացուիմ. |
| Աղաս, ևն. | |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Աղայի, Կ'աղայի. | Նոյն ընդ ներգ. Կ'աղացուէի. |
| Աղայիր | |
| Աղայր, ևն. | |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Աղացի, Աղացի. | Աղացայ, Աղացուեցայ. |
| Աղացեր | Աղացար |
| Աղաց | Աղացաւ |
| Աղացաք | Աղացաք |
| Աղացէք | Աղացայք |
| Աղացին | Աղացան |

### Ապառնի

| | |
|---|---|
| Աղացից, Պէտք աղամ. | Աղացայց, Պէտք աղացուիմ. |
| Աղասցես | Աղասցիս |
| Աղասցէ | Աղասցի |
| Աղասցուք | Աղասցուք |
| Աղասջիք | Աղասջիք |
| Աղասցեն | Աղասցին |

### Հրամայական

| | |
|---|---|
| Աղա, Աղա. | Աղացիր, Աղացուէ. |
| Մի աղար | Մի աղար, Մի աղացուիր |
| Աղացէք | Աղացարուք Աղացուեցէք |
| Մի աղայք | Մի աղայք, Մի աղացուիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Աղայցեմ, Աղամ. | Աղայցեմ, Աղացուիմ. |
| Աղայցես, եւն. | Աղայցես, եւն. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աներ. | Աղալ, | Աղալ. | Աղալ, | Աղացուիլ. |
| Անց. ընդ. | Աղացեալ, | Աղացած. | Աղացեալ, | Աղացուած. |
| Ապ. ընդ. | Աղալոց, | Աղալու. | Աղալի, | Աղացուելու. |

---

| ՆԵՐԳ. | ԿՐԱԻ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Գողանամ, Կը գողնամ. | Նոյն ընդ ներգ. Կը գողցուիմ. |
| Գողանաս, եւն. | |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Գողանայի, Կը գողնայի. | Նոյն ընդ ներգ. Կը գողցուէի. |
| Գողանայիր, եւն. | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Գողացայ, Գողցայ. | Նոյն ընդ ներգ. Գողցուեցայ. |
| եւն. | Աղալին կրաւորականին պէս |

Ապառնի

| | |
|---|---|
| Գողացայց, Պէտք գողնամ. | Նոյն ընդ ներգ. Պէտք գողցուիմ. |
| եւն. | Աղալին կրաւորականին պէս |

Հրամայական

| | |
|---|---|
| Գողացիր, Գողցիր. | Նոյն ընդ ներգ. Գողցուէ. |
| Մի գողանար | Մի գողցուիր |
| Գողացարուք | Գողցուեցէք |
| Մի գողանայք | Մի գողցուիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Գողանայցեմ, Գողնամ. եւն. | Գողանայցիմ, Գողցուիմ. եւն. |



| | ՆԵՐԳ. | | ԿՐԱԻՈՐ. | |
|---|---|---|---|---|
| Աներ. | Գողանալ, | Գողնալ. | Գողանալ, | Գողցուիլ. |
| Անց. ընդ. | Գողացեալ, | Գողցած. | Գողացեալ, | Գողցուած. |
| Ապ. ընդ. | Գողանալոց, | Գողնալու. | Գողանալի, | Գողցուելու. |

*Հ. Չորրորդ լծորդութեան, այսինքն ում վերջաւորած բայերուն ներգործականը կրաւորականի ի՞նչպէս կը փոխուի։*

*Պ. Չորրորդ լծորդութեան այսինքն ում վերջաւորած բայերուն ներգործականը կրաւորականի կը փոխուի այսպէս.*

| ՆԵՐԳ. | ԿՐԱԻՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Թողում, Կը թողում. | Նոյն ընդ ներգ. Կը թողուիմ. |
| Թողուս, եւայլն. | |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Թողուի, Կը թողուի. | Նոյն ընդ ներգ. Կը թողուէի. |
| Թողուիր, եւայլն. | |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Թողի, Թողուցի. | Թողայ, Թողուեցայ. |
| Թողեր | Թողար |
| Եթող, Թող | Թողաւ |
| Թողաք | Թողաք |
| Թողէք | Թողայք |
| Թողին | Թողան |

Ապառնի

| | |
|---|---|
| Թողից, Պէտք թողում. | Թողայց, Պէտք թողուիմ. |
| Թողցես | Թողցիս |
| Թողցէ | Թողցի |
| Թողցուք | Թողցուք |
| Թողջիք | Թողջիք |
| Թողցեն | Թողցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Թող, Թող. | Թողիր, Թողուէ. |
| Մի թողուր | Մի թողուր, Մի թողուիր. |
| Թողէք | Թողարուք, Թողուեցէք |
| Մի թողուք | Մի թողուիք |

Ստորադասական

Թողուցում, Թողում. Նոյն ընդ ներգ. Թողուիմ.
Թողուցուս, եւ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աներ. | Թողուլ, | Թողուլ. | Թողուլ, | Թողուիլ. |
| Անց. ընդ. | Թողեալ, | Թողած. | Թողեալ, | Թողուած. |
| Ապ. ընդ. | Թողլոց, | Թողելու. | Թողլի, | Թողուելու. |

---

ՆԵՐԳ. ԿՐԱՒՈՐ.

Սահմանական եղանակ, ներկայ

Ընթեռնում, Կը կարդամ. Նոյն ընդ ներգ. Կը կարդացուիմ.
Ընթեռնուս, եւ.

Անկատար անցեալ

Ընթեռնուի, Կը կարդայի. Նոյն ընդ ներգ. Կը կարդացուէի.
Ընթեռնուիր, եւ.

Կատարեալ անցեալ

Ընթերցայ, Կարդացի. Նոյն ընդ ներգ. Կարդացուեցայ.
Ընթերցար
Ընթերցաւ
Ընթերցաք
Ընթերցայք
Ընթերցան



Ապառնի

Ընթերցայց, Պիտի կարդամ. Նոյն ընդ ներգ. Պիտի կարդացուիմ
Ընթերցցիս
Ընթերցցի
Ընթերցցուք
Ընթերցջիք
Ընթերցցին

Հրամայական

| | |
|---|---|
| Ընթերցիր, Կարդա. | Նոյն ընդ ներգ. Կարդացուէ. |
| Մի ընթեռնուր, Մի կարդար. | Մի կարդացուիր |
| Ընթերցարուք | Կարդացուեցէք |
| Մի ընթեռնուք | Մի կարդացուիք |

Ստորադասական

Ընթեռնուցում, Կարդամ. Նոյն ընդ ներգ. Կարդացուիմ.
Ընթեռնուցուս, եւ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Աներ. | Ընթեռնուլ, | Կարդալ. | Ընթեռնուլ, | Կարդացուիլ. |
| Անց. ըն. | Ընթերցեալ, | Կարդացած. | Ընթերցեալ, | »դացուած. |
| Ապ. ըն. | Ընթեռնլոց, | Կարդալու. | Ընթեռնլի, | »դացուելու. |

---

## ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Ի՞նչ հարցման կը պատասխանէ բացառական հոլովը։

Պ. Բացառական հոլովը պատասխան է ուրկէ՞, ի՞նչ բանէ, ո՞ւստի (քիմտէ՞ն, նէ՞րէտէն) հարցման. զոր օրինակ՝ Հօրմէս առի. —Ուրկէ՞ առի. —Հօրմէս։ Սովէ մեռաւ. —Ի՞նչ բանէ մեռաւ. —Սովէ։ Տունէն ելաւ. —Ուստի՞ ելաւ. —Տունէն. ապա՝ հօրմէս, սովէ, տունէն բացառական են։

## 26. Հրահանգ.

### ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԵՒ ՉԷԶՈՔ ԲԱՅԵՐ ԲԱՑԱՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ

Աստուծմէ կը պատժուինք. Գողն ու մարդասպանը կը պատժուին. Շատերը բռնաւորներէն տանջուեցան. Թշնամին քաղքէն հեռացաւ. Անոնց մարմինները գերեզմաններէն հանուեցան. Դարձիր ինէ. Մենէ ելան. Լեռնէն կ'իջնէին. Երբ ջուրէն ելաւ. Այն տեղէն գնաց. Ասիկա ձենէ լսեցինք. Անոր վէրքերը բժշկուեցան. Հարիւրապետին ծառան գէշ հիւանդութենէ ըռընտցաւ. Իր տանջանքներէն պիտի ազատի. Աբելի մահուան վրէժը խնդրուեցաւ Կայենէ. Անոր լեզուին կապերը քակուեցան. Աստուծմէ Յովսէփին հրեշտակ ղրկուեցաւ. Հայրս աւազակներէն սպաննուեցաւ. Երկինքին սահանքները (քէփէնք) բացուեցան. Քաղքին դուռները պիտի գոցուին. Եղբայրդ գետին յորձանքին մէջ նետուեցաւ. Անոր արիւնը պիտի թափուի. Ահա մենք ձենէ ճամբայ կը դրուինք. Երկիրս օդէն կը պատի. Ցամաքը ջուրերէ պաշարուած է. Քաղաքը թշնամիէն պաշարուեցաւ. Բոլոր երկիրը շարժեցաւ. Լեռնէն քար մը բրդաւ. Տղան պիտի բժշկուի. Ինէ լսեցիք. Մենէ են. Մօրմէն անիծուեցաւ. Աբէլ իր եղբօրմէն սպաննուեցաւ. Ճամբայ ելնելու կը պատրաստուինք. Շատ ստակ ժողվուեցաւ. Անոր մահուան վրէժն անկէ պիտի խնդրուի. Անոնց ամանները լեցուեցան. Քաղաքը պիտի առնուի. Աստղերը պիտի թափին, երկիրը պիտի շարժի. Իմ տունէս ելլես. Վախցիր անկէ որ հոգին կ'սպաննէ. Ինէ սորվեցէք. Քենէ ի՞նչ կը խնդրէ. Ոսկին, արծաթը և ուրիշ բոլոր մետաղները հանքերէն կը հանուին. Ամէն բան հողէն է և հող կը դառնայ. Մենէ՞ ես թէ անոնցմէ. Այդ ամէնը չարէն է. Հիմէն խախտեցաւ.



| | |
|---|---|
| Մարդասպան, սպանող | Շարժեմ, դղրդեմ (կր.) |
| Շատերը, բազումք | Բրդիմ, հատանիմ |
| Երբ, երբէ | Լսեցիք, լուարուք |
| Երթամ (տեղէ մը), գնիցեմ | Ճամբայ ելնել, ելանել 'ի ճանապարհ |
| Լսեցինք, լուաք | |
| Գէշ (հիւանդութիւն), չարալար | Ստակ, արծաթ |
| | Թափիմ, թօթափիմ |
| Ըռընտնամ, ապաքինիմ | Շարժիմ, սասանիմ |
| Ազատիմ, ապրիմ | Վախնամ, երկնչիմ |
| Կապեր, կապանք | Վախցիր, երկիր |
| Քակուիմ, լուծանիմ | Սորվիմ, ուսանիմ |
| Ղրկուիմ, առաքիմ | Ուրիշ բոլոր, այլքն ամենայն |
| Գոցեմ, փակեմ (կր.) | Մետաղ, քրէական նիւթ |
| Նետեմ, ընկենում (կր.) | Հանք, բովք. բովուց |
| Թափեմ, հեղում (կր.) | Հանեմ, հանեմ (կր.) |
| Ճամբայ դնել, յուղարկել (կր.) | Ամէն բան, ամենայն ինչ |
| Բոլոր, ամենայն | Հիմէն, 'ի հիմանէ |

## ԴԱՍ ԻԱ.

### ԱՌ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ, ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Առ նախադրութիւնն անորոշ հայցականով ի՞նչ կը նշանակէ.

Պ. Առ նախադրութիւնն անորոշ հայցական խընդրով դէպ ի մարդ կամ անձ մը շարժում ցուցնելու համար կը գործածուի (տես և դաս ԺԶ.), զոր օրինակ.

| | |
|---|---|
| Գնաց առ թագաւորն | Թագաւորին գնաց |
| Առաքեցաք զնա առ եղբայր ձեր | Զանի եղբօրը ղրկեցինք |
| Եկայք առ իս | Ինծի եկէք |

Հ. Առ նախադրութիւնը տրականով ի՞նչ կը նշանակէ.

Պ. Առ նախադրութիւնը տրական խնդրով կը նշանակէ մէկուն տունը կամ քովը, բանի մը քովը, կամ մօտը, առջևը։

| | |
|---|---|
| Առ դրան | Դրանը քով |
| Առ հօր իւրում | Հօրը տունը, քովը |
| Ո՞ւր իցէ նա արդ. — Է նա առ քեռայրն իւրում | Հիմա ո՞ւր է. — Քեռայրին քովն է |

Հ. Առ նախադրութիւնը սեռականով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Առ նախադրութիւնը սեռական, և երբեմն հայցական կամ բացառական խնդրով կը նշանակէ համար կամ պատճառաւ, և աշխարհաբարի մէջ սովորաբար բացառականի կը դառնայ. ինչպէս՝ Առ նախանձու, նախանձէն. Առ ահի, վախէն։

| | |
|---|---|
| Ոչ յայտնեաց զանձն առ երկիւղի | Վախէն ինքզինք չյայտնեց |
| Շիկնէր առ ամօթոյ | Ամօթէն կը կարմրէր [ըրի |
| Առ սէր քո արարի զայս | Ասիկա քու սիրոյդ համար |
| Առ չգիտութեան եկեր | Չգիտնալով կերաւ |
| Ոչ առ ատել ինչ ասեմ զայս | Աս կ'ըսեմ ոչ թէ ատելուս համար |
| Առ ի չգոյէ կերակրոյ | Կերակուր չըլլալէն |

---

## ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Հ. Ի՛նչ հարցման պատասխան է գործիական հոլովը։

Պ. Գործիական հոլովը որո՞վ, ի՞նչ բանով (քիմի՞ իլէ, նէ՞ իլէ) հարցման պատասխան է։ Աստուծով կը յաղթենք. — Որո՞վ կը յաղթենք. — Աստուծով։ Անոնց քուրձերը ցորենով լեցուց. — Ի՞նչ բանով լեցուց. — Ցորենով։ Աստուծով, ցորենով գործիական են։



### 17. Հրահանգ

Բարեկամս ինծի եկաւ. Զանոնք ձեզի ղրկեցի. Տան տիրոջը գացինք. Պատգամաւորները պաշտօնէին եկան. Դատաւորին գրեցինք. Իր եղբօրը քով կը բնակի. Այդ մարդիկը մեր քովը հիւր են. Կայսեր կը բողոքեմ. Այս գիշեր մեզի կեցիր. Անոր տունը (քովը) իջաւ. Իր սիրելի որդին ղրկեց անոնց. Մեզի ինչո՞ւ գրեցիք. Դրացւոյն տունը (քովը) մտաւ. Մահապարտ է այն մարդը որուն քովը ստակը գտնուի. Ցաւէն կը գոռար. Ուրախութենէն կը պոռային. Բաղձանքէն կը մաշէր. Կարօտէս կը մեռնիմ. Բարկութենէն կը հայհոյէր. Զանի ինծի բերէք. Դատաւորին եկան. Հօրս երթամ. Ինծի նոր կուժ մը բերէք. Եկէք, անոր ելլենք. Պարտական մը ներկայացուեցաւ անոր. Վախէն անոր դէմ չկեցաւ. Կերակուր չուտելէն հիւծած էր. Քու էրկանդ դարձիր. Զանի իր բարեկամներուն ղըրկեցի. Զանի իր քովն առաւ. Այդ տղան իր մօրը տարէք. Պատուհանին քով կը նստէր. Աստուծոյ կանչեցին և անիկայ փրկեց զանոնք. Սրտին ցաւէն լացաւ. Նախատինքին չդիմանալէն անկէ գնաց. Խորդ մայր մը իր խորդ զաւկին քով չընակիր. Եղբայրդ ո՞ւր է. Խորդ հօրը քովն է. Ինչո՞ւ համար ինծի չեկար. Մօրեղբօրս քովն էի. Զիս որո՞ւն պիտի ղրկես. Աներոջս, անոր աւետիս տալու համար որ ինծի մանչ զաւակ մը եղաւ. Եղբայրդ իմ քովս հիւր է. Անոնց մի դպչիք. Լեռնէն մեզի իջաւ. Ասիկա տուր այն աղքատ տղուն որ դրան քով կը կենայ. Ոչ ոք կը համարձակէր անոր մօտենալ. Իր մէկ հատիկ աղջիկէն ուրիշ մէկը չկար անոր քով. Մենք լճին քով կը բնակէինք, և անոնք՝ բլրոյն վրայ. Գիտէր որ ատելութեան համար անոր վրայով ամբաստանութիւն կ'ընէին. Թագաւորին քով ամբաստանութիւն ըրին անոր վրայով։

Եկաւ , էկն
Տանտէր , տանուտէր
Կենալ (գիշերը մէկուն) , ագանէմ
Մէկուն տունը , այսինքն քովը · առ (տրականով)
Իջնել (ճամբորդին) լուծանէմ
Գոռամ, ճչէմ, ճուչէմ
Բաղձանք , ցանկութեան
Մաշիլ, հաշէլ
Բարկութիւն , ցասումն
Եկան , էկէն
Բերեմ (անձ մը) , ածէմ
Բերէք ինծի , առէք առ էս
Եկէք , էկայք
Ներկայացուիմ, մատուցանէմ
Պարտական , պարտապան
Վախ , ահ
Դէմ կենալ, ընդդիմանալ
Կերակուր չուտելը , անտաղութեան
Էրիկ , այր

Կանչել (մէկուն) , կոչել
Սրտի ցաւ , վիշտ
Դիմանալ, ժուժել
Անկէ , անդի
Երթալ (տեղէ մը) , մեկնիմ
Խորթ մայր , մօրու
Խորթ զաւակ , ուրջու
Խորթ հայր , հօրայ , հօրու
Նկար , եկեր
Մօրեղբայր , քեռի
Մանչ զաւակ , ուստր
Դպչիմ, մերձենամ
Մօտենամ, մատչիմ
Կենալ, կալ
Մէկ հատիկ աղջիկ, դուստր միամօր
Լիճ , ծովակ
Անոր վրայով , ընդանէ
Ամբաստանութիւն ընել, ամբաստանել, ամբաստան լինել, շարախօսել
Վրայով, ը (բացառականով, պատմական)



# ԴԱՍ ԻԲ·

## ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐ , ԲԱՅԱՍԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ , ԱՌ , ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ , Ց , ՆԱԽԴԻՐ

Հ. Ի՞նչ է անկանոն կամ զարտուղի բայ։

Պ. Անկանոն կամ զարտուղի կ'ըսուին այն բայերը, որոց կատարեալը, ապառնին, հրամայականը և անցեալը կը տարբերին չորս լծորդութեանց խոնարհման հասարակ ձեւէն։ Զոր օրինակ՝ ճանաչեմ, կատարեալը կ'ըլլայ ծանեայ, ապառնին՝ ծանեայց, հրամայականը՝ ծանիր, փոխանակ ճանաչեցի, ճանաչեցից, ճանաչեա։

Հ. Ասեմ, գիտեմ, կարեմ բայերն ի՞նչ բանով կը տարբերին եմ վերջաւորած կանոնաւոր բայերէն։

Պ. Ասեմ, ըսել. գիտեմ, գիտնալ. կարեմ, կրնալ. բայերը, կատարելին, ապառնոյն և անցելոյն մէջ, եմ վերջաւորած կանոնաւոր բայերուն պէս, փոխանակ եցի, եցից, եալ ըլլալու, ինչպէս՝ սիրեցի, սիրեցից, սիրեալ, կ'ըլլան ացի, ացից, ացեալ, զոր օրինակ·

| | Կտր· | Ապռ· | Հրմ· | Անց· |
|---|---|---|---|---|
| (*) Ասեմ, | ասացի , | ասացից , | ասա , | ասացեալ· |
| Գիտեմ, | գիտացի , | գիտացից , | գիտա , | գիտացեալ· |
| Կարեմ, | կարացի (**) , | կարացից , | լեր , | կարացեալ· |

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին առնեմ, յառնեմ, յանցանեմ, մեղանչեմ անկանոն բայերը։

Պ. Առնեմ, ընել. յառնեմ, ելլել (նստած կամ պառկած տեղէն), յանցանեմ, սխալիլ, յանցանք գործել. մեղանչեմ, մեղք գործել, վնասել. հետեւեալ կերպով կը խոնարհին։

(*) Աշակերտք այս բայերը խոնարհեն։
(**) Կարեմ, կար կարելու նշանակութեամբ, կ'ըլլայ կարեցի, կարեցից, կարեա, կարեալ։

| ՆԵՐԳ. | ԿՐԱՒ. |
|---|---|

### Սահմանական եղանակ, ներկայ

| | |
|---|---|
| *Առնեմ, Կ'ընեմ.* | *Առնիմ, Կ'ըրուիմ.* |
| *Առնես* | *Առնիս* |
| *եւն.* | *եւն.* |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| *Առնէի, Կ'ընէի.* | *Առնէի, Կ'ըրուէի.* |
| *եւն.* | *եւն.* |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| *Արարի, Ըրի.* | *Արարայ, Ըրուեցայ.* |
| *Արարեր* | *Արարար* |
| *Արար* | *Արարաւ* |
| *Արարաք* | *Արարաք* |
| *Արարէք* | *Արարայք* |
| *Արարին* | *Արարան* |

### Ապառնի

| | |
|---|---|
| *Արարից, Պէտք ընեմ.* | *Արարայց, Պէտք ըրուիմ.* |
| *Արասցես* | *Արասցիս* |
| *Արասցէ* | *Արասցի* |
| *Արասցուք* | *Արասցուք* |
| *Արասջիք* | *Արասջիք* |
| *Արասցեն* | *Արասցին* |

### Հրամայական

| | |
|---|---|
| *Արա, Ըրէ.* | *Արասջիր, Ըրուէ.* |
| *Մի առներ* | *Մի առնիր* |
| *Արարէք* | *Արասջիք* |
| *Մի առնէք* | *Մի առնիք* |



### Ստորադասական

| | |
|---|---|
| *Առնիցեմ, Ընեմ.* | *Առնիցիմ, Ըրուիմ.* |
| *Առնիցես,* | *Առնիցիս* |
| *եւն.* | *եւն.* |

### Աներեւոյթ

| | |
|---|---|
| *Առնել, Ընել.* | *Առնել (իլ), Ըրուիլ.* |

### Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| *Արարեալ, Ըրած.* | *Արարեալ, Ըրուած.* |

### Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| *Առնելոց, Ընելու* | *Առնելի, Ըրուելու.* |

---

| ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ | ՉԷԶՈՔ |
|---|---|---|

### Սահմանական եղանակ, ներկայ

| | | |
|---|---|---|
| *—Կ'ելլեմ* | *—Յանցանք կ'ընեմ* | *—Մեղք կը գործեմ* |
| *Յառնեմ* | *Յանցանեմ* | *Մեղանչեմ* |
| *Յառնես* | *Յանցանես* | *Մեղանչես* |
| *եւն.* | *եւն.* | *եւն.* |

### Անկատար անցեալ

| | | |
|---|---|---|
| *—Կ'ելլէի* | *—Յանցանք կ'ընէի* | *—Մեղք կը գործէի* |
| *Յառնէի* | *Յանցանէի* | *Մեղանչէի* |
| *եւն.* | *եւն.* | *եւն.* |

Կատարեալ անցեալ

| | | |
|---|---|---|
| —Ելայ · | —Յանցանք ըրի · | —Մեղք գործեցի · |
| Յարեայ | Յանցեայ | Մեղայ |
| Յարեար | Յանցեար | Մեղար |
| Յարեաւ | Յանցեաւ | Մեղաւ |
| Յարեաք | Յանցեաք | Մեղաք |
| Յարեայք | Յանցեայք | Մեղայք |
| Յարեան | Յանցեան | Մեղան |

Ապառնի

| | | |
|---|---|---|
| —Պիտի ելլեմ | —Պիտի յանցանք ընեմ. | —Պիտի մեղք գործեմ։ |
| Յարեայց | Յանցեայց | Մեղայց |
| Յարիցես | Յանցիցես | Մեղիցես |
| Յարիցէ | Յանցիցէ | Մեղիցէ |
| Յարիցուք | Յանցիցուք | Մեղիցուք |
| Յարիջիք | Յանցիջիք | Մեղիջիք |
| Յարիցեն | Յանցիցեն | Մեղիցեն |

Հրամայական

| | | |
|---|---|---|
| —Ել · | —Յանցանք ըրէ · | —Մեղք գործէ · |
| Արի · | Յանցիր | Մեղիր |
| Մի յառներ | Մի յանցաներ | Մի մեղանչեր |
| Արիք | Յանցերուք | Մեղարուք |
| Մի յառնէք | Մի յանցանէք | Մի մեղանչէք |

Ստորադասական

| | | |
|---|---|---|
| —Ելլեմ | —Յանցանք ընեմ · | —Մեղք գործեմ · |
| Յառնիցեմ | Յանցանիցեմ | Մեղանչիցեմ |
| Յառնիցես | Յանցանիցես | Մեղանչիցես |
| եւն. | եւն. | եւն. |



Աներեւոյթ

| | | |
|---|---|---|
| —Ելնել · | —Յանցանք ընել · | —Մեղք գործել · |
| Յառնել | Յանցանել | Մեղանչել |

Անցեալ ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| —Ելած · | —Յանցանք ըրած · | —Մեղք գործած · |
| Յարուցեալ | Յանցուցեալ | Մեղուցեալ |

Ապառնի ընդունելութիւն

| | | |
|---|---|---|
| —Ելնելու · | —Յանցանք ընելու · | —Մեղք գործելու · |
| Յառնելոց | Յանցանելոց | Մեղանչելոց |

---

## ԲԱՑԱՍԱԿԱՆ ՄԱԿԲԱՅ

Հ. Ի՞նչ է Բացասական մակբայ։

Պ. Բացասական մակբայ կ'ըսուին ոչ կամ չ և մի բառերը, որ սովորաբար կը դրուին բային առաջ։

Մի կը գործածուի, երբ խօսքը հրամայական է։

| | |
|---|---|
| Ոչ սիրեմ, չեմ սիրեր | Մի սիրեր, մի սիրեր |
| Ոչ ընթեռնումք, չենք կարդար | Մի ընթեռնուք, մի կարդաք |
| Ոչ լուար, չլսեցիր | Մի լուիցես, չլսես |
| Ոչ տեսցէ, չտեսնէ | Մի տեսցէ, չտեսնէ |
| Զառնում յանձն, յանձն չեմ առներ | Մի առնուցուս յանձն, յանձն չառնես |

---

## ԱՌ, ՆԱԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

Հ. (Դաս ԺԶ. և ԻԱ.) Ըսիր թէ առ նախադրութիւնը հայցական խնդրով դէպ ի մարդ մը շարժում կը ցուցնէ, և եզակի տրականով և յոգնակի հայցականով մարդու կամ բանի մը քով կը նշանակէ։ Գործիական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Առ նախադրութիւնը գործիական խնդրով կը նշանակէ։

1. Մարդու կամ բանի մը ատենը, օրովը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Առ Սողոմոնիւ | Սողոմոնին ատենը |
| Առ Տրդատաւ | Տրդատայ օրովը |
| Առ կենդանութեամբ | Կենդանութեան ատենը |
| Առ նովաւ | Անոր ատենը |

2. Կը նշանակէ քովը, քովէն, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Առ եզերբ գետոյն | Գետին քովէն, քովը |
| Առ որմովն | Պատին քովէն, քովն ի վեր |
| Առ ճանապարհաւ | Ճամբուն քովը, եզերքը |

3. Կը նշանակէ բաղդատմամբ, նայելով, քովը.

| | |
|---|---|
| Զի՞նչ է յարդ առ ցորենով | Ցարդը ցորենին նայելով ի՞նչ է |
| Տգէտ է նա առ քեւ | Նա քեզի նայելով տգէտ է |
| Աղմուկս չէ ինչ առ այնու որ երեկն եղեւ | Այս խռովութիւնը երէկուանին քով բան մը չէ |

---



## Ց, ՆԱԽԴԻՐ

Հ. Ի՞նչ կը նշանակէ ց նախդիրը։

Պ. Ց, նախդիրը 1. ասեմ, հարցանեմ և ուրիշ քանի մը բայերու հետ կը գործածուի, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ասա ցիս | Ինծի ըսէ |
| Հարցին ցնա | Անոր հարցուցին |
| Ասաց ցհայր իւր | Իր հօրը ըսաւ |

2. Կը նշանակէ մինչեւ, և շատ անգամ մինչեւ ին հետ կը գործածուի.

| | |
|---|---|
| Մինչեւ ցդուռնն կամ ցդուռնն | Մինչեւ դուռը |

### 28. Հրահանգ

Օրէնքը չեն գիտեր. Գաւաթը կրնա՞ս խմել. Ինծի ըսէ. Ծառայիս կ'ըսեմ. Այդ բանն ըրէ, և կ'ընէ. Իրաւունք և արդարութիւն ըրի. Աստուած երկինքն ու երկիրն ըրաւ (ստեղծեց). Աստուծոյ կամքն ընենք (կատարենք). Մի ըսեր թէ չեմ կարող. Ողջնցար, ալ մեղք մի գործեր. Անոր կամքը գիտէ. Անոնց քով երթալ չէր ուզեր. Զեզ չեմ արգելուր. Ելաւ (ոտք) և կ'ուզէր երթալ. Ժողովուրդը մեղանչեց. Չար գործեցին. Ձեզի բարեկամներ ըրէք, Օգտակար չըլլուիր. Այդ (բանն) ընել յանձն չեմ առնուր. Մեղանչեցի, վասն զի անմեղ արիւն թափեցի. Ծառ որ պտուղ չընէր (չբերէր). Նոքը քեզի պիտի ըսեմ. Անոր կ'ըսէ. Ինծի ըսէ. Ինծի ականջէս վար ըսաւ. Դուք հոն չէք կրնար գալ. Հիմա չես կրնար գալ. Ինչո՞ւ չեմ կրնար գալ հիմա. Դուն ամէն բան գիտես. Մէկը չկրնար ներս մտնել. Զէի գիտեր որ հոս է

Ան ինծի ամէնը (ամէն բան) ըսաւ. Եթէ եղբայրդ քեզի յանցանք ընէ, յանդիմանէ զանի. Եւ, քալէ. Գազաններն անոր չէին վնասեր. Քեզի ի՞նչ ըրաւ. Ինծի զարնել կ'ուզէր, բայց չկրցաւ. Գիտեմ որ այն մարդը բարկասիրտ է. Եթէ դուն ես, մեզի համարձակ ըսէ. Ատոր վնաս մի ըներ. Ձեզի ըսի և չէք հաւտար. Խորհուրդ ըրին որ զանի սպաննեն. Անոր ընթրիք ըրաւ. Անոր տանը մեծ սով եղաւ. Տրդատայ և Գրիգորի տանը եղաւ մեր ազգին դարձը. Դիոկղետիանոսի տանը քրիստոնեաներէն շատերը սպաննուեցան. Լեռան տակէն կ'երթար. Դաշտին քովն ի վեր բնակեցաւ զօրքը. Ծովին եզերքն ի վեր ցամաքին մօտը կը նաւէին. Ես անոր նայելով (անոր քով) բան մը չեմ. Մեր իմաստութիւնը քուկինդ քով փոքր բան մըն է. Ինչպէս տղայ մը հսկայի մը քով, դուն ալ այնպէս ես անոր քով. Այս երկիրը պզտիկ գնտակի մը պէս է արեգական նայելով. Քրիստոս Բեթղեհէմին տանը ծնաւ, և Պիղատոսի տանը խաչուեցաւ. Սպասաւորներուն կը հարցնէր. Զանի մինչեւ լեռան գլուխը բերին. Մինչեւ հիմա ոչ ոք երեւեցաւ:

Գաւաթ, բաժակ
Խմել, ըմպել
Ըսեմ, ասեմ
Ընեմ, առնեմ
Ողջնալ, ողջանամ
Մեղք գործել, մեղանչել
Անոնց քով, առ նոսա
Ելլել ոտք, յառնեմ
Գործել, առնեմ
Ըլլուիլ, առնիմ
Թափեմ, հեղում
Անմեղ, արդար
Ծուքը, աղա
Ականջէ վար, յունկանէ
Հոն, անդր
Հիմա, այժմ
Ամէն բան, ամենայն
Մէկը չ, ոչ ոք
Ներս, ի ներքս
Հոս, աստ
Յանցանք ընեմ, յանցանեմ
Զանի, զնա



Քալել, գնալ
Վնասել, մեղանչեմ
Զարնել, հարկանեմ
Կրնամ, կարեմ
Անոր տանը, առ նովաւ
Շատերը, բազումք
Տակէն, առ ոտամբ, առ ստո-րոտով
Դաշտին քովն ի վեր, առ դաշտաւն
Մօտ, մօտ 'ի
Անոր նայելով, առ նովաւ
Բան մը, ինչ
Քուկինդ, քո, քոյոյ
Փոքր բան մը, դոյզն ինչ
Ինչպէս, որպէս
Տղայ, մանուկ
Գնտակ, գունդ, գնդակ
Պէս, իբրեւ զ...
Պզտիկ, փոքր
Խաչուիլ, հանեմ ի խաչ
Զանի, զնա
Բերել, ածեմ
Հիմա, արդ, այժմ

## ԼՈՒԾՈՒՄ

Ոչ գիտեն զերեսն. Նախադասութիւն ժխտական. Գիտեն, բայ ներգ. սահմ. ներկ. յոգ. Գ. դէմք: — Գիտեն, որո՞նք. — Նոքա. նոքա, էակ դեր. յգ. Գ. դէմք տէր բային գիտենին. զօրութեամբ կ'իմացուի. — Նոքա գիտեն, զի՞նչ. — Զերեսն. զերեսն, գոյ. յոգ. հայց. սեռի խնդիր գիտենին: Ոչ, բացասական մակբայ. բային նշանակուած գործողութիւնը կը բացասէ, կը ժխտէ:

Ասա ցիս. Ասա բայ ներգ. հրամ. եզ. Բ. դէմք: — Ո՞վ պիտի ըսէ. — Դու, էակ. դեր. եզ. Բ. դէմք. զօրութեամբ, տէր բային Ասային: Ասա, ուրո՞ւն. — Ցիս, ինձի. ցիս, ես, դեր. Ա. դէմք, եզ. հյց., ց նախդրիւ բնութեան խնդիր ասային:

# ԴԱՍ ԻԳ.

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

(Շարունակութիւն)

## ԸՆԴ ԵՒ ԸՍՏ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին լսեմ, ճանաչեմ բայերը:
Պ. Լսեմ, ճանաչեմ բայերը կը խոնարհին այսպէս.

| ՆԵՐԳ. | ԿՐԱՒ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Լսեմ, Կը լսեմ. | Լսիմ, Կը լսուիմ. |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Լսէի, Կը լսէի. | Նոյն ընդ ներգ. Կը լսուէի. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Լուայ, Լսեցի. | Լսելի եղէ (*) Լսուեցայ. |
| Լուար | Լսելի եղեր |
| Լուաւ | Լսելի եղեւ |
| Լուաք | Լսելի եղաք |
| Լուայք | Լսելի եղէք |
| Լուան | Լսելի եղեն |

Ապառնի

| | |
|---|---|
| Լուայց, Պէտք լսեմ. | Լսելի եղէց, Պէտք լսուիմ. |
| Լուիցես | Լսելի եղիցիս |
| Լուիցէ | Լսելի եղիցի |
| Լուիցուք | Լսելի եղիցուք |
| Լուիջիք | Լսելի եղիջիք |
| Լուիցեն | Լսելի եղիցին |

(*) Կ'ըսուի նաեւ Լուէ կամ լու եղէ, եւայլն, երրորդ դէմք.



Հրամայական

| | |
|---|---|
| Լուր, Լսէ. | Լսելի լեր, Լսուէ. |
| Մի լսեր | Մի լիներ լսելի |
| Լուարուք | Լսելի լերուք |
| Մի լսէք | Մի լինիք լսելի |

Ստորադասական

| | |
|---|---|
| Լսիցեմ, Լսեմ. եւն. | Լսիցիմ կամ լսելի լինիցիմ, Լսուիմ եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Լսել, Լսել. | Լսելի լինել, Լսուիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Լուեալ, Լսած. | Լսելի լեալ, Լսուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Լսելոց, Լսելու. | Լսելի, Լսուելու. |

---

| ՆԵՐԳՈՐ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Ճանաչեմ, Կը ճանչնամ. | Ճանաչիմ, Կը ճանչցուիմ. |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ճանաչէի, Կը ճանչնայի. | Նոյն ընդ ներգ. Կը ճանչցուէի. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Ծանեայ, Ճանչցայ. | Ծանօթ եղէ, Ճանչցուեցայ. |
| Ծանեար | Ծանօթ եղեր |
| Ծանեաւ | Ծանօթ եղեւ |
| Ծանեաք | Ծանօթ եղաք |
| Ծանեայք | Ծանօթ եղէք |
| Ծանեան | Ծանօթ եղեն |

Ապառնի

| | |
|---|---|
| Ծանեայց, Պէտք ճանչնամ. | Ծանօթ եղէց, Պէտք ճանչցուիմ. |
| Ծանիցես | Ծանօթ եղիցիս |
| Ծանիցէ | Ծանօթ եղիցի |
| Ծանիցուք | Ծանօթ եղիցուք |
| Ծանիջիք | Ծանօթ եղիջիք |
| Ծանիցեն | Ծանօթ եղիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Ծանիր, ճանչցիր. | Ծանօթ լեր, ճանչցուէ. |
| Մի ճանաչեր | Մի լինիր ծանօթ |
| Ծաներուք | Ծանօթ լերուք |
| Մի ճանաչէք | Մի լինիք ծանօթ |

Ստորադասական

ճանաչիցեմ, ճանչնամ, եւն. ճանաչիցիմ կամ ծանօթ լինիցիմ, ճանչցուիմ, եւն.

Աներեւոյթ

| | |
|---|---|
| ճանաչել, ճանչնալ. | Ծանօթ լինել, ճանչցուիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ծանուցեալ, ճանչցած. | Ծանօթ (լեալ), ճանչցուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| ճանաչելոց, ճանչնալու. | ճանաչելի, ճանչցուելու. |

---



Հ. Ուտեմ, ուտել բայերն ինչպէս կը խոնարհին։

Գ. Ուտեմ, ուտել բայերը հետեւեալ կերպով կը խոնարհին.

| ՆԵՐԳ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Ուտեմ, կ'ուտեմ, եւն. | Ուտիմ, կ'ուտուիմ, եւն. |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ուտէի, կ'ուտէի, եւն. | Նոյն ընդ ներգ. կ'ուտուէի, |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Կերայ կամ կերի, կերայ. | Կեր եղէ (*) կերուեցայ. |
| Կերար կամ կերեր | Կեր եղեր, եւն. |
| Կերաւ կամ եկեր | |
| Կերաք | |
| Կերայք | |
| Կերան | |

Ապառնի

| | |
|---|---|
| Կերայց կամ կերից, Պէտք ուտեմ. | Կեր եղէց, Պէտք ուտուիմ |
| Կերիցես | Կերիցիս |
| Կերիցէ | Կերիցի |
| Կերիցուք | Կեր լիցուք |
| Կերիջիք | Կեր լիջիք |
| Կերիցեն | Կեր լիցին կամ կերիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Կեր, կեր. | Կեր լեր, կերուէ. |
| Մի ուտեր | Մի ուտիր |
| Կերայք կամ կերէք | Լերուք կեր |
| Մի ուտէք | Մի ուտիք |

(*) Կ'ըսուի նաեւ կեր եղէ, եւայլն։

Ստորադասական

| | |
|---|---|
| Ուտիցեմ, Ուտեմ եւն. | Ուտիցիմ, Ուտուիմ եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Ուտել, Ուտել. | Կեր լինել, Ուտուել. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Կերեալ, Կերած. | Կերեալ, Կերուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ուտելոց, Ուտելու. | Ուտելի, Ուտուելու. |

---

| ՆԵՐԳՈՐ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, ներկայ

| | |
|---|---|
| Տանիմ, Կը տանիմ, եւն. | Տարեալ լինիմ, Կը տարուիմ, եւն. |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Տանէի, Կը տանէի եւն. | Տարեալ լինէի, Կը տարուէի, [եւն. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Տարայ, Տարի. | Տարեալ եղէ, Տարուեցայ, եւն. |
| Տարար | Տարեալ եղեր, եւն. |
| Տարաւ | |
| Տարաք | |
| Տարայք | |
| Տարան | |

Ապառնի

| | |
|---|---|
| Տարայց, Պիտի տանիմ. | Տարեալ եղէց, Պիտի տարուիմ |
| Տարցիս | Տարեալ եղիցիս, եւն. |
| Տարցի | |
| Տարցուք | Տարեալ լիցուք, եւն. |
| Տարջիք | |
| Տարցին | |



Հրամայական

| | |
|---|---|
| Տար, Տար. | Տարեալ լեր, Տարուէ, եւն. |
| Մի տանիր | |
| Տարայք | |
| Մի տանիք | |

Ստորադասական

| | |
|---|---|
| Տանիցեմ, Տանիմ, եւն. | Տանիցիմ կամ տարեալ լինիցիմ, Տարուիմ, եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Տանել, Տանիլ. | Տարեալ լինել, Տարուիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տարեալ, Տարած. | Տարեալ, Տարուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տանելոց, Տանելու. | Տանելի, Տարուելու. |

---

## ԸՆԴ. ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով ի՞նչ կը նշանակէ։

Պ. Ընդ նախադրութիւնը սեռական խնդրով կը նշանակէ փոխանակ, տեղը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ընդ իմ և ընդ քո | Իմ և քու տեղդ |
| Ընդ նորա | Անոր տեղը |
| Ընդ եղբօր իւրոյ | Եղբօրը տեղը |

Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ տրական խնդրով։

Պ. Ընդ՝ եզակի տրական և յոգնակի անորոշ (առանց զի) հայցական խնդրով կը նշանակէ հետը, զոր օրինակ.

Եզակի

| | |
|---|---|
| Ընդ իս (ոչ՝ ինձ) | Ինծի հետ |
| Ընդ նմա | Անոր հետ |
| Ընդ եղբօր իւրում | Իր եղբօրը հետ |

Յոգնակի

| | |
|---|---|
| Ընդ մեզ | Մեզի հետ |
| Ընդ նոսա | Անոնց հետ |
| Ընդ եղբարս իւր | Իր եղբայրներուն հետ |

Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ հայցական խնդրով:

Պ. Ընդ թէ եզակի և թէ յոգնակի հայցական խնդրով կը գործածուի, երբ խօսքն է տեղէ անցնելու, մտնելու, ելլելու, բան մը ուրիշ բանի կապելու կամ կցելու, ընդարձակ տեղ տարածուելու կամ պտըտելու վրայ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Եմուտ ընդ պատուհանն | Պատուհանէն մտաւ |
| Անց ընդ դուռն պարտիզին | Պարտէզին դուռնէն անցաւ |
| Կալեաց զջորին ընդ մացառն | Ջորին կալեց մացառին |
| Եւ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն | Անոր անունը բոլոր այն երկրին մէջ տարածուեցաւ |
| Շրջեցաւ ընդ ամենայն քաղաքն | Բոլոր քաղաքը պտըտեցաւ |

Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ հայցական խնդրով կրկնուելով:

Պ. Ընդ հայցական խնդրով կրկնուելով կը նշանակէ մէջտեղը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Մի լիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ | Իմ և քու մէջտեղ կռիւ չըլլայ |
| Կախեալ էր ընդ երկինս և ընդ երկիր | Երկնի ու երկրիս մէջտեղ կախուած էր |



Հ. Ի՞նչ կը նշանակէ ընդ գործիականով:

Պ. Ընդ գործիական խնդրով կը նշանակէ տակը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Նստայ ընդ ծառովն | Ծառին տակը նստայ |
| Գունդն երկրորդ ընդ իմով ձեռամբ է | Երկրորդ գունդն իմ ձեռքիս տակն է |

---

## ԸՍՏ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ. Ըստ նախադրութիւնը տրական խնդրով ի՞նչ կը նշանակէ:

Պ. Ըստ նախադրութիւնը տրական խնդրով կը նշանակէ համեմատ (կէօրէ), զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ըստ բանի քում | Քու խօսքիդ համեմատ |
| Ըստ նմա | Անոր (կարծեացը, խօսքին) նայելով |

Հ. Ի՞նչ կը նշանակէ ըստ հայցական խնդրով:

Պ. Ըստ հայցական խնդրով կը նշանակէ տեղէ մը, բանէ մը անդին (անցնիլ), զոր օրինակ.

| | |
|---|---|
| Անցին ըստ գետն | Գետէն անդին անցան |
| Ելին ըստ քաղաքն | Քաղքէն դուրս, անդին ելան |

### 29. Հրահանգ

Անոր ձայնը լսեցի. Հայրդ գիս ճանչցաւ. Զանի թագաւորին տարաւ. Զանոնք իրենց տուները տարին. Չար գազան մը կերաւ իմ որդիս. Խուլերը կը լսեն, ու համրերը կը խօսին. Իմ աղաչանքիս մօտիկ ըրէ. Ինծի մօտիկ ըրէք. Քեզ չեմ ճանչնար. Տեղացիները

ղանոնք ճանչցան․ Այդ տղան իր մօրը տար․ Քեզ իմ տունս տանիմ․ Զանոնք օտար երկիր մի տանիք․ Զքեզ ճանչցիր․ Մարախը երկրին բոլոր կանաչեղէնը կերաւ․ Եղբայրդ անոր հետ կը պտըտի․ Ծառին տակը կը նըստէր․ Զանի բոլոր քաղաքը պտըտցուց․ Դաշտին վրայ տարածուեցան․ Քաղքին մէջ լուր մը ելաւ թէ թագաւորը մեռաւ․ Ինծի հետ մի խօսիր․ Կիրճէն անցնելով անոր ետեւէն ինկան, բայց չկրցան հասնիլ․ Ծովէն երթանք ; մեզի ցամաքէն ճամբայ չկայ․ Արեւելքին կողմը եղող դռնէն չելլես․ Իմ յարկիս տակը մտան․ Նեղ դռնէն մտէք․ Անոնց հետ վէճի մի մտներ․ Երկու եղբարք իրարու հետ կռուեցան (խօսքով)․ Զօրքը կամուրջէն անդին անցաւ․ Անոնք իրենց տիրոջը հրամանէն անդին անցան․ Մեզի (մեր կարծեացը) նայելով դըժուարին չէ․ Մեր կարողութեան համեմատ ջանանք․ Գաւթէն անդին չելլան․ Զորին դուռին կապեց․ Զանի պատին գամեցին․ Մեր և ձեր մէջտեղը խտրութիւն չկայ ։

| | |
|---|---|
| Մօտիկ ըլլալ, մերձիլ (ումեք) | Արեւելքին կողմը եղող, որ ընդ արեւելս |
| Տեղացիք, որք տեղւոյն | Վէճի մտնել, մտանել ի պայքար |
| Կանաչեղէն, բանջար | Կռուիլ (խօսքով), հակել |
| Պտըտիլ, շրջիմ | Կարողութիւն, կար |
| Պտըտցունեմ, շրջեցուցանեմ | Համեմատ, նայելով, ըստ |
| Տարածուիմ, սփռիմ | Պատ, որմն |
| Լուր, համբաւ | Գամել, բեւեռեմ |
| Ետեւէն իյնալ, զհետ պնդել | Խտրութիւն, խտիր |
| Չկայ, չէ | |
| Ճամբայ, ճանապարհ | |



# ԼՈՒԾՈՒՄ

Եմուտ ընդ պատուհանն ի ներքս․ Եմուտ բայ չէզոք․ կտ․ եզ․ գ․ դէմք, մտանեմին, —Եմուտ, ո՞վ․ —Նա․ նա, էակ․ դեր․ եզ․ գ․ դէմք, զօրութեամբ, տէր բայի եմուտին ։ —Եմուտ նա ո՞ւր․ —Ի ներքս․ մակբայ, որ տեղւոյ պարագայ մը, այսինքն՝ ուր մտնելը կը ցուցնէ ։ Եմուտ նա ի ներքս, ուստի՞․ —Ընդ պատուհանն, պատուհանէն․ ընդ նախադրութեամբ բնութեան խնդիր, նոյնպէս մտնելուն ուրկէ տեղւոյ պարագան կը ցուցնէ, այսինքն՝ ուստի մտնելը ։

## ԴԱՍ ԻԴ․

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

*(Շարունակութիւն)*

### ՏԵՂԻՈՅ ՊԱՐԱԳԱՅ ՑՈՒՑՆՈՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ․ Ի՞նչպէս կը խոնարհին գնեմ, ըմպեմ, առնեմ ։

Պ․ Գնեմ, ըմպեմ (խմել), առնեմ (բռնել), կը խոնարհին այսպէս․

| ՆԵՐԳ․ | ԿՐԱՒ․ |
|---|---|
| Սահմանական եղանակ, Ներկայ | |
| Գնեմ, կը գնեմ․ | Գնիմ, կը գնուիմ․ |
| Գնես, եւն․ | Գնիս, եւն․ |
| Անկատար անցեալ | |
| Գնէի, կը գնէի, եւն․ | Գնէի, կը գնուէի, եւն․ |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Եդի. Դրի. | Եդայ, Դրուեցայ. |
| Եդիր | Եդար |
| Եդ | Եդաւ |
| Եդաք | Եդաք |
| Եդիք | Եդայք. Եդարուք |
| Եդին | Եդան |

Ապառնի

| | |
|---|---|
| Եդից, Պիտի դնեմ. | Եդայց, Պիտի դրուիմ |
| Դիցես | Դիցիս |
| Դիցէ | Դիցի |
| Դիցուք | Դիցուք |
| Դիջիք | Դիջիք |
| Դիցեն | Դիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Դիր, Դիր. | Դիջիր, Դրուէ. |
| Մի դներ | Մի դնիր |
| Դիք | Եդարուք |
| Մի դնէք | Մի դնիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Դնիցեմ, Դնեմ. | Դնիցիմ, Դրուիմ. |
| Դնիցես, եւն. | Դնիցիս, եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Դնել, Դնել. | Դնել (իլ), Դրուիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եդեալ, Դրած. | Եդեալ, Դրուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Դնելոց, Դնելու. | Դնելի, Դրուելու. |

---



| ՆԵՐԳՈՐ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, ներկայ

| | |
|---|---|
| Ըմպեմ, Կը խմեմ. | Ըմպիմ, Կը խմուիմ. |
| Ըմպես, եւն. | Ըմպիս, եւն. |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ըմպէի, Կը խմէի, եւն. | Ըմպէի, Կը խմուէի, եւն. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Արբի, Խմեցի. | Արբայ, Խմուեցայ. |
| Արբեր | Արբար |
| Արբ, Էարբ | Արբաւ |
| Արբաք | Արբաք |
| Արբէք | Արբայք |
| Արբին | Արբան |

Ապառնի

| | |
|---|---|
| Արբից, Պիտի խմեմ. | Արբայց, Պիտի խմուիմ. |
| Արբցես | Արբցիս |
| Արբցէ | Արբցի |
| Արբցուք | Արբցուք |
| Արբջիք | Արբջիք |
| Արբցեն | Արբցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Արբ, Խմէ. | Արբիր, Խմուէ. |
| Մի ըմպեր | Մի ըմպիր |
| Արբէք | Արբերուք |
| Մի ըմպէք | Մի ըմպիք. |

Ստորադասական եղանակ

| | |
|---|---|
| Ըմպիցեմ, Խմեմ. | Ըմպիցիմ, Խմուիմ. |
| Ըմպիցես, եւն. | Ըմպիցիս, եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Ըմպել, խմել. | Ըմպել (իլ), խմուիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Արբեալ, խմած. | Արբեալ, խմուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ըմպելոց, խմելու. | Ըմպելի, խմուելու. |

---

| ՆԵՐԳ. | ԿՐԱՒ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| (*) Ունիմ, կը բռնեմ. | Կալեալ լինիմ (**) կը բռնուիմ |
| Ունիս, եւն. | Կալեալ լինիս, եւն. |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Ունէի, կը բռնէի, եւն. | Կալեալ լինէի, կը բռնուէի, եւն. |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Կալայ, բռնեցի. | Կալեալ եղէ, բռնուեցայ. |
| Կալար | Կալեալ եղեր, եւն. |
| Կալաւ | |
| Կալաք | |
| Կալայք | |
| Կալան | |

(*) Տղայք Ընդունիմ բայը խոնարհեն Ունիմին պէս։

(**) Ունիմ, կը բռնեմ, բային կրաւորականին համար սովորաբար Ըմբռնիմ, կը բռնուիմ, բայը կը գործածուի։

Նոյն Ունիմ բայը կը նշանակէ նաեւ ունենալ, բայց ներկային՝ անկատարին, ստորադասականին, աներեւոյթին եւ ապառնի ընդունելութեան մէջ միայն, ուստի եւ Ունիմ, Ունէի, Ունիցիմ, Ունել, Ունելոց, կը նշանակեն նաեւ ունիմ, ունէի, ունենալ եւայլն։ Իսկ միւս ժամանակներուն, զոր օրինակ կատարեալին, ապառնիոյն եւ անցեալին համար կը գործածուի Եմ բայը, այսպէս Եղէ Եմ եւայլն։



Ապառնի

| | |
|---|---|
| Կալայց, Պիտի բռնեմ. | Կալեալ եղէց, Պիտի բռնուիմ. |
| Կալցիս | Կալեալ եղիցիս, եւն. |
| Կալցի | |
| Կալցուք | |
| Կալջիք | |
| Կալցին | |

Հրամայական

| | |
|---|---|
| Կալ, կա, Բռնէ. | Կալեալ լեր, Բռնուէ, եւն. |
| Մի ունիր | |
| Կալայք, կալարուք | |
| Մի ունիք | |

Ստորադասական

| | |
|---|---|
| Ունիցիմ, Բռնեմ. | Կալեալ լինիցիմ, Բռնուիմ. |
| Ունիցիս, եւն. | Կալեալ լինիցիս, եւն. |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Ունել, Բռնել. | Կալեալ լինել, Բռնուիլ. |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Կալեալ, Բռնած. | Կալեալ, Բռնուած. |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Ունելոց, Բռնելու. | Ունելի, Բռնուելու |

---

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին տամ, գամ, երթամ։

Պ. Տամ, գամ, երթամ կը խոնարհին այսպէս։

| ՆԵՐԳՈՐԾ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Տամ, Կու տամ. | Տուեալ լինիմ. Կը տրուիմ, եւն. |
| Տաս | |
| Տայ | |
| Տամք | |
| Տայք | |
| Տան | |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Տայի , Կու տայի . | Տուեալ լինէի , Կը տրուէի , |
| Տայիր , եւն . | եւն . |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Ետու , Տուի . | Տուայ , Տրուեցայ . |
| Ետուր | Տուար |
| Ետ | Տուաւ |
| Տուաք | Տուաք |
| Ետուք | Տուայք |
| Ետուն | Տուան |

### Ապառնի

| | |
|---|---|
| Տաց , Պիտի տամ . | Տուայց , Պիտի տրուիմ . |
| Տացես | Տացիս |
| Տացէ | Տացի |
| Տացուք | Տացուք |
| Տաջիք | Տաջիք |
| Տացեն | Տացին |

### Հրամայական

| | |
|---|---|
| Տուր , Տուր . | Տաջիր , Տրուէ . |
| Մի տար | Մի տուեալ լինիր |
| Տուք | Տաջիք , տուարուք |
| Մի տայք | Մի լինիք տուեալ |

### Ստորադասական

| | |
|---|---|
| Տայցեմ , Տամ . | Տայցիմ , Տրուիմ . |
| Տայցես , եւն . | Տայցիս , եւն . |

### Աներեւոյթ

| | |
|---|---|
| Տալ , Տալ . | Տուեալ լինել , Տրուիլ . |



### Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տուեալ , Տուած . | Տուեալ , Տրուած . |

### Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Տալոց , Տալու . | Տալի , Տրուելու . |

---

## ՉԵԶՈՔ | ՉԵԶՈՔ

### Սահմանական եղանակ , Ներկայ

| | |
|---|---|
| Գամ , Կու գամ . | Երթամ , Կ'երթամ |
| Գաս | Երթաս |
| Գայ | Երթայ |
| Գամք | Երթամք |
| Գայք | Երթայք |
| Գան | Երթան |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Գայի , Կու գայի . | Երթայի , Կ'երթայի . |
| Գայիր , եւն . | Երթայիր , եւն . |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Եկի , Եկայ . | Չոքայ , Գացի . |
| Եկիր | Չոքար |
| Եկն | Չոքաւ |
| Եկաք | Չոքաք |
| Եկայք | Չոքայք |
| Եկին | Չոքան |

### Ապառնի

| | |
|---|---|
| Եկից , Պիտի գամ . | Երթայց , Պիտի երթամ . |
| Եկեսցես | Երթիցես |
| Եկեսցէ | Երթիցէ |
| Եկեսցուք | Երթիցուք |
| Եկեսջիք | Երթիջիք |
| Եկեսցեն | Երթիցեն |

Հրամայական

| | |
|---|---|
| Եկ , Եկուր · | Երթ , Գնա · |
| Մի գար | Մի երթար |
| Եկայք | Երթայք |
| Մի գայք | Մի երթայք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Գայցեմ, Գամ · | Երթայցեմ, Երթամ · |
| Գայցես , եւն · | Երթայցես , եւն · |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Գալ, Գալ · | Երթալ, Երթալ · |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եկեալ, Եկած · | Երթեալ, Գացած · |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Գալոց , Գալու · | Երթալոց , Երթալու · |

---

ՁԷՁՈՔ

Սահմանական եղանակ , Ներկայ

| | |
|---|---|
| կամ, Կը կենամ · | կեամ, Կ'ապրիմ · |
| կաս | կեաս |
| կայ | կեայ |
| կամք | կեամք |
| կայք | կեայք |
| կան | կեան |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| կայի , Կը կենայի · | կէի , Կ'ապրէի · |
| կայիր , եւն · | կէիր , եւն · |



Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| կացի , Կեցայ · | կեցի , Ապրեցայ · |
| կացեր | կեցեր |
| Եկաց , կաց · | Եկեաց , կեաց · |
| կացաք | կեցաք |
| կացէք | կեցէք |
| կացին | կեցին |

Ապառնի

| | |
|---|---|
| կացից , Պիտի կենամ · | կեցից , Պիտի ապրիմ · |
| կացցես | կեցցես |
| կացցէ | կեցցէ |
| կացցուք | կեցցուք |
| կացջիք | կեցջիք |
| կացցեն | կեցցեն |

Հրամայական

| | |
|---|---|
| կաց , Կեցիր · | կեաց , Ապրէ · |
| Մի կար | Մի կեար |
| կացէք | կեցէք |
| Մի կայք | Մի կեայք |

Ստորադասական

| | |
|---|---|
| կացցեմ, Կենամ · | կեցցեմ, Ապրիմ · |
| կացցես , եւն · | կեցցես , եւն · |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| կալ, Կենալ | կեալ, Ապրիլ · |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| կացեալ, Կեցած | կեցեալ, Ապրած · |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| կալոց , Կենալու · | կելոց , Ապրելու · |

---

## ՏԵՂԻՈՅ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՐԱԳԱՅՆԵՐԸ ՑՈՒՑՆՈՂ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Հ. Բանի մը այլ և այլ կողմերը կամ դիրքը ցուցնող նախադրութիւններն որո՞նք են։

Պ. Բանի մը այլ և այլ կողմերը կամ դիրքը ցուցնող նախադրութիւններն են.

| | |
|---|---|
| Առաջի կամ առաջոյ, առջեւը | Զհետ, զկնի, ետեւէն |
| Զկնի յետոյ, ետեւը, ետին | Ի վերայ, վրան |
| Ի, յ, մէջը | Ընդ, տակը |
| Ի մէջ, 'ի մէջի, մէջտեղը | Ընդդէմ, Հակառակ } դէմ |
| Արտաքոյ, դուրսը | Մերձ, մօտ, մօտ |
| Ի ներքոյ, ներսը | Դէպ ի, դէպ |
| Առ, քովը | Մինչեւ, մինչեւ |
| Առընթեր, կիցը | Հեռի, հեռու |
| Յանդիման, հանդէպ, դիմացը | Շուրջ, բոլորտիքը |

Հ. Ի՞նչ հոլով խնդիր կը պահանջեն այս նախադրութիւնք։

Պ. Մեծ մասը սեռական, ոմանք տրական, բացառական, գործիական կամ ուրիշ նախադրութեամբ խնդիր, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Խոստովան լեր առաջի Աստուծոյ | Աստուծոյ առջեւ խոստովանէ |
| Կայր յետոյ դրանն, յետոյ նորա, զկնի վարագուրին | Դրան, անոր, վարագուրին ետին կը կենար |
| Գնացին զհետ, զկնի նորա | Անոր ետեւէն գացին |
| Եդ 'ի վերայ սեղանոյն | Սեղանին վրայ դրաւ |
| Նստէր ընդ հովանեաւ ծառոյն | Ծառին շուքին տակ կը նստէր |
| Կային 'ի հրապարակի անդ | Հրապարակին մէջ կը կենային |



| | |
|---|---|
| Խաղաղութիւն էր 'ի մէջ նոցա | Անոնց մէջտեղ խաղաղութիւն էր |
| Կացին արտաքոյ դրանն | Դրան դուրսը կեցան |
| Էր 'ի ներքոյ վարագուրին | Վարագուրին ներսն էր |
| Ագաւ առ նմա զայն գիշեր | Այն գիշեր անոր քով օթեւան ըրաւ |
| Շունն կայր առ դիականն | Շունը դիակին քով կը կենար |
| Պատգամաւորն անցեալ նստէր առընթեր նոյն | Պատգամաւորն անցաւ քովը նստաւ |
| Նստէր յանդիման նորա | Անոր դիմացը կը նստէր |
| Երթայք 'ի գիւղն որ հանդէպ ձեր կայ | Մեր դիմացի գիւղը գացէք |
| Ընդդէմ մեր էր հողմն | Հովը մեզի դէմ էր |
| Հակառակ կայր նմա | Անոր հակառակ կը կենար |
| Տուն իմ մերձ է յեկեղեցւոյն | Տունս եկեղեցւոյն մօտ է |
| Նաւեցաք դէպ յարեւելս | Դէպ արեւելք կը նաւէինք |
| Ածին զնոսա մինչեւ 'ի դուռն քաղաքին | Զանոնք մինչեւ քաղաքին դուռը բերին |
| Հեռի 'ի տանէ և 'ի ծանօթից | Տունէն և բարեկամներէն հեռու |
| Ածին պարիսպ շուրջ զքաղաքաւն | Քաղքին բոլորտիքը պատ քաշեցին |

### 30· Հրահանգ

Գիրքը սեղանին վրայ դրի. Մեր ետեւէն եկան. Ձեր տուները գացէք. Օտարի տուն մ'երթար. Իմ բաժինս ինծի տուր. Հայրդ պատասխան չի տար. Գիրքերն անոր տուի. Շատ ձուկ բռնեցին. Սպասաւորները գինին խմեցին. Իր եղբօրը գնաց. Զանի՛ օր դրիր. Անոր բաւական պաշար տուին. Հաց գնելու երթանք. Անոր մարմինը գերեզմանի մէջ դրին. Ինծի եկէք. Շատ ստակ ունի. Բան մը չունինք. Զանի իւր տունը ընդունեց. Եղբայրդ ինծի եկաւ. Ինծի հետ եկուր, տեղը

քեզի ցուցնեմ. Այդ ձեր իւղէն մեզի տուէք. Ձեր բոլոր պէտքը ձեզի պիտի տամ. Ինծի հետ դաշտը գացին. Ստակի տեղ անոնց կերակուր տուինք. Քու պատկերդ իմ սենեակս պիտի դնեմ. Պարտքի համար բանտ դրուեցաւ, բայց ժամ մը ետքը հանուեցաւ անկէ. Ինչո՞ւ համար այդ մարդուն ստակ փոխ կու տաս. Անոր փոխ կու տամ, քանզի ստակի պէտք ունի. Ջուր չեմ խմեր, քանզի ծարաւի չեմ. Գինի խմեցինք, քանզի ջուր չգտնուեցաւ. Մատնին ո՞ւր դրիր. Քու սնտուկիդ մէջ դրի զայն. Եղբայրդ ո՞ւր գնաց. Որսի գնաց. Ձկնուորներն եկան և մեզ բռնել կ'ուզէին. Իւր եղբօրը հետ եկաւ. Անոր եղբայրն անոր հետ եկաւ. Մեզի հետ եկէք. Իմ ձեռքիս տակն ունիմ. Ձեր իշխանութեանը տակ զինուորներ ունիք. Անոնց վրայ յարձակեցան. Իմ վրաս մի լաք. Իմ առջեւս մի բերէք. Զանի քաղքէն դուրս հանեցին. Ճամբան անոր պատահեցանք գիւղին մօտ. Այս ամէնը մեր առջեւը գործուեցաւ. Անիկա սենեկին դուրսը կը կենար, ես ներսը. Հրապարակին մէջտեղն աղբիւր շինեց, և աղբիւրին վրայ կանգնեց իւր պղնձէ արձանը. Երբ մօտ եկանք այն քաղքին որ լեռանը դիմացն է. Այգիները դեղէն շատ հեռու չեն. Քաղքին բոլորտիքը պարտէզ է, պարտէզին քովէն (տես էջ 112-113) գետ կ'անցնի. Լերանը մինչև գլուխը կ'ուզէինք ելլել, բայց հազիւ մինչեւ կէսը կրցանք հասնել. Բոլորտիքս առին և կը խնդրէին ինէ որ զանի իրենց ձեռքը տամ. Անոնց վրայ ելան. Անոնք որ մեր առջեւէն կ'երթային՝ սկսան մեր ետեւէն գալ. Զուզեցինք անոնց ետին կենալ. Երբ կամարներով կապուած սրահին տակ մտանք. Նաւը խարիսխ նետեց աշտարակին դիմացը. Նաւահանգստին ներսը վտանգ չը կայ, անկէ դուրս է վտանգը. Մինչեւ փողոցին անկիւնը եկուր, և անկէ ետ դարձիր։



Ետեւէն գալ, գալ զկնի
Պատասխան, պատասխանի
Բռնեմ (ձուկ, եւն), ունիմ, կալայ
Խմեմ, ըմպեմ
Ո՞ւր, ո՞ւր. (եթէ շարժում է), յո՞
Բաւական, ըստ բաւականին
Բան մը (բացասական բայի հետ), ոչինչ
Տեղ (Նխ.) փոխանակ (սեռականով) ստակի տեղ. փոխանակ արծաթոյ
Դրուեցաւ, եդաւ (դնեմ ին կրաւոր.)
Ետքը (Նխ.), (յետ սեռակ.)
Անկէ, անտի
Ինչո՞ւ համար, ընդէ՞ր
Պէտք ունիմ, պէտս ունիմ
Սնտուկ, արկղ, արկեղ
Որսի երթալ, երթալ յորս
Տակ, ընդ, գործիականով. իմ ձեռքիս տակ. ընդ ձեռամբ իմով
Ճամբան, ճանապարհայն
Պատահել, հանդիպիմ
Մէյտեղը, 'ի մէջ
Արձան, պատկեր
Պղնձէ, պղնձի
Դիմացը, յանդիման, հանդէպ
Այգիներ, այգեստան
Բոլորտիքը (Նխ.) շուրջ զ., գործիականով, անոր բոլորտիքը. շուրջ նովաւ
Բոլորտիքն առնել, լինել շուրջ
Ելել (մէկուն վրայ), յառնեմ
Կամարներով կապուած, կամարակապ
Նետել (խարիսխ), ընկենում
Ետ, յետս (մկ.)

---

## ԼՈՒԾՈՒՄ

Եդի զմատեանն ի վերայ սեղանոյն. Եդի, դնեմ բային կտ. եզ. Ա. դէմքը. տէր բային ես, զօրութեամբ կ'իմացուի։ Զմատեանն, գոյ. հայց. սեռի խնդիր եդիին. Ի վերայ սեղանոյն, նախադրութեամբ խնդիր եդիին. տեղւոյ պարագան կը ցուցնէ։ Եդի, դրի. — Ո՞վ — Ես. Ի՞նչ բանը. — Զմատեանն, գիրքը. — Ո՞ւր. — Ի վերայ սեղանոյն, սեղանին վրայ։

Ենկէն զկնի մեր. Ենկէն, Գամ բային կտ. յք. Գ. դէմքը.

տէր բային է նոքա, զօրութեամբ ։ Զկնի մեր, նախադրութեամբ խնդիր · գալուն մէկ պարագան կը ցուցընէ ։ Եկին, եկան · — Ո՞վ · — Նոքա, անոնք · Որո՞ւն ետեւէն ։ — Զկնի մեր, մեր ետեւէն · նախադրութեամբ խնդիր եկին լին ։

# ԴԱՍ ԻԵ·

## ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐ

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին Զարթնում, Երկնչիմ, Եղանիմ, Լինիմ բայերը ։

Պ. Զարթնում, Երկնչիմ, Եղանիմ, Լինիմ կը խոնարհին այսպէս ·

| ԶԵԶՈՔ | ԶԵԶՈՔ |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Զարթնում, Կ'արթննամ · | Երկնչիմ, Կը վախնամ · |
| Զարթնուս, նմ · | Երկնչիս, նմ · |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Զարթնուի, Կ'արթննայի | Երկնչէի, Կը վախնայի · |
| Զարթնուիր, նմ · | Երկնչէիր, նմ · |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Զարթեայ, Արթնցայ · | Երկեայ, Վախցայ · |
| Զարթեար | Երկեար |
| Զարթեաւ | Երկեաւ |
| Զարթեաք | Երկեաք |
| Զարթեայք | Երկեայք |
| Զարթեան | Երկեան |



Ապառնի

| | |
|---|---|
| Զարթեայց, Պիտի արթննամ · | Երկեայց, Պիտի վախնամ · |
| Զարթիցես | Երկիցես |
| Զարթիցէ | Երկիցէ |
| Զարթիցուք | Երկիցուք |
| Զարթիջիք | Երկիջիք |
| Զարթիցեն | Երկիցեն |

Հրամայական

| | |
|---|---|
| Զարթիր, Արթնցիր · | Երկիր, Վախցիր · |
| Մի զարթնուր | Մի երկնչիր |
| Զարթիք | Երկերուք |
| Մի զարթնուք | Մի երկնչիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Զարթնուցում, Արթննամ · | Երկնչիցիմ, Վախնամ · |
| Զարթնուցուս, նմ · | Երկնչիցիս, նմ · |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Զարթնուլ, Արթննալ · | Երկնչել, Վախնալ · |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Զարթուցեալ, Արթնցած · | Երկուցեալ, Վախցած · |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Զարթնլոց, Արթննալու · | Երկնչելոց, Վախնալու · |

| ԶԵԶՈՔ | ԶԵԶՈՔ |
|---|---|

Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Եղանիմ, Կ'ըլլամ · | Լինիմ, Կ'ըլլամ · |
| Եղանիս, նմ · | Լինիս, նմ · |

Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Եղանէի , Կ'ըլլայի . | Լինէի , Կ'ըլլայի . |
| Եղանէիր , եւն . | Լինէիր , եւն . |

Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Եղէ , Եղայ . | Եղաք կամ եղեաք , Նոյն |
| Եղեր | Եղէք |
| Եղեւ | Եղեն |

Ապառնի

| | |
|---|---|
| Եղէց , Պիտի ըլլամ . | Լիցիմ , Պիտի ըլլամ . |
| Եղիցիս | Լիցիս |
| Եղիցի | Լիցի |
| Եղիցուք | Լիցուք |
| Եղիջիք | Լիջիք |
| Եղիցին | Լիցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Եղիջիր , Եղիր . | Լեր , լիջիր , Եղիր . |
| Մի եղանիր | Մի լինիր |
| Եղերուք | Լերուք , լիջիք |
| Մի եղանիք | Մի լինիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Եղանիցիմ , Ըլլամ . | Լինիցիմ , Ըլլամ . |
| Եղանիցիս , եւն . | Լինիցիս , եւն . |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Եղանել , Ըլլալ . | Լինել , Ըլլալ . |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եղեալ , Եղած . | Լեալ , Եղած . |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Եղանելոց , Ըլլալու . | Լինելոց , Ըլլալու . |



# ԴԱՍ ԻԶ.

## Զ, ՆԱԽԴՐԻՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Հայցականէն ետքը ուրիշ ո՞ր հոլովներով կը գործածուի զ նախդիրը։

Պ. Զ, նախդիրը շատ անգամ կը գործածուի նաեւ բացառականով և գործիականով։

Հ. Ի՞նչ կը կոչուի և ի՞նչ կը նշանակէ զ նախդրիւ բացառականը։

Պ. Զ նախդրիւ բացառականը կը կոչուի պատմական, և կը նշանակէ բանի մը վրայով, զոր օրինակ.

| *Բացառական* | *Պատմական* |
|---|---|
| Ի մանկանէն , տղէն | Զմանկանէն , տղուն վրայով |
| Յինէն , ինէ | Զինէն , իմ վրայով |
| Ի նմանէ , անկէ | Զնմանէ , անոր վրայով |
| Ի նոցանէ , անոնցմէ | Զնոցանէ , անոնց վրայով |
| Յումեքէ , մէկէ մը | Զումեքէ , մէկու մը վրայով |
| Յիմեքէ , բանէ մը | Զիմեքէ , բանի մը վրայով |
| Յայլմէ իմեքէ , ուրիշ բանէ մը. | Զայլմէ իմեքէ , ուրիշ բանի մը վրայով |

Հ. Ի՞նչ կը կոչուի և ի՞նչ կը նշանակէ զ նախդրիւ գործիականը։

Պ. Զ նախդրիւ գործիականը կը կոչուի պարառական և կը նշանակէ

1. Մէկուն կամ բանի մը բոլորտիքը, և 2. Բանի մը ատենները զոր օրինակ.

| Գործիական | Պարառական |
| --- | --- |
| Նովաւ , անով | Զնովաւ , անոր բոլորտիքը |
| Քաղաքաւ , | Զքաղաքաւն , քաղքին բոլորտիքը |
| Ինեւ , ինձմով | Զինեւ , իմ բոլորտիքս |
| Ինն ժամաւ , ինը ժամով | Զինն ժամաւ , ժամը իննին ատենները |
| Միջօրէիւ , կէս օրով | Զմիջօրէիւ , կէս օրուան ատենները |

Հ. Ո՞ր բայերն են որ փոխանակ բացառականի կ'առնուն պատմական խնդիր ։

Պ. Կախել և ունել (բռնել) բայերը . ուստի կ'ըսուի՝ կախել զփայտէ , զծառոյ , զորմոյ · փայտէն , ծառէն , պատէն վար կախել · ունել զձեռանէ , զոտիցն · բռնել ձեռքէն , վզէն ։

Հ. Ո՞ր բայերն են որ կ'ուզեն պարառական խնդիր ։

Պ. Արկանել և ածել բայերը , ուստի կ'ըսուի ·

| | |
| --- | --- |
| Արկեալ էր զանձամբ կամ զիւրեւ վերարկու մազեղէն | Վրան մազէ վերարկու մը առած (հագած) էր |
| Արկին զնովաւ քղամիդ կարմիր | Անոր կարմիր քղամիդ հագուցին |
| Ածել զօտի , սուր զմիջով | Մէջքը գօտի , սուր կապել |
| Ածել որմ, պատուար զքաղաքաւ | Քաղաքը պատով, պատուարով պատել |

## 31· Հրահանգ

### Զ, ՆԱԽԴԻՐ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՀՈԼՈՎՆԵՐՈՎ

Անոր ձայնը լսեցինք · Յովսէփ իւր եղբայրները ճանչցաւ . Էգ առիւծն իւր ձագերը կը պաշտպանէ . Երկրագործը երկիրը կը մշակէ · Քրիստափոր Կոլոմպոս



Ամերիկա գտաւ · Անոր վրայով լսեցինք թէ եղբօրը քով է · Ի՞նչ բանի վրայով կը խօսի այդ գիրքը · Այս գիրքը հանքերու վրայ կը խօսի · Տրովադացւոց պատերազմին վրայ ո՞վ գրեց · Իրենց ժամանակի դէպքերուն վրայ կը գրեն Եղիշէ վարդապետ և Ղազար Փարպեցի · Այդ խօսքը որո՞ւ վրայով էր · Մեր խօսքը թագաւորին որդւոյն վրայով էր · Ասոնք կ'ամբաստանեն անոր վրայով թէ թշնամիներուն ծածուկ օգնական է · Ինծի համար ո՞վ եմ կ'ըսէք · Ձեր վրայով կը լսենք թէ շատ հարուստ էք · Ջուր բերելու գացին · Բան մը կը փնտռէին որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն · Քաղքին բոլորտիքը պատ քաշեցին · Թշնամիները բոլորտիքս պատեցին · Անոր վրայ կարմիր քղամիդ տուին · Իւր հանդերձը վրան առաւ · Ձեռքէն բռնելով ներս մտցուց · Մազերէն բռնելով կը քաշէին · Զորս ծայրերէն (պոչերէն) կախուած աման մը տեսաւ · Խոյ մը սաբեկայ ծառէն կախուած կը կենար եղջիւրներէն · Մէկ ոտքէն կախուած էր · Տղաքն իրենց մայրերուն վիզէն կախեցին · Քեզի ծուռ կը նայի · կ'երեւի թէ քեզի դէմ բան մը ունի · Ծառաներն անոր բոլորտիքը կը կենային · Անոր հանդերձէն բռնեց · Վրան կտաւ մը առած էր , քանզի մերկ էր · Անոր արիւնէն պատին բոլորտիքը ցատկեց · Կռապաշտ ազգերէն ոմանք իրենց զաւկըները կրակէ անցունելու սովորութիւն ունէին · Վարազդատ անուն թագաւորի մը վրայով կը պատմուի թէ Եփրատ գետէն ցատկեց · Հին ատենն 'ի նշան սգոյ և ապաշխարութեան սովորութիւն էր քուրձ հագնել և գլուխը հող դնել· Տղուն վրայով լսել կ'ուզեմ. Կռուոյն վրայով ստոյգ բան մը չպատմուիր · Ինչո՞ւ համար իմ վրայովս ամբաստանութիւն կ'ընէք · Անոր վրայով շատ բան կը լսենք · Անոնց վրայով ըսուած խօսքերը սուտ են · Մէկու մը կամ բանի մը վրայով երբեք աղէկ կամ գէշ

գրած չեմ. Ուրիշ բանի մը վրայով խօսինք, ոչ միշտ մի և նոյն բաներու վրայ. Բազմութիւնն անոր բոլորտիքը գիզուեցաւ. Քաղքին բոլորտիքը նստան. Կէս օրուան կամ կէս գիշերուան ատենները քաղքէն կ'ելլէին. Ճամբուն կէսին մօտ վրան հասան. Այն ատեններն այն երկու ազգին մէջտեղ պատերազմ կար:

Էգ, մատակ
Ձագ (թռչունի, շունի), կորիւն
Երկրագործ, հողագործ
Ի՞նչ բան, զի՞նչ ինչ
Ի՞նչ բանի վրայով, զի՞նչ, ինչէ
Խօսիլ, ճառել
Հանք, երկրական նիւթ
Ո՞վ, ո՞վ, ո՞
Որո՞ւ վրայով, զորմէ՞
Թագաւորի որդի, արքայորդի
Ծածուկ, գաղտ
Օգնական, ձեռնտու
Ջուր, ոսկի եւն. բերելու երթալ, ղրկել. Երթալ, յղել կամ առաքել ջրոյ, ոսկւոյ եւն.
Փնտռել, խնդրել
Բան մը, ինչ
Քաշել (սպառ եւն.), ածել
Պատ, պարիսպ
Վրան տալ } արկանել զ (գործ.)
Վրան առնուլ, }
Բռնել, առնել զ (բացառ.)

Քարշեմ, տարչիմ
Ծայր (լաթի մը), քղանց, (սեռական) քղանցոյ
Ծուռ նայիլ, ընդ ակամբ հայել
(Մէկուն դէմ) բան մը ունենալ (սրտին մէջ), ունել ինչ իմն (զումեքէ)
Ցատկել (ջուր, եւն) ցայտել զ (գործիական)
Այրել, ածել զհրով (կրակին բոլորտիքը դնել)
Սովորութիւն ունենալ, լինել սովոր
Ցատկել (աթլամագ) վազել զ (գործ.)
Հին ատենը, ի հնումն
Գլուխը հող դնել, արկանել հող զգլխով
Ստոյգ բան մը չ... ինչ ստոյգ
Ամբաստանութիւն ընել, չարախօսել
Ըսուած խօսքերը, բանքն որ ասեն



Գրած չեմ, չէ իմ գրեալ
Բազմութիւն, ամբոխ
Գիզուիլ, խռնիմ
Կէս օրուան ատենները, ընդմիջօրէին, զհասարակ աւուրբ, զմիջաւուրբ
Կէս գիշերուան ատենները, զմէջ գիշերաւ, զհասարակ գիշերաւ
Ճամբուն կէսին մօտ, ընդմիջոց ճանապարհին
Այն ատենները, զայնու ժամանակաւ

Հ. Ո՞ր բայերը զարթնում և երկնչիմ ին պէս կը խոնարհին:

Պ. Զարթնում ին պէս կը խոնարհին:

Այտնում, կ'ուռենամ
Երդնում, երդում կ'ընեմ
Ոստնում, կը ցատկեմ
Ցասնում, կը բարկանամ
Քաղցնում, կ'անօթենամ
Փախնում, կը փախչիմ

Երկնչիմ ին պէս կը խոնարհին

Թաքչիմ (*), կը պահուըտիմ
Թռչիմ, կը թռչիմ
Հանգչիմ, կը հանգչիմ
Մատչիմ, կը մօտենամ
Մարտնչիմ, կը կռուիմ
Փախչիմ, կը փախչիմ

## 32. Հրահանգ

Հայրդ արթնցաւ, և քեզ կը կանչէ. Զարագործները իշխանութենէ կը վախնան. Անիրաւ տեղը բարկացաւ. Իմ տանս մէջ պիտի հանգչիմ. Թռչունները ծառերուն ճիւղերուն վրայ կը հանգչին. Աստուծմէ վախցիր. Սուտ երդում չընես. Մեր զինուորները քաջութեամբ կռուեցան. Անոր մօտեցաւ և կ'աղաչէր. Երբ անոր ձայնը լսեց, փախաւ. Ասիկա անոր ըսելու վախցան. Ինչո՞ւ կը վախնաք անոնցմէ. Անզգամներէն փախէք. Երդում ըրէ ինծի անոր վնաս չընելու. Քու

(*) Աշակերտք այս բայերը խոնարհեն:

խօսքերուդ մէջ հաւատարիմ եղիր. Քաջ եղիք. Հեղգ մի ըլլար. Երբ արթնցան, զանի իրենց քով տեսան. Անօթեցայ և ինծի ուտելիք չտուիք. Տղաք հնազանդ ըլլան իրենց ծնողացը. Վաղուան պատրաստ եղիք. Ինչո՞ւ կը բարկանաս. Չար բան մը չգործեցի։

| | |
|---|---|
| Կանչեմ, կոչեմ | Ինչու, ընդէ՞ր |
| Անիրաւ տեղը, յանիրաւի | Վնաս ընել, մեղանչել |
| Ծիւղ, ոստ | Ուտելիք տալ, տալ ուտել |
| Սուտ (մկ.), սուտ | Վաղուան, առ վաղիւն |

# ԴԱՍ ԻԷ.

## ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ

Հ. Հայցական հոլովը միշտ սեռի խնդի՞ր է թէ իբրեւ բնութեան խնդիր նաեւ կը գործածուի։

Պ. Հայցական հոլովը կը գործածուի նաեւ իբրեւ բնութեան խնդիր.

1. Ժամանակի տեւողութիւն և չափ ցուցնելու համար, և, ո՞րչափ ժամանակ, ո՞րչափ, ո՞րչափ տեղ, հարցմանց պատասխան է. զոր օրինակ՝ Մնաց անդ զաւուրս հինգ. Հոն հինգ օր մնաց։ Այս խօսքին մէջ զաւուրս հինգ, հինգ օր, հայցականը՝ բնութեան խնդիր է, կը ցուցնէ ժամանակի տեւողութիւն մը, և ո՛րչափ ժամանակ, հարցման պատասխան է։ Որչափ ժամանակ մնաց. — Հինգ օր։

Ետ նոցա ցորեան քոռս հինգ. Անոնց հինգ քոռ ցորեն տուաւ։ Այս խօսքին մէջ քոռս հինգ, հինգ քոռ, հայցականը՝ բնութեան խնդիր է, չափ կը ցուցնէ, և ո՞րչափ հարցման պատասխան է։ Ո՞րչափ ցորեն տուաւ. —Հինգ քոռ։



Գնացաք մղոնս երիս, Երեք մղոն քալեցինք։ Այս խօսքին մէջ մղոնս երիս, երեք մղոն, հայցականը՝ բնութեան խնդիր է, չափ կը ցուցնէ, և ո՞րչափ տեղ հարցման պատասխան է։ Ո՞րչափ տեղ քալեցինք. —Երեք մղոն։

### 33. Հրահանգ

(Աշակերտք Թուական ածականները գոյականներէն ետքը դնելով համաձայնեցնեն անոնց հետ)

Հայրս եօթանասուն տարի ապրեցաւ. Զանի երեք օր փնտռեցին. Պատերազմը հինգ ամիս տեւեց. Եօթը ժամ խօսեցաւ. Օրը տասը ժամ կ'աշխատիմ, երկու ժամ կը հանգչիմ, երեք ժամ կ'ուտեմ և կը զբօսնում, մնացած ժամերը կը քնանամ. Սիւնին բարձրութիւնը վեց կանգուն էր. Քաղաքը մէկ օրուան ճամբայ հեռու է մենէ. Զանոնք երկու մղոն տարին. Անոնց հինգ քոռ ցորեն տուին. Պատը եօթը կանգուն բարձրացուցին. Ասոր համար ութ տարի աշխատեցայ. Աշտարակը երկու քարընկէց մենէ հեռու է. Եղբայրս երեսուն տարի ապրեցաւ. Տասը տարի եղբօրը քով բնակեցաւ. Ութ մղոն քալեցինք. Հարիւր լիտր իւղ ծախեցինք. Զանոնք տասուերկու օր կը սորվեցնէր. Շատ օրեր նեղութիւն կրեցին. Ամբողջ օր մը ոչ կերաւ և ոչ խմեց. Վեց օր գործէ. Անոնց քով երկու օր կեցանք. Եօթն օր հարսնիք ըրին. Երկու մարդ մեզի եկաւ. Երկու օր ետքը որդին մեռաւ. Երկու քանքար շահեցայ. Վեց մարդ տասն օր աշխատեցան. Չորս օր անոնց սպասեցինք. Տարւոյն մէջ տասուերկու ամիս կայ, ամսոյն մէջ երեսուն կամ երեսուն և մի օր, օրուան մէջ քսան և չորս ժամ, ժամու մէջ վաթսուն րոպէ. Երկու ամիս է քանի որ եղբայրս մեռաւ. Հոն ժամ մը նստայ. Բոլոր այս գիշեր աշխատեցանք. Ինչո՞ւ

համար բոլոր ցերեկը դատարկ կը կենաք · Այն օր անոր քով օթեւան ըրին · ինծի գաւաթ մը ջուր տուր · Շատ օրեր հոն կեցանք · Երկու օր անոնց հետ քալելէն ետքը՝ գեղ մը հասանք · Տասը ժամ անօթի կեցայ · Սրահին մէջ եօթը սիւն կանգնեց · Տան մը մէջ մինակ կը բնակէր · Մէկ մարդով եկաւ · Մէկ թուզէ մահ եղաւ · Երեք մարդոց իշխանութիւնը (եռապետութիւնը) երկայն չտեւեց · Զօրս զինուորով բերուեցաւ · Անիկա հարիւրէ աւելի տղայոց վարպետ էր · Երեք հազարի չափ մարդոց խօսեցաւ · Ութ օր ետքը մեռաւ · Տասուերկու որդի ունէր · Վեց տարի առաջ տեսայ զանի · Հինգ ամիս ետքը սովը դադրեցաւ ։

| | |
|---|---|
| Ապրիմ, կեամ | Բոլոր այս գիշեր, զամենայն գիշերս |
| Տարի, ամ | Բոլոր ցորեկը, զտիւն կամ զօրն ողջոյն |
| Փնտռել, խնդրեմ | Օթեւան ընել, ագանիմ |
| Օրը, յաւուրն | Գաւաթ, բաժակ |
| Քնանալ, ննջեմ | Անօթի, նօթի |
| Պատ, որմ | Մինակ, առանձին |
| Քալել, գնամ | Մարդ, այր |
| Ծախել, վաճառեմ | Երկայն, ընդ երկար |
| Սորվեցնել, ուսուցանեմ | Վարպետ, վարդապետ |
| Նեղութիւն կրել, տառապիմ | Ունիմ, ունիս, ունի · ունինք, ունիք, ունին · է իմ, քո, նորա · մեր, ձեր, նոցա |
| Ամբողջ, ողջոյն | Առաջ, յառաջ քան |
| Կենալ, կալ | Աւելի, աւելի քան |
| Ընել, առնեմ | (Հազարի) չափ, իբրեւ |
| Կայ, են | Դադրիմ, դադարեմ, դադարեցի |
| Քանի որ, յորմէ հետէ | |
| Աշխատիլ, աշխատ լինեմ | |
| Հոն, անդ | |

---



## ԼՈՒԾՈՒՄ

Տարան զնոսա մղոն երկուս · Տարան, բայ ներգ. կատ. յոգ. Գ. դէմք, Տանիմ էն. — Տարան, ո՞վ. — Նոքա. Նոքա, հակ. դեր. յոգ. Գ. դէմք, զօրութեամբ կ'իմացուի, ուր բայի տարան ին ։ — Նոքա տարան · զո՞վ. — Զնոսա. զնոսա, հակ. դեր. Գ. դէմք, յոգ. հայց. սեռի խնդիր տարան ին . — Տարան զնոսա · ո՞րչափ տեղ. — Մղոն երկուս. հայց. բնութեան խնդիր տարան ին · երկայնութեան չափ կը ցուցնէ ։

## ԴԱՍ ԻԸ.

### ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ Ի ՁԵՌՆ, ՀԱՆԴԵՐՁ ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Հ. Ուրիշ ո՞ր բառերուն հայցականը բնութեան խըն-դիր է ։

Պ. Պ. Բնութեան խնդիր է նաեւ՝

2. Ճանապարհ, ճամբայ, բառին հայցականը, և ո՞ր ճամբէն հարցման պատասխան է · զոր օրինակ՝ Երթայր զճանապարհ լերինն · Լերան ճամբէն կ'երթար · Երթայր, կ'երթայր, որ ճամբէն · — Զճանապարհ լերինն, լերան ճամբէն · զճանապարհ, հայցական հոլովը բնութեան խնդիր է Երթայր բառին ։

3. Օրինակ (եղանակ) · ձեւ, ազգ (տեսակ) բառերուն հայցականը նոյնպէս բնութեան խնդիր է, և ի՞նչ եղանակաւ, ի՞նչ ձեւով, ի՞նչ կերպով, հարցման պատասխան է · զոր օրինակ՝ խօսեցաւ զայս օրինակ · այս կերպով խօ-

սեցաւ ։ Խօսեցաւ · Ի՞նչ կերպով · —Զայս օրինակ, այս կերպով · զայս օրինակ, հայցական հոլովը բնութեան խնդիր է խօսեցաւ բային ։

---

## Ի ՁԵՌՆ, ՀԱՆԴԵՐՁ, ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ. Ի՞նչ կը նշանակեն և ի՞նչ հոլով խնդիր կ'առնուն ի ձեռն, հանդերձ նախադրութիւնները ։

Պ. Ի ձեռն նախադրութիւնը կը նշանակէ ձեռօք, և կ'առնու սեռական հոլով խնդիր · հանդերձ կը նշանակէ մէկտեղ, հետը, և կ'առնու գործիական հոլով խնդիր · զոր օրինակ՝ 'ի ձեռն նորա, կը նշանակէ անոր ձեռքով, հանդերձ նովաւ՝ մէկտեղ, անոր հետ ։

### 34. Հրահանգ

Երեք օրուան ճամբայ գացին · Ձեր ճամբան գացէք · Հասարակաց ճամբէն երթանք · Հեռու ճամբայ գնաց · Անոնց հետ ճամբայ մ'երթար · Երկայն ճամբէն երթալ չէին ուզեր · Մարդիկը լերան ճամբէն անոնց ետեւէն ինկան · Ո՞ր ճամբէն երթանք · Շիտակէն երթանք · Զանոնք երկայն ճամբէն ղրկեց, ինք կարճէն գնաց · Երբ օրուան մը ճամբայ եկան · Քաղքէն երկու օրուան ճամբայ հեռացանք · Այս կերպով խօսեցաւ անոնց հետ · Ամէնքն ալ նոյն գունով և նոյն ձեւով հանդերձներ կը հագնին · Եղբօրը հետ մէկտեղ հոս եկաւ · Աթէնք եկաւ կնոջմով և տղոցմով մէկտեղ · Այս եկեղեցին որո՞ւ ձեռքով շինուեցաւ · Իտալացի ճարտարապետներու ձեռքով · Աստուած մեծամեծ բաներ կը կատարէ անզօրներու և պզտիկներու ձեռքով · Թագաւորական պալատին ձեւով իրեն պալատ շինեց · Թշնամեաց նաւերուն կերպով նաւեր շինել տուաւ, բայց



ուրիշ տեսակ ներկել տուաւ զանոնք · Իմ ձեռքովս այն պատուոյն հասաւ · Բարեկամներու ձեռքով դաւաճանութիւնն իմացուց անոր · Որո՞ւ ձեռքով ստացար այդ հարստութիւնը · մեր ձեռքով չէ՞ մի ։

| | |
|---|---|
| Հասարակաց (ճամբայ), հասարակաց, արքունի (ճանապարհ) | Կատարել, վճարել |
| | Անզօր, տկար |
| | Պզտիկ, անարգ |
| Ետեւէն ինկնալ, պնդել զհետ | Պալատ, ապարանք |
| Շիտակ, ուղղորդ | Թագաւորական, արքունի |
| Մէկտեղ, հանդերձ (նխ.) | Կերպ, եղանակ, օրինակ |
| Հոս (շարժում), այսր | Տեսակ, ազգ |
| Աթէն, Աթէնք, յԱթէնս (շր.) | Դաւաճանութիւն, դաւ— |
| Տղաք, մանկունք | Իմացունել, զեկուցանել |
| Որո՞ւ ձեռքով, յոյր ձեռն | Հարստութիւն, մեծութիւն |
| Մեծամեծ բաներ, մեծամեծս | Չէ՞ մի, ո՞չ ապաքէն |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Գնացին ճանապարհ երից աւուրց · Երեք օրուան ճամբայ գացին ։ Գնացին, բայ չէզոք կտր. յոգ. Գ. դէմք ։ Գնացին, ո՞վ, որո՞նք · — Նոքա · նոքա՝ էակ. դեր. Գ. դէմք յոգ. ուղ. տէր բայի գնացին, զօրութեամբ · — Նոքա գնացին · ո՞րչափ տեղ — Երից աւուրց ճանապարհ, երեք օրուան ճամբայ (միջոց, տեղ) · ճանապարհ՝ հայց. բնութեան խնդիր է գնացին ին, քանզի չափ, երկայնութիւն, ճամբայ ցուցնող բառերն հայերէն հայցական կը դրուին ։

Խօսեցաւ ընդ նոսա զայս օրինակ · Անոնց հետ այս կերպով խօսեցաւ ։ Խօսեցաւ, բայ չէզ. կտր. եզ. Գ. դէմք ։ — Խօսեցաւ, ո՞վ. — Նա · նա՝ էակ. դեր. Գ. դէմք ·

եզ. ուղ. տէր բայի խօսեցաւ ին, զօրութեամբ: — Նա խօսեցաւ ուրո՞ւ հետ. — Ընդ նոսա, անոնց հետ. Ընդ նոսա՝ նախադրութեամբ խնդիր խօսեցաւ ին: Նա խօսեցաւ ընդ նոսա, ի՞նչ կերպով. — Զայս օրինակ, այս կերպով. Զայս օրինակ՝ հայցական բնութեան խնդիր խօսեցաւ ին. կերպ, եղանակ ցուցնող բառեր հայերէն հայցական կը դրուին:

# ԴԱՍ ԻԹ.

## ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐ, ՏԱՄ ԲԱՅՈՎ ԱՆՆԵՐՆԻՈՅԹ

Հ. Ո՞ր բայերը կը կոչուին անցողական:

Պ. Հայերէն լեզուն մասնաւոր յատկութիւն մը ունի որ ամէն չէզոք բայ կրնայ ներգործականի փոխել, զոր օրինակ՝ զօրանամ, զօրացուցանեմ. Նստիմ, Նստուցանեմ: Այսպիսի բայեր կը կոչուին անցողական:

Հ. Ի՞նչպէս կը շինուին անցողական բայերը:

Պ. Անցողական բայերը կը շինուին՝ չէզոք բային կատարեալ եզակի առաջին դէմքին վերջին ձայնաւորը փոխելով ուցանեմի, զոր օրինակ.

| | Կատարեալ | Անցողական |
|---|---|---|
| Ննջեմ | Ննջեցի | Ննջեցուցանեմ |
| Անցանեմ | Անցի | Անցուցանեմ |
| Աշխատիմ | Աշխատեցայ | Աշխատեցուցանեմ |
| Խաղամ | Խաղացի | Խաղացուցանեմ |
| Լնում | Լցի | Լցուցանեմ |
| Զգենում | Զգեցայ | Զգեցուցանեմ |

Հ. Ի՞նչ զարտուղութիւն կայ այս կանոնէն:

Պ. Կորնչիմ բային վրայ փոխանակ ուցանեմի կ'աւելցուի ուսանեմ, և փլանիմ բային վրայ՝ ուզանեմ, զոր օրինակ.



| | Կատարեալ | Անցողական |
|---|---|---|
| Կորնչիմ | Կորեայ | Կորուսանեմ |
| Փլանիմ | Փլայ | Փլուզանեմ |

Հ. Ի՞նչպէս կը խոնարհին անցողական բայք:

Պ. Անցողական բայք կը խոնարհին այսպէս.

| ՆԵՐԳ. | ԿՐԱՒՈՐ. |
|---|---|

### Սահմանական եղանակ, Ներկայ

| | |
|---|---|
| Հատուցանեմ, կը վճարեմ. | Հատուցանիմ, կը վճարուիմ. |
| Հատուցանես, ևն. | Հատուցանիս, ևն. |

### Անկատար անցեալ

| | |
|---|---|
| Հատուցանէի, կը վճարէի. | Հատուցանէի, կը վճարուէի. |
| Հատուցանէիր, ևն. | Հատուցանէիր, ևն. |

### Կատարեալ անցեալ

| | |
|---|---|
| Հատուցի, Վճարեցի. | Հատուցայ, Վճարուեցայ. |
| Հատուցեր | Հատուցար |
| Հատոյց | Հատուցաւ |
| Հատուցաք | Հատուցաք |
| Հատուցէք | Հատուցայք |
| Հատուցին | Հատուցան |

### Ապառնի

| | |
|---|---|
| Հատուցից, Պիտի վճարեմ. | Հատուցայց, Պիտի վճարուիմ. |
| Հատուսցես | Հատուսցիս |
| Հատուսցէ | Հատուսցի |
| Հատուսցուք | Հատուսցուք |
| Հատուսջիք | Հատուսջիք |
| Հատուսցեն | Հատուսցին |

Հրամայական

| | |
|---|---|
| Հատո, վճարէ · | Հատուցիր, վճարուէ · |
| Մի հատուցաներ | Մի հատուցանիր |
| Հատուցէք | Հատուցարուք |
| Մի հատուցանէք | Մի հատուցանիք |

Ստորադասական

| | |
|---|---|
| Հատուցանիցեմ, վճարեմ · | Հատուցանիցիմ, վճարուիմ · |
| Հատուցանիցես, եւն · | Հատուցանիցիս, եւայլն · |

Աներեւոյթ

| | |
|---|---|
| Հատուցանել, վճարել · | Հատուցանել (իլ) վճարուիլ · |

Անցեալ ընդունելութիւն

| | |
|---|---|
| Հատուցեալ, վճարած · | Հատուցանելոց, վճարելու · |

Ապառնի ընդունելութիւն

| | |
|---|---|
| Հատուցեալ, վճարուած · | Հատուցանելի, վճարուելու · |

Շրջիմ (*) · Դառնամ · Մատչիմ · Հասանեմ · Վերանամ · Թռչիմ · Ճանաչեմ · Զբօսնում · Շիջանիմ · Յառնեմ · Գնամ · Կեամ · Կամ · Լամ · Խոնարհիմ · Սնանիմ · Ծնանիմ · Մեղանչեմ · Բուսանիմ · Զօրանամ · Գօսանամ · Դառնանամ · Ուսանիմ · Ամաչեմ · Լնում · Զարմանամ · Իմանամ · Զգամ · Վրիպիմ · Հաւանիմ · Հաճիմ · Յուսամ · Մոռանամ · Մոլորիմ · Բարձրանամ · Թուլանամ · Խստանամ · Սովորիմ · Ժառանգեմ · Զովանամ · Ցրտանամ · Ուծանամ · (պաղիլ մէկէն) · Ջեռնում · Մեծանամ · Զարթնում · Ագանիմ · Հնազանդիմ · Դադարիմ · Ապրիմ · Տրտմիմ ։

(*) Աշակերտք նշանակեալ բայերուն անցողականները շինեն ։



# ՏԱՄ ԲԱՅՈՎ ԱՆԵՐԵՒՈՅԹ

Հ · Տամ բայով աներեւոյթն հայերէն ի՞նչ կը նշանակէ ։

Պ · Հայերէն ամէն աներեւոյթ, մանաւանդ ներգործական բայեր, տամ բայով կրնայ գործածուիլ, ինչպէս՝ տամ ուտել, տամ խօսել, տամ անցանել, եւն ։ Տամ բայն այս կերպ գործածութեան մէջ բան մը ընել տալ կամ թոյլ տալ կը նշանակէ ։

| | |
|---|---|
| Ետ նմա ըմպել | Անոր խմել տուաւ |
| Ոչ ետ նմա ոգի առնուլ | Անոր շունչ առնել չտուաւ |
| Տաց քեզ ճաշակել | Քեզի ուտել պիտի տամ |
| Տուր ընթեռնուլ զգիրդ | Այդ գիրքը կամ գրուածը կարդալ տուր |
| Ոչ տաց քեզ մտանել | Քեզի թոյլ չեմ տար ներս մտնել |

## 36 · Հրահանգ

Եղբայրդ իւր պարտքը չի վճարեր · Երբ տղան կաթէն կտրուեցաւ · Ձեռքէն բռնելով վերցուց · Աշակերտները զանի արթնցուցին · Անոր իր հանդերձները հագուցի · Տղան ծնկուըներուն վրայ քնացուց · Շատերը կը զարմացնէր · Այդ տղան իր մօրը դարձուր · Պարտապան մը անոր առջեւը հանուեցաւ · Կրակը մարեցին · Ճրագն ո՞վ մարեց · Զանի բոլոր քաղաքը պտըտցուց · Բոլոր ազգերը հնազանդեցուց · Զանոնք հոն երկու օր դադրեցուցինք · Զիս այս վտանգէն ազատէ · Զանի մի տրտմեցուներ · Զանոնք չարաչար աշխատցուց · Նախ զանոնք անցուց գետէն և ետքը ինք անցաւ · Անոր խօսել չեմ տար · Մեզի շունչ առնել չեն տար · Անոր մեզի հակառակ խօսել չտուաւ · Ինք գիր չգիտեր, ուրիշներուն գրել կու տայ · Անոր գինի խմել տուին · Ձեզ պատժել պիտի տամ · Զանի կղզի մը աք-

սորել տուաւ. Ձեզի մեր երկրէն անցնել չենք տար. Երկու ոչխար մորթել տուաւ. Եթէ ինծի տեսնել տաս իմ որդիներս. Անոնց ձայն հանել չէր տար. Զանի իր տունը տանել տուաւ. Պարտքդ ինծի վճարէ. Զիս այս անգամ եւս զօրացուր. Փարաւոնին աղջիկը մեծցուց զՄովսէս. Աստուած Աբրահամը հարստացուց։

| | |
|---|---|
| Վճարեմ, հատուցանեմ | Ազատեմ, ապրեցուցանեմ |
| Կաթէն կտրեմ, հատուցանեմ | Գետէն, ըստ գետոյ |
| ի ստենէ [ռանէ | Շունչ առնել, ոգի առնուլ |
| Ձեռքէն բռնել, առնել զձե— | Ետքը, ապա |
| Վերցունեմ, յարուցանեմ | Գիր (գրութիւն), դպրութիւն |
| Արթնցունեմ, զարթուցանեմ | Խմեմ, ըմպեմ |
| Հագցունեմ, ագուցանեմ | Պատժեմ, պատուհասեմ |
| Ծունկ, ծունր սեռ. ծնգաց | Կզզի մը, ի կղզի ուրեք |
| Քնացունեմ, ննջեցուցանեմ | Երկրէն, ընդ երկիր |
| Զարմացնել, ապշեցուցանեմ | Մորթեմ, զենում |
| (Մէկուն) առջեւը հանել, | Ձայն հանել, ճիչ հանել |
| ճապուցանել առ (ոք) | Անգամ, նուագ |
| Մարեմ, շիջուցանեմ | Ալ, եւս |
| Պտըտցունեմ, շրջեցուցանեմ | Մեծցունեմ, սնուցանեմ |
| Բոլոր, ամենայն | Հարստացնեմ, մեծացուցանեմ |



# ԴԱՍ Լ.

## ԵՄ ԲԱՅԻՆ ՔԱՆԻ ՄԸ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ. ԳՈՄ

Հ. Ե՞րբ էական բայ է եմ բայը։

Պ. Եմ բայն էական կամ գոյական բայ է, երբ ստորոգելի մը ենթակային (*) (տէր բայիին) հետ կը կապէ. զոր օրինակ՝ սա նախադասութեան մէջ՝ Արդար է Աստուած, էն էական բայ է, քանզի արդար ստորոգելին կը կապէ Աստուած ենթակային հետ։

| | |
|---|---|
| Լուսաւոր է արեգակն | Արեգակը լուսաւոր է |
| Բազում են աստեղք | Աստղերը շատ են |
| Դա է որդի իմ | Իմ որդիս այդ է |
| Այս էին բանք նոցա | Անոնց խօսքերն ասոնք էին |
| Իմ է երկիրս | Այս երկիրն իմս է |
| Քո՞ իցէ մատեանդ | Այդ գիրքը քո՞ւկդ է |
| Այլ է խորհուրդ նոցա | Անոնց խորհուրդն ուրիշ է |

Բոլոր այս խօսքերուն մէջ եմ բայն էական կամ գոյական բայ է։

Հ. Ուրիշ ի՞նչ կը նշանակէ եմ բայը։

Պ. Եմ բայը 1 շատ անգամ չէզոք բայ է, և կը նշանակէ գտնուիլ (տեղ մը), ներկայ ըլլալ, և ան ատեն նախադասութեան մէջ չգտնուիր ստորոգելի, կամ, ստորոգելի մը լռելեայն կ'իմացուի, զոր օրինակ սա խօսքին մէջ, Աստուած ամենայն ուրեք է, Աստուած ամէն տեղ է. է կը նշանակէ ներկայ է, կը գտնուի։

(*) Տրամաբանք ենթակայ կը կոչեն տէր բային, հայերէն քերականութեանց մէջ ուղղական խնդիր ըսուած բառն ալ կ'անուանեն ստորոգելի. իսկ էական բայը, այսինքն՝ է բայը յօդ կ'անուանեն։ Այս երեք բառերէն, այսինքն՝ ենթակայէ, ստորոգելիէ եւ էական բայէ բաղկացեալ խօսք մը կ'անուանեն նախադասութիւն։

| | |
|---|---|
| Ո՞ւր իցէ եղբայր իմ | Եղբայրս ու՞ր է, այսինքն՝ ո՞ւր կը գտնուի, ո՞ւր կը կենայ |
| Աստ է որդի քո | Քու որդիդ հոս է, այսինքն՝ հոս կը գտնուի հոս կը կենայ |
| Եւ էր Պետրոս 'ի բանտի | Պետրոս բանտին մէջն էր, այսինքն՝ կապուած, արգելուած էր |
| Եղաք առ նոսա աւուրս եօթն | Եօթն օր անոնց քով եղանք, այսինքն՝ մնացինք, բնակեցանք |

2. Եմ բայը շատ անգամ կայ բային տեղ կը գործածուի, և նոյնպէս չէզոք է, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Են ոմանք որ ոչ հաւատան | Կան ոմանք որ չեն հաւատար |
| Է աստ այր մի | Հոս մարդ մը կայ |
| Էին անդ թակոյկք եօթն | Հոն եօթը թակոյկ կար |

Հ. Ուրիշ ի՞նչ բայ կայ կայ նշանակող:

Պ. Գոմ պակասաւոր չէզոք բայը կը նշանակէ կայ, և այս նշանակութեամբ շատ անգամ եմ բային տեղ կը գործածուի, զոր օրինակ՝ գոյ աստ այր մի, հոս մարդ մը կայ:

Հ. Ո՞ր ժամանակներն ունի գոմ բայը, և ի՞նչպէս կը խոնարհի:

Պ. Գոմ բայն ունի միայն ներկայ և անկատար, ստորադասականին երրորդ դէմքը միայն, և աներևոյթ, և կը խոնարհի այսպէս.

Սահման. Ներկ.

Գոմ, գոս, գոյ. գոմք, գոյք, գոն.

Անկատար

Գոյի, գոյիր, գոյր. գոյաք, գոյիք, գոյին:



Ստորադ.

Գ. դէմք. գուցէ:

Աներևոյթ

Գոլ.

Հ. Ուրիշ ի՞նչ պակասաւոր բայ կայ:

Պ. Պակասաւոր բայ են գոգեմ և բամ որ առեմ բային նշանակութիւնն ունին և ընդհանրապէս առեմ բային հետ գործածուած կը գտնուին:

Հ. Ի՞նչ ժամանակ ունի գոգեմ բայը:

Պ. Գոգեմ բայն ունի հրամայական, և ստորադասականին քանի մը դէմքը.

Հրամ. Գոգ, գոգջիր. գոգէք, գոգջիք. գոգցես, գոգցուք, գոգցեն:

Հ. Ի՞նչ ժամանակ ունի բամ բայը:

Պ. Բամ բային ներկայ եզ. Ա. և Գ. դէմքը միայն կը գործածուի, այսպէս. Ասեմ բամ, ասացի բամ, ասէ բայ, ասեն բայ, ասաց բայ:*

Հ. Գոմ բայը եմ էական բային տեղ չի՞ կրնար գործածուիլ:

Պ. Գոմ բայը եմ էական բային տեղ գործածել ընտիր հայերէն չէ. ուստի և փոխանակ ըսելու՝ հիւանդ գոյ, վայելուչ գոյր, ճշմարիտ գոլ, պարտ է ըսել, հիւանդ է, վայելուչ էր, ճշմարիտ լինել:

Հ. Ոչ է, ոչ գոյ, չկայ՝ բառերուն տեղ հայերէն սովորաբար ի՞նչ կը գործածուի:

Պ. Ոչ է, ոչ գոյ, չկայ՝ բառերուն տեղ հայերէն սովորաբար կը գործածուի չիք. զոր օրինակ՝

| | |
|---|---|
| Չիք ոք բարի | Բարի մէկը չկայ |
| Չիք աստ տեղի բնակութեան | Հոս բնակելու տեղ չկայ |

(*) Այս ձևերը թէպէտ ընտիր են, բայց ղուն ուրեք կը գործածուին.

## 37. Հրահանգ

Տգիտութիւնն ամբարտաւանութեան քոյրն է. Դատարկութիւնն ամէն չարեաց մայրն է. Կարդալը ճանճրութեան դեղթափն է. Գինին ծերերուն կաթն է. Բռնաւոր մարդն արձակուած առիւծ է. Շուշանն անմեղութեան նշան է. Առիւծին բարկութիւնը սոսկալի է. Հայրդ ո՞ւր է. Հայրս տունն է. Շատ օրեր հոն եղաւ. Քաղքին մէջ կին մը կար. Անտառին մէջ գազաններ կան. Ձեր եղբայրները պարտէզն են. Բանտին մէջ եղած ատենս. Անիկա մեզի հետ չէր. Կաթսային մէջ մահ կայ. Սրահին մէջ շատ բազմութիւն կար. Մայրս իւր սենեկին մէջն է. Ամէնքն ալ հոս են. Երկուքն ալ մէկտեղ էին. Հոս երկու սուր կայ. Անոր մեծ որդին ագարակն էր. Հոն մարդ մը կար. Հօրս տունը շատ սպասաւորներ կան. Դուք ծովն էք, մենք՝ ցամաքը. Օտարականներն այս սրահն են. Հիւրը մեր քովն է. Այս տանը մէջ հարսնիք կայ. Թզենւոյն վրայ պտուղ չկայ. Քու ստակդ իմ սնտուկս է. Անոր գերեզմանը եկեղեցւոյն բակն է. Երկիրը խաղաղութեան մէջ էր. Կենաց ծառը դրախտին մէջտեղն էր. Մեր սպասաւորները դաշտն են. Ձեր քոյրերը գեղն են. Մայրդ ո՞ւր էր. Մայրս եկեղեցին էր. Հոն խոզերու երամակ մը կար. Անոր ծառաներէն երկուքը քաղաքն են, երեքը՝ գեղը. Անոնցմէ մէկը հոս է։

| | |
|---|---|
| Կարդալը, ուսեալ ընթերցուածք | Եղած ատենս, մինչ էի |
| Դեղթափ, անդբեղեայ, անդբեղայ | Շատ, յոյժ |
| Արձակուած, արձակ | Ամէնքն ալ, ամենեքին |
| Նշան, նշանակ | Երկուքն ալ, երկոքին |
| Բարկութիւն, ցասումն | Մէկտեղ, ի միասին |
| Սոսկալի, ահագին | Սուր, սուսեր |



| | |
|---|---|
| Մեծ (որդի), երէց | Բակ, գաւիթ |
| Մեր քովը, առ մեզ | Մէջտեղը, ի մէջ |
| Սնտուկ, արկղ | Գիւղ, շէն |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Հայր իմ ի տան է։ Է, չէզոք բայ. կը նշանակէ՝ կը գտնուի, հոն է. սհմ. ներկ. եզ. Գ. դէմք. Ո՞վ է (կը գտնուի). —Հայր իմ. հայր, գոյ. եզ. ուղղ. տէր բայի է ին. իմ ստաց. ածակ. հայր ին. —Հայր իմ է, ո՞ւր, — ի տան. ի տան՝ ի նախդրիւ բնութեան խնդիր է ին, տեղւոյ պարագան կը ցուցնէ։

## ԴԱՍ ԼԱ.

### ԵՄ ԲԱՅՆ ՈՒՆԻՄ ՆՇԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

Հ. Հայերէն ի՞նչ բայ կը գործածուի ունիմ բային տեղ։

Պ. Ունիմ բային տեղ հայերէն շատ անգամ կը գործածուի եմ բայը։

Հ. Եմ բայն այսպէս ունիմ բային տեղ գործածելու համար ի՞նչ ընելու է։

Պ. Ունիմ ին սեռի խնդիրն ընելու է տէր բայի, իսկ տէր բային փոխելու է սեռականի. զոր օրինակ.

| | |
|---|---|
| Անիկա պարտէզ մը ունի | Պարտէզ մի է նորա |
| Հայրս այգի մը ունէր | Այգի մի էր հօր իմոյ |
| Անիկա մանչեր և աղջիկներ ունեցաւ | Եղեն նորա ուստերք և դստերք |

38 Հրահանգ․

Երկու եղբայր ունիմ․ Անիկա ոչխար և արջառ ունէր․ Մէկ հատիկ աղջիկ մը ունէր․ Գիրք մը ունիմ․ Եղբայրս պզտիկ պարտէզ մը ունի․ Գեղեցիկ տուն մը ունինք․ Անոնք մեծամեծ պալատներ ունին․ Այն թագաւորը շատ զինուորներ ունի․ Անոր զօրքը պաշար չունի․ Հօրեղբայրս մանչ մը և աղջիկ մը ունի․ Շատ ստակ ունի՞ս․ Շատ ստակ չունիմ, շատ բարեկամ ունիմ։ Ծառաներ և աղախիններ ունի՞ն․ Հայրս մեծ տուն մը ունի․ Անիկա պզտիկ շուն մը ունէր․ Տեղ չունիմ․ Ծառաներ և աղախիններ չունին․ Անիկա Եգիպտացւոց հետ պատերազմ ունեցաւ․ Աչք ունին և չեն տեսներ․ ականջ ունին և չեն լսեր․ Բարեկամս պզտիկ շուն մը ունի որ շատ հաւատարիմ է․ Շատ գիրք ունինք․ Ուրիշ տուն մը ունիմ որ շատ գեղեցիկ է․ Շատ բարեկամներ ունինք, շատ երջանիկ ենք․ Չարերը բարեկամ չունին և թշուառ են․ Անիկա որդի մը ունեցաւ․ Հայրս շատ ստացուած ունի․ Կինը մեծ գութ ունէր իւր զաւկներուն։

| | |
|---|---|
| Մէկ հատիկ, միամօր | Պզտիկ շուն, շնիկ, շուն փոքրիկ |
| Պզտիկ, փոքր | Տեղ, տեղի |
| Պալատ, ապարանք | Հետ, ընդ յգ. հայցականով |
| Մանչ, ուստր | Շատ մը, յոյժ, ած. բազում |
| Աղջիկ, դուստր | Ուրիշ, այլ, միւս եւս |
| Ստակ, արծաթ | Չ'ունին, չիք, ոչգոյ, յգ. ոչգոն |
| Աղախին, աղախին, յգ. աղախնայք | Ստացուած, ինչք, ստացուածք |
| | Զաւակ, որդի, որդեակ |

ԼՈՒԾՈՒՄ

Են իմ եղբարք երկու։ Են. էակ. բայ սհմ. ներկ. յգ. Գ. դէմք. հոս կը նշանակէ ունենալ։ —Ո՞վ են. —Եղբարք երկու. Եղբարք՝ գոյ. յոգ. ուղ. տէր բայի են ին. Երկու՝ թուակ. ածական եղբարք ին։ —Եղբարք երկու են. որո՞ւ. —Իմ. իմ՝ էակ. դեր. Ա. դէմք. եզակի սեռի խնդիր են ին։



# ԴԱՍ ԼԲ․

## ՇԱՂԿԱՊ

Հ․ Ի՞նչ է Շաղկապ։

Պ․ Շաղկապ կ'ըսուին այն բառերը որ կը կապեն իրարու հետ բառեր կամ նախադասութիւններ (խօսք). ինչպէս, Ես և եղբայր իմ․ Ես ու եղբայրս․ Դու կամ որդի քո․ Դուն կամ որդիդ․ Քոյր քո կրտսեր է քան զքեզ, այլ քան զքեզ հանճարեղ․ Քոյրդ քան զքեզ կրտսեր (փոքր) է, բայց քան զքեզ հանճարեղ։

Այս օրինակներուն մէջ, և, կամ, այլ, շաղկապ են․ առաջինը, և, կը կապէ ես, եղբայր․ երկրորդը, կամ, դու, որդի քո, բառերը․ Երրորդն, այլ, բայց, կը կապէ երկու նախադասութիւններն, կրտսեր է, հանճարեղ է։

Հ․ Ո՞յք են գլխաւոր շաղկապք։

Պ․ Գլխաւոր շաղկապք են,

Եւ, նաեւ, ու, և

Կամ, և կամ, կամ

Բայց, այլ, սակայն, իսկ, բայց

Թէ, եթէ, թէ որ

Թէ, զի, վասն զի, վասն զի, ինչու որ

Որովհետեւ, զի, որովհետեւ

Ուրեմն, ապա, ուրեմն, անանկ է նէ

Թէպէտեւ, թէպէտ, թէպէտ, թէեւ

Մինչ մինչեւ, (աներեւութով), այնպէս որ

ՕՐԻՆԱԿՔ

Ես կամ հայր իմ եկեսցուք․ Ես կամ հայրս գանք

Յորժամ դու և նա միայն իցէք․ Երբ դուն և նա միայն էք

Կամիմ զի տացես ինձ զարծաթն․ Կ'ուզեմ որ ինծի տաս ստակը

Մի յաղթիր ի չարէն, այլ յաղթեա բարեաւն չարին․ Մի յաղթուիր չարէն, այլ յաղթէ չարին բարեաւ

Թէպէտեւ ամենեքին ուրասցին, սակայն ես ոչ ուրացայց. Թէպէտ ամենքն ուրանան, բայց ես չեմ ուրանար

Թաքեայ, քանզի մերկ էի. Պահուեցայ, վասն զի մերկ էի

Այր բարկացող նիւթէ զկռիւ, իսկ երկայնամիտն և զհանդերձեալն ցածուցանէ. Բարկացող մարդը կռիւ կը հանէ, իսկ համբերողը հանդերձեալը (գալիքը) եւս կ'իջեցունէ

Եթէ ննջէ, ապա ապրի. Եթէ կը քնանայ, ուրեմն կ'ապրի

Որովհետեւ ոչ կամեցար, չունիս մասն ընդ իս. Որովհետեւ չուզեցիր, չունիս ինծի հետ բաժին

Բազումք գային, մինչեւ ոչ ժամանել նոցա ուտել հաց. Շատեր կու գային, այնպէս որ հաց ուտելու անգամ չէին հասներ։

## 39. Հրահանգ

Մտան տունը, նա եւ անոր որդիքը. Արեւը և աստղերը կը կոչուին լուսաւոր. Արծաթ և ոսկի չունիմ. Ըսածս ըրէ և կամ գնա ասկէ. Եթէ պարտքդ հատուցանես, կ'ազատիս անոր ձեռքէն. Կարելի չէր ինձ գնել ձին, վասն զի ստակ չունէի. Կը պոռային և կ'ըսէին թէ մահապարտ է. Չկրնար ոտքի վրայ կենալ, վասն զի տկար է. Այս տունն իմս չէ, այլ եղբօրս. Թէպէտ գիտեր, բայց լռեց. Թողի նմա յանցանքը, վասն զի կ'աղաչէր. Զանի բռնելու ելան, վասն զի կը կարծէին թէ խենդեցած է. Կ'ըսէին թէ նա սպաննած էր մարդը. Երբ արեւ ծագեց, տաքցաւ. և որովհետեւ արմատ չկար, չորցաւ. Հոգդ չէ որ ահա կը կորսուինք. Օգտուած չէր, հապա ալ աւելի սաստկացած էր (հիւանդութիւնը). Չուզեց երթալ անոր հրաւէրին, վասն զի կը վախնար անկէ. Զանի բանտ դրաւ, վասն զի անոր վրայ կասկած ունէր. Ամբաստանեցին զնա թէ նա եւս օգնական էր թշնամիներուն. Կու գան ոմանք և կ'ըսեն թէ որդիդ մեռաւ. Ոչ ոք թողուց մըտնել, բայց միայն իւր բարեկամները. Եղաւ և կը քա-



լէր, վասն զի ողջնցած էր հիւանդութենէն. Մարգարէ (մը) անարգ չէ, բայց միայն իւր երկրին և տանը մէջ. Մի խօսիր, այլ լռէ. Կ'աղաչէին որ չերթայ. Թագաւորը լսեց, վասն զի անոր անունը հռչակուեցաւ (տարածուեցաւ). Ոմանք կ'ըսէին թէ ան է …ուրիշները՝ թէ անոր սպասաւորներէն մէկն էր. Անկէ կը վախնար, ինչու որ գիտէր թէ թագաւորին ընտանի էր. Տեսայ զանի որ կ'երթար. Եթէ անոր օգնեց, ուրեմն անոր բարեկամն էր. Ժողովուրդ դիզուեցաւ անոր բոլորտիքը, այնպէս որ քաշուեցաւ անկէ. Անոր խրատը մտիկ ըրէ, վասն զի քան զքեզ իմաստուն է. Առ այդ դահեկանը և տուր դուռը կեցող մարդուն. Եթէ ես եմ յանցաւորն, ուրեմն թող ատիկա որ երթայ. Թագաւորը բարկացաւ, բայց ծերութեանը համար չուզեց պատժել զնա. Կ'ուզեմ որ տաս հիմա ինչ որ կը խնդրէի քենէ երէկ. Որովհետեւ իմ որդւոյս ըրիր այդ շնորհքը, ինծի ըրիր. Մեռնիմ այսուհետեւ, որովհետեւ տեսայ քու երեսդ. Որովհետեւ կատարեցիր գործըդ, գնա հանգչէ այսուհետեւ. Ո՛րչափ աւելի գերազանց է մարդ քան ոչխար. Ուրեմն պէտք է շաբաթ (սուրբ) օրը բարիք գործել. Եղաւ հովի մեծ փոթորիկ որ ալիքները նաւուն մէջ կը թափէր, այնպէս որ գրեթէ կը լեցուէր նաւը. Չենք կրնար հոս կենալ, վասն զի շատուոր ենք. Պատուիրեց անոր լռել, բայց նա աւելի եւս կը պոռար։

| | |
|---|---|
| Արեւ, արեգակն | Ստակ, արծաթ |
| Ըսածս, զոր ասեմ | Պոռալ, աղաղակել |
| Ասկէ, աստի | Ոտքի վրայ կենալ, կալ յոտին |
| Երթալ (տեղէ մը), գնալ ի բաց | Բայց, սակայն |
| | Ելլել (դուրս), ելանել |
| Ազատիլ, ապրել | Բռնել, առնել |
| Կարելի է, մարթ է | Կարծել, համարել |

Խենդենալ, մոլեգնել
Տաքնալ, ջերմանալ
Չկար, չկային, ոչ գոյր, ոչ գոյին
Հոգդ չէ, ոչինչ է քեզ գոյն
Օգտիլ, օգտել
Հապա, այլ
Ալ աւելի, առաւել եւս
Սաստկանալ, զօրանալ
Ջուզեց, ոչ կամեցաւ
Հրաւէր, կոչ
Վախնալ, երկնչել
Բանտ դնել, արկանել ի բանտ
Մէկուն վրայ կասկած ունենալ, կասկածել, առնել կասկած զումեքէ
Ամբաստանել մէկը, ամբաստան լինել զումեքէ
Օգնական, ձեռնտու ի . . .
Ելանել (պառկած, նստած տեղէն), յառնել
Քալել, գնալ
Ողջնցած, ողջացեալ
(Մէկուն երկիրը), գաւառ
Երթալ (տեղէ մը), մեկնել
Հռչակուիլ, հռչակիլ
Մէկը, մի ոմն
Դիզուիլ, խռնել
Անոր բոլորտիքը, շուրջա
Բաշուիլ (տեղէ մը), խոյս տալ
Մտիկ ընել, լսել (տրականով)
Դուռը կեցող, որ առ դրան կայ
Պատժել, պատուհասել
Հանգչէ, հանգչիր
Որչափ աւելի, որչափ եւս
Գերազանց, առաւել
Պէտք է, պարտ է
Հով, հողմ
Փոթորիկ, մրրիկ (մրրիկ հողմոյ, պորա)
Թափել (լեցունել յորդութեամբ), հեղուլ
Լեցուիլ, լի լինել
Հոս, աստէն, աստ
Շատուոր, բազում
Պատուիրել, պատուէր տալ
Աւելի եւս, եւս քան զեւս



# ԴԱՍ ԼԴ.

## ԱԾԱԿԱՆԱՑ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հ. Ածականք իրաց յատկութիւնը քանի՞ կերպով կրնան ցուցնել։

Պ. Ածականք իրաց յատկութիւնը կրնան ցուցնել երեք կերպով, 1. Պարզապէս, 2. Բաղդատութեամբ, և 3. Իբր վերջին աստիճան։ Զոր օրինակ.

| | |
|---|---|
| Եղբայրս իմաստուն է | Իմաստուն է եղբայր իմ |
| Եղբայրս քու հօրմէդ աւելի իմաստուն է | Եղբայր իմ իմաստուն կամ իմաստնագոյն է քան զհայր քո |
| Եղբայրս շատ իմաստուն է | Եղբայր իմ իմաստուն է յոյժ |

Առջի խօսքին մէջ իմաստուն ածականը պարզ է, երկրորդին մէջ՝ բաղդատական, երրորդին մէջ՝ գերադրական։ Ասոնք են ածականաց աստիճանները։

Հ. Քանի՞ տեսակ է բաղդատութիւնը։

Պ. Բաղդատութիւնն է երկու տեսակ. 1. Հաւասարութեան բաղդատութիւն. և 2. Տարբերութեան բաղդատութիւն։

Հ. Հաւասարութեան և տարբերութեան բաղդատութիւններն ի՞նչ կը ցուցնեն, և ի՞նչպէս կը բացատրուին։

Պ. Հաւասարութեան բաղդատութիւնը կը ցուցնէ թէ երկու բան իրարու հաւասար են, և կը բացատրուի իբրեւ ընախադրութեամբ։ Տարբերութեան բաղդատութիւնը կը ցուցնէ թէ երկու բան իրարմէ աւելի կամ նուազ են, և կը բացատրուի քան ընախադրութեամբ, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Օդը ջուրի պէս լոյծ է, բայց անկէ աւելի բարակ և թեթև է | Լոյծ է օդ իբրև զջուր, այլ նուրբ և թեթև է քան զնա |

Հ. Բաղդատութեան մէջ ածականին վրայ ի՞նչ մասնիկ կամ բառ կ'աւելնայ։

Պ. Բաղդատութեան մէջ ածականին վրայ երբեմն գոյն մասնիկը կ'աւելնայ, և երբեմն ևս բառը կը դրուի ածականէն առաջ կամ ետքը, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Ուժէ աւելի յարգի է իմաստութիւնը | Իմաստութիւն պատուական կամ պատուականագոյն է քան զզօրութիւն |
| Հարստութիւնն աղէկ է, բայց առաքինութիւնն աւելի աղէկ է | Բարւոք է մեծութիւն, այլ առաքինութիւն բարւոք ևս է |

Հ. Բաղդատութիւնը ե՞րբ կը ցուցնէ նուազութիւն։

Պ. Բաղդատութիւնը կը ցուցնէ նուազութիւն, երբ բայն է բացասական, զոր օրինակ.

| | |
|---|---|
| Եղբայրդ քեզի չափ խորագէտ է | Եղբայր քո խորագէտ է իբրև զքեզ |
| Եղբայրդ քենէ նուազ խորագէտ է | Եղբայր քո չէ խորագէտ իբրև զքեզ |
| Եղբայրդ քենէ աւելի աղէկ է | Եղբայր քո լաւ կամ լաւագոյն է քան զքեզ |
| Եղբայրդ քենէ նուազ աղէկ է | Եղբայր քո չէ ինչ լաւ կամ լաւագոյն քան զքեզ |

Հ. Հայերէն գերադրական աստիճան ցուցնելու համար ի՞նչ ընելու է։

Պ. Հայերէն գերադրական աստիճան ցուցնելու համար ածականին վրայ աւելցնելու է յոյժ, կարի, անհնարին և ուրիշ ասոնց նման բառեր։



## 40. Հրահանգ

Եղբայրս քու հօրդ պէս հարուստ է, բայց ինէ աւելի հարուստ չէ. Ձեր հօրեղբօրը տունը մերինին պէս ընդարձակ է. Այս պարտէզը մեծ է, բայց իմինիս չափ գեղեցիկ չէ. Առիւծը վագրին չափ անգութ չէ. Կ'ուզեմ տունս քակել և աւելի գեղեցիկ շինել. Այս տղան քու աղջկանէդ աւելի խելօք և հանդարտ է. Ծովերը լիճերէն աւելի խորունկ և ընդարձակ են. Դուք ինէ աւելի իրաւացի էք. Ես անիրաւ եմ, դուն ինէ աւելի անիրաւ ես. եղբայրդ բոլորովին անիրաւ է. Իմ եղբօրմէս մեծ ես, բայց անկէ աւելի խելօք չես. Մեր ծառաները ձերիններէն երջանիկ են. Իմ բժիշկս քու կինէդ աւելի վարպետ է. Այս մարդը շատ հարուստ է. երեսունէ աւելի տուներ ունի. Դուն շատ բաներով զբաղած ես, բայց եղբայրս քենէ աւելի զբաղած է. Դուն քիչ կը զբօսնուս, ես քենէ քիչ իսկ քոյրս մենէ աւելի քիչ. Օդը ջուրէն թեթև է. Որդիս քենէ իմաստուն է. Այս լեռն ամէն լեռներէն բարձր է. Աշխարհիս մէջ վատահամբաւ ըլլալէն աղէկ է մեռնել. Կենդանի շունը՝ մեռած առիւծէն աղէկ է. Թագաւորները զօրաւոր են, բայց Աստուած անոնցմէ աւելի զօրաւոր է. Եղբայրդ խելօք է, բայց իմ եղբայրս անկէ աւելի խելօք է. Ձեր քոյրը պարկեշտ է, բայց մեր դպրոցին աղջիկներն անկէ աւելի պարկեշտ են. Այս տղաքն իրենց հօրմէն աւելի խելացի են. Հովն ու ջուրն ամէն բանէ աւելի սաստիկ և ուժով են. Առիւծէն աւելի սոսկալի կենդանի մը չկայ. Արևուն լոյսը լուսնին լուսէն պայծառ է. Հոգին մարմինէն գերազանց է. Լուսինն ուրիշ աստղերէն փոքր է. Աստղերէն ոմանք արեգակէն մեծ են. Հին գինին նորէն աւելի յարգի

է. Նպատ լեռն Արարատին չափ բարձր չէ (կամ Արարատէն նուազ բարձր է). Սեւ ծովը Միջերկրականէն աւելի շատ անգամ կ'ալեկոծի. Այս մարդը մենէ աւելի շատ անգամ կը ճամբորդէ. Այս լեռները շատ բարձր են. Ջուրին զօրութիւնը շատ սաստիկ է. Անոր յաղթել շատ դժուար է. Ցամաքը մենէ շատ հեռու էր. Այն մարդը շատ ճարտասան է։

| | |
|---|---|
| Պէս, իբրեւ զ | Պարկեշտ, զգաստ, պարկեշտ |
| Հարուստ, մեծատուն | Խելացի, հանճարեղ |
| Անգութ, անագորոյն | Սաստիկ, բուռն |
| Աւելի, եւս | Ուժով, ուժգին |
| Խելօք, զգօն | Կենդանի, գազան |
| Լիճ, ծովակ | Սոսկալի, ահագին |
| Խորունկ, խոր | Գերազանց, առաւել |
| Իրաւացի (հագլը), արդար | Աստղերէն ոմանք, են աս– տեղք որ |
| Բոլորովին, յոյժ, ամենեւին, իսկ | Յարգի, պատուական |
| Վարպետ, ճարտար | Շատ անգամ, ստէպ, յաճախ, |
| Շատ բաներով, զբաղեալ ի– –նի (զբաղել) | Ալեկոծիմ, ամբոխիմ |
| Զբաղած, զբաղեալ | Ճամբորդեմ, ճանապարհորդեմ |
| Վատահամբաւ, վատանուան | Շատ (մկ.), յոյժ |
| Զօրաւոր, հզօր | Զօրութիւն, բռնութիւն |
| | Ճարտասան, բանիբուն |

---

# ԼՈՒԾՈՒՄ

Եղբայր իմ մեծատուն է իբրեւ զհայր քո, այլ ոչ ընչեղ քան զքո։ Է, էակ. բայ. սահմ. ներկ. եզ. Գ. դէմք. —Ո՞վ է. —Եղբայր իմ. եղբայր իմ՝ տէր բայի է ին. —Եղբայր իմ է, ի՞նչ. —Մեծատուն. մեծատուն՝ ստորոգելի եղբայր ին. —Եղբայր իմ մեծատուն է, իբրեւ զո՞վ. —Իբրեւ զհայր



քո. իբրեւ զհայր քո՝ նախադրութեամբ խնդիր մեծատունին, համեմատութիւն կը ցուցնէ։

Այլ ոչ ընչեղ քան զքո. Է, բայ էակ. սահմ. ներկ. եզ. Գ. դէմք. —Է, ո՞վ. —Նա (եղբայր իմ), դերանուն տէր բայի, զօրութեամբ կ'իմացուի։ —Է նա՝ ինչ. —Ընչեղ. ընչեղ՝ ստորոգելի նա ին. —Է նա ընչեղ քան զո՞. —Քան զքո. քան զիս՝ քան զ նախադրութեամբ խնդիր, առաւելութիւն կը ցուցնէ, հոս բայց բացասական ըլլալուն համար նուազութիւն կը ցուցնէ. Ոչ, բացասական մակբայ. այլ շաղկապ, խօսքին երկու նախադասութիւնները կը կապէ։

## ԴԱՍ ԼԴ.

## ԱԾԱԿԱՆԱՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հ. Ածականք կ'առնո՞ւն խնդիր և ի՞նչ հոլով։

Պ. Ածականներէն ոմանք շատ անգամ կ'առնուն տրական, բացառական, գործիական և կամ նախադրութեամբ խնդիր. ինչպէս, Կարօղ խրատու, խրատել կարող. Մերկ ի հանդերձից, հագուստէ զուրկ. Լի շնորհօք, շնորհքով լեցուն. Պատրաստ ի կռիւ, կռուի պատրաստ։

Հ. Ի՞նչ հոլով խնդիր կ'առնուն թուական և անորոշ ածականք։

Պ. Թուական ածականք, և քանակութիւն ցուցնող ուրիշ քանի մը ածականաց յոքնակիներն, ինչպէս՝ բազումք, կէսք, շատք, և անորոշ ածականք՝ ոմն, ոմանք, այլք, ո՞վ, գոյականաբար առնուելով կ'առնուն բացառական հոլով խնդիր։ Այսպէս կ'ըսուի Մին ի ձէնջ, ձենէ մէկը. Երկոքեան ի նոցանէ, անոնցմէ երկուքը. Բազումք յաշակերտաց անտի, աշակերտներէն շատերը. Այլք ի բարեկամաց նորա, անոր բարեկամներէն ուրիշները. Ոմանք ի մէնջ, մենէ ոմանք։

## 41· Հրահանգ

Ի՞նչ բանի կարօտ ես . Ձեր օգնութեանը կարօտ եմ· Նոյ հաճոյ եղաւ Աստուծոյ · Կ'ուզե՞ս ինծի հաճոյ ըլլալ· Քու տիրոջդ հաճոյ եղիր · Անոնց քուրձերը ցորենով լեցուն էին · Պտղով լեցուն երեք կողով բերին · Մեր շտեմարանները դատարկ են բերքէ · Բարեկամ, քենէ գոհ եմ. Անոնց տէրերը գոհ էին անոնցմէ . Աշխատութիւնը մարմնոյ օգտակար է · Դատարկութիւնը թէ մարմնոյ և թէ հոգւոյ վնասակար է · Գիտութիւնը հարկաւոր է ամէն մարդու · Հոգին մարմինէն (քան զմարմինը) գերազանց է · Դուն քու եղբայրներէդ գերազանց ես իմաստութեամբ · Քաջութենէ պակաս չենք · Երկիրը բնակիչներէ պարպուած էր · Ցաւերէ ազատ էք · Անոնք հիւանդութիւններէ զերծ են · Անոր տունը եկեղեցւոյն կից էր · Մարդիկը որսի տեղեակ էին · Ճամբուն տեղեա՞կ ես (գիտե՞ս) · Անոնց խորհուրդներուն (միտքը դրածին) անտեղեակ չենք · Անոնց գործքերուն հաղորդ մի ըլլաք · Գիրը դիւրին էր կարդացուելու · Խօսքերը դժուար էին իմանալու · Անոնց արիւնէն մաքուր եմ· Առաքինութենէ և բարի գործքերէ մերկ էին · Անիկա վարժ էր գիր գրելու արհեստին մէջ · Զին և շունը շատ ընտանի են մարդուս · Աստուծոյ պատուէրն է մեծերուն հնազանդ ըլլալ · Մենէ օտար մի ըլլաք · Աստուծոյ կամքին հպատակ ըլլալ մեզի պարտք է ։

Ի՞նչ բանի, ի՞մ իմիք
Լեցուն, լի
Դատարկ, ունայն
Բերք, արդիւնք
Քենէ, քէն (գոհ լինել կը
 խնդրէ պատմական, այ-
 սինքն՝ ղով բացառական)
Հարկաւոր է, պիտոյ է
Գերազանց, առաւել
Պակաս, նուազ
Պարպուած, թափուր
Հիւանդութիւն, ախտ
Կից, կից (կը խնդրէ է, ը
 նախդրիւ հայցական)



Ճամբայ, ճանապարհ
Մարդիկը, արքն
Տեղեակ, հմուտ, տեղեակ
Ձենք, ձէնջ ինչ
Կարդալ, ընթեռնուլ. կար-
 դացուելու, յընթեռնուլ,
 առ ընթեռնուլ
Իմանալ, իմանալ, առնուլ ի
 մի, իմանալու, առ իմանալ
Մաքուր, սուրբ
Արհեստ, արուեստ
Գիր գրելու (արհեստ), ար-
 ուեստ) գրչութեան
Շատ, յոյժ [առաւել
Մեծ (մեծեր), մեծ, մք·
Պարտք, պարտ, պարտք

## 42· Հրահանգ

Անոնցմէ երկուքը գիւղ մը կ'երթային . Մենէ չատերը հոն էին · Անոնցմէ հինգը իմաստուն էին , և հինգը՝ յիմար · Բազմութենէն ոմանք առաջ եկան · Ձեր եղբայրներէն մէկը մեր քովն է · Իշխաններէն մէկը կ'ըսէ անոր · Ձենէ քիչերը կրնան ընել ասիկա · Անոնցմէ կէսը (ոմանք) սպաննուեցան · ուրիշները գերութեան տարուեցան · Աւազակներէն շատերը սպաննեցին , մնացածները ծովը նետեցին · Անոնցմէ բաւական մարդիկ զերծան · Անոնցմէ և ոչ մէկը կենդանի կը թողուր · Ձենէ ամենէն պզտիկն անկէ մեծ է · Անոնցմէ հազար մը կորսուեցան · Անոնցմէ ամէն մէկը մէ՛ յմէկ հատն ունէր առաւ · Ձենէ ո՞վ կ'ուզէ ինծի հետ գալ· Ցանցաւորներէն զոր՞նք բռնեցիք · Անոնցմէ երկուքը միայն բռնեցինք , ուրիշները լեռները փախչելով ազատեցան ։

Բազմութիւն, ամբոխ
Առաջ եկան, մատեան յառաջ
Մէկը, ոմն, մի ոմն
Մեր քովը, առ մեզ
Կրնալ, կարող եմ, կարեմ
(Գերութեան) տարուիլ, վարիմ ('ի գերութիւն)
Մնացածները, մնացեալքն
Նետել, ընկենում
Բաւական մարդիկ, ոչ սակաւք
Պրծիլ, զերծանիմ
Ոչ մէկը, ոչ ոք

| | |
|---|---|
| Պզտիկ, փոքր, ամենէն պզտիկը, փոքրիկն | Մէյմէկ հատ, մէն մի |
| Կորսուիմ, կորնչիմ, կտ. կորեայ | Բռնել, առնել. կտ. կալայ |
| Ամէն մէկը, իւրաքանչիւր | Միայն, եւեթ |
| | Ազատիմ, ապրիմ |

# ԴԱՍ ԼԵ.

## ՍՏՈՐՈԳԵԼԻ ՀԱՅՑԱԿԱՆ, ԵՒ Ի ՆԱԽԴՐԻՒ

Հ. Ի՞նչ հոլով գրուելու է ստորոգելին ։

Պ. Ստորոգելին ուղղական է, երբ տէր բային կը վերաբերի, բայց անուանել, կոչել, առնել, ընել, կարծել, ուսուցանել բայերուն ստորոգելին կը դրուի անորոշ (առանց ըի) հայցական եւս, երբ կը վերաբերի սեռի խնդրոյն, զոր օրինակ, Կոչեցի զձեզ բարեկամս. Ձեզ բարեկամ կոչեցի ։

Հ. Տէր բային վերաբերեալ ստորոգելին եւս չկրնա՞ր ուրիշ կերպ գործածուիլ ։

Պ. Բայի մը տէր բային վերաբերեալ ստորոգելին կրնայ դրուիլ շատ անգամ ի նախդրիւ անորոշ հայցական, երբ գոյական անուն է. այսպէս կ՚ըսուի. Եղէց ձեզ 'ի հայր. Ձեզի հայր ըլլամ. Եւ դուք եղիջիք ինձ յորդիս. Դուք ալ ինծի որդի ըլլաք ։

### 43. Հրահանգ

Մարդիկ մահկանացու են. Դուն իմ բարեկամս ես. Ասոնք հարուստ մարդու որդիներ են. Աստուծոյ որդիները պիտի կոչուին. Անոնք անարատ գտնուեցան. Զանի ինծի բարեկամ ըրի. Մեզ իրենց որդիներուն դաստիարակ ըրին. Զանոնք իր տանը վրայ մատակարար դրաւ. Բանտին դուռները գոցուած գըտաւ. Թագաւորը ձեզ վերատեսուչ չդրա՞ւ մի. Զանոնք արդար գտայ. Ձեզ ի՞նչ անուանեմ. Անոնց որդիք որոտման անուն դրաւ. Այս տղաքը դատարկապորտ սորվեցուցիք. Ձեր կիները տանտիկին սորվեցուցէք, ձեր աղջիկները՝ ժիր և համեստ. Այս ծառերը դաշտ պիտի ըլլան. Ինծի որդի եղիր, ես ալ քեզի հայր ըլլամ. Այդ չէն երկիրն անապատ չըլլայ. Զանոնք ինծի խորհրդական և խրատտու ընտրեցի. Մեծամեծ ազգեր քակուեցան ու ոչինչ եղան. Այս պտուղները ձեզի կերակուր ըլլան ։



| | |
|---|---|
| Հարուստ, մեծատուն | Դատարկապորտ, դատարկ-անձն. յոգ. դատարկանձունք |
| Դնել, կացուցանել, կարգել, ընել | Սորվեցունել, ուսուցանեմ |
| Գոցուած, փակեալ | Տանտիկին, տնարար, տնաշէն |
| (Զգրա՞ւ) մի, ո՞չ ապաքէն | Համեստ, զգաստ |
| Վերատեսուչ, տեսուչ | Քակուիմ, քակտիմ |
| Անուանեմ, կոչեմ | Պտուղ, միրգ |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Արարի զնա ինձ բարեկամ. Զանի ինծի բարեկամ ըրի ։ Արարի, բայ ներգ. կտ. եզ. Ա. դէմք ։ —Ո՞վ է ընողը. —Ես, ուլթեամբ, էակ. դեր. եզ. Ա. դէմք ուղղ. տէր բայի Արարի ին ։ —Արարի, ըրի, զո՞վ. —Զնա, զանի էակ. դեր. Գ. դէմք եզ. հայց. սեռի խնդիր Արարի ին. Արարի զնա, ի՞նչ. —Բարեկամ. բարեկամ՝ գոյ. հայց. ստորոգելի զնա ին. —Արարի զնա բարեկամ, որո՞ւ. —Ինձ, ինծի. էակ. դեր. Ա. դէմք եզ. տրակ. բնութեան խնդիր Արարի ին ։

# ԴԱՍ ԼԵ·

## ԲԱՑԱՅԱՅՏԻՉ, ԿՈՉԱԿԱՆ

Հ. Ի՞նչ է Բացայայտիչ։

Պ. Բացայայտիչը մեկնութիւն է ուրիշ բառի մը որ բացայայտեալ կը կոչուի։

Արմենակ, երէց որդւոյն Հայկայ · այս խօսքին մէջ՝ Երէց որդւոյն Հայկայ · բացայայտիչ է Արմենակին։

Հ. Ի՞նչ հոլով կը դրուի բացայայտիչը գրաբարի մէջ։

Պ. Բացայայտիչը գրաբարի մէջ կը դրուի բացայայտելոյն հոլովը։ Որդիքն որոտման, Յակոբոս և Յովհաննէս, էին անուանի ի մէջ առաքելոց · Առ ընդ իւր զՊետրոս, և զորդիսն որոտման, զՅակոբոս և զՅովհաննէս։

Հ. Ի՞նչպէս կը գործածուին Յատուկ անուանց տիտղոսները։

Պ. Յատուկ անուանց տիտղոսներն, ինչպէս՝ Մեծ, սուրբ · Տէր, Երանելի, անունէն թէ՛ առաջ և թէ ետքը դրուելով մէկտեղ կը հոլովին · եթէ անունէն առաջ կը դրուին, ն յօդը կ'առնուն · եթէ ետքը կը դրուին, յօդ չեն առնուր · զոր օրինակ ·

| Առաջ դրուած | Ետքը դրուած |
|---|---|
| Մեծն Սահակ | Սահակ Մեծ |
| Մեծին Սահակայ | Սահակայ Մեծի |
| Մեծաւն Սահակաւ | Սահակաւ Մեծաւ |
| Սուրբն Գրիգոր | Գրիգոր սուրբ |
| Սրբոյն Գրիգորի | Գրիգորի սրբոյ |
| Սրբովն Գրիգորիւ | Գրիգորիւ սրբով |
| Երանելին Տրդատ | Տրդատ երանելի |
| Երանելւոյն Տրդատայ | Տրդատայ երանելւոյ |
| Երանելեաւն Տրդատաւ | Տրդատաւ երանելեաւ |
| Քաջն Վարդան | Վարդան քաջ |
| Քաջին Վարդանայ | Վարդանայ քաջի |
| Քաջիւն Վարդանաւ | Վարդանաւ քաջիւ |



## ԿՈՉԱԿԱՆ

Հ. Ի՞նչ է Կոչական։

Պ. Կոչական կ'ըսուի անձ մը կամ իր մը առ որ կ'ուղղուի խօսքը։ Լուարուք, Աթենացիք · Լսեցէք, Աթենացիներ · այս խօսքին մէջ՝ Աթենացիք կոչական է։

Հ. Շատ անգամ ի՞նչ բառ կը դրուի կոչականէն առաջ կամ ետքը։

Պ. Կոչականէն անմիջապէս առաջ շատ անգամ ով կամ ո՛ բառը կը դրուի · իսկ անմիջապէս ետքը՝ երբեմն դու բառը կը դրուի, եթէ կոչականը եզակի է · զոր օրինակ ·

Լուարուք, ո՛վ կամ ո՛ Աթենացիք · Լսեցէք, ո՛վ Աթենացիներ։

Եկ այսր, մանուկ դու · Հոս եկուր, տղա՛յ։

Հ. Եթէ կոչականէն առաջ ածական մը կամ ետքը յարակցութիւն մը կայ, ի՞նչ կ'ըլլայ։

Պ. Եթէ կոչականէն առաջ ածական մը կայ, ածականին վրայ կը դրուի դ գիրը · իսկ եթէ կոչականէն ետքը յարակցութիւն մը կայ, կոչականին վրայ կը դրուի դ գիրը, զոր օրինակ ·

| | |
|---|---|
| Լուր, սուրբդ Գրիգոր | Լսէ, սուրբ Գրիգոր |
| Եկ, արքայդ Պարսից | Եկուր, Պարսից թագաւոր |

### 44· Հրահանգ

#### ԲԱՑԱՅԱՅՏԻՉ

Միհրդատ մեծ, Պոնտոսի թագաւորը, շատ անգամ կռուեցաւ Հռովմայեցւոց հետ և յաղթեց անոնց. Դաւիթ իւր թագաւորութիւնը թողուց իւր Սողոմոն որդւոյն · Դաւիթ սպաննել տուաւ Ուրիան որ անոր կինը, Բերսաբէն, առնէ · Սողոմոնի որդւոյն, Ռոբովամայ, ատենը, Իսրայելի թագաւորութիւնը երկուքի

բաժնուեցաւ․ Մեծ գետէն (տես Դաս ԻԳ.), Եփրատէն անցաւ․ Անդրէաս իր եղբօրը, Պետրոսին, ըսաւ․ Ի՞նչ կ՚ուզես ինէ, խեղճ մարդէ մը․ Իւր հայրենիքը, Յունաստան, եկաւ․ Մեծն Աղեքսանդր, Մակեդոնացւոց թագաւորը, Պարսից տէրութիւնը նուաճեց․ Ասիկա եղաւ Պարսից թագաւորին, Դարեհի Կոդոմանոսի, ատենը․ Յիսուս խաչուեցաւ Հռոմայեցի դատաւորին, Պոնտացի Պիղատոսին, հրամանաւ․ Աստուած Աբրահամին հրամայեց զոհել իւր մէկ հատիկ որդին, Իսահակը․ Մեր երկրորդ անգամ քրիստոնէութեան դառնալը Սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձեռօք եղաւ․ Տրդատայ հրամանաւ սպաննուեցան Հռոմայեցի կուսանք, Հռիփսիմեանք, Վաղարշապատ մայրաքաղքին մէջ․ Աբրահամ իր ծառային, Եղիազարու, ըսաւ․ Յակոբ Եգիպտոս իր որդւոյն, Յովսէփին, եկաւ․ Կայէն իր եղբօրն, Աբէլին, նախանձեցաւ, և սպաննեց զանի․ Նշանաւոր քաղաքներ կային Երասխ գետին եզերքը․ Երանելին Սահակ և Մեսրոպ սուրբ գիրքերը թարգմանեցին իրենց Եղնիկ, Արձան, Յովսէփ, Յովհան և Կորիւն աշակերտներով մէկտեղ։

| | |
|---|---|
| Խեղճ մարդ, այր տառապեալ | ռեհիւ) (տես Դաս ԻԲ.) |
| Ուզել, խնդրել | Մէկհատիկ, միամօր |
| Ասիկա, այս | Դառնալը, դարձ |
| (Դարեհի) ատենը, առ (Դա- | Ձեռօք, ՚ի ձեռն |
| | Մէկտեղ, հանդերձ |

## 45․ Հրահանգ

### ԿՈՉԱԿԱՆ

Որդեակ, հօրդ խրատը մտիկ ըրէ․ Զո՞վ կը փընտռես, կնիկ․ Ծառաներ, ձեր տէրերուն հնազանդ եղէք․ Ինչո՞ւ կը տանջես զիս, ով մարդ․ Գեղեցիկ Արիադնէ, քեզ հօս ո՞վ բերաւ․ Զէնքդ առ, քաջ Յեսու․



Եւ կայնէ, ո՛վ տղայ․ Քեզի կ՚ըսեմ, ո՛վ աղջիկ․ Ի՞նչ կը քնանաս, արթնցիր, ո՛վ վատ․ Տեարք, ի՞նչ կուզէք որ ընեմ․ Քեզ գիտեմ, Աստուծոյ սուրբը․ Քենէ շնորհակալ եմ, քաջ Փելիքս․ Իսրայելի թագաւորը, խաչէն իջիր․ Հեռու կեցէք ինէ, անիրաւ մշակներ․ Ամչցիր, ո՛վ խաղաղութեան թշնամի․ Վարձքդ մեծ է, ո՛վ աղքատներուն հայրը։

| | |
|---|---|
| Մտիկ ընել, լսեմ | Ընել, առնեմ |
| Փնտռել, խնդրեմ | Ուզել, կամիմ |
| Բերել, ածեմ | Քենէ, զքէն |
| Կայնիլ, կամ | Իջնել, իջանեմ |
| Տղայ, մանուկ | Հեռու կենալ, ՚ի բաց կալ |
| Քնանալ, ննջեմ | Ամչնալ, յամօթ լինել |
| Արթննալ, զարթնում | Անիրաւ (մշակներ), (մշակք) |
| | անիրաւութեան |

---

## ԼՈՒԾՈՒՄ

Աղեքսանդր մեծ, արքայ Մակեդոնացւոց, նուաճեաց զՏէրութիւնն Պարսից։ Մեծ Աղեքսանդր Մակեդոնացւոց թագաւորը Պարսից տէրութիւնը նուաճեց։ —Նուաճեաց, բայ ներգ․ կտ․ եզ․ Գ․ դէմք։ —Նուաճեաց, ո՞վ․ —Աղեքսանդր մեծ։ Աղեքսանդր, յատ․ ան․ ուղղ․ տէր բայի նուաճեաց ին․ Մեծ՝ ածական․ Աղեքսանդրի տիտղոսն է։ —Աղեքսանդր մեծ ո՞վ էր։ — Արքայ Մակեդոնացւոց, Մակեդոնացւոց թագաւորը․ բացայայտիչ Աղեքսանդր ին։ Աղեքսանդր մեծ նուաճեաց, զի՞նչ բան․ —Զտէրութիւնն Պարսից․ Տէրութիւն՝ գոյ․ հայց․ սեռի խնդիր նուաճեաց ին․ Պարսից, յատ․ ան․ յոգ․ սեռական, յատկացուցիչ տէրութեան ին։

# ԴԱՍ ԼԷ.

## ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Հ. Ի՞նչ է Միջարկութիւն ։

Պ. Միջարկութիւն կամ Ձայնարկութիւն կը կոչուին այն բառերը որ կը յայտնեն հոգւոյն այլ եւ այլ շարժումները. զոր օրինակ, բարկութիւն, իղձ, ուրախութիւն, եւն ։

Եղո՛ւկ ինձ, որդեակ իմ. Վա՜յ ինձ որդեակ.
Վա՜յ քեզ, քաղաք արեան. Վա՜յ քեզ, արեան քաղաք.
Բա՛րէ, որպիսի՛ զօրութիւն. Ո՛վ, ինչպիսի զօրութիւն.
Օ՛ն, արիք գնասցուք աստի. Օ՛ն (հայտէ), ելէք երթանք ասկէ.
Երանի՛ թէ աստ լեալ էիր. Ո՜ւր էր հոս ըլլայիր.
Քա՛ւ լիցի քեզ առնել զայդ. Աստուած չընէ որ ընես այդ բանը.

Հ. Ո՞յք են են գլխաւոր միջարկութիւնք ։

Պ. Գլխաւոր միջարկութիւնք են.

Ազնի՛ւ, ապրի՛ս, աֆէրին, ապրիս, հաճութիւն յայտնելու ։

Ա՛յ, ա՜յ (է՛յ), ո՛վ, բարկութիւն կամ թշնամանք յայտնելու.

Աւա՜ղ
Եղո՛ւկ
} աւա՜ղ, ցաւ յայտնելու.

Բա՛րէ, բա՜բէ, ա՜հ ո՜հ, զարմանք կամ ցաւ յայտնելու.

Երանի՛, երանի՛, երանութիւն տալու.

Երանի՛ թէ
Իցի՛ւ
Ցանկա՛րծ
Ո՛ տայր
Օ՛ն թէ
} ո՜ւր էր, երանի թէ, Աստուած տայ որ. իղձ յայտնելու.



Ո՛վ, ո՛
Ո՜հ
Է՛
} ո՛վ, ձայն տալու կամ կոչելու. նաեւ զարմանք, ցաւ յայտնելու

Աղէ
Հա՛պա
Օ՛ն
} հա՛պա, է՛յ (հայտէ). յորդորելու, խրախոյս տալու.

Վա՜հ
Վա՜յ
} վա՜յ քեզ որ, արհամարհանաց համար.

Վա՜շ. վա՜շ (օ՜խ). հաճութիւն, հեշտութիւն յայտնելու.

Օն անդր
Քա՛ւ լիցի
Փա՛րգաստ
} Աստուած չընէ. սոսկում, չկամել ցուցնելու ։

### 46. Հրահանգ

Ո՛վ, ի՛նչ մարդասիրութիւն, ո՛րչափ խնամք. Վա՜յ ձեզ, դպիրներուդ և փարիսեցիներուդ. Վա՜յ յղիներուն և կաթ տուողներուն այն օրերը. Վա՜յ ինձ, աղջիկս. Ապրի՛ս, բարի և հաւատարիմ ծառայ. Ապրի՛ս, աղէկ ըսիր. Ա՜հ, վասն զի Աստուծոյ հրեշտակը տեսայ. Ա՛յ սէգ հպարտ և ամբարտաւան. Ով դու, քեզի կ'ըսեմ. Ո՛վ սուտ և չարագործ. Վա՜յ քեզ, Նինուէ. Վա՜յ քեզ չարչարողը. Վա՜յ ինծի, ողորմելի եմ ։ Ո՜հ, կորսուեցաւ մարդը. Բա՛րէ, ի՛նչ փառաց հասուց զմեզ. Ո՜ւր է որ թագաւորէիք. Երանի՛ թէ անոր հետ գայիր. Ո՜ւր էր որ դուն ալ իմ որդիս ըլլայիր. Ո՛վ անհաւատ և ծուռ ազգ. Ո՛վ սքանչելիք. Ո՜հ, կը մեռնիմ. Վա՜յ քեզ որ կը քակէիր տաճարը, և երեք օրէն կը շինէիր. Երանի թէ անոնց հետ գացած էի. Վա՜շ (օ՜խ), տաքցայ և կրակ տեսայ. Հա՛, գործեցէք. Հա, ըսէ. Պարա՞պ թողում տունս, Աստուած չընէ. Հա՛պա, եկէք մենք ալ անոր հետ մեռնինք. Հապա, աղէ, տուր ինչ որ պարտական ես. Ո՜ւր էր որ աչքս երթար

Աստուծոյ մարգարէին. Աստուա՛ծ չընէ որ արդարը մատնէք. Աղէ՛, խորհեցէք. Ո՛հ, յանցանքս մեծ է. Վա՛յ այնպիսի խօսքերու։

| | |
|---|---|
| Կամ տուող, արդեօք | Վայ քեզ որ, վա՛հ որ |
| Աղջիկս, դուստր իմ | Նրանի թէ, օ՛չ իցէ |
| Ապրի՛ս, միջ. ողջե՛ր | Վաշ (օխ), վա՛շ |
| Աղէկ, բարւոք | Տաքնալ, ջեռնուլ |
| Ո՛վ դու, ո՛վ դու կամ ա՛յ դու | Հա՛, հա՛պա, ո՛ն, աղէ՛ |
| Ո՛վ սուտ, ով, կամ ա՛յ սուտ | Պարապ, ունայն |
| Չարչարողը (քեզ), որ չարչարեն, կոյր. որ չարչարեացն | Աստուած չընէ. ո՛ն անդր, փորձա՛նք, թո՛ղ լիցի |
| | Օ՛ն, օ՛ն |
| Ողորմելի, եղո՛ւկ | Ինչ որ պարտական ես, զոր պարտիս |
| Ի՛նչ, որպիսի՛. | |
| Ո՛հ, ոհ, բա՛բէ, | Ուր էր որ, յանկա՛րծ |
| Ո՛ւր էր որ. երանի թէ | Աղէ, աղէ՛ |
| Երանի թէ, եթէ՛ | Մտածել, զմտաւ ածել |
| Ո՛վ, ով, բաբէ | Վա՛յ, վա՛յ, եղո՛ւկ |

# ԴԱՍ ԼԸ.

## ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

Հ. Ի՞նչ է և ի՞նչ կը նշանակէ յարաբերական դերանուն։

Պ. Յարաբերական դերանունն է որ բառը, և կը նշանակէ որ, որն որ։

Հ. Աշխարհաբարին ո՞ր տեսակ խօսքերն են որ գրաբարի մէջ որ յարաբերականով և դիմաւոր բայով կ'ըսուին։

Պ. Աշխարհաբար ող և ած բառերով շինուած խօսքեր գրաբարի մէջ ընդհանրապէս կ'ըսուին որ յարաբերականով և դիմաւոր բայով. զոր օրինակ.



| Աշխարհաբար | Գրաբար |
|---|---|
| Այդ գիրքը քեզի տուող մարդը իմ բարեկամս է | Այրն որ ետ քեզ զմատեանդ՝ բարեկամ իմ է |
| Զիս սիրողը | Որ սիրէն զիս |
| Տեսած մարդդ իմ բարեկամս է | Այրն զոր տեսանես՝ բարեկամ իմ է |
| Լսածդ պատմէ | Պատմեա զոր լուարն |

Հ. Որ սիրէն, զոր լուարն խօսքերուն մէջ ն յօդն ինչո՞ւ համար դրուած է։

Պ. Երբ որ յարաբերականին յարաբերեալը զօրութեամբ կ'իմացուի, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ կը դրուին ս, դ, ն յօդերը։

Որ սիրէն զիս, կը նշանակէ նա որ սիրէ զիս. Զոր լուարն կը նշանակէ այն կամ զայն զոր լուար։

Հ. Ո՞ր բառը կ'ըսուի Յարաբերեալ։

Պ. Յարաբերեալ կ'ըսուի այն բառը որուն տեղ կը դրուի յարաբերականը. ուստի՝ այն զոր տեսեր, կամ այն որ խօսի, խօսքերուն մէջ՝ այն յարաբերեալ է։

Հ. Ըսիր թէ, երբ յարաբերեալը զօրութեամբ է, յարաբերականէն անմիջապէս ետքը եկող բառին վրայ ս, դ, ն գիրերը կը դրուին. կրնա՞ս ըսել նաև թէ այս գիրերուն ո՞րը ե՛րբ կը գործածուի։

Պ. Եթէ զօրութեամբ իմացուած յարաբերեալը ես, մեք, կամ այս և ասոնց յոգնակին է, ս գիրը կը գործածուի. եթէ դու, դուք կամ այդ և ասոնց յոգնակին է, դ. եթէ նա կամ այն և ասոնց յոգնակին է, ն. զոր օրինակ.

| | | |
|---|---|---|
| Որ խօսիմս ընդ քեզ | փոխ. | Ես որ խօսիմ |
| Որ կարողքս եմք | » | Մեք որ կարող եմք |
| Որ աստս է | » | Սա որ աստ է |
| Որ խօսինս | » | Սոքա որ խօսին |

| | | |
|---|---|---|
| Զոր ասեմս | փոխ. | Այս զոր ասեմ |
| Որ ձիթենիդ վայրենի էիր | » | Դուն որ եւն. |
| Որ ի Գեթդ էք | » | Դուք որ եւն. |
| Որ ի քէնդ առաքեցաւ | » | Դա որ առաքեցաւ եւն. |
| Որ իբրեւ զքեզդ իցեն | » | Դոքա որ եւն. |
| Զոր դուդ առնես | » | Այդ զոր դու առնես |
| Ընդ որս դուքդ զարմանայք | » | Այդոքիկ ընդ որս եւն. |
| Որուն դուն վկայեցեր | » | Նա որում եւն. |
| Որ զնովաւն էին | » | Նոքա որ զնովաւ էին |
| Զոր մեքն կարող եմք | » | Այն զոր մեք կարող եմք |

Հ. Ի՞նչ ժամանակ կը դրուի յարաբերականին բայը։

Պ. Յարաբերականին բայը, խօսքին իմաստին նայելով, ներկայ, անկատար, կատարեալ և ապառնի կը դրուի. ուստի՝

| | | |
|---|---|---|
| Այրն որ խօսի | կը նշանակէ | Մարդը որ կը խօսի, կամ, հիմա խօսող մարդը |
| Այրն որ խօսէր | » | Մարդը որ կը խօսէր, կամ, առաջ խօսող մարդը |
| Այրն որ խօսեցաւ | » | Մարդը որ խօսեցաւ, կամ, երէկ խօսող մարդը |
| Այրն որ խօսեսցի<br>Այրն որ խօսելոց է } | » | Մարդը որ պիտի խօսի |

Նոյնպէս՝

| | | |
|---|---|---|
| Որ խօսին | կը նշանակէ | Ան որ կը խօսի, կամ, հիմա խօսողը |
| Որ խօսէին | » | Ան որ կը խօսէր, կամ, առաջ խօսողը |
| Որ խօսեցան | » | Ան որ խօսեցաւ, կամ, երէկ խօսողը |
| Որ խօսեսցին<br>Որ խօսելոց են } | » | Ան որ պիտի խօսի |



## 47. Հրահանգ

(*) Սորվող աշակերտը. Կռուող զինուորը. Եկող մարդիկը. Արածուող անասունները. Փախչող թշնամին։

Տեսած գիրքս. Առած ստակդ. Մեր տուած պարգեւները. Հօրդ շինած տունը. Անոնց մատուցած զոհերը.

Խօսողը. Տեսնողը. Լսողը. Նստողը. Երգողները. Ղրկուողները. Պտըտողները։

Տեսածս. Առածդ. Ըսածը. Անոր գրածը. Մեր իմացածը. Ձեր սորվածները։

| | |
|---|---|
| Սորվիլ, ուսանել | Ղրկել, առաքել |
| Կռուիլ, մարտնչել | Պտըտիլ, շրջել |

Հ. Ի՞նչ ընել պարտ է որ յարաբերականով և դիմաւոր բայով շինուած խօսք մը հոլովելու համար։

Պ. Որ յարաբերականով և դիմաւոր բայով շինուած խօսք մը հոլովելու համար՝ պարտ է հոլովել յարաբերականը, զոր օրինակ.

Որ խնդրէ, ուզողը. Որոյ խնդրէ, ուզողին (սեռ.). Որում խնդրէ, ուզողին (տրակ.). Զոր խնդրէ, ուզողը (հյց.). Յորմէ խնդրէ, ուզողէն։

Որք խնդրեն, ուզողները. Որոց խնդրեն, ուզողներուն (սեռ. տրակ.). Զորս խնդրեն, ուզողները (հյց.). Յորոց խնդրեն, ուզողներէն։

Հ. Պէ՞տք է միշտ այսպէս հոլովել յարաբերականը հոլով մը ցուցնելու համար։

Պ. Երբեմն յարաբերականն անփոփոխ կը պահուի, և պահանջուած հոլովին տեղ՝ նոյն հոլով դերանուն մը խօսքին մէջ կ'աւելցուի, զոր օրինակ.

---

(*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը յարաբերականով դիմաւոր բայի դարձունեն գրաբար, բայը՝ ներկայ, անկատար, կատարեալ եւ ապառնի դնելով.

| | |
|---|---|
| Քենէ խնդրողին՝ տուր | Որ խնդրէ 'ի քէն՝ տուր նմա . փոխանակ ըսելու , Որում խնդրէ 'ի քէն տուր |
| Քենէ փոխ առնել ուզողէն երեսդ մի դարձուներ | Որ կամիցի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ 'ի նմանէ զերեսս . փոխանակ՝ յորմէ կամիցի փոխ առնուլ 'ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս |
| Ասիկա լսողներուն երկու ականջները պիտի խօսին | Որ լսիցենն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք նոցա , փոխանակ՝ որոց լսիցենն զայս՝ հնչեսցեն երկոքին ականջք ։ |
| Խօսիլ ուզողները կ'արգելէր | Որ խօսելն կամէին՝ արգելոյր զնոսա , փոխ. զորս խօսելն կամէին՝ արգելոյր |

Հ. Միշտ յարաբերեալի՞ն ետքը կը դրուի յարաբերականով դիմաւոր բայը ։

Պ. Յարաբերականով դիմաւոր բայը երբեմն իբրեւ ածական , աշխարհաբարի պէս , յարաբերեալէն առաջ կը դրուի , զոր օրինակ .

| | |
|---|---|
| Ներսն եղող մարդիկը | Որ 'ի ներքս էին արքն . փոխ. Արքն որ 'ի ներքս էին |
| Զիս զրկող հայրը | Որ առաքեացն զիս Հայր . փոխ. Հայրն որ առաքեաց զիս |
| Աղէկ վերակացութիւն ընող երէցները | Որ բարւոք վերակացու լինին երիցունք. փոխ. Երիցունք որ , եւայլն ։ |

## 48. Հրահանգ

(*) Եղբայրդ սպաննող մարդն հոս է . Քեզի հետ խօսող կինը տեսայ . Անոնց ըսած խօսքը չհասկցան .

(*) Այս դասին մէջ ըսուածներն աղէկ հասկնալէն ետքը , աշակերտք գրաբարի դարձուննն նշանակեալ հրահանգները ։



Քաղաքը խռովող մարդիկը գիտէ՞ք . Հոս եկող մարդիկն ո՞ւր են . Հօրս զրկած գիրքը կարդացի՞ք . Քու պատմածներուդ տեղեակ չենք . Ինծի մատուցած ծաղիկներդ գեղեցիկ են . Այդ ծառերուն հասուցած պտուղները շատ քաղցր են . Անցած ժամանակն՝ ալ չի դառնար . Անոր խորհուրդները գիտցող մը չկայ . Զեզ ճանչցողները շատ են . Մարդիկը որոնցմէ այդ ընծաներն ընդունեցաք՝ մեր բարեկամներն են . Ո՞ւստի լսեցիր բոլոր այդ գրածներդ . Քու չինած գիրքերէդ շատերը կարդացի . Ծովը խղդուող տղաքն աղնուականաց որդիք էին . Նամակը բերող պատանին Թագաւորին սպասաւորներէն մէկն է . Այդ զինուորներուն պատկուած դափնիները մեծ յաղթութեան նշան են . Տուած հրամաններդ կատարեցի . Սպաննուած մարդիկն անմեղ էին. Գիշերն երեւցող աստղերէն ոմանք անշարժ են , և ոմանք քալող. Մեր տեսած մարդն հո՞ս է . Ձեր ընդունած ընծաները տեսայ . Գրած գիրքդ շատ ընտիր է . Ղրկած սպասաւորն ինծի եկաւ . Այս գիշեր պատահած հրդեհին տեղեակ չե՞ս . Եթէ տուած գէշ լուրդ ճշմարիտ է , իրաւ պէտք է տրտմիլ . Եթէ ըսած խօսքերս արդար են , ինչո՞ւ կը բարկանաս ։

| | |
|---|---|
| Հոս , աստ , այսր | Բոլոր այդ , զայդ ամենայն |
| Հասկնալ , իմանալ | Խղդուիլ (ջուրի մէջ), հեղձնուլ |
| Գիտնալ , ճանաչել | Նամակ , թուղթ |
| Ղրկել , առաքել | Անմեղ , անպարտ |
| Կարդալ , ընթեռնուլ | Ոմանք , ոմանք . անշունչ բաներու համար՝ կէսք , այլք |
| Ալ չ․․ , ոչ եւս | Քալող , գնայուն |
| Մը չկայ , չիք ոք որ . . . | Գէշ լուր , գոյժ |
| Շինել (գիրք) , յօրինել | |

Իրաւ , արդարեւ

## ԼՈՒԾՄԱՆ ԿԱՆՈՆ

Հ. Միշտ միմիայն նախադասութենէ՞ կը բաղկանայ խօսք մը։

Պ. Խօսք մը կրնայ բաղկանալ երկու կամ աւելի նախադասութենէ. զոր օրինակ, սա խօսքը, Աստ է այրն որ սպան զեղբայր քո. Հոս է մարդը որ քու եղբայրդ սպաննեց, երկու նախադասութենէ կը բաղկանայ. Աստ է այրն, մի նախադասութիւն. որ սպան զեղբայր քո, երկրորդ նախադասութիւն։

Հ. Ի՞նչպէս կը կոչուին այս երկու նախադասութիւնք։

Պ. Առաջին նախադասութիւնը կը կոչուի գլխաւոր նախադասութիւն. երկրորդը որ կախում ունի գլխաւոր նախադասութենէն՝ կը կոչուի միջանկեալ նախադասութիւն։

Հ. Ի՞նչպէս կը հասկցուի թէ նախադասութիւն մը միջանկեալ է։

Պ. Միջանկեալ նախադասութիւնը կը սկսի միշտ յարաբերականով կամ շաղկապով։

Հ. Ի՞նչպէս կ'իմացուի թէ խօսքի մը մէջ քանի նախադասութիւն կայ։

Պ. Խօսքի մը մէջ որչափ դիմաւոր բայ կայ, այնչափ նախադասութիւն կայ։

## ԼՈՒԾՈՒՄ

Աստ է այրն որ սպան զեղբայր քո. Հոս է մարդը որ քու եղբայրդ սպաննեց։ Այս խօսքը կը բաղկանայ երկու նախադասութենէ, քանզի երկու դիմաւոր բայ կայ։ Աստ է այրն, նախադասութիւն գլխաւոր։ Է, բայ չէզ. սահմ. ներկ. Գ. դէմք. հոս կը նշանակէ, կը գտնուի, ներկայ է։ —Ո՞վ է. —Այրն. այր՝ գոյ. ան. եզ. ուղղ. տէր բային է ին. Ն յօդ է։ Այրն է (կը գտնուի, ներկայ է) ո՞ւր. —Աստ, հոս. աստ՝ մակբայ է ին։



Որ սպան զեղբայր քո, որ քու եղբայրդ սպաննեց, նախադասութիւն միջանկեալ։ Սպան, բայ ներգ. սահմ. կատ. եզ. Գ. դէմք. սպաննեց էն։ —Ո՞վ սպան. —Որ. որ յարաբ. դեր. եզ. ուղ. կը յարաբերէ այրը, տէր բային է սպան ին. Որ (այրն) սպան զո՞վ. —Զեղբայր քո. եղբայր՝ գոյ. ան. եզ. հայց. սեռի խնդիր սպան ին. քո, ստաց. ած. եղբայր ին։

### 49. Հրահանգ

Ասիկա ընողը ձեր բարեկամն է. Զիս տեսնողը հոս է. Քեզ մատնողը քու որդիդ է. Մեզի հետ խօսողները վկայեցին. Տեսնողներն և լսողներն երանելի են. Զգործողը թող չուտէ. Ուտողները հինգ հոգի էին. Կարդացողը թող հասկնայ. Զիս ղրկողն ինծ պատուէր տուաւ. Աս գիրքը գրողները ձեզ կը ճանչնան. Հոն եղողները զարմացան. Մտնողներն ու ելլողները կը տեսնէին. Զգործողները պէտք է պատուհասել. Հոն գտնուողները բռնեցինք. Հետը խօսածս ձեր քոյրն է. Այդ տեսածդ իմ եղբայրս է. Քենէ խնդրողին տուր. Աս ընողը տեսայ. Բռնածնին սուրէ անցուցին. Ինծի տուածդ քեզի տամ. Լսածնիս քեզի պատմենք. Գրածը կարդացի. Ղրկածդ ընդունեցայ. Ըսածդ ճշմարիտ է. Ձեր ըսածներէն բան մը չեմ գիտեր. Պարծենցածդ սուտ է. Ընելիքդ շուտով ըրէ. Այս խնդրածս ինծի տուր. Այդ ղրկածդ ընդունեցայ. Ինծի տուածներէդ բան մը չկորսնցուցի. Քու կասկածածդ գիտեմ. Մեր վախցածներէն բան մը չպատահեցաւ. Առածդ իմս է. Կորսուածներն ի՞նչ էին։

Ընել, առնել                    հանել
Հասկնալ, ի միտ առնուլ          Բան մը չ..., ոչինչ
Բռնել, ունիմ                   Շուտով, վաղվաղակի
Սուրէ անցունել, ընդ սուր       Վախնալ, երկնչիմ, զանգիտեմ

---

## ԼՈՒԾՈՒՄ

Որ արարն զայն՝ բարեկամ ձեր է. Ասիկա ընողը ձեր բարեկամն է: Այս խօսքը կը բաղկանայ երկու նախադասութենէ, քանզի երկու դիմաւոր բայ կայ: Բարեկամ ձեր է, նախադասութիւն գլխաւոր է: Է, էակ. բայ սահմ. ներկ. եզ. Գ. դէմք: Ո՞վ է. — Նա. Նա էակ. դեր. եզ. Գ. դէմք. տէր բայի է ին, զօրութեամբ կ'իմացուի: Նա է, ի՞նչ. — Բարեկամ ձեր. բարեկամ՝ գոյ. ան. եզ. ուղ. ստորոգելի է ին. ձեր՝ ստաց. ած. բարեկամին:

Որ արարն զայն. նախադասութիւն միջանկեալ: Արար, բայ ներգ. սահմ. կատ. եզ. Գ. դէմք, առնեմ (ընեմ) զարտուղի բայէն. Ն դիմ. յօդ. զօրութեամբ իմացուած Նա յարաբերեալին տեղ դրուած է: Ո՞վ արար. — Որ, որ՝ յարաբ. դեր. կը յարաբերէ զօրութեամբ իմացուած Նային: Որ (նա) արար զի՞նչ. — Զայն. զայն՝ ցուց. դեր. եզ. հայց. սեռի խնդիր արարին:

## ԴԱՍ ԼԹ.

### ԲԱՂԱԴՐԵԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Լծորդութեանց օրինակներուն մէջ մինչեւ հիմա ցուցուած ժամանակներէն ուրիշ ժամանակներ կա՞ն:

Պ. Մինչեւ հիմա ցուցուած ժամանակներն են՝ Ներկան, անկատարը, կատարեալը, ապառնին, հրամայականը եւ ստորադասականը: Ասոնք պարզ ժամանակներ են. կան նաեւ բաղադրեալ ժամանակներ, որ կը կազմուին եմ էական բային ներկայէն, անկատարէն եւ ստորադասականէն, եւ որ եւ իցէ բայի անցեալ եւ ապառնի ընդունելութիւններէն, զոր օրինակ.



1. Յարակատար

Սիրեալ եմ, սիրեալ ես, եւն. Սիրած եմ, սիրած ես, եւն.

2. Գերակատար

Սիրեալ էի, սիրեալ էիր, եւն. Սիրած էի, սիրած էիր, եւն.

3. Ստորադասական անցեալ

Սիրեալ իցեմ, սիրեալ իցես, եւն. Սիրած եմ կամ սիրած ըլլամ.

4. Ապառնի Ներկայ

Սիրելոց եմ, սիրելոց ես, եւն. Պէտք սիրեմ, եւն.

5. Ապառնի անկատար

Սիրելոց էի, սիրելոց էիր, եւն. Պէտք սիրէի, եւն.

6. Ապառնի ստորադասական

Սիրելոց իցեմ, սիրելոց իցես, եւն. Պէտք սիրեմ, եւն:

---

## ՏԷՐ ԲԱՅԻ

Հ. Հայերէն տէր բային միշտ ուղղական հոլո՞վ է:

Պ. Երկու դէպքի մէջ տէր բային կրնայ սեռական դրուիլ.

1. Երբ և շաղկապով կապուած երկու բայ ունին մի և նոյն տէր բային, առաջին բայը կրնայ փոխուիլ ընդունելութիւն անցեալի, և շաղկապը զանց առնուիլ. և ան ատեն տէր բային կրնայ դրուիլ սեռական: Զոր օրինակ՝ սա խօսքը. Լուաւ նա զայս և մեկնեցաւ. Անիկա լսեց ասիկա և գնաց, կրնայ այսպէս ևս ըսուիլ. Լուեալ նորա զայս՝ մեկնեցաւ. և աշխարհաբարի կը դառնայ այսպէս. Անիկա այս լսելով գնաց:

2. Յարակատարին, Գերակատարին և Ստորադասական անցելոյն (տես վերը) եզակի երրորդ դէմքը շատ

անգամ կը գործածուի թէ՛ եզակի և թէ՛ յոգնակի ամէն դէմքի տեղ, և ան ատեն բուն բային տէր բային, թէ՛ դերանուն և թէ՛ գոյական, սեռական կը դրուի. զոր օրինակ՝ Տեսեալ եմ զնա խօսքին մէջ՝ տեսեալ եմ առաջին դէմքը կրնանք երրորդ դէմքի փոխել, Տեսեալ է, և տէր բային որ է՝ ես, սեռականի փոխելով ըսել. Տեսեալ է իմ զնա:

Այսպէս միւս դէմքերը.

| | |
|---|---|
| Ես զանի տեսած եմ | Տեսեալ եմ ես զնա կամ Տեսեալ է իմ զնա |
| Դու զանի տեսած ես | Տեսեալ ես դու զնա կամ Տեսեալ է քո զնա |
| Ան, կամ, եղբայրս զանի տեսած է | Տեսեալ է նա կամ եղբայր իմ զնա, և կամ Տեսեալ է նորա կամ եղբօր իմոյ զնա |
| Մենք զանի տեսած ենք | Տեսեալ եմք մեք զնա կամ Տեսեալ է մեր զնա |
| Դուք զանի տեսած էք | Տեսեալ էք դուք զնա, կամ Տեսեալ է ձեր զնա |
| Անոնք, կամ, մեր եղբայրները զանի տեսած են | Տեսեալ են նոքա կամ եղբարք մեր զնա, և կամ Տեսեալ է նոցա կամ եղբարց մերոց զնա |

Հ. Տէր բային կրնա՞յ դրուիլ նաեւ տրական:

Պ. Երբ երկու նախադասութիւն զի, թէ շաղկապով կապուած են, այն շաղկապները կը թողուին, և երկրորդ բայն աներեւոյթի կը փոխուի, և ան ատեն տէր բային տրական կը դրուի. ինչպէս, Ոչ կամիմք զի թագաւորեսցէ նա ի վերայ մեր. Զենք ուզեր որ անիկա մեր վրայ թագաւորէ. այս խօսքը կրնայ ըսուիլ այսպէս. Ոչ կամիմք թագաւորել նմա ի վերայ մեր:



## 50· Հրահանգ

Զինուորները վրայ հասնելով կապեցին զանի. Անիկա լեռը ելլելով նստաւ. Անոնք իմ խօսքերս պատգամաւորին պատմելով նորէն ինծի եկան. Զանի լերան ծայրը բերելով վար նետել կ'ուզէին. Օտարական մարդը ներս խօթելով դուռը գոցեցին. Ցլուզակները լեռնէն իջնելով դաշտին մէջ բանակեցան. Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջնելով գերեզմանին վրայ կը նստէր. Կնիկները շուտով պարտէզէն ելլելով գեղն ապաւինելու կը փութային. Քու եղբայրդ մօտենալով անոնց հետ խօսեցաւ. Մատնիչը տեսնելով ասիկա՝ զղջաց. Անոնք ստակն առնելով սպասաւորներուն տուին. Ծառաները մօտենալով անոր երկրպագութիւն կ'ընէին. Անիկա աս ըսելով քնացաւ. Իր գլուխը ծռելով հոգին աւանդեց. Անոր ձեռքէն բռնելով դուրս հանեց. Ոստիկանները ներս մտնելով զանի կը փնտռէին. Մեսրովպ քունէն արթննալով մեր նշանագիրներն ստեղծեց. Անիկա քաղքէն ելլելով մեզի եկաւ. Յովսէփ իր եղբայրները տեսնելով՝ զանոնք ճանչցաւ. Անոր գլուխը կտրելով թագաւորին բերին. Իմ ձեռքէս բռնելով ներս տարաւ. Ադամ անոր քալելուն ձայնը լսելով պահուըտեցաւ. Մայրը որդւոյն մահուան լուրը լսելով սկսաւ լալ. Իր անկողինը ելլելով կը քնանար. Ձեր եղբայրները կանչելով ղրկեցի զանոնք. Զինուորները գալով մեզի բռնել կ'ուզէին. Սողոմոն իր հօրը թագաւորութեան աթոռն ելլելով՝ բոլոր ազգերն իրեն հնազանդեցուց. Ծառաներն անոր մօտենալով կ'աղաչէին. Զանիկա մէկդի առնելով հետը կը խօսէր. Մեզ թողլով իրենց տուները գացին. Աթոռ նստելով ժողովուրդը կը դատէր. Մենք շատ օր հոն կենալով անոր գալուն կը սպասէինք. Պատուհանէն անցնելով ներս մտաւ զա–

նիկա տեսնելու․ Տաճարին առջեւը կենալով ձեր եղբօրը հետ կը խօսէր․ Կրակ վառելով նստան, և կը տաքնային ։

| | |
|---|---|
| Նորէն, անդրէն | Ծռել (գլուխը), խոնարհեցուցանել |
| Ծայր (լերան․ ուչուրում) արփեան | Փնտռել, խնդրել |
| Բերել, ածել | Արթննալ, զարթնուլ |
| Վար նետել, ընկենուլ, արկանել ի վայր | Բռնել (ձեռքէն), ունել (զձեռանէ) |
| Խօթել, մուծանել | Կտրել, հատանել |
| Գոցել, փակել | Քալել, գնալ |
| Շուտով, վաղվաղակի | Լուր (մահուան), բօթ |
| Ապաւինիլ (տեղ մը), անկանել ի | Անկողին, մահիճք |
| | Մէկդի, մեկուսի |
| Մօտենալ, մերձել | Պատուհանէն, ընդ պատուհանն |
| Երկրպագութիւն ընել, երկիր պագանել | Կրակ վառել, խարոյկ արկանել |
| | Տաքնալ, ջեռնուլ |

## 51․ Հրահանգ

Դուք անոնց համար լսած էք․ Զանի շատ անգամ տեսած եմ․ Անոնք մեր նամակները կարդացած էին․ Կարդացած չէ՞ք․ Մենք անանկ բան մը կարդացած չենք․ Անոր վրայով շատ բան լսած եմ․ Անիկա շատ չարիք գործած էր․ Մենք ասիկա թագաւորէն պարգեւ առած ենք․ Եթէ թագաւորին հաւատարիմ եղած ըլլայիք․ Իմ առջի վարմունքս լսած էք․ Անիկա ճամբուն տեղեկացած էր․ Ոչ կերած ոչ ալ խմած ենք․ Եթէ մենք անոր պատուիրանները պահած ըլլայինք․ Անոնք գերութենէն նոր դարձած էին․ Կօշիկներ հագած էին․ Ձեմ թողուր որ դուն ասկէ անցնիս․ Թագաւորին հրամանն այս է, որ դուք շուտով այս քաղքէն երթաք ։ Կը պատմուի թէ անոնք դաշտ մը հասան և հոն քաղաք մը շինեցին․ Պատուիրեցի սպասաւորներուն որ հոս գան․ Կ'աղաչէին անոր որ անձամբ կռուին մէջ չմտնէ․ Կ'ըսեն թէ դուն կայսեր թշնամի ես․ Կը փափաքին որ իրենց զօրավար ըլլաս ։



| | |
|---|---|
| Անանկ բան մը, այնպիսի ինչ | Նոր, այն ինչ |
| | Կօշիկ (չիզմէ), մոյկ |
| Հաւատարիմ թագաւորին, հաւատարիմ առ թագաւորն | Ասկէ, աստի |
| | Երթալ (տեղէ մը), մեկնիմ |
| Վարմունք, գնացք | Պատուիրեմ, պատուէր տամ |
| Ուտել, ճաշակել | Սպասաւոր, ծառայ |
| Փափաքել, ըղձանալ | |

Հ․ Դիմաւոր բայ մը անցեալի կամ աներեւութի փոխել ի՞նչ առաւելութիւն ունի ։

Պ․ Դիմաւոր բայ մը անցեալի կամ աներեւութի փոխել և տէր բային սեռական կամ տրական դնել է հայերէնի առանձին յատկութիւններէն մին ։ Երբ աշակերտք կը լուծեն այս կերպով փոխուած կամ ամփոփուած խօսք մը, դիւրութեան համար կրնան խօսքը հասարակ կերպի դարձունել, և ապա լուծել ։ Զոր օրինակ․

Հաւեալ զննաւորացն ի վերայ Նոյա՝ կազեցին զնա․ Լուեալ է ձեր վասն Նոյա․ Զտամ նոյլ անցանել ձեզ աստի․

Հասարակ կերպի կը դառնան այսպէս

Հաւին զննաւորքն 'ի վերայ Նոյա և կազեցին զնա․ Լուեալ էք դուք վասն Նոյա․ Զտամ նոյլ զի անցանիցէք դուք աստի․

Այսպիսի նախադասութիւնք այսպէս պարզուելէն ետքը կը լուծուին դիւրաւ ։

# ԴԱՍ Խ·

## ԴԻՄԱՒՈՐ ԲԱՅԵՐԸ ՓՈԽԵԼ ՅԱՆԴԻՄ

Հ· Խօսք մը կարճ և ազդու ընելու համար ի՞նչ պէտք է ընել։

Պ· Խօսք մը կարճ և ազդու ընելու համար շատ անգամ կը փոխուի անոր մի դիմաւոր բայն անդէմի, այսինքն անցեալի կամ աներեւոյթի ։

Հ· Որո՞նք են այս տեսակ համառօտութեան կամ ամփոփման գլխաւորները ։

Պ· Այս տեսակ համառօտութեան կամ ամփոփման գլխաւորներն են ·

1· Երբ երկու դիմաւոր բայ մի և նոյն տէր բային ունին, առաջինը անցեալի կը փոխուի (տես և Դաս ԼԹ) ։

| | |
|---|---|
| Եղբայրդ զիս տեսաւ և կանչեց | Տեսեալ զիս եղբօր քո կոչեաց· փոխ· Եղբայր քո ետես զիս և կոչեաց |
| Զանի առաւ և հետը տարաւ | Առեալ զնա՝ տարաւ ընդ իւր |
| Աստուած Ադամն ստեղծեց ու դրախտին մէջ դրաւ | Արարեալ Աստուծոյ զԱդամ՝ եդ 'ի դրախտին |
| Կայէն Աբէլին նախանձեցաւ ու սպաննեց | Նախանձեալ Կայենի ընդ Աբէլ՝ սպան զնա |

2· Խօսքի մը իբրեւ, երբ, շաղկապով կապուած մասին դիմաւոր բայն այսպէս կրնայ փոխուիլ անցեալի, եթէ բային ժամանակը կատարեալ է · զոր օրինակ ·

| | |
|---|---|
| Երբ ասիկա լսեց, ըսաւ | Լուեալ զայս՝ ասէ, փոխ· Իբրեւ լուաւ զայս, ասէ |
| Երբ հոն հասանք, բանտը դրուեցանք | Հասեալ մեր անդր՝ արկաք 'ի բանտ |



| | |
|---|---|
| Երբ անիկա այս պատասխանը տուաւ, դատաւորը մեծ ձայնով ըսաւ | Նորա զայս պատասխանի տուեալ, դատաւորն 'ի ձայն մեծ ասէ |
| Երբ Թագաւորին առջեւը ելանք, մեզի հարցուց | Յանդիման լեալ մեր Թագաւորին, եհարց ցմեզ |

Իբրեւ շաղկապով կապուած բայը կրնայ դրուիլ նաեւ է նախդրիւ աներեւոյթ · ինչպէս

| | |
|---|---|
| Երբ ասիկա կը լսէք, ըսէք | Ի լսել ձեր զայս՝ ասասջիք, փոխ· Իբրեւ լսէք զայս, ասասջիք |
| Երբ հոն հասնին, բանտը պիտի դրուին | Ի հասանել նոցա անդր՝ արկցին 'ի բանտ, փոխ· Իբրեւ հասանիցեն, եւն· |
| Երբ Թագաւորին առջեւը կենանք, մեզի պիտի հարցունէ | Ի կալ մեր յանդիման Թագաւորին՝ հարցանիցէ ցմեզ, փոխ· Իբրեւ կայցուք, եւն· |

3· Մինչ, մինչդեռ շաղկապով սկսուած խօսքի մը բայը կրնայ փոխուիլ նոյնպէս է նախդրիւ աներեւոյթի · ինչպէս ·

| | |
|---|---|
| Անիկա աս խորհած ատենը՝ մարդ մը եկաւ | Յածել նորա զայս զմտաւ՝ եկն այր մի, փոխ· Մինչդեռ նա զայս ածէր զմտաւ, եկն այր մի |
| Անոնք անտառէն անցած ատենը՝ աւազակներ անոնց վրայ հասան | Յանցանել նոցա ընդ անտառն՝ հասին 'ի վերայ նոցա աւազակք |
| Պատին տակը կեցած վեր նայելու ատենը՝ քար մը ինկաւ և գանկը ջարդեց | Ի կալ նորա առ որմովն և հայել 'ի վեր՝ վէմ մի անկեալ ջախջախեր զգագաթն նորա |

4· Զի կամ եթէ, թէ շաղկապով սկսուած խօսքի մը դիմաւոր բայը կը փոխուի շատ անգամ է, առ է, առ

նախադրութիւններով կամ ամենևին առանց նախադրութեան աներևոյթի ։ (Տես և Դաս ԼԷ.) ։

| | |
|---|---|
| Ջուր բերին որ անոնց ոտուըները լուան | Բերէին ջուր լուանալ զոտս նոցա, փոխ. Բերէին ջուր զի լուասցեն զոտս նոցա |
| Իրիկուան դէմ կ'ելլէինք որ դաշտին մէջ զբօսնունք | Ելանէաք ընդ երեկս զբօսնուլ ի դաշտին |
| Դժուարաւ համոզեցին ժողովուրդը որ չզարնեն անոր | Հազիւ իմն հաւանեցուցին զժողովուրդն չհարկանել զնա |
| Ձիերուն բերանը սանձ կը դնենք որ մեզի հնազանդին | Զձիոց սանձս ի բերան դնեմք առ անսալոյ նոցա մեզ |
| Ոչ աչք ունին որ տեսնեն, ոչ ականջ ունին որ լսեն, ոչ քիթ որ օդ առնուն, և մատուըներ որ շօշափեն | Ոչ աչք գոն նոցա ի տեսանել, ոչ ականջք ի լսել, ոչ ռունգք առ ի ծծելոյ զօդ, և ոչ մատունք ձեռաց առ ի շօշափելոյ |
| Պատասխան տուին թէ չեն գիտեր | Պատասխանի ետուն չգիտել; փոխ. Պատասխանի ետուն թէ ոչ գիտեն |
| Անոնք կը սպասէին թէ պիտի ուռէր կամ լինար ու յանկարծ պիտի մեռնէր | Նոքա ակն ունէին այտնլոյ. նմա կամ անկանելոյ և յանկարծակի մեռանելոյ |
| Մէկը պատուհանը չբացաւ որ դուրս նայէր | Ոչ ոք եբաց զպատուհանն հայել արտաքս |
| Անոր պատուիրեցի որ այն խօսքը մէկուն չյայտնէ | Պատուէր ետու նմա չհանել ումեք զբանն ի վեր |

5. Որպէս զի կամ այնպէս զի շաղկապով սկսուած խօսքի մը դիմաւոր բայը մինչև, մինչ զի շաղկապով աներևոյթի կը փոխուի, ինչպէս ։



| | |
|---|---|
| Շատ յոգնած էինք, այնպէս որ չէինք կրնար ոտքի վրայ կենալ | Վատթարեալ էաք յոյժ՝ մինչև չկարել մեզ կալ յոտին. փոխ. Վատթարեալ էաք յոյժ, որպէս զի (այնպէս զի) ոչ կարէաք կալ յոտին |
| Ամէնքը ջարդենք, այնպէս որ անոնցմէ մէկը չազատի | Սատակեցաք զամենեսին՝ մինչև չմնալ 'ի նոցանէ ապրեալ |

## 52. Հրաժանգ

Դահիճ ղրկեց և գլուխը կտրել տուաւ ․ Տուն եկաւ և եղածները մեզի պատմեց ․ Մեզ հոն թող տուին և գացին ․ Զանոնք իր տունն ընդունեց և անոնց կերակուր տուաւ ․ Բոլոր ստացուածները ծախեց և հեռու երկիր գնաց ․ Երբ անոնց հարցուցինք, մեզի պատասխան տալ չուզեցին ․ Երբ զանի կը գտնէք, մեզի իմացուցէք ․ Երբ հոն հասանք, զանի հոն չգտանք ․ Երբ ձեր երկիրը դառնաք, զիս ալ ձեր հետը տարէք ․ Երբ անձրևները կը տեղան, գետը կը յորդէ ․ Երբ լսեցինք ասիկա, զարմացանք ․ Մենք քաղաքը պտըտած ատեն՝ մեզի առաջնորդող մարդը մեր հետը չէր ․ Մենք ներսը եղած ատեն՝ դրան առջևը պահապաններ կը կենային ․ Անոր այսպէս սաստկութեամբ խօսած ատենը՝ պատգամաւորը զարմացմամբ անոր կը նայէր ․ Անիկա շուտով յառաջ կու գայ և ձեռքը կ'երկնցնէ ինծի ․ Մենք անկէ հեռանալու աշխատած ատեն, սաստիկ հով մը մեր նաւը նաւահանգիստը մղեց ․ Անիկա այս խօսքերն ըսած ատեն՝ յանկարծ մեր աչուըները բացուեցան ․ Զեզի կը հրամայեմ որ ասկէ երթաք ․ Անոր խրատ տուի որ հոն չկենար ․ Կը բաղձայինք որ առտու ըլլար ․ Կ'ըսէին թէ որոտում կ'ըլլայ ․ Զէին ուզեր որ իրենց հետ բնակէր ․ Եղբօրդ ըսէ որ պարտքը վճարէ ․ Թանձր մշուշ կար,

այնպէս որ իրար չէին տեսներ. Շատ հեռացան, այնպէս որ այլ եւս չէին տեսնուեր. Ծովին մէջ մեծ շարժում եղաւ, այնպէս որ նաւն ալիքներէն կը ծածկուէր. Զանի անխնայ ծեծեցին, այնպէս որ շունչը չմնաց. Շատերը կու գային անոնց, այնպէս որ հաց ուտելու անգամ չէին հասներ. Հիւընտցնաւ և բժիշկ կանչեց. Մեզ այն մարդուն յանձնեց և գնաց. Երբ կերակուրը կերաւ, զօրացաւ և հաստատեցաւ. Երբ տեսան որ զանի չէին կրնար նուաճել, նենգութեամբ բռնել խորհեցան. Անոնք իրարու հետ կռուած ատեն՝ ուրիշ մը ձին առաւ գնաց. Մանանխոյ հատը երբ կը մեծնայ, ծառ կ'ըլլայ, այնպէս որ երկնից թռչունները կու գան և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին:

| | |
|---|---|
| Եղածները, զեղեալսն | Մշուշ, մէգ |
| Ստացուած, ինչք | Այլ եւս չտեսնուիլ, ըստ ակն անկանել |
| Հեռու երկիր, տարաշխարհ | Ծեծել, զան հարկանել |
| Իմացունել, ազդ առնել | Հասնիլ, ժամանել |
| Յառաջ գալ, մատչել յառաջ | Յանձնել, յանձն առնել |
| Երկնցնել (ձեռքը), ձգել | Կերակուր ուտել, առնուլ կերակուր |
| Աշխատել, ջանալ | Հաստատուիմ, կազդուրիմ |
| Հով, հողմ | Նենգութեամբ, նենգաւ |
| Աւելի ուզել, ընտրել մանաւանդ | Մեծնալ, աճել |
| Սաստիկ, ուժգին | Ճիւղ, ոստ |
| Բաղձալ, ըղձանալ | |

ԴԻՏ. Ա. Երբ աշակերտք պիտի լուծեն համառօտեալ կամ ամփոփեալ խօսք մը, կրնան ամփոփեալ մասը բնական պարզ ձեւին դարձունել, և այսպէս լուծել: Զոր օրինակ, սա խօսքը՝ Սաստկացաւ զմնեալսն՝ մինչեւ ոչ մնալ 'ի նոցանէ ապրեալ, կրնայ այսպէս պարզուիլ.



Սաստկացաւ զմնեալսն, այնպէս զի ոչ մնայցէ 'ի նոցանէ ապրեալ. այսպէս պարզուելէն ետքը՝ ամփոփեալ մասն աւելի դիւրաւ կը լուծուի: (Տես և ԼԹ.) դասին վերջին դիտողութիւնը:

ԴԻՏ. Բ. Երբ խօսք մը կ'ամփոփուի, պէտք է նայել որ երկդիմութիւն չծագի: Միշտ այն ձեւն ընտրելի է որ հոմ կամ երկդիմի իմաստ չտար:

## ԴԱՍ ԽԱ.

### ԱՐՄԱՏ ԵՒ ԱԾԱՆՑԵԱԼ ԲԱՌԵՐ

Հ. Ո՞ր բառերն են արմատ:

Պ. Արմատ են այն բառերը որոց սկիզբը կամ վերջը գիր կամ վանկ աւելցուած չէ. ոսկի, թագ, ծով, հայր, գեղ, մահ, են արմատ բառեր:

Հ. Ո՞ր բառերն ածանցեալ են:

Պ. Ածանցեալ են այն բառերը որոց սկիզբը կամ վերջը գիր կամ վանկ մը աւելցուած է. ոսկեղէն, թագաւոր, ծովական, հայրենի, տգեղ, անմահ, են ածանցեալ բառեր:

Հ. Ի՞նչ կը կոչուի ածանցեալ բառերուն վրայ աւելցուած գիրը կամ վանկը:

Պ. Ածանցեալ բառերուն վրայ աւելցուած գիրը կամ վանկը կը կոչուի ածանցական մասնիկ, ուստի վերի բառերուն մէջ եղէն, աւոր, ական, ենի, տ, ան, են ածանցական մասնիկ:

Հ. Որո՞նք են հայերէն ածանցական մասնիկներուն գլխաւորները:

Պ. Հայերէն ածանցական մասնիկներուն գլխաւորներն են.

1. Ական, այն, որ կը ցուցնեն վերաբերութիւն, ինչպէս՝ քաղաքական, քաղքի վերաբերեալ. ծովային, ծովու վերաբերեալ։

2. Աւոր կամ ուոր, որ կը նշանակէ ունեցող, վրան կրող, ինչպէս՝ թագաւոր, զինուոր. թագ, զէնք կրող։

3. Աւէտ, որ կը ցուցնէ առատութիւն. ինչպէս՝ ծաղկաւէտ։

4. Ատ, որ կը ցուցնէ թէ մարմնոյ անդամոց կամ մասերուն մին կտրած կամ պակաս է. ինչպէս՝ լեզուատ. լեզուն կտրած։

5. Եղէն, որ կը ցուցնէ թէ բան մը ինչ նիւթէ է. զոր օրինակ, ոսկեղէն, հողեղէն։

6. Եայ, որ կը ցուցնէ բանուած կամ շինուած, ինչպէս ծաղկեայ, ծաղիկներով բանուած կամ շինուած։ Կը ցուցնէ նաեւ թէ բան մը որչափ ժամանակուան է, ինչպէս՝ երեքօրեայ, հնգամեայ։

7. Եան, որ կը ցուցնէ սերունդ կամ ծագում, ինչպէս՝ աբրահամեան, պղատոնեան։ Կը նշանակէ նաեւ բաղկացեալ, զոր օրինակ՝ երեքգլխեան, իննակնեան, բաղկացեալ երեք գլխէ, ինն ակունքէ։

8. Եղ, որ կը ցուցնէ առատութիւն, ինչպէս՝ ընչեղ, ինչքը, ստացուածքը շատ։

9. Ենի, որ կը ցուցնէ ծառ, մորթ և միս, ինչպէս՝ խնձորենի, խնձորի ծառ, առիւծենի, առիւծի մորթ, խոզենի, խոզի միս։ Ծառերու անունները երբեմն ի գրով եւս կ'ածանցուին, ինչպէս՝ սերկեւիլ, սերկեւլի. կաղին, կաղնի։ Ենի, անի, ի մասնիկներն ուրիշ անուններու եւս վերջը կցուելով, անոնց այլ և այլ նշանակութիւններ կու տան. ինչպէս՝ լեզուանի, շատ խօսող. քաղցուենի, անուշ. արծաթի, արծաթեղէն. Ջրի, Ջրոտ. այրի, այրէ զուրկ։



10. Իկ կամ ակ. որ նուազական մասնիկներ են. ինչպէս խցիկ, գետակ. փոքրիկ խուց, փոքր գետ։

11. Ոն, որ ունի ող մասնկան զօրութիւնը, ինչպէս՝ շարժուն, շարժող։

12. Ուտ, որ կը ցուցնէ յաճախութիւն, ինչպէս՝ քարուտ։

13. Ոտ, որ կը ցուցնէ ունակութիւն կամ ախտ, ինչպէս՝ երկչոտ, բորոտ։

14. Որդ, որ կը ցուցնէ արհեստ, և Թուրքերէն ճի մասնկան կը պատասխանէ, ինչպէս՝ որսորդ, ավճը։

15. Ոց, անոց կամ արան, որ կը ցուցնեն ընդունարան, ինչպէս՝ դպրոց, որբանոց, գործարան. դպիրներու, որբերու, գործի տեղ։

16. Ցի, որ կը ցուցնէ հայրենիք կամ երկիր, ինչպէս՝ ասիացի։

17. Ցու, որ կը նշանակէ պաշտօնի կամ վիճակի մը յատկացեալ, ինչպէս՝ քահանայացու։

18. Ան, ապ, տ, դժ, ն, որ բառերու սկիզբը դրուելով պակասութիւն կը ցուցնեն, ինչպէս անմիտ, ապերախտ, տգէտ, դժգոհ, նգոյ։

## 53. Հրահանգ

(*) Ազնիւ, բարոյք, եկեղեցի, երէց, էգ, լեառն, խուժ, ծով, կայսր, հովիւ, ձմեռն, մարմին, յաղթութիւն, չէն, պատիժ, սեպուհ, տրտում, քուրմ, օրէնք։

---

(*) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցեալները շինեն ական մասնկամբ։

(1) Ատենական, արքունական, բնական, ընտանեկան, լուսնական, խորհրդական, կուսական, կորստական, յունական, նուիրական, չնական, պատուական, պատմական, սրբական, վանական, տնական, քննական:

---

(2) Աստղ, անտառ, գաղան, դաշտ, երկինք, լեառն, ծով, հող, հուր, մաղձ, մարդիկ, նաւ, ջուր, տիղմ, տոհմ, տունկ, ցամաք, քաղաք, օդ:

## 54· Հրահանգ

(3) Ալիք, ահ, աղեղն, բուռն, գէս, գոյն, գոյք, գօտի, զէնք, զօրք (զօրութիւն), թոյն, լոյս, խորհուրդ, կամք, հոգի, հովանի, մարմին, նշան, շահ, չափ, պատիւ, սուսեր, վտանգ, տտուն, տառք:

---

(4) Գրաւոր, դաշնաւոր, եղջերաւոր, թագաւոր, թեւաւոր, ճգնաւոր, մանեկաւոր, մտաւոր, պարսպաւոր, պարտաւոր, սգաւոր, վիրաւոր, տիգաւոր:

---

(5) Այգի, գինի, երանութիւն, ինչք, խաշն, խոտ, ծաղիկ, միրգ, շահ, պտուղ, քրքում:

(1) Աշակերտք նշանակեալ ածանցներուն արմատները գտնեն:
(2) Աշակերտք նշանակեալ բառերուն ածանցները շինեն ային մասնկամբ.
(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցեալները շինեն աւոր մասնկամբ:
(4) Աշակերտք նշանակեալ ածանցներուն արմատները գտնեն:
(5) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցեալները շինեն աւէտ մասնկամբ:



(1) Ազգ, ականջ, գոյն, լեզու, ծայր, կառափն, ձեռն, մէջք, շուրթն, ունչ, պինչ:

---

(2) Ապակի, ասր, արծաթ, բոց, գարի, լոյս, խոտ, հող, հուր, ձիւն, մազ, միս, նիւթ, ոգի, ոսկի, պղինձ, ջուր, վէմ, տարր, փուշ, քար:

## 55· Հրահանգ

(3) Ադամանդ, աղիւս, ասեղն, բեհեզ, գմբեթ, եղէգն, ծաղիկ, կաշի, կուճ, ճախարակ, մագաղաթ, մաշկ, յախճապակի, նեարդ, պրտու, փղոսկր, փուշ:

---

(4) Ահ, ասր. գոյն, զօր (զօրութիւն), թէկն, ինչք, համ, հիւթ, մազ, մարմին, շուք, ուշ, ուժ:

---

(5) Աղուէս, այծ, առիւծ, գայլ, գառն, կուզ, ոչխար, սամոյր: Դեղձ, ընկոյզ, թութ, թուզ, խնձոր, ծիրան, կաղին, ձէթ, մուրտ, նուշ, նուռն, վարդ, տանձ: Խող, այր, ասր, արծաթ, բուռն, դալար, երկաթ, լեզու, լիրբ, ծառաւ, կորով, հայր, ճար, մայր, մեղ, մօրուք, յայտ, նախ, նման, նքթումն, պէտք, պղինձ, ջուր, վայր:

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն ոտ մասնկամբ:
(2) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն եղէն մասնկամբ:
(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն եայ մասնկամբ:
(4) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն եղ մասնկամբ:
(5) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն ենի կամ ի մասնկամբ:

(1) Անասուն, գետ, գունդ, դուռն, զգեստ, լեռ, լիճ, խուղ, խուց, ծով, հայր, հաց, ձուկն, ձորձ, մանուկ, մասն, նաւ, շուն, որդի, պատանի, պատանեակ, վայր, տուն, քաղաք։

---

(2) Արթնութիւն, գնալ, եռանդն, երերալ, զգալ, զեղուլ, զեռալ, թռչել, իմանալ, կալ, կանգնել, հասանել, հաստատել, շարժել, սահել, սիրել, սողալ, տոկալ, ցածնուլ, փայլել։

---

(3) Ապառաժ, աւազ, աւազակ, թաւ, ծարաւ, մացառ, յորձանք, շամբ, ոսկր, ջիղ, վէմ, տիղմ, քար, օձ։

---

(4) Արիւն, բոր, դանդաղել, դեղ (թոյն), եռանդըն, երկնչել, ժանտ, լուսին, խնամք, ծակ, կասկած, հիւանդ, մոռանալ, մուր, յաչաղել, նախանձել, նենգ, որքին, վաղվաղել, ցասնում, ցաւ, ցիխ (ցեխ), քոս։

---

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն եէ, -է մասնիկներով։

(2) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն -ուն մասնկամբ։ Այս մասնկամբ ածանցներ մեծաւ մասամբ բայերէ կը շինուին։

(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն -ուտ մասնկամբ։

(4) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն -ոտ մասնկամբ։



(1) Այգի, անցանել, աղ, բաժանել, ժառանգել, լծել, լողալ, կցել, ճանապարհ, միջին, յետին, նախ, նախանձել, նաւել, որս, պահել, պարապ, սայլ, սեղան, ցանց, փոխանակել։

---

(2) Աղքատ, ամառն, ամուր, այրի, արգելուլ, արուեստ, գլուխ, գործ, դպիր, ծաղիկ, կանայք, կրակ, հալել, հանգիստ, հիւանդ, հիւր, հովանի, ձմեռն, մարտիկ, մեղու, մթերք, միջին, որբ, ուս, վաճառք, վարել, վարդապետ, վարժել, օտար։

## 56. Հրահանգ

(3) Ամօթ, առակ, բան, բարբառ, գեղ, գէտ, գործ, գին, զոհ, գոյ, գոյն, երախտիք, երասան, լոյս, կար, համազգի, հարկ, մարդ, յայտ, յոյս, շնորհ, ուշ, սուրբ, տոհմ, քուն, օրէնք։

---

(1) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն -որդ մասնկամբ։ Այս մասնկամբ ածանցներ մեծաւ մասամբ բայերէ կը շինուին։

(2) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն -ոց, -անոց, -արան մասնիկներով։

(3) Աշակերտք նշանակեալ անուններուն ածանցները շինեն -աւոր, -ւոր, -որ, -ր, -ւ մասնիկներով։

# ԴԱՍ ԽԲ.

## ԲԱՐԴ ԱՆՈՒՆՆԵՐ

Հ. Ո՞ր անունները բարդ կ'ըսուին ։

Պ. Բարդ կ'ըսուին երկու բառէ շինուած անուններ. ինչպէս, աստուածասէր, զԱստուած սիրող. լուսատու, լոյս տուող. Առաջինը՝ Աստուած և սէր, երկրորդը՝ լոյս և տու (տալ) բառերէն կը շինուին ։

Հ. Բարդ անուն կազմող բառերն իրարու հետ ի՞նչպէս կը կապուին ։

Պ. Բարդ անուն կազմող բառերն իրարու հետ սովորաբար ա գրով կը կապուին ։

Հ. Երբ բարդ անունը երկու գոյականէ շինուած է, ի՞նչ կը նշանակէ ։

Պ. Երբ բարդ անուն մը երկու գոյականէ շինուած է, ընդհանրապէս այն գոյականներուն մին ունի յատկացուցչի զօրութիւն, և միւսն՝ յատկացելոյ, և բարդութեան մէջ յատկացուցչի զօրութիւն ունեցող գոյականն առաջ կը դրուի ։ Այս տեսակ բարդ անուններ ընդհանրապէս գոյական են ։

### 57. Հրահանգ

(*) Ջորքի գլուխ. Դրան փակ ([illegible]). Գաղանի (հետ) կռիւ. Գանձի գլուխ. Գետի եզր. Ծովի եզր. Գիրքերու պահարան. Դայեկի ([illegible]) որդի. Դիւանի գլուխ. Դիւանի գրագիր. Բանակի տեղ. Եղեւնի փայտ. Աղբիւրի ակ. Լուսոյ մտնելու տեղ. Խաչի փայտ. Խունկի աման. Ծերոց խումբ. Հարսի եղբայր. Հողի բլուր, կոյտ. ոտքի կապ. Ձիւնի ծաղիկ. Ջրի

(*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը բարդ բառերու դարձունեն, յատկացուցիչը յատկացեալէն առաջ դնելով ։



ցաւառ. Ճաշու ժամ. Մաղձի դեղ. Մարդոց մահ. Մարդու արձան. Մաքսի տուն. Մեհենի տեղ. Մոխրի կոյտ. Նաւի խումբ. Քաղքի մէջտեղ. Սանդղի ոտք. Վանքի երէց. Վարազի ջիղ. Որթի տունկ. Քաղաքի պատ ։

Հ. Բարդ բառ մը միշտ գոյականներէ՞ կը շինուի ։

Պ. Բարդ բառ մը կրնայ նաև գոյականէ և ածականէ շինուիլ. ինչպէս մեծատուն, որ մեծ ածականէն և տուն գոյականէն շինուած է, և կը նշանակէ մեծ տուն ունեցող կամ տունը մեծ ։

### 58. Հրահանգ

(*) Տունը մեծ. Զօրութիւնը մեծ. Ձայնը մեծ. Թեւը երկայն. Պրկունքը լայն. Ոտքը կարճ. Զգեստը կարճ. Ջուրը խորունկ. Վիզը բարձր. Ձայնը բարձր. Մարդը (բնակիչը) շատ. Բարքը աղէկ. Հոտը գէշ. Համն անոյշ. Դէմքը գեղեցիկ. Գեղեցկութիւնը հազուագիւտ. Ոտքը շուտ (շուտ քալող). Միտքը երկու (անհաստատ). Լեզուն թանձր. Բեռը ծանր. Քալուածքը թեթեւ. Հաւատքը թերի (պակաս). Մորթը թոյլ (հեշտասէր, փափկասէր). Սիրտը վատ (վախկոտ). Բերանը լեցուն. Պարանոցը խիստ (անհնազանդ, խեռ). Սիրտը հիւանդ. Խորհուրդը լաւ. Այտերը կարմիր. Գլուխը ծռած (ամօթով). Թեւերը ոսկի. Պարիսպը կրկին. Պատիւը հաւասար. Բազուկները հաստատ. Կաշին հաստ. Զօրութիւնը հսկայական. Ջուրը շատ. Հանդերձը մաշկ. Սիրտը նեղ. Փետուրը նոր. Ձայնը բարակ. Պարիսպը ամուր. Անդամները ողջ (ամբողջ). Միտքը պակաս. Նիստը (տարածութիւնը) քիչ. Աչքը սուր. Ականջը սուր. Անունը վատ. Ձայնը քաղցր. Սիրտը քաջ. Սանձը

(*) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը բարդեն՝ ածականը գոյականէն առաջ դնելով ։

ոսկի· Ձեռքը պարապ· Միտքը թեթեւ· Հաւատքը չիտակ· Աչքը չար (նախանձոտ)· Բեռը թեթեւ· Մեղքը մեծ (շատ)· Մեղքը քիչ· Անունը մեծ· Միտքը մեծ (հպարտ)· Հասակը բարձր· Ականջը երկայն· Թեւը (խանատը) մաշկէ· Միտքը թանձր (ապուշ)· Սիրտը խիստ· Դէմքը երկու· Բերանը երկու· Մորթը լերկ· Միտքը երկայն (համբերող)· Ջուրը յորդ· Մարմինը թանձր· Միտքը ցած (խոնարհ)· Լեզուն ծանր· Ջուրը խորունկ։

# ԴԱՍ ԽԱ·

## ԲԱՅԱՆՈՒՆ, ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

Հ· Ո՞ր բառերը կ'ըսուին Բայանուն։

Պ· Բայանուն կ'ըսուին այն անունները որ բարդ բառերու մէջ ունին բայի զօրութիւն· այսինքն՝ կը ցուցընեն գործ մը, զոր օրինակ՝ սա բառերուն մէջ, որդեսէր, հայրասպան, արեւակէզ, սէր, սպան, կէզ են բայանուն, այսինքն՝ սիրեմ, սպաննեմ, կիզում բայերուն արմատներն են, և կը նշանակեն սիրող, սպանող, այրած։ Որդեսէր, կը նշանակէ իւր որդին սիրող, հայրասպան կը նշանակէ հայրը սպաննող, արեւակէզ կը նշանակէ արեւէ այրած։

Հ· Բայանունէ և ուրիշ գոյականէ կազմուած բառերուն մէջ բայանունը և գոյականն ի՞նչ բանի զօրութիւն ունին։

Պ· Բայանունէ և ուրիշ գոյականէ կազմուած բառերու մէջ բայանունն ունի բայի զօրութիւն, և միւս գոյականը՝ սեռի կամ բնութեան խնդրոյ զօրութիւն. զոր օրինակ՝ որդեսէր, հայրասպան բառերուն մէջ՝ սէր, սպան բայ են· կը նշանակեն սիրող, սպաննող· որդի, հայր գոյականներն են սեռի խնդիր սէր և սպան բայանուանց։



Արեւակէզ բառին մէջ կէզ բայ է, կը նշանակէ այրած, իսկ արեւ գոյականն ունի զօրութիւն բացառական հոլովի, և բնութեան խնդիր է կէզ բայանուան և կը նշանակէ արեւէ այրած։

Հ· Բայանունէ և գոյականէ կազմուած բառերուն մէջ, այս երկուքէն ո՞րն առաջ կը գրուի։

Պ· Բայանունէ և գոյականէ բարդուած բառերուն մէջ ընդհանրապէս առաջ կը գրուի խնդիրը, յետոյ՝ բայանունը։

Հ· Այս տեսակ բարդեր գոյակա՞ն են թէ ածական։

Պ· Այս տեսակ բարդեր թէ՛ իբր գոյական և թէ իբր ածական կը գործածուին։

### 59· Հրահանգ

(*) Ածեմ, աղամ, ամամ, ամոքեմ, այրիմ, ապաստանիմ, ապրիմ, առաքեմ, առնում, ասեմ, ատեմ, արածեմ, արգելում, արկանեմ։

Բուն, պտուղ բերող (տուող)· Խունկ աղացող· Մլոյ (ջաղացքի) մէջ աղացող· Ծովը թափուած· Կերակուր ամոքող (բարեխառնող)· Անձկով (կարօտով) այրող· Կէս այրած· Իր անձին ապաւինող· Ինքզինք ազատող· Երկինքէն առաքուած· Փոխ, աւանդ, կաշառ, պարգեւ, համար, վրէժ առնող· Երախտիք առնող (ընդունող)· Բարի, չար (բան) ըսող· Իր տէրն ատող· Ինչք ատող· Խաչինք (հօտ) արածող· Բանտի, պատի, քարերու մէջ արգելուած· Ահ արկանող (ձգող)· Խունկ արկանող (ծխող)։

---

(*) Աշակերտք այս եւ հետեւեալ հրահանգներուն բայանունները գտնեն, եւ ետքը դրուած աշխարհաբար խօսքերը բարդ բառերու դարձունեն։

Բառնամ, բարձրանամ, բեկանեմ, բերեմ, բղխեմ, բնակիմ, բտիմ. Գիտեմ, գնամ, գնեմ, գովեմ, գործեմ, գտանեմ, գրեմ։

Բեռ վերցնող. Կական (լաց) վերցնող (բրցնող). Մինչեւ երկինք բարձրացած. Ահիւ բեկած (վախէն լեղին բրդած). Ծանրութենէ բեկած (կոտրած)։ Գազաններէ բեկած (պատառուած). Պտուղ, փուշ, անձրեւ, բուք (Թիփի) բերող. Երկրէ բխած. Հուր, ջուր բխող. Գազաններէ բնակուած. Անտառները բնակող. Խոտով, ընդով բտուող (կերակրուող). Ծածուկ (բաներ) գիտցող. Իրը (եղելութիւնը) գիտցող. Սիրտերը գիտցող. Ձեռքի (գործ) գիտցող. Ճամբայ գացող. Ծովով, նաւով գացող. Արծաթով գնուած. Մարդ գնող. Ինքզինք գովող. Այգի, երկիր, հող գործող (մշակող). Նաւ, հաց, իւղ գործող (շինող). Պղինձ գործող, (պղնձէ բաներ շինող). Չար, բարի. ժանտ (գէշ), զազիր (զզուելի բան), ոճիր գործող. Մազէ գործուած. Ձեռքով գործուած. Հնարք գտնող. Մատեան (գիրք) գրող. Պատմութիւն գրող. Ձեռքով գրուած ։

## 60· Հրահանգ

Դարմանեմ, դաւեմ, դիեմ, դրժեմ. Եփեմ, երդնում. Զանցանեմ, զարդարեմ, զգածնում, զգենում. Ընկենում, ընտրեմ. Թափեմ. Իմանամ։

Խաշինք դարմանող. Մարդ դաւող. Ստինք դիեցող. Ուխտին դրժող (աւրող). Տիրոջը դրժող (մատնիչ). Իւղ (օծանելիք), հաց եփող. Երդումը, ուխտը, պատուիրանքը, օրէնքը զանց ընող (չընող). Աստղերով, ծաղիկներով զարդարուած. Սեւերով, մթով, քուրձով զգածեալ (պատած). Իրը (եղելութիւնը) զգացող (իմացող). Խարազն, ծիրանի զգե-



ցող (հագնող, հագած). Տերեւները նետած (ձգած). Նետ, շանթ, քար, կրակ նետող. Զէնքը, լուծը նետող. Գետը նետուած. Իրաւունքն ընտրող (կտրող, որոշող). Տերեւները թափած. Մարդէ (բնակիչներէ), յիշողութենէ թափուր. Ոխը, նետ թափող. Հնարք (ճամբայ, միջոց) իմացող (գտնող). Չար (բաներ) իմացող (հնարող)։

---

Լկեմ, լնում. Խանձիմ, խառնեմ, խարեմ, խլեմ, խնդրեմ, խողխողեմ, խորհիմ, խօսիմ. Ծախեմ, ծեծեմ, ծնանիմ, ծփամ։

Սովէ լլկուած. Ծաղկով, հացով, պտղով, որդերով, խնդութեամբ, գանիւ (ծեծով) լեցուած (շատ ծեծուած). Արեան, գէշի (լէշ) խանձած (բորբոքած). Ծծմբով, ծխով խառնուած. Նշեմէն խարուած (այրած). Արմատէն խլուած. Վրէժ, քէն խնդրող. Նախանձով (եռանդով) խնդրող. Սրով խողխողուած. Մտքին մէջ (ինքնիրեն) խորհող. իրաւունքը խորհող (իրաւունքը կատարելով հաշտուող). Բարի խօսող (միջնորդ). չար խօսող (ամբաստանող). առակ խօսող. որովայնէն խօսող. ատեանին մէջ խօսող. հնութեանց վրայ խօսող. Մարդ ծախող (սպառող). Բրով («օֆա»), ողորով (բարակ գաւազանով) ծեծուած. Անձրեւ ծնանող. երկրէ, ծովէ, ջուրէ, հողէ ծնած (յառաջ եկած). Ծովին մէջ ծփացող։

## 61· Հրահանգ

Կամիմ, կապեմ, կապտեմ. կատարեմ, կարեմ, կեամ, կերտեմ, կիզում, կլանեմ, կծանեմ, կոխեմ, կոծեմ, կորանամ, կորուսանեմ, կոփեմ, կռեմ, կռուիմ, կտրեմ, կրեմ, կրծեմ։

Բարի, չար կամեցող. Կամար (գօտի) կապող. Կամարներով կապուած (շինուած). ակունքով կապուած (զամուած). Դի, տաճար, սեղան կապտող (կողոպտող). Կամք, հրաման կատարող. Կօշիկ, խորան կարող. Կամքը (ընել) կրցող (անձնիշխան). Լեռը, շինի մէջ (մարդ եղած տեղ) ապրող. վիշտերու մէջ ապրող. Կաւէ, փայտէ, քարէ, կրկտէ (ղը ւէրճը) կերտուած (շինուած). հրաշքով (զարմանալի կերպով) կերտուած. ձեռքով, նկարով կերտուած (գործուած). Տաքէն, ցուրտէն կիզեալ. Ծովէն կլլուած. Ջերմութեամբ կծանող (խայթող). Ոտքով կոխուած. Ալիքներէ, հովէ կոծուած (ծեծուած). Աչուըները կորած (ամօթով). Պտուղը, լոյսը կորսնցնող. Քար կոփող. Կռանով (չէ-քէճ) կռուած (տաշուած). քարէ կռուած. Բանիւ (խօսքով) կռուող. Ծայրերէն, կէսէն, մէջտեղէն, մօտէն (տակէն, արմատէն) կտրուած. քարէ կտրուած (մէկ կտոր քարէ). Բեռ, ջուր կրող (տանող). վիշտ կրող. Կաշառք կրծող (ուտող)։

---

Համբերեմ. հայիմ, հանեմ. հասանեմ. հատանեմ. հատուցանեմ. հարկանեմ. հեղձնում. հեղում. հոսեմ. հոտիմ. ձգեմ. ձուլեմ. ճարակիմ։

Խստութեան, վիշտերու համբերող. Ծովու վրայ նայող. երկինք նայող. Ձուկ, ջուր հանող. միս հանող (քէֆծէ). պատկեր հանող (նկարող). խաչը հանող. հարկ հանող (առնող, ժողվող). քէն հանող (ոխ առնող). երազ հանող (մեկնող). Ձեռքով հասնող (կարող). Քար, երկաթ կտրող (մետաղներէն հանող). փայտ կտրող. Յոյսը, քունը հատած. Թաթերը կըտրած. Երակը կտրող (արիւն առնող). Մսէ կտրուած (միս չուտելու ուխտ ընող). Վարձքը, երախտիքը,



քէնը հատուցանող. Սրինգ, քնար, փող զարնող. Դիւէ, նետէ, շանթէ, սուրէ, ցուրտէ, խորշակէ զարնուած. Ծովը խղդուած. Արիւն թափող. Հուր, ջուր վազցնող. Ժանտ, չար (գէշ) հոտող. Նետ, քար ձգող (նետող). Ակօս ձգող (քաշող). Արծաթէ, ոսկիէ, պղնձէ ձուլուած. Խոտ ճարակող։

## 62. Հրահանգ

Մածնում. մահանամ. մանեմ. մեծարեմ. մխեմ. մոռանամ. մտանեմ. յարդարեմ. յիշեմ. յուզեմ. յօդեմ. նենգեմ. ներկեմ. նիւթեմ։

Տախտակով մածուած (վրան ծածկուած). Սրով, սովով, թոպուելով (ծեծուելով) մահացած (սպանուած). Խղդուելով, հեղձնլով մահացած. Ոսկւով մանուած. Հիւրերը մեծարող. Խորը, մէջը մխուող. Ձեռքը մխող (ձեռք զարնող). երախտիք մոռցող. Որջ, ծակ, խորը, մէջը մտնող. Տաճար, սեղան յարդարող (շտկող). Չարիքը յիշող (ոխ պահող). Խորերը, ջուրերը յուզող (փնտռող). Խռովութիւն, անձրեւ յուզող (հանող). Նախանձէ յուզեալ (շարժեալ). Սուտ (բաներ) յօդող (շինող). Ուխտը, տէրը նենգող. Ծիրանի ներկող. Չարիք նիւթող։

---

Շարժեմ. շինեմ. շնչեմ. ուտեմ. ուրանամ. չափեմ. չուեմ. պահեմ. պաշտեմ. պատեմ. պատճառեմ. պատմեմ. պարարեմ. պարտաւորեմ. պշնում։

Հովէն շարժած. Պատ, խորան շինող. տուն, աշխարհք շինող (շէնցնող). մարդով (բնակչօք) շէնցած. Ծուխ, բոց, հուր, մահ շնչող. Աստուծմէ, հոգիէն շնչուած (ներշնչեալ). Խոտ ուտող. ցեցերէ կերուած. Աստուած ուրացող. Երկիր չափող. Երկինք չուող.

Ոգին (կեանքը) պահող. Ուխտ, պատուիրանք, ոխ պահող. Աստուած, կուռք, դիք պաշտող. Արծաթով, սառոյցով, մուրթով պատած. Հիւանդութիւն պատճառող (հիւանդ ձեւացող). Սուտ (բաներ) պատմող. դիւրին, դժուարին (ոճով) պատմուած. Որովայնը պարարող. Մահու, պատժոյ պարտաւորած (դատապարտուած). դատաստանով պարտաւորած. Երկինք պշնող. մարմնոյ, երկրի պշնող (մարմնաւոր, երկրաւոր բաներու նայող)։

---

Սիրեմ. սնանիմ. սուզեմ. սպանանեմ. վաճառեմ. վարեմ. վարժեմ. վիժեմ. վիրամ. տարածեմ. տեսանեմ. ցնորիմ. ցուցանեմ. փորեմ. քաղեմ. քաղցնում. քարշեմ. քննեմ. օծանեմ։

Հայրենիքը սիրող, Ջրոյ մէջ, կաթով սնած, տունը (մէկուն) ձեռքը սնած. զով տեղեր սնած. Ջրոյ մէջ, խորը սուզած (ընկղմած). Տէրը, եղբայրը սպանող. Գինի, ցորեն, մարդ վաճառող. Ժամանակը վաճառող (պարապ անցնող). Կառք, նաւ վարող. գերի, մարդ վարող (յափշտակող, տանող). Ձի, մանուկ վարժող. մտօք վարժուած (հնազանդ, հլու). Գահէ (աթոռէ), քարէ (ժայռի վրայէ) նետուած. գետի մէջ նետուած. Վարս (գլխու մազ) վիրայող (ածիլող). Ճամբայ վիրայող (շտկող). Բազուկները տարածած. գետնի վրայ տարածուած. Երազ տեսնող. Խելքը ցնորեցնող կամ ցնորած. Ճամբայ, երազ, ժամեր, տօներ, ցուցնող. Գետնի քարի մէջ փորուած. Ծաղիկ, պտուղ, հասկ, կրկուտ քաղող (ժողվող). ծայրերէն քաղուած (կտրուած). Ինչքի (հարստութեան) քաղցած (անօթի). Գետինը քսուող. Խորունկ (բաներ) քննող. Ոսկիով, արծաթով օծուած։

—∗—



# ԴԱՍ ԽԲ.

## ԲԱՐԴ ԲԱՌԵՐ, ԲԱՅԱՆՈՒՆ ԵՒ ՄԱԿԲԱՅ

Ճ. Բայանունները գոյականով միայն կը կազմուին։

Պ. Բայանունները շատ անգամ մակբայով կամ մակբայօրէն առնուած ածականով ևս կը կազմուին. զոր օրինակ մշտաբուխ, շուտախօս, քաջատես, կազմուած են բուխ, խօս, տես բայանուններէն, և մշտ, շուտ, քաջ մակբայներէն։

### 63. Հրահանգ

(1) Ամբառնամ, ասեմ, աւերեմ. Բարձրանամ, բեկանիմ, բղխեմ, բուսանիմ. Գանեմ. գիտեմ, գուշակեմ, գտանեմ. Դատիմ, դիմեմ. Եփիմ. Զարթնում, զինեմ. Ընծայեմ, ընթանամ. Թռչիմ. Լկեմ. Խամրիմ, խօսիմ. Ծագեմ, ծաւալեմ. Կազմեմ կամ կարգեմ, կեամ, կիզում, կշռեմ, կորովեմ. Հայիմ, հասանեմ, հաւանիմ, հաւատամ, հեղուսեմ, հիմնեմ. Մահանամ, մաղեմ, մարտնչիմ, մեռանիմ, մտանեմ. Յածիմ, յառնեմ. Նուագեմ. Շարժիմ, շնչեմ. Պահեմ, պարծիմ. Ջանամ, ջնջեմ. Սնանիմ, ստեղծանեմ. Վիրաւորեմ. Տարածեմ. Ցասնում, ցնորիմ. Փլանիմ, փտիմ։

---

(2) Վեր ամբարձեալ (վերցուած). Կանխաւ լսող կամ լսուած. Վաղ (կանուխ, շուտ) աւերած. Ուղիղ բարձրացած. Դիւրաւ բեկանող. Յանկարծ, առատ, յորդ բխող. Դիւրաւ, ինքնին բուսնող. Չարաչար գանուած. Կանխաւ գիտցող. Կանխաւ (առաջուց) գու-

---

(1) Աշակերտք նշանակեալ բայերուն բայանուն արմատները գտնեն։

(2) Աշակերտք նշանակեալ աշխարհաբար խօսքերը բարդ բառերու դարձունեն՝ մակբայներն առաջ դնելով։

շակուած . Զքնաղ (քիչ), դիւրաւ, դժուարաւ գըտնուող. Յանկարծ, առաջ գտնուած. Արդար, ուղիղ դատող. Յառաջ, տար (հեռու) դիմող. Կէս եփած. Ծանր արթնցող. Իսպառ (բոլորովին) զինեալ. Նոր ընծայուած. Արագ, թեթեւ, խուռն (բազմութեամբ), զոյգ (հաւասար) ընթացող (վազող). Բարձր թռչող. Զարաչար սկսուած. Արագ խածնող (թռող). Ունայն, արդար, ուղիղ խօսող. Յանկարծ ծագող. Լայնաբար (ընդարձակ) ծաւալեալ. Պինդ (ուժով) կազմուած. Առընթեր (քովը), շուրջ (բոլորտիքը), առաջի (առջեւը) կեցող, ինքնիրեն կեցող, վրան կեցող. Յառաջ կարգուած (դասուած). Երկայն, միայն ապրող. Ողջ (ամբողջ) կիզելի (այրելի). Արդար կշռուող. Արդար կորովող (դատող). Քաղցր, առաջուց նայող. Երագ (շուտ), վաղ (կանուխ) հասնող. Դիւրաւ հաւանող. Թերի, ուղիղ, նոր հաւատացող. Հաստատ հեղուսուած (գամուած), հաստատ հիմնուած. Խայտառակաբար մահացած (սպաննուած). Մանր մաղուած. Հակառակ, ընդդէմ մարտնչող. Կէս, վաղ (կանուխ) մեռած. Կանխաւ (առաջուց) մտած. Ընդվայր (ազդին անդին, դատարկ) յածող (պտըտող). Վաղ յառնող (կանուխ ելլող). Քաղցր նուագող (երգող). Ծանր, արագ, միշտ շարժող. Դառն, քաղցր, սաստիկ շնչող. Գիշեր (գիշեր ատեն) պահող. Ունայն, սին (պարապ տեղ) պարծող. Ջուր, ժրութեամբ (արիութեամբ) ջանացող. Համօրէն (ընդհանուր) ջնջուած. Դատարկ, ընտանեաց մէջ, ընդվայր, ընդարձակ, փափուկ սնած (մեծցած). Նախ, նոր ստեղծուած. Կարի (շատ) վիրաւորուած. Լայն, համօրէն տարածուած. Ծանր ցասնող (բարկացող. Ցայգ (գիշերը) ցնորող (այլեւեւլուող). Վաղ փլած, փտած։

---



## ՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՍԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԽԱՌՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

### 1. Հրահանգ

(*) Տունը նոր է. Եկեղեցին հին էր. Փայտը երկաթէն թեթեւ է. Քացախը սաստիկ է. Աղը կծու է, բայց հոտելէ կը պահէ. Ոսկին բոլոր մետաղներէն ազնուագոյն է. Ադամանդը շատ մեծագին է, բայց երկաթէն աւելի օգտակար և գործածական չէ. Կտաւը կերպասէն աւելի ցանցառ (սէյրէք) է. Այս գինին անջուր է. այդ հովիտը ջրոտ է, անոր համար բարեբեր է. Անձրեւն ու կարկուտը ծանր են. Շոգին թեթեւ է. Մարդիկ և անասունները քալող և շարժող են. Մարդ զգացող, իմացող և խօսող է. Ձին կրակոտ է. Եղբայրդ վախկոտ է. Դուն խիստ ես. Անոնք վկայ են. Մենք ականատես ենք. Անոնք ականջալուր են. Ձեր եղբայրը տունը կը գործէ. Այս տղաքն իրենց հանդերձները պատռեցին. Նաւը ծովը ընկղմեցին. Մարդիկը ծովը խղդուեցան. Կառավարը գետը լնալով կորսուեցաւ. Բերդը ապաւինեցաւ։

Սաստիկ, բուռն
Հոտել, նեխաւորիլ, նեխել
Մեծագին, պատուական
Գործածական, պիտանի
Ցանցառ, անօսր
Անջուր (գինի), անապակ
Ջրոտ, ջրաբեր
Բարեբեր, յուռթի
Քալող, գնայուն
Շարժող, շարժուն
Զգացող, զգայուն
Իմացող, իմաստուն
Կրակոտ, ջերմ. (Խօսող, խօսուն)
Վախկոտ, երկչոտ
Պատռել, պատառել
Ծովը խղդուիլ, ծովակուր լինել
Գետն լնալով կորսուիլ, գետամոյն լինել
Ապաւինել, անկանել

(*) Ուսուցիչք կրնան հետեւեալ հրահանգներն այլ եւ այլ դասերու բաժնել ։

## 2. Հրահանգ

Բարեկամս ձեր հայրը տեսաւ. Զինուորներն իրենց զօրապետը կանչեցին. Այն քաղքին մէջ կին մը կար. Այս կինն իր աղջիկը չսիրեր. Այս հայրն իր որդիքը կ'անիծէ. Երկինքն աստղեր կան. Ջրհորներուն մէջ օձեր կան. Լեռներուն մէջ մեծ օձեր կան. Մեծամեծ կէտեր կան ծովին մէջ. Երկրիս վրայ բարձր լեռներ կան. Լեռներու մէջ մեծամեծ անտառներ կան. Անոր գերեզմանն այն քաղքին մէջ է. Մեր բարեկամներն այս տունին մէջ են. Անոնց ոսկրներն այս գերեզմանին մէջ են. Սպասաւորներն այն պալատին մէջ են. Այն սրահին մէջ հիւրեր կան. Այս սենեկին մէջ գէշ հոտ կայ. Այս կրակարանին մէջ կրակ կայ. Ձեր շտեմարանին մէջ շատ ցորեն կայ. Կառավարը վարժ է. Վարժապետն հմուտ և փորձառու է. Աշակերտները կրթեալ են. Եղջերուն և նապաստակն արագընթաց են. Տղան տհաս է. Պատանին հասուն է. Ծովին մէջ ձուկեր կան. Արեգական մէջ բիծեր կան. Աշխարհիս մէջ շատ մարդիկ կան. Հոն շատ բազմութիւն կար. Այն բանտին մէջ շատ կապեալներ կային. Քու եղբայրդ տեսնել կ'ուզեմ. Քու տանդ մէջ նստէ. Այս տունը մերն է. Դուք մեր սիրելիներն էք. Ձեր եղբայրները մեր բարեկամներն են։

| | |
|---|---|
| Աղջիկ (զաւակ), դուստր | Վարժապետ, վարդապետ |
| Անիծել, անիծանել | Փորձառու, փորձ |
| Մեծ օձ, վիշապ | Կրթեալ, կիրթ |
| Պալատ, ապարանք | Տհաս, խակ |
| Գէշ հոտ, ժահահոտութիւն | Բազմութիւն, ամբոխ |



## 3. Հրահանգ

Անոնց ծառաները մեր ծանօթն են. Այն մարդն իմ վարպետս է. Զանի շատ խրատեցի. Այս խօսքերը ձեր գիրքերուն մէջ գրեցէք. Դուռը գոցեցին. Անոնցմէ ոմանք պատժեցինք. Ասկէ մէկը չկրնար անցնիլ. Ամէնքն ալ հոս կը բնակին. Դուք հարուստ կնոջ եղբայր էք. Այն լեռնէն կ'իջնէին. Մեր երեսը չտեսաւ. Այդ տղան դուրս հանեցէք. Ձեր գեղը շատ գեղեցիկ է. Այս պարտէզը մեծ աշխատութեամբ շինեցինք. Ձեզ շատ յոգնեցուցի. Ինծի ներէ. Պատգամաւորներն իմ խօսքերս անոնց պատմեցին. Խօսքն անոնց յայտնեց. Ես ձեզ կը հանգչեցնեմ. Անոնց հայրը հոն չէ. Անոնց ընկերները մեր բարեկամն են. Քարերը փողոցն են. Զինուորները հրապարակն են. Նաւերը նաւահանգստին մէջ են. Նաւաստիները նաւին մէջ են. Անոնց ամանները քուրձին (չուվալ) մէջ էին. Անոր արծաթն իր ծոցն է. Մեր սուրն անոր ձեռքն է. Անոնցմէ ոմանք նաւն են. Ձեր բարեկամներէն ուրիշները քաղաքն են. Ամէնքն այս սրահին մէջ են. Մեր ցորենը շտեմարանն է. Ամէն մէկն իր տունն է. Տունը մէկը չկայ. Ձենէ շատերն աղքատ են. Անոնցմէ քիչերը հոս են. Անոնցմէ հինգն իմաստուն են. Ձենէ մէկը սատանայ է. Ձեր բարեկամներէն մէկն հոն էր. Մենէ մէկն հոն չէր. Մենէ ոչ մէկը հոն էր. Եղբայր մը ունիմ. Անիկա որդի մը ունի. Եղբայրս պարտէզ մը ունի. Դուք շատ բարեկամներ ունիք. Եօթն եղբայր ունինք. Անիկա գեղեցիկ պարտէզ մը ունէր. Դուք շատ գիրքեր ունիք. Հայրս շատ ստակ ունի. Անիկա շատ արջառներ և ոչխարներ ունեցաւ. Իսահակ ջրհոր մը ունէր. Որդի մը ունիմ. Մեծ տուն մը ունի. Պզտիկ քաղաք մը ունիմ. Մեծ տուներ ունինք.

Անոնք շատ ստացուածք ունին. Իմ խօսքերս լսեցէք. Այն լեռնէն կ'իջնէր. Այս քաղքին մէջ բնակեցաւ. Այն տունն երթանք. Այն պարտէզին մէջ նոր գերեզման կար. Կենաց ծառը դրախտին մէջտեղն էր. Տասը տարի ապրեցաւ. Ութ ժամ ձեզի սպասեցինք. Անոնք այս աշխարհէս են. Դուք այս աշխարհէս չէք. Երբ ասիկա թագաւորէն լսեցին. Անոր քալելուն ձայնը լսեց. Այդ մարդն այս տունը խոթեցէք. Զանիկա օտար երկիր տարին. Այն հացէն կերաք. Ջուրէն խըմեցինք։

| | |
|---|---|
| Գիրք, մատեան | Ամէն մէկը, իւրաքանչիւր |
| Ասկէ, ընդ այս | Մէկը, մին, ոմն, մի ոմն |
| Շինել, առնել | Ոչ մէկը, ոչ ոք |
| Յոգնեցնել, աշխատ առնել | Մէջտեղը, ի մէջ |
| Ներէ, (հրամ.) ներեսջիր | Քալել, գնալ |
| Յայտնել, 'ի վեր հանել | Խոթել, մուծանել |
| Հանգչեցնել, հանգուցանել | Խմել, ըմպել, (կտր.) արբի |

## 4. Հրահանգ

Ձեր եղբայրը տեսայ և անոր ըսի. Անոր ձայնը լսեցի և կանչեցի. Անոր մահուան լուրն առաւ և սկսաւ լալ. Զանի երկու մղոն տարին. Անոնց հինգ քոռ ցորեն տուին. Պատը երկու կանգուն բարձրացուցին. Զինուորներուն զէնքերն առաւ. Տունին յարկը քակեցին. Անոր եղբայրները հոն էին. Իր ծառային աղջիկն սպաննեց. Սենեկին դուռները բացին. Տաճարին վարագոյրը ճեղքուեցաւ. Եղբօրս ձայնը լսեցի. Մեր բոլոր ստացուածքը քուկդ է. Այդ աշտանակն իմս է. Այն պարտէզը գեղեցիկ է. Անոնց ամանները լեցուն են. Մեր տուները բարձր են. Զանի լերան գլուխը հանեցի. Իր մառանին մէջ շատ գինի ունէր.



Ութ տարի աշխատեցայ ասիկա սորվելու համար. Դաշտին երկայնութիւնը տասուերկու մղոն էր. Այն գուբին մէջ առիւծներ կային. Թագաւորը հզօր է. Այն մարդը բանսարկու է. Խօսելու ատենը կ'ըսէր. Արտաշիսի փեսայութեան ատենը ոսկի կը տեղար, Սաթինկան հարսնութեան ատենը՝ մարգարիտ կը տեղար. Դուն Շարայի որկորն ունիս, մենք Շիրակայ համբարները չունինք. Իմ գիրքերս ո՞ւր են. Զանոնք ո՞ւր դրիք։

| | |
|---|---|
| Լուր (մահուան), գոյժ | Ճեղքեմ, ցելում |
| Պատ, որմ | Աշխատել, աշխատ լինել |
| | Սորվիլ, ուսանել |

## 5. Հրահանգ

Զանոնք ձեր եղբօրը տուի. Այդ գիրքերն ո՞վ շարադրած է. Գիտուն մարդ մը զանոնք շարադրած է. Հոս հինգ սափոր ջուր բերէք. Ես ձեզի ըսելու շատ բան ունիմ. Երկու որդի ունիմ. Անիկա չորս աղջիկ ունէր. Շատ հարստութիւն ունէին. Համբերելու զօրութիւն չունիմ. Ներս մտաւ և նստաւ սեղան. Զանի իւր գիրկն առաւ և օրհնեց. Երկու օրուան ճամբայ քալեցինք. Գիշեր և ցորեկ կ'երթայինք. Առէք այս մարդիկն ու իրենց տուները տարէք. Անոր բարեկամներն այս դուռնէն անցան և մեզի եկան. Այս պատմութիւնը լսած ատենը կը զարմանար. Երկու օր առաջ ձեր ծառաները մեզի լուր տուին. Անոնց ընկերները մեր բարեկամներն են. Դուն իմ որդիս ես. Մենք ձեր բարեկամներն ենք. Եղբայրներս ձեր վրայով պատմեցին. Մենք անոնց հետ ձեզի եկանք. Անոնք ձեր եղբօրը հետ մեր տունը գացին. Երեք օր ճամբորդութիւն ընելով հոն հասանք. Ձեր սիրոյն համար այս աշխատութիւնը յանձն կ'առնեմ. Աստուծ իրիկուն ձեզի համար կ'աշխատէինք։

| | |
|---|---|
| Շարադրեմ, յօրինեմ | դէմ, ընդ. տրականով |
| Հարստութիւն, մեծութիւն | Ձեր վրայով, զձեզ |
| Սեղան նստիմ, ճաշեմ | Ճամբորդութիւն ընեմ, ճա- |
| Քալել, գնալ | նապարհորդեմ |
| Գիշեր ցորեկ, զտիւ և զգիշեր | Սիրոյն համար, առ սէր |
| Առաջ, յառաջ քան զ | Առտու իրիկուն, զայգ և |
| (Անոնց) հետ, (նոցա) հան- | զերեկ |

## 6· Հրահանգ

Ինծի հրաման տուր որ երթամ հայրս տեսնելու · Անոր պատուէր տուր որ գիս չնեղէ · Անոր վախէն լռեցինք · Այն մարդուն որդին կը ճանչնամ, բայց ձեզ չեմ ճանչնար · Զանոնք վրանը խոթեցէք · Ինչո՞ւ համար բոլոր օրը դատարկ կեցած էք · Հոս ի՞նչպէս մտաք, պատմեցէք մեզի · Այս ճամբէն մէկը չկրնար անցնիլ · Անիկա աղէկ մարդու որդի է · Ասիկա հարուստ կնկան աղջիկ էր · Արքայից արքային ծառաներն ենք · Այդ գերիներն այն բերդը տարէք, քաղաքը մի բերէք զանոնք · Իր եղբօրը քով բնակեցաւ չորս տարի, և մեր երեսը չտեսաւ. Իր հայրենիքէն աքսորուեցաւ · Ձեր գեղն եկայ, շատ գեղեցիկ է · Խօսքին երկայնութենէն ձանձրացաւ և քունը տարաւ · Անոր այն խօսքերէն գիտցայ որ անոր եղբայրն էք · Բազմութիւնն այն եկեղեցին կը դիմէր · Զանի տաճարին մէջ տեսան իւր բարեկամներուն հետ · Երկիր մեծ է · Ծով խորունկ է · Երկինք բարձր է · Լուսին յատուկ լոյս չունի · Անիկա վաթսուն տարի ապրեցաւ, և քառասուն օր թագաւորեց · Իմ տունս մտէք · Կնճնւոյն շուքին տակ կը նստէր · Իմ ձեռքիս տակն է · Ձեր իշխանութեանը տակ շատեր ունիք · Եղբայրս երկու որդի ունի · Տասը սպասաւոր ունէր · Անոնք շատ ստակ ունին · Ստակ չունիմ, բայց ունեցածս տամ։



| | |
|---|---|
| Վախէն, առ ահի | Բերդ, դղեակ |
| Խոթել, մուծանել | Աքսորուիմ, տարագիր լինիմ |
| Բոլոր (օր), ողջոյն | Քունը տանել, ննջեմ |
| Ի՞նչպէս, զիա՞րդ | Խորունկ, խոր |
| Քով, առ (տրականով) | Յատուկ, առանձին |
| Աղէկ, ազնիւ, բարի | Շուք, հովանի |

Ունեցածս, զոր ունիմ

## 7· Հրահանգ

Մարիամ գերեզմանը եկաւ · Գացէք, ըսէք ձեր բարեկամներուն որ հրապարակն երթան · Անոնք հոն ժողվուեցան, և անոր գալուն կը սպասէին · Ստակը սեղանաւորին դարձուց · Անիկա ստակն առնելով կ'ըսէ · Ջուր առաւ ու ձեռուըները լուաց · Ան տեղը եկան որ աւերակ կը կոչուէր · Դուն իմ սիրելի որդիս ես · Ես քու հայրդ եմ · Թագաւորը տօնին ատենը հոն էր · Աշակերտները հարսնիքն էին · Ժամը իննին ատենները խաւար եղաւ · Ութ մղոն քալեցինք · Ան ատենները սով կար · Կէս գիշերուան ատենները յարձակեցան անոնց վրայ · Գիշերանց ելլելով կ'երթային · Հարիւր լիտր իւղ բերին · Կրնամ այս տաճարը քակել, և երեք օրուան մէջ շինել զայն · Այն երկրէն կու գանք · Այս քաղաքն եկան · Այն քաղքին մէջ աղքատ մը կար · Զանի տեսնելով կանչեց ու իր քովը նստեցուց · Մեզ բռնեց ու կը չարչարէր · Պատուհանը բացաւ ու կը նայէր · Զանի բանտէն արձակեց · Զանոնք բանտարկեց · Ձեր եղբայրներն եկեղեցին խոթեցին · Այն եկեղեցւոյն մէջ կը քարոզէր։

Գալը, գալ, գալուստ — մանակաւ
Ժամը իննին ատենները, զինն ժամու — Զարչարեմ, ալլեմ
Բանտարկեմ, դնեմ ի դիպահոջ
Այն ատենները, զայնու ժա- — Եղբայրներն, եղբարքն

## 8· Հրահանգ

Այն բանտին մէջ շատ կապեալներ կային. Զանի ջուրը նետեց. Անոր ձայնը լսելով կ'ուրախանար. Յակոբ ինը տարի ծառայեց Լաբանու Ռաքէլին համար. Չորս ժամ ոտքով գացինք. Եօթը տարի սով եղաւ. Երուսաղեմի տաճարը քառասուն տարիէն շինուեցաւ. Ինծի հինգ քանքար արծաթ տուաւ. Եօթը սափոր ջուր բերին. Տասը փունջ ծաղիկ քաղեցինք. Այս տունը մերն է. Դուք մեր սիրելիներն էք. Եօթը օր աշխատեցան ու զանի դուրս հանեցին. Ութ մղոն քալելէն ետքը մեծ քաղաք մը հասանք. Քաղքին դուռնէն ներս մտնելու ատեն հինգ հոգի տեսանք. Այն գիրքը կարդացած չենք. Փոքրիկ քաղաք մը ունիմ, եկու և հոն բնակէ. Այս լեռներէն շատ հեղեղներ կ'իջնեն. Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ. Ինք և իր որդիքը մեզ տեսնելու եկան. Եթէ ես եկած չըլլայի. Ձեզ շատ օրեր փորձեցի. Մեր գործքերը ձեզի պատմեցինք, բայց դուք մեզի չհաւատացիք. Անիկա հարուստ մարդու որդի էր։

Նետեմ, ընկենում — Ոտքով, հետի
Ուրախանամ, ուրախ լինիմ — Քալել, գնալ
Հոգի, ոգի (անձ), այր (մարդ)

## 9· Հրահանգ

Զանի թագաւորին տարին. Եղբօրը քով կեցաւ շատ օրեր. Զանոնք դահիճներու մատնեց. Անոր վրանին տակը ճաշեցին. Երկու օրուան ճամբայ գացինք. Իմ խօսքերս լսեցէք. Անոր մանչերն ու աղջիկները մեզի եկան. Քիչ մը ետքը զանոնք տեսայ. Մեր աղաչանքն անոնց ընդունելի չեղաւ. Թագաւորի խորհուրդները ծածկել պէտք է. Աստուծոյ ըրածները ձեզի պատմեմ. Աստուծոյ և անոր զօրութեանը կը հաւատամ. Հազիւ անիկա ոտքը ցամաքը դրած էր. Աստուած այս աշխարհը ստեղծած է. Վաղուան համար մի հոգաք. Մեզի անոնց վրայով պատմեցին. Բան կը փնտռէին որ անոր վրայով ամբաստանութիւն ընեն. Զանի քաղքէն դուրս հանեցին. Զանոնք ատեանը բերին. Շատերն այս քաղքէն ելան. Այդ տղաքն այն տունը տարէք. Այն քաղաքը կը բնակէր. Իմաստուն մարդոց խօսքերուն մտիկ ըրէք. Այս մարդիկը քաջ թագաւորի զինուորներ են. Այս տեղը չարագործ մարդերով լեցուցիք. Դուրս ելէք և զանոնք փնտռեցէք. Յորենն իրենց ամաններուն մէջ ժողվեցին. Երբ բազմութիւնը տեսաւ, նստեցաւ. Անոր դուրս ելլելու ատենը բազմութիւնը ներս կը մտնէր. Զանոնք այդ եկեղեցին խոթեցէք։



Քիչ մը ետքը, յետ սակաւ ժոյ — Ամբաստանութիւն ընել, չարախօսել
Պէտք է, պարտ է — Տղայք, մանկունք
Ըրածները, զոր արարն — Մտիկ ընել, լսել (տր.)
Հազիւ, այն ինչ — Փնտռել, խնդրել
Ստեղծեմ, առնեմ — Բազմութիւն, ամբոխ

## 10· Հրահանգ

Երկրիս բոլորտիքն օդ է. Ժողովուրդն անոր բոլորտիքը ժողվուեցաւ. Այն քաղքին բոլորտիքը պատնէշներ շինեցին. Անոր վրայով ձեզի բան մը պիտի ըսեմ. Ձեր եղբօրը վրայով ամբաստանութիւն կ'ընեն. Ձեր բարեկամներն իմ վրայովս կը տրտնջեն. Զինուորները պարտէզին դուռնէն մտան. Բազմութիւնը դաշտին երեսը տարածուեցաւ. Տասը ժամ բան չկերան. Տասուերկու մղոն քալելէն ետքը քաղաքը հասանք. Մեզ տեսան ու սկսան փախչել. Փախան ու բերդն ապաւի-

նեցան․ Ջանի մէկդի առաւ ու հետը կը խօսէր․ Չէի գիտեր թէ ինչ է․ Չկրցան մեր խօսքերն իմանալ․ Մեզ թողուցին ու իրենց տուները գացին․ Տասուերկու եղբայր ենք․ Այդ մարդիկն Աստուծոյ ծառաներն են․ Շատ եղբայրներ ունիմ․ Երկու տուն ունիք․ Քսան ծառայ ունի․ Գիրքեր ունինք․ Այն տունը մի մըտնէք․ Այս քաղաքը ծնանք․ Այս տեղէն հեռու է․ Այս տաճարէն խոլթեցէք զանոնք․ Իմ բարեկամիս երթանք։

| | |
|---|---|
| Բոլորտիքը, չուրէյի… (գրծ.) | ընել |
| Ժողվուիլ, թօփլանմագ | Դուռնէն, ընդ դուռան |
| Վրայով, ը… (բցռկ.) | Երեսը, ընդ երեսա |
| Ամբաստանութիւն ընել, | Բան չուտել, կալ անօթաղ |
| ամբաստանել, ամբաստան | Մէկդի, մեկուսի |

## 11․ Հրահանգ

Եղբօրը տունը մտաւ․ Բարեկամներն անոր եկան․ Թուղթը գրելու ատենը ծառաները զանի կանչեցին․ Աթոռին վրայ նստելով ժողովուրդը կը դատէր․ Երբ հիւանդը բժշկեց, զանի իր տունը ղրկեց․ Բարեկամներն անոր կ՚ըսեն․ Մեզի հետ գալ կ՚ուզէ՞ր․ Շատ օրեր հոն կեցանք, ու անոր գալուն կը սպասէինք․ Բանտին մէջն էր, ու եղբայրներուն կ՚աղաչէր որ զինք ազատեն․ Ջանի լերանը վրայ հանելէն ետքը՝ եղածներն անոր պատմեցին․ Այն մարդը ձեզի ղրկեցի որ իմ վրայով ձեզի լուր տար․ Եթէ այդ մարդիկը կը սիրէք, մի չարչարէք զանոնք․ Երբ զանի երկու մըն տարին, շատ յոգնեցան․ Պատուհանէն անցաւ ու ներս մտաւ զանի տեսնելու․ Անոր համբաւը բոլոր այն երկիրը տարածուեցաւ․ Երկու օր անոնց հետ քալելէն ետքը գեղ մը հասանք․ Տաճարին առջեւը կենալով ձեր եղբօրը



հետ կը խօսէի․ Իմ որդիքս ձեր բարեկամներն են․ Ես օտար չեմ։

| | |
|---|---|
| Եղածները, ըլլալը | Յոգնիմ, վաստակիմ |
| Լուր, համբաւ | Տարածուիլ, տարածել ընդ… |

## 12․ Հրահանգ

Ես զանոնք տեսած եմ․ Դուք այն գիրքը կարդացած էք․ Աստուած այս աշխարհս ստեղծած է․ Եթէ անոնք հոս եկած ըլլային․ Դուն իմ վրայովս լսած ես․ Մենք անոնցմէ երկու թուղթ ընդունած ենք․ Ես այն մարդը տեսած չեմ․ Անիկա ասանկ բան մը ըսած չէ․ Մենք մէկը սպաննած չենք․ Եթէ այն եկած չըլլար․ Այն քաղքէն ելաւ ու մեզի եկաւ․ Քու եղբայրդ և քոյրդ մեզի եկան․ Իմ հարսնիքս եկէք․ Իւր այգին մշակներ ղրկեց․ Զանոնք տասուերկու օր կը սորվեցընէր․ Նոյ և անոր որդիքը տապանը մտան․ Հոգին ու մարմինը դժոխքին մէջ կորսնցնելու կարող է․ Ծերերը և երիտասարդները սպաննեցին․ Մանչեր ու աղջիկներ ունեցաւ․ Անոնք մեր որդիներն են․ Այս տղաքն իմս են․ Երբ զանի տեսան, անոր քովը ժողվուեցան․ Հաւն իր ձագերը թեւերուն տակ կը ժողվէ․ Անոնք քահանայապետին սրահը մտան․ Շատերը երբ լսեցին, անոր հաւատացին․ Քու որդիդ հոս բեր․ Հոն մարդ չկար․ Բան մը չլսեցինք․ Այն տեղէն հեռացայ․ Մեզի մօտեցաւ․ Յովսէփին եղբայրներն Եգիպտոս իջան ցորեն գնելու․ Յովսէփ իւր եղբայրները տեսաւ և զանոնք ճանչցաւ․ Եգիպտոսի մէջ եօթը տարի առատութիւն եղաւ․ Մեծ որդին սպաննուեցաւ․ պզտիկը հօրը կ՚ըսէ․ Քու որդիդ ըլլալու արժանի չեմ։

| | |
|---|---|
| Ստեղծել, առնել | Մանչ (զաւակ), ուստր |
| Բան մը, ինչ | Մեծ, երէց |
| Դժոխք, գեհեան | Պզտիկ, կրտսեր (որդի) |

## 13· Հրահանգ

Իմ եղբայրներս քենէ կը վախնան · Աստուծմէ չեմ վախնար · Անոր կ'աղաչէին որ իրենց հետ երթար · Երեք տաղաւար չինենք · Անոր գլուխը կտրեցին և Թագաւորին բերին · Երբ Թագաւորը տեսաւ, շատ զարմացաւ · Անոր խօսքերուն մտիկ չէր ըներ · Յակոբ իր հայրերուն գերեզմանը թաղուեցաւ · Պատերազմի լուրեր պիտի լսէք · Անկիւն մը քաշուեցաւ և կը նըստէր · Տէր իմ օգնականս է · Իմ ձեռքիս տակ զինուորներ ունիմ · Շատ օրեր նեղութիւն կրեցի · Մենք անոնցմէ վախ չունինք · Յունաց բոլոր ուսումներուն մէջ կրթուեցաւ · Մեզի շատ ստակ հարկաւոր է · Մեզի հետ անոր պալատն եկան · Անոր կ'աղաչէին որ իրենց սահմաններէն երթար · Մենք գիրքերը սորված չենք · Այն մարդը տեսած չեմ · Նթէ այս խօսքերն ըսած ըլլայի · Քար մը նետելու չափ տեղ անոնցմէ հեռացաւ · Քառասուն օր չկերաւ և չխմեց · Տասը տարի անկողին ինկած էր · Բերդն ապաւինեցան · Երկինք ելաւ և Աստուծոյ աջ կողմը նստաւ · Անոր տասը դահեկան տուաւ · Հնազանդ որդին իւր հայրը կ'ուրախացնէ · Զանի կը խրատէր որ իւր խօսքերուն մտիկ ընէր · Բազմութիւնը դաշտին վրայ ցրուեցաւ · Լեռներէն ու ձորերէն անցանք ·

| | |
|---|---|
| Շինել (տաղաւար), առնել | Նեղութիւն կրեմ, տառապիմ |
| Մտիկ ընեմ, անսամ | Վախ, երկիւղ |
| Լուր, համբաւ | Կրթուիմ, վարժիմ |
| Քաշուիմ, առանձնանամ | Հարկաւոր, պիտոյ |



| | |
|---|---|
| Պալատ, ապարանք | Ապաւինել (տեղ մը), անկանիմ |
| Քար մը նետելու չափ տեղ, քարընկէց մի | Ուրախացնեմ, ուրախ առնեմ |
| | Դաշտին վրայ, ընդ դաշտն |
| Իյնամ (անկողին), անկեալ դնիմ | Լեռներէն, և ընդ լերինս, և |

## 14· Հրահանգ

Եօթն օր բանտին մէջ մնաց · Ութ հոգւոյ չափ ջըրհեղեղէն ազատեցան · Զիս մահուընէ փրկէ, Տէր · Այն տեղին մարդիկը զանի ճանչցան · Վայրենի ազգերու բնակարանները մտաւ · Գետին քովէն կ'երթար · Ասիկա քու սիրոյդ համար ըրի · Ատելութենէն զանի սպաննել տուաւ · Տրտմութենէն հիւանդացաւ · Իրենց բարեկամները թշնամիներուն ձեռքը մատնել կ'ուզեն · Անոնցմէ ոմանք մեզի եկան · Անոր ծննդեան ատենը շատերը պիտի խնդան · Անոր ներս մտնելու ատենն ամէնքն ալ ոտք ելան · Անոր ոտքն ինկաւ և կ'աղաչէր · Քաղաքը հասած ատենը բարեկամները զանի դիմաւորեցին · Երբ ասիկա ըսաւ, ամէնքը լռեցին · Մեզի օգնէ, քանզի ահա կը կորսուինք · Ամէն բան քուկդ է · Այս ամէնն իմս է · Երկինք իմ աթոռս է · Դուք իմ որդիքս էք · Շատ բարեկամներ ունինք · Ուրախութենէն գնաց ու իր ստացուածքը ծախեց · Իմ զօրութիւնս դու ես · Դուք մեր պարծանքն էք · Եղբայրներս և քոյրերս հոս են · Քու ծառաներդ և աղախիններդ և անասունդ չգործեն · Ձեր բարի գործերը տեսնեն · Անուշ խօսքեր խօսեցաւ · Բարեբարոյ կնոջ որդի էր · Անզգամ և լեզուանի մարդու հանդիպեցանք · Նենգաւոր մարդոց հետ հաց մի ուտեր · Քու բարեկամներուդ հետ ուրախ եղիր · Զկնորսներն ուռկանը կը քաշէին · Մեր վրայով շատ բան կը պատմեն · Ես երբեք անոր տունը գացած չէի, բայց ան

ստէպ իմ տունս կու գար․ Ջորքը գետն անցնելով քաղաքն առաւ․ Քաղաքներ շինեցին և անոնց մէջ բնակեցան․ Աբրահամ իր ծերութեան ատենը շատ հարուստ եղաւ․ Իսահակ անունով որդի մը ունեցաւ, որուն աչուըները կուրցան ծերութեան ատենը․ Հայկ իր որդիները և թոռներն առնելով, իր հայրենիքը եկաւ․ Բէլին հետ կռուեցաւ և անոր յաղթեց։

| | |
|---|---|
| (Ութ հոգւոյ) չափ, ծծբեռ | Դիմաւորեմ, ընդ առաջ լինել |
| Ազատիլ, ապրիմ | Լռեմ, լուռ լինիմ, լռեմ |
| Փրկեմ, ապրեցուցանեմ | Քաշեմ, ձգեմ |
| Բնակարան, բնակութիւն | Հարուստ ըլլալ, մեծանալ |
| Ոտք ելլեմ, յոտն կամ | Ստէպ, յաճախ |
| (Գետին) եզերն, առ (գետոյն) | Գետն անցնիլ, անցանել ընդ [գետն |
| Քու սիրոյդ համար, առ սէր | Կուրնալ, կուրել (աչաց) |

## 15․ Հրահանգ

Այս մարդը հիւանդ է․ Քու բարեկամդ աղքատ է․ Այս տղան իմ որդիս է․ Այս մարդը ձեր թագաւորն է․ Ասոնք մեր բարեկամներն են․ Այս մարդիկը ձեր ազգականները չեն․ Այս ծերունին այս քաղքին դատաւորն է․ Ատոնք մեր թագաւորին զինուորներն են․ Այս աղջիկը քու դուստրդ է․ Ձեր թշնամին չենք․ Հայրս այն քաղքին իշխանն էր․ Այս երկու մարդիկը Յունաց զօրավարներ են․ Հոն եղողները բռնեցինք․ Մտնողները կ'արգելուին․ Տեսնողներն ու լսողները կանչեցինք․ Ասիկա ընողը տեսայ․ Ձեզ մատնողն սպաննեցին․ Մեզի հետ խօսողը կը ճանչնամ․ Այս քաղաքը պզտիկ է, բայց շատ գեղեցիկ է․ Այդ պարտէզը մեծ չէ, բայց անոր մէջ շատ ծառեր կան․ Մեր հանդերձը հին է, բայց մեր ոտքի ամաններն հին չեն․



Այս լեռները բարձր են, բայց երկրին օդն առողջ չէ․ Այն գետին ջուրերը յստակ են․ Գետն ալ խորունկ է․ Քաղքին մէջ կռիւ եղաւ և շատ վիրաւորներ եղան․ Շատ օրեր անոր տունն եղայ, բայց եղբայրդ ինծի հետ չէր․ Մենք ձենէ գոհ ենք, դուք ալ մենէ գո՞հ էք․ Տեսած մարդդ գովութեան արժանի չէ․ Այն այրի կինն աղքատ և օրուան հացի կարօտ էր․ Այդ տղան իմ եղբայրս է․ Այդ աղջիկն աղքատ մօր մէկ հատիկ աղջիկն է․ Այդ տղաքն իմ որդիներս են․ Քաջ եղիք, ո՛վ մարդիկ․ Որդեակ, ինծի հետ ուրախ եղիր․ Եղբայր, ո՞ղջ ես․ Ինծի ուլ մը չտուիր որ բարեկամներուս հետ ուրախանայի․ Քու անունդ սուրբ ըլլայ․ Ձեզի ծառայ ըլլանք․ Ձեր տուները աւերակ ըլլան․ Միշտ կ'ուրախանար․ Քու ստակդ քեզի ըլլայ․ Ինծի որդի մը պիտի ըլլա՞յ․ Ես ձեր մէջ սպասաւորի մը պէս եմ․ Ձենէ մեծը պզտիկին պէս ըլլայ․ Ոչ իմ կամքս, այլ քու կամքդ ըլլայ․ Ամբարտաւան մի ըլլար․ Լռեցէք։

| | |
|---|---|
| Բռնել, ունիմ, կալ․ կալայ | Օրուան հաց, աւուրն օրէն |
| Ոտքի աման, ոտ ոտից | Պզտիկ, կրտսեր |
| Խորունկ, խոր | Լռել, լուռ լինել |

## 16․ Հրահանգ

Հայրս պարտէզ մը գնեց․ Գիրքեր գնեցինք․ Քոյրդ պզտիկ գիրքը գնեց․ Գնած գիրքդ ընտիր է․ Եղբօրդ գնելու տունը գեղեցիկ, բայց շատ պզտիկ է․ Ես ալ տուն մը գնեցի որ շատ մեծ է․ Թուղթը գրեցի՞ր․ Հօրդ ինծի պարգեւած ձին ծախեցի․ Դու ալ քուկդ ծախեցի՞ր․ Իշխանը իւր կառքն ու ձիերը կը ծախէ․ Հօրեղբայրս իւր պզտիկ որդւոյն համար գեղեցիկ գըլխարկ մը գնեց․ Այս տղան երկայն նամակ մը գրեց իւր մօրը․ Մեր հայրը այս պարտէզն և այս այգին քու

հօրաքոյրէդ գնեց. Մարդ մը հարսնիք ունէր. Բոլոր իւր բարեկամները կանչեց. Կինը իւր դրացիները կը կանչէ. Հովիւները ոչխարները կ'արածեն. Դուն խիստ մարդ մըն ես, չցանածդ կը հնձես. Արձակեցէք ատոնք որ իրենց կերակուր գնեն. Մեր լապտերները կը մարին. Ձեր այդ իւղէն մեզի ծախեցէք. Վաճառականներուն գացէք, և գնեցէք ձեզի. Ինծի ի՞նչ կ'ուզէք տալ. Ես զանի ձեզի կը բերեմ. Ձեռքդ պնակը մի խոթեր. Ամենէն աղէկներն ամաններու մէջ ժողվեցին. Օտար էի և զիս ընդունեցիք. Քահանայապետներն իր հանդերձները պատռեց. Այս կինն իր տղաքը կը սիրէ. Եղբայրներս և քոյրերս կը սիրեմ. Բարեկամներս և վարժապետներս ալ կը սիրեմ. Ծաղիկներդ ջրեցի՞ր. Խմիններս և քուկիններդ ջրեցի. Քոյրս ալ իրենները ջրեց. Եղբայրներդ երկու շուն գնեցին որ շատ գեղեցիկ են. Կան կերակուրներ և խմելիքներ, որոնք եթէ շատ ուտուին և խմուին, հիւանդութիւններ կը պատճառեն. Արաստոն քարի տեսակ մըն է որուն վրայ երկաթ չի բանիր. Մշակ անոնք են որ երկիրը կը գործեն. Վարժապետները ծոյլ տղաքը կը պարսաւեն, փութաջանները կը գովեն։

| | |
|---|---|
| Ձի, երիվար | Ջրեմ, ոռոգեմ |
| Պզտիկ, փոքր, կրտսեր | Խմելիք, ըմպելի |
| Գլխարկ, խոյր | Շատ, բազում, յոյժ, շատ |
| Գնելու, զոր գնելոց է | Պատճառեմ, գործեմ |
| Ցանել, սերմանել | Հիւանդութիւն, հիւանդութիւն, ցաւ |
| Խոթեմ, մխեմ | Արաստոյ, արաստոյ (քար ինչ) |
| Պնակ, սկաւառակ | Քար, վէմ |
| Ամենէն աղէկները, ընտիր ընտրեան | Տեսակ, ազգ |
| Ընդունիմ (տունը), ժողովեմ | Բանիլ (ներգործել), գործեմ |
| Ալ, և | Փութաջան, ժիր |



## 17. Հրահանգ

Տեսա՞ր մարդը որուն քեզ ղրկեցի. Այն մարդը չտեսայ, բայց վաղը կը տեսնեմ. Փնտռածդ գտա՞ր. Փնտռածս չգտայ, չփնտռածս գտայ. Զանի գտաւ ու անոր հարցուց. Ներս չմտնես. Պարտէզը մտաւ. Ամէնքն ալ մրափեցին ու քնացան. Փեսան եկաւ, ու պատրաստներն անոր հետ մտան հարսնիքը. Ստակն առնողը գնաց, գետինը (երկիր) փորեց, և ստակը ծածկեց. Այդ տունը մտիր ու տես. Այդ անպիտան ծառան դուրս հանեցէք. Զանի բռնեցին որ սպաննեն. Երբ խօսքը լմնցուց, լեռը ելաւ. Դարձեալ գալով զանոնք քնոյ մէջ գտաւ. Անոր հետ եղողներէն մէկը ձեռքը երկնցուց, սուրը հանեց և ծառան զարկաւ. Ան ատեն անոր երեսը թքին. Քեզի զարնողն ո՞վ է. Երբ դուրս ելաւ, ուրիշ կին մը զանի տեսաւ. Եղբայրներս և քոյրերս տեսա՞ր. Տեսանք ձեր սպասաւորներն ու աղախինները որ պարտէզին մէջ ծառերուն շուքին տակ կը պտըտէին. Մեր ճամբորդներն հասան. Այս խօսքը թագաւորին ականջը հասաւ. Եթէ օդին տաքութիւնն անդաստանները չտաքցնէ, պտուղները չեն հասնիր. Սպասաւորը խօսքը յայտնեց. Այդ գործը կրնաք գլուխ հանել. Զանի թագաւորին առջեւ բերին. Երբ չկրցաւ համոզել, զանի անիծեց. Եղբայրդ ի՞նչ միտք ունի. Յունաստան երթալու միտք ունի. Այդ գիրքերը սեղանին վրայ գտանք. Ծովն ուռկան նետած էին. Թակոյկներու մէջ ջուր դրին. Անոր կարմիր քղամիդ հագուցին. Լաթերը հագաւ. Սուրդ մէջքդ կապէ. Նաւին կարասիներէն շատ բան ծովը նետեցին. Ունեցածը գործածեց։

| | |
|---|---|
| Մրափեմ, ննջեմ | Ծածկեմ, թաքուցանեմ |
| Քնանամ, ի քուն մտանեմ | Լմնցունել, կատարել |
| Դարձեալ, միւսանգամ | Քնոյ մէջ, ի քուն |

| | |
|---|---|
| Մէկը, մի ոք | Միտք ունենամ, ի մտի ածեմ |
| Երկնցունել, ձգել (զձեռն) | Նետեմ } արկանեմ (ուռկան, |
| Օդին տաքութիւնը, տօթ | Դնեմ } ջուր) |
| Տաքցնեմ, ջեռուցանեմ | Հագցունեմ, արկանեմ |
| Շուք, հովանի | Լաթ, ձորձ |
| Ցայտնել, ի վեր հանել | Մէջք, մէջ |
| Գլուխ հանեմ, ի գլուխ հանեմ | Կապեմ, ածեմ (սուր եւ.) |
| Համոզեմ, ածեմ ի հաւան | Գործածեմ, արկանեմ ի կիր |

## 18· Հրահանգ

Ահա երկու քանքար վաստկեցայ · Շատ բան վաստըկեցաւ · Ըսելիքս լսել կ'ուզե՞ս · Անոր ագարակը երթալ չուզեց · Ատոր ըրածը խօսուի · Շատ տրտմեցան և լռեցին · Հրապարակներու մէջ խօսեցէք · Ինծի հետ ծածուկ մի խօսիր · Ամէնքը գայթակղելու ալ ըլլան, ես պիտի չգայթակղիմ · Ձեր քոյրերն ո՞ւր են · Մեր քոյրերն Հռոմ են · Ձեր եղբայրներն ո՞ւր են · Անոնք Աթէնք երթալու համար ճամբայ ելան · Շատ անգամ խորհեցաւ, բայց բան մը չկրցաւ ընել · Պարսկաստանէն եկաւ ու Սիւրիա բնակեցաւ · Ասանկ բան մը Հնդկաստանի մէջ չերեւցաւ · Ինչո՞ւ համար կը նեղուիս · Քեզ նեղողն ո՞վ է · Վարժապետը զՏիգրան կը պարսաւէ · կ'ըսէ թէ չ'աշխատիր, ընկերներուն հետ միշտ կռիւ կ'ընէ · Այդ գինին քեզի ի՞նչպէս կ'երեւայ · Ինծի կ'երեւայ որ շատ ընտիր է · Այս տղաքը պիտի լան, երբ իրենց մայրը բաժնուի · Եթէ չկատարես, պիտի ամբաստանեմ զքեզ հօրդ քով · Եթէ Աստուծոյ չհնազանդիք, խեղճ պիտի ըլլաք · Մեր ծնողներուն հնազանդ էինք, և մեր վարժապետներուն մտիկ կ'ընէինք · Խոհական տղաք իրենց մեծերուն միշտ կը հնազանդին · Նստող մարդոց նայեցաւ · Գերանը նախ քու աչքէդ հանէ, ու ետքը շիւղը եղբօրդ աչքէն



հանելու նայէ · Խոտերուն արմատները տաքէն կը չորնան · Թեւը չորցաւ · լեզուս չորցաւ · Ծարաւէն կը պապակիմ · Ջուր չըլլալէն ծարուած էինք · Աղքատներուն պէտք է ողորմիլ · Աստուած անոր ողորմեցաւ · Ողորմողը ողորմութիւն պիտի գտնէ · Իմ հանդերձներուս ո՞վ դպաւ · Բարկացաւ ու ներս մտնել չէր ուզեր · Զանոնք իրենց բարեկամ կը համարին · Կարծեց որ մեռած է · Նստելով՝ վաստկած ստակը կը համրէր · Մեռնելու ալ ըլլամ, քենէ պիտի չզատուիմ ։

| | |
|---|---|
| Վաստկիմ, շահիմ | Ամբաստանեմ, ամբաստան |
| Լռեմ, լուռ լինիմ | լինիմ (զքէն) |
| Ըսելիքս, զոր ասելոցն եմ | Խեղճ, Թշուառ |
| Ծածուկ, ի ծածուկ | Բաժնուիմ, մեկնիմ |
| Ճամբայ ելնեմ, մեկնիմ | Մտիկ ընեմ, անսամ |
| Ընեմ (բան մը), վճարեմ | Խոհական, մտավարժ |
| Պարսկաստան, Պարսք | Մեծ, աւագ |
| Սիւրիա, Ասորիք | Տաք, տապ, տօթ |
| Հնդկաստան, Հնդիկք | Զօրնամ, ցամաքիմ, զօրանամ, |
| Նեղուիմ, տառապիմ | ուրանամ |
| Նեղել, նեղել | Ծարուած ըլլամ, պապակիմ |
| Կռիւ կ'ընեմ, կագիմ | Դպչիմ, մերձենամ |
| Ի՞նչպէս, որպէ՞ս | Կարծեմ, համարիմ |
| Երեւամ, Թուիմ | Զատուիմ, մեկնիմ |

## 19· Հրահանգ

Եթէ չյոգնիս, եթէ չարունակ խաղաս, միշտ աղքատ պիտի ըլլաս · Քոյրերս միշտ իրենց վարժապետներուն մտիկ կ'ընէին · շատ կ'աշխատէին, և քիչ կը խաղային · Եթէ Աստուծոյ, ծնողացդ և վարժապետներուդ մտիկ չընես, երբեք երջանիկ պիտի չըլլաս · Այս տղան կու լայ, հաց չունի · Նոյ տապանին պատուհանը բացաւ · Երկու օր անոր քով կեցանք · Լաթերս լուա-

ցի · Երուսաղէմ երթալու կը փութար · Ինչո՞ւ կը հեղգաս , ել· փութա , ելիր Երուսաղէմ · Զանի ծեծելու եկողները մէկդի կեցան անկէ · Երբ ասիկա լսեցին , շատ ուրախացան · Իր արցունքովը անոր ոտուըները կը թրջէր · Երբ գինովութենէն արթնցաւ , ան ատեն զգաց · Դեռ չէ՞ք զգար · Դառն կերպով լացաւ · Երեսդ լուա · Իրենց լաթերը լուացին ։

| | |
|---|---|
| Յոգնիմ , վաստակիմ | Ուրախանամ , խնդամ |
| Շարունակ , ցանգ | Արցունք , արտասուք |
| Միշտ , հանապազ | Թրջեմ , թանամ |
| Շատ (մակ·) , բազում | Գինովութենէ արթննամ , սթափիմ ի գինւոյ |
| Քիչ , սակաւ | Դեռ , տակաւին |
| Ծեծեմ , հարկանեմ | |
| Մէկդի կենամ , 'ի բաց կամ | Զգամ , զգամ , իմանամ |
| | Դառն կերպով , դառնապէս |

## 20· Հրահանգ

Հաց առնելու մոռցան · Կը խոստանաք ու չէք կատարեր · Այս ամէնը հասկցա՞ք · Անոնք չհասկցան · Գերեզմանը վազեց · Խրամէն անդին ցատկեց · Ոտք ելաւ և կը ցատկռտէր · Երբ ծեծին վրայով լսեց , դուրս ցատկեց · Հագած պատմուճանը հանեց · Մարդը հիւընդցաւ և մեռնելու մօտ էր · Ձեր հանդերձները հանեցէք և քուրձեր հագէք · Իր անկողնին մէջ զօրացաւ · Ողբացէք և սգացէք · Հրամայէ որ մինչեւ երեք օր գերեզմանին պահպանութիւն ընեն · Չըլլայ որ աշակերտները գիշերանց գալով զանի գողնան · Ամպն անոնցմէ վերացաւ · Լսողները կը զարմանային անոր խօսքերուն · Գթալով ձեռքը երկնցուց , և անոր դպաւ · Ինծի մի դպչիր · Զենէ ոչ մէկուն ստակին կամ հանդերձին ցանկացայ · Անոնք ալ իրենց տեղերը դարձան · Ագարակ մը ստացաւ · Ես շատ ստակով ստացայ



այս զինուորութիւնը · Երուանդ , ե՞րբ պիտի լուացուիս · Քիչ ատենէն պիտի լուացուիմ · Եթէ մէկ անդամը ցաւ կը կրէ , բոլոր անդամներն անոր հետ կը կրեն · Հռոմայեցիք գան և մեր ազգը վերցունեն · Անոր աչուըները բացուեցան ու կը նստէր · Եթէ կանուխ իմանայինք , դարման մը կ՚ընէինք · Ձեռուըները լուաց · Չջանացողը երբեք հարուստ չըլլար · Աստուած այս աշխարհը դեռ չստեղծած · Դեռ արեւը չելած · Դեռ անոնք իրար չտեսած ։

| | |
|---|---|
| Հասկնամ , իմանամ , 'ի միտ առնում | Չըլլայ որ , գուցէ |
| | Գիշերանց , գիշերի |
| Վազեմ , ընթանամ | Երկնցնեմ , ձգեմ |
| (Խրամէն) անդին , ընդ | Շատ ստակով , բազում գնոց |
| Ցատկեմ , վազեմ | Քիչ ատենէն , ընդ հուպ |
| Ոտք ելլեմ , յոտն կամ | Ցաւ կրեմ , վշտանամ |
| Ցատկռտեմ , վազվազեմ | Հռոմայեցի , Հոռոմ |
| Ծեծ , գան | Վերցունեմ , բառնամ |
| Դուրս վազեմ , դիմեմ | Կանուխ , վաղագոյն , վաղ |
| Մօտ , մերձ 'ի [լինամ | Ըլլամ , առնեմ |
| Պահպանութիւն ընեմ , պահեմ | Դեռ չ՛ . . մինչչեւ , չեւ |

## 21· Հրահանգ

Եղբայրդ ո՞ւր է · Երկու ամիս է քանի որ եղբայրս մեռաւ · Քեզ տեսնելու կարօտէն կը մեռնիմ · Վախէն պռռացին · Գիտէր որ զանի նախանձէն մատնեցին · Ցաւին սաստկութենէն հանդերձները կը պատռէր · Իրենք զիրենք ազատելու աճապարանքէն աւարը թողուցին · Մեր սիրտերուն նեղութենէն կը մեռնինք · Այդ տղաքը սովէն պիտի մեռնին · Ծարաւէն մարած էինք · Խնտալէն կը մարէր · Հայրս երէկ թեւերուս մէջ մեռաւ · Հայրդ մեռա՞ծ է · Մայրս քիչ ատենէն պիտի մեռնի · Կը բաղձամ որ որդիս տեսնեմ , դեռ չմեռած ·

Դուն չմեռած պիտի մեռնիմ. Այդպէս շուտ ո՞ւր կը վազես. Բժիշկ բերելու կ'երթամ. Հայրս մեռնելու մօտ է. Ե՞րբ ծնած ես. Հազար ութ հարիւր տասնին ծնայ. Եթէ ես տարի մը առաջ ծնած ըլլայի, քու ունեցած տարիքդ կ'ըլլայի. Հօրեղբայրս իւր հօրը մեռնելէն ետքը ծնաւ. Պզտիկ քոյրս Մարտի ամսուն ծնաւ. Այս օրերս անոր տղայ մը պիտի ծնանի. Երբ ան խօսելու սկսաւ, ամէնքը լռեցին. Ատոր ինծի ըրածը քեզի պատմելու սկսիմ. Նստէ, եթէ կը հաճիս. Ուր որ տեղ գտնեմ՝ կը նստիմ. Հոն ժամ մը նստայ. Ատոր ըսէ որ նստի. Հոս նստեցէք մինչեւ որ ես գամ. Քու քովդ նստինք. Եթէ նստի, ալ չելլեր. Ինչո՞ւ չես նստիր. Նստելու տեղ չկայ. Տեղ տուր որ այդ Պարոնը նստի. Եկեղեցին ո՞ւր նստած էիր. Քու մօրաքեռդ քով նստած էի. Ինչո՞ւ համար ոտքի վրայ կը կենաք, պարոններ, հիմա նստեցէք։

| | |
|---|---|
| Քանի որ, յորմէ հետէ | Խնտալ, ծաղր |
| Պոռամ, աղաղակել | Շուտ, արագ |
| Կարօտէն, առ անձուկ | Տարիք, տիք |
| Ինքզինք, զանձն, յք. զանձինս | Հաճիմ, հաճոյ լինել (տրկն. ով) |
| Աճապարանք (աճէլէ), փոյթ | Ելլել (ոտք), յառնել |
| Սրտի նեղութիւն, տաղտա- | Քովը, առընթեր |
| պանք | Պարոն, տէր |
| Մարիմ (ծարաւէ, եւայլն) | Ինչո՞ւ համար. զի՞ է զի |
| նուաղիմ [նամ | Ոտքի վրայ կենամ, կամ յոտս |
| Մարիմ (խնդալէն), Նուա— | Հիմա, արդ |

## 22. Հրահանգ

Անոր ոտքը կ'լյնար ու կ'աղաչէր. Անոր վիզն ին-կաւ ու կը համբուրէր զանի. Ծովն ինկան ու խեղ-դուեցան. Անոնց վրայ ինկան ու զանոնք ջարդեցին. Զգուշացիր որ չլյնաս. Եթէ լյնամ, նորէն կ'ելլեմ.



Մովսէս Փարաւոնին տանը մէջ մեծցաւ. Յունաստանի բարէօդ տեղերը մեծցած էր. Մարմինը բերուեցաւ ու հօրը գերեզմանին մէջ թաղուեցաւ. Երբ թագաւորին առջեւը բերուեցանք, մեզի հարցուց. Կ'ուզէր երթալ, բայց արգելեցինք զանի. Զանի թողուցին ու փախան. Ինչո՞ւ չէք թողուր որ այդ մարդը իւր տեղն երթայ. Քեզ բանեցի, և չեմ թողուր. Անմեղ արիւն մի թափեր. Նաւն իր բեռերը պարպեց. Զանի թողուց և գնաց. Իշխաններ և արջառներ կը մորթեմ. Փչելով ողջ ողջ անոնց մորթը հանեցին. Նաւին բոլոր գործի-ները և կարասիները ծովը նետեցին. Իր հանդերձները կը նետէր ու կը փախչէր. Այդ գաւաթները գինով լեցուցէք. Տեղ մը մ'երթաք, մինչեւ որ ձեր աման-ները լեցուին. Քեզի ըսելիք մը ունիմ. Ինծի ի՞նչ ըսել կ'ուզես. Բան մը չեմ ըսեր. Միայն ըսէ. Ետքը քեզի կ'ըսեմ. Քեզի պատմածներէս հօրս բան մը չըսես. Անոր մի ըսեր որ անկողինն եմ. Քեզի ի՞նչ ըսաւ. Ձեզի չըսի՞. Դեռ ինծի չըսիր. Կ'ուզե՞ս որ քեզի ըսեմ. Պէտք չէ որ մարդ ամէն լսածն ըսէ. Ասիկա ինծի ականջէս ըսաւ. Քեզի ըսածն ի՞նչ է. Անոր ճշմարիտը միայն ըսի. Թող ուզածն ըսէ. Կը զղջամ որ ատիկա ըսի. Յօ-ժարութեամբ կ'ըսէի, եթէ գիտնայի. Եթէ տարբեր բան մը ըսէի, սուտ կը խօսէի. Երէկ եղբօրդ ըսի որ գայ զիս տեսնէ. Շատ անգամ կ'ըսէր որ բարեկամին մահուանը վրայ կը ցաւի։

| | |
|---|---|
| Ոտքը (լյնալ), (անկանել | Ելլեմ (ոտք ել.), յառնել, |
| առ ոտս [illegible] | կանգնել |
| Վիզն լյնալ, անկանել զօս— | Մեծնամ, աճանել |
| Խղդուիլ (ծովը), հեղձնուլ) | Յունաստան, Յունաց աշխարհ |
| Ջարդեմ, կոտորել | Բարէօդ, հովասուն |
| Զգուշանամ, զգոյշ լինել | Տեղ, վայր |
| Նորէն, միւսանգամ | Թափեմ, հեղում |

| | |
|---|---|
| Պարպեմ, բօշըէմ | Ականջէ, յունկանէ |
| Մորթը հանեմ, սօյըմ | Միայն (մկ.), եալըն, միայն |
| Ողջ ողջ, կէնտրանայն | (Անկողինը) ըլլալ, անկեալ ընել |
| Գործիք, կազմած, գործէր | Յօժարութեամբ, մօրօքեար |
| Տեղ մը, ուրէք | Տարբեր, այլալ |
| Նոքը, տղա | Յաւիմ, ցաւ է (տրականով) |

## 23. Հրահանգ

Կարդացածդ ի՞նչ է․ Նոր գիրք մը կը կարդամ․ Նոյնը մենք ալ կը կարդանք․ Հայրս ատենօք Յունաց հեղինակները կը կարդար, հիմա ա՛լ չկարդար զանոնք․ Այսօր Հերոդոտոսին պատմութիւնը կարդացի․ Հայրս երէկ Թուկիդիտէսինը կը կարդար․ Հիմա պիտի կարդամ գեղեցիկ գիրք մը զոր մէկը ինծի փոխ տուած է․ Աւելի ստէպ կը կարդայինք, եթէ աւելի պարապ ժամանակ ունենայինք․ Ուրեմն կարդալը կը սիրէք․ Կ՚ուզե՞ս որ քեզի այս նամակը կարդամ․ Աղէկ չես կարդար․ Ի՞նչպէս պէտք է կարդալ այս բառը․ Կը բաղձայ քեզի պէս կարդալ գիտնալ․ Կարդացածներդ միտքդ թող գան․ Տղաքս գրեթէ բնաւ չեն կարդար․ Կարդալ չեն ախորժիր․ Շատ անգամ կը կրկնեմ անոնց թէ պէտք չէ կարդալէն ծուլնալ, որ սիրտն ու միտքը միանգամայն կը շտկէ։

Այդ աթոռն իր տեղը դիր․ Գլխարկս ո՞ւր դրիր․ Զանի սեղանին վրայ դրի․ Հանդերձս առտուանց սնտուկը դրի․ Եթէ ուրիշ տեղ դնէի, չէի կրնար իրիկուան զայն գտնել․ Ո՞ւր կ՚ուզես որ լաթերդ դնեմ․ Դիր ուր որ կը հաճիս․ Կը կարծես թէ անկողնին վրա՞յ դրի․ Միտքը դրաւ երթալ․ Գլխարկդ գլուխդ դիր․ Դնենք թէ հոն է․ Զանի գլխուն վերեւը բարձի վրայ դնէ․ Զանի բանտ դրին․ Նոր գերեզմանի մէջ դրուեցաւ, որ քարի մէջ փորուած էր։



| | |
|---|---|
| Ատենօք, երբեմն | սել), յեղյեղում |
| Հեղինակ (գրոց), մատենագիր | Ծուլնալ, ծուլալ |
| Աւելի ստէպ, յաճախագոյն | Շտկեմ, յարդարեմ |
| եւս [բաղդա | Առտուանց, այգուն |
| Պարապ ժամանակ, ժամ պա- | Ուրիշ տեղ, այլ ուրեք [նով) |
| Ուրեմն, ապա | Կրնալ, կարն լինել (տրակա- |
| Կարդալը, ընթերցուած | Իրիկունը, յերեկոյին |
| Աղէկ (մակ.), բարւոք | Կարծեմ, համարեմ |
| Միտքը գալ, յուշ լինել | Միտքը դնել, դնել ի մտի |
| Կրկնեմ (շատ անգամ ը- | Գլխու վերեւ, անսարք |

## 24. Հրահանգ

Ատիկա ինծի համար առնեմ․ Ո՞րչափ բան կ՚ուզես առնել․ Կէսը կ՚առնեմ․ Եղբայրներս մնացածները թող առնեն․ Կ՚ուզե՞ս կանկ առնել․ Ուզածդ առ․ Ի՞նչ կ՚ուզես որ առնեմ․ Աղախինը թող տղան գիրկն առնէ․ Այդ դիպակէն (ճանփէս) կ՚առնէինք, եթէ եղբայրս ամէնն առած չըլլար․ Այս ամէնն հասկցա՞ր․ Ինծի կ՚երեւայ որ բոլոր աշակերտներս այս պատուէրը չհասկցան․ Զանի անոնց ձեռքէն առի․ Նաւերն առին ու գացին․ Ինծի ձի մը բերէք․ Երկու մամ կը վառէր․ մէկը՝ գլխուն վերեւը, միւսը՝ ոտքին դին․ Ի՞նչ կ՚ըլլես․ Ինծի պատուիրածդ կ՚ընեմ․ Կ՚ընենք՝ ինչ որ պարտական ենք ընել․ Այդ տղաք բան մը չեն ըներ․ Ինչո՞ւ համար բան մը չեն ըներ․ Քանզի դուք ալ բան մը չէք ըներ․ Ի՞նչ կ՚ընէիր իմ ներս մտած ատենս․ Կրակ կը վառէի․ Իրիկունն ի՞նչ կ՚ընէք․ Քու առտուն ըրածդ ես իրիկունը պիտի ընեմ․ Ուզածդ ըրէ․ Միշտ պիտի ընենք ինչ որ պարտական ենք․ Մէկու մը գէշութիւն չըներ․ Եթէ քեզի պէս հարուստ ըլլայի, շատ բան կ՚ընէի․ Այս մարդիկն ուրիշ բան չեն ըներ, բայց ուտել և խմել․ Զանի ինծի բարեկամ ը-

րի ։ Դատաւորներն անոր խրատունք չըրին . Այս տղան իր հօրը կամքը կ՚ընէ ։

| | |
|---|---|
| Մնացած , մնացորդ | Ոտքին դին , [illegible] |
| Կանկ առնել , դադար առնում | Պարտական եմ , պարտիմ |
| Հասկնամ , 'ի միտ առնում | Վառեմ , լուցանեմ |
| Բերեմ , առնում . բերէք ին– | Խրիկունը , յերեկոյին |
| ծի , առէք առ ինձ | Առտուն , այգուն |
| Գլխուն վերեւը , [illegible] | Գէշութիւն , չար |

## 25· Հրահանգ

Հիմա քեզ կը ճանչնամ . Դու ալ զիս կը ճանչնաս . Հոս մէկը չեմ ճանչնար . Եղբայրդ զիս աղէկ կը ճանչնայ . Հոս շատերը կը ճանչնամ . Հոս շատ ճանչուորներ ունինք . Քոյրդ չէի ճանչնար . Հօրեղբայրդ ինծի շատ ծանօթ է . Ալ ձեզ պիտի չճանչնայ . Հարցուցէք անոր թէ զիս դեռ կը ճանչնա՞յ . Կ՚ուզեն որ այն մարդը ճանչնամ . Ես զանի դեռ չճանչցած՝ ինծի եկաւ . Ինքզինք անոր չճանչցուց . Քեզ քու ճանչուորներէդ մէկուն հետ տեսայ , որուն հետ ես ծանօթ չէի . Զանի ձայնէն ճանչցայ . Յանցանքդ ճանչցիր ։

Ո՞ւր կ՚երթաս . Տուն կ՚երթամ . Եղբայրս դպրոց կ՚երթայ . Առաւօտուն ո՞ւր կ՚երթայիր , երբ ես ներս մտայ . Մեր պարտէզը կ՚երթայի . Առտուներն հո՞ն կ՚երթաք . Յօժարութեամբ կ՚երթայի պտըտելու , եթէ եղբայրս հոս ըլլար . Եթէ կը հաճիս , ես ալ քեզի հետ գամ . Մէկտեղ երթանք . Այնպէս շուտ մի քալեր , կամաց գնա . Այդ տղաքն ո՞ւր կ՚երթան . Մեր գացած ճամբէն կ՚երթան . Ո՞ւր է քոյրդ . Հայրը տեսնելու գնաց , վաղը պիտի դառնայ . Զանի դիմաւորենք . Վաղը խնջոյքը երթալ կ՚ուզե՞ս . Հայրս չթողուր որ հոն երթամ . Քիչ ատենէն հոն կ՚երթամ . Քիչ մ՚ալ կեցիր որ մէկտեղ երթանք . Պէտք է որ երթամ . Երթալ



չեն ուզեր . Այդ մարդիկն ի՞նչ բանի կ՚երթան . Ջուրի կ՚երթան ։

| | |
|---|---|
| Աղէկ , քաջ | Պտըտիլ , ճեմել |
| Ճանչուոր , ծանօթ | Կամաց , մեղմով |
| Ինքզինք ճանչցնել , տալ | Դիմաւորել , ելանել ընդ առաջ |
| ծանօթս | Թողում , թոյլ տամ |
| Ո՞ւր (շարժում) , յո՞ | Ճամբէն երթալ , երթալ ճա– |
| Յօժարութեամբ , մտադիւր | նապարհ |
| Առաւօտուն . ընդ առաւօտն | Բան մը բերելու երթալ , եր– |
| Առտուները , ընդ առաւօտս | թալ զ (բացառականով) |

## 26· Հրահանգ

Այդ տղան ո՞ւր կը տանիք . Զանի դպրոց կը տանինք . Կ՚ուզէ՞ք զանի տուն տանիլ . Մեր քոյրերը թատրոն կը տանինք . Ո՞ւր կ՚ուզես որ քեզ տանիմ . Զիս ձեր պարտէզը տար . Յօժարութեամբ ձեզ հոն կը տանիմ . Քեզ կը տանէի , եթէ պարապ ժամանակ ունենայի . Զաւիէն աւելի կ՚ուշանանք , եթէ ձեզ հոն տանինք . Ե՞րբ պիտի գաս եղբայրդ հոն տանելու . Գիրքս ո՞ւր տարիք . Զգիտեմ ուր տարի . Տանելը չտեսանք . Այդ պատանին հազարապետին տար . Սպասաւորներուն պատուիրեց որ զանի ներս սրահը տանին . Այս պտուղներէն քիչ մը ուտենք . Հիմա չեմ ուտեր , քանզի անօթի չեմ . Երբեմն շատ բան կ՚ուտէինք , հիմա քիչ կ՚ուտենք . Երբ այն հացէն կերաւ , և գինիէն խմեց , հոգի առաւ ու սկսաւ խօսիլ . Ինչո՞ւ չէք ուտեր , պարոններ , և չէք խմեր . Կերէք և խմեցէք . Բան մը չը կերան և չխմեցին . Ո՞վ է որ ոչխար ունի և անոր կաթէն չխմեր , կամ միսը չուտեր . Կան անասուններ , որոնց միսը չուտուիր . բայց եթէ մէկուն սիրտն առնէր և անոնց մսէն ուտէր , անոր վնաս մը չէր ըլլար . Այդ դրախտին մէջ եղած բոլոր ծառերէն կերէք , բայց

այս ծառէն մի ուտէք · Հոս խմելու բան չկայ · Ահա գինի · խմեցէք , եթէ կը հաճիք · Ես բնաւ գինի չեմ խմեր · Միայն ջուր կը խմենք · Թագաւորին կենացը խմենք · Երէկ գաւաթ մը գինի խմեցի , այլ այսօր չեմ խմեր · Մէկտեղ խմենք · Դուն բաւական կերար , և ան չափէն աւելի խմեց · Մեր խմածը բաւական է · Երէկ մեր խմած գինին այնպէս աղէկ էր , որ մենէ ամէն մէկը մէյմէկ շիշ խմեց ։

Այսպէս ուշ ուստի՞ կու գաս · Պտըտելէ կու գամ · Առտուն ուստի՞ կու գայիր , երբ քեզի հանդիպեցայ · Ամարանոցէն կու գայի · Երէկ չափազանց ուշ եկայ , բայց այս առտու շատ կանուխ եկայ · Շուտ կուգանք , եթէ ժամանակ ըլլայ · Կ'ուզէ որ ժամն ութին գանք · Յարմար ժամանակ եկաք · Ձեզի ըսելիք մը ունիմ · Փիչ ատենէն կու գա՞յ · Եկէք , պարոններ · Ուղիղ եկաւ և քեզ ուզեց · Բարեկամ , հոս եկուր ։

| | |
|---|---|
| Պտուղ, միրգ | Հոգի առնուլ, ոգի առնուլ, հանգչուրել |
| Պարապ ժամանակ, ժամ պարապոյ | Շուտ (ժամ մը, առաջ), վաղ, ընդհուպ |
| (Մէկուն) կենացը, յուբէ– | Ժամը ութին, յութներորդ ժամու |
| Բաւական, շատ | |
| Աղէկ, ազնիւ | Յարմար ժամանակ, դիպող ժամ |
| Մէյմէկ, մին մի | |
| Ուշ, անագան | |
| Ջափազանց, չափէն աւելի, կարի | Ուզել (պահանջել), խնդրել, հայցել |

## 27· Հրաման

Ձեռքդ ի՞նչ ունիս · Ձեռքս գիրք մը ունիմ · Կը կարծէի թէ եղբօրս կորսնցուցած մատնին ունի · Առ , ահա դահեկան մը դուռը կեցող աղքատին համար · Սորվածդ աղէկ միտքդ պահէ · Այդ տունն ո՞վ վար–



## 2.

## ՅՈՎՍԷՓ ՊԵՏԱՓՐԷՍԻ ՏԱՆ ՄԷՋ

Իսմայելացի վաճառականներն Յովսէփը Եգիպտոս տանելով Փարաւոն Թագաւորին սպարապետին Պետափրէսի ծախեցին ։ Յովսէփ սիրելի եղաւ իւր տիրոջը որ զանի գործակալ դրաւ իւր բոլոր տանը և բոլոր ստացուածներուն վրայ ։ Բայց որովհետեւ դիւրահաւան էր մարդը , մտիկ ընելով իւր կնոջը խօսքին որ զրպարտութիւն կ'ընէր Յովսէփին վրայ՝ իր հաւատարիմ ծառան բանտ դրաւ ։

| | |
|---|---|
| Տանել, ածել | Ստացուած, ինչք |
| Սպարապետ, իշխան զօրաց | Բայց որովհետեւ, և զի |
| Սիրելի ըլլալ, գտանել շնորհս առաջի | Խօսք, բան |
| | Զրպարտութիւն ընել, զըր-պարտել |
| Գնել, կացուցանել | |
| Գործակալ, հազարապետ | Բանտ դնել, արկանել ի բանտ, կամ, դնել ի բանտի |
| Բոլոր, ամենայն | |

---

## 3.

## ԹԱԳԱՒՈՐԻՆ , ՄԱՏՌՈՒԱԿԻՆ ԵՒ ՄԱՏԱԿԱՐԱՐԻՆ ԵՐԱԶՆԵՐԸ

Փարաւոնին երկու պաշտօնեաները , մատռուակն (ֆաղէնճիեար) ու մատակարարը (վէքիլհարճ) , Յովսէփին եղած բանտն էին ։ Երկուքն ալ մէկ գիշերուան մէջ երազ տեսնելով աղաչեցին Յովսէփին որ երազն իրենց մեկնէ ։ « Կը տեսնէի » , ըսաւ առաջինը , « որթ (ասմա) մը որ երեք ճիւղ ունէր խաղողի ողկոյզներով ծանրացած , զորոնք առնելով կը ճմլէի Փարաւոնին գաւաթին մէջ և անոր կու տայի » ։ « Երեք օրէն » , ըսաւ Յովսէփ,

«Քու պաշտօնիդ մէջ պիտի հաստատուիս, և այն ատեն յիշէ զիս, և աղաչէ թագաւորին որ զիս ասկէ հանէ, վասն զի անիրաւ տեղը կը կենամ այս բանտին մէջ»։ Մատակարարն ալ իր երազը պատմելով ըսաւ. «Գլխուս վրայ երեք կողով կը կրէի, և ամենէն վրայի կողովին մէջ կային երեք որաներ որոնք երկինքին թռչունները կ'ուտէին»։ Յովսէփ անոր ըսաւ. «Երեք օրէն Փարաւոն քու գլուխդ կտրել պիտի տայ ու փայտէ կախել տայ, և հոն երկնից թռչուններուն կերակուր պիտի ըլլաս»։ Ինչպէս որ Յովսէփ գուշակեց՝ այնպէս եղաւ. բայց մատռուակն իր պաշտօնին մէջ հաստատուելով՝ խոստացածը մոռցաւ։

| | |
|---|---|
| Եղած բանը, 'ի բանդի անդ ուր էր | Կենամ, կամ |
| | Կրել, տանել |
| Ճիւղ, բարունակ | Ամենէն վրայի, որ 'ի վերոյ |
| Գաւաթ, բաժակ | [ցանել տան ղայը էր |
| Տալ (հրամցունել), մատուցա- | Կային, էին |
| Պաշտօն, պաշտօն, պաշտօնատուն | Կտրել, հատանել |
| Թագաւոր, արքայ | Փայտէ կախել, կախել զփայտէ |
| Ասկէ, աստի | Կերակուր (թռչնոց), կեր |
| Անիրաւ տեղը, յանիրաւի | Խոստացածը, զոր խոստացան |

---

## 4.

## ՓԱՐԱՒՈՆԻ ԵՐԱԶԸ ՈՒ ՅՈՎՍԷՓԱՅ ԲԱՐՁՐԱՆԱԼԸ

Երկու տարի ետքը նոյն իսկ Փարաւոն երկու երազ տեսաւ. Անոր կ'երեւէր թէ կը կենար Նեղոսի եզերքը, որմէ կ'ելլէին եօթը գէր կովեր, որոնք կը սկսէին ջուրին քովն արածուիլ. ետքը նոյն գետէն կ'ելլէին ուրիշ եօթը նիհար կովեր որոնք առջինները կը կլլէին։ Երկրորդ երազին մէջ թագաւորը կը տեսնէր եօթը մէկ կոթէ ելած լեցուն հասկեր, և նոյնպէս մէկ կոթէ ելած



ուրիշ եօթը պարապ հասկեր որոնք լեցուն հասկերը կը կլլէին։ Թագաւորն արթննալուն պէս վախնալով՝ Եգիպտացւոց բոլոր իղձերուն (ֆալճը) հարցուց. բայց ի զուր։ Այն ատեն մատռուակն Յովսէփը յիշելով՝ անոր համար խօսեցաւ թագաւորին, որ անմիջապէս զանի իր առջեւը բերել տուաւ որ երազը մեկնէ։ Յովսէփ Փարաւոնին երազները լսելով՝ անոր ըսաւ. «Առատութեան եօթը տարիներ պիտի ըլլան, և ետքը պակասութիւն պիտի ըլլայ եօթը տարի, որոնք իբրեւ թէ առջի առատութեան տարիները պիտի կլլեն։ Թող, ըսաւ, թագաւորը բոլոր Եգիպտոսի երկրին վրայ խելացի մարդ մը դնէ, որ առատութեան տարիներուն հունձքին հինգերորդ մասը պահէ սովի ատենին համար»։ Այս խրատը Փարաւոնին և ասոր բոլոր մեծամեծներուն հաճելի երեւցաւ։ «Ո՞ւր գտնեմ», ըսաւ Փարաւոն, «ասկէ աւելի խելացի և հնարագէտ մէկը»։ և յետոյ Յովսէփին դառնալով ըսաւ. «Ահա քեզ այսօր բոլոր Եգիպտացւոց երկրին վրայ դրի։» Ետքը մատնին հանելով Յովսէփին մատը դրաւ, անոր քթանէ կապայ հագցուց, վիզը մանեակ մը կախեց, և զանի իւր կառքերուն մէկը հանելով՝ քարոզ (Թէլլալ) կանչել տուաւ թէ բոլոր ժողովուրդը Յովսէփին առջին ծնկան վրայ գայ, և գիտնայ թէ անիկա Եգիպտացւոց բոլոր երկրին վրայ իշխան դրուեցաւ։ Այնուհետեւ Փարաւոն Յովսէփին որ երեսուն տարուան էր՝ Պետափրէսին, Արեգ քաղքին քուրմին, աղջիկն Ասանէթը կին տուաւ, որմէ անոր երկու որդիք եղան, Մանասէ և Եփրեմ։

| | |
|---|---|
| Տարի, ամ | Նիհար, վտիտ |
| Նոյն իսկ, ինքն | Կլլել, կլանել |
| Եզերքը, առ եզերբ | Կոթ, ցօղուն |
| Կով, երինջ | Լեցուն, ատոք |
| Ջուրին քով, 'ի խաղս գետոյն | Ուրիշ, այլ եւս |

| | |
|---|---|
| Պարապ, ունայն | Պահել, ունել և պահպանել |
| Վախնալ, ահի հարկանել | Հաճելի, հաճոյ |
| Արթննալ, զարթնուլ | Մեծամեծներ, աւագք |
| Անմիջապէս, անդէն | Հնարագէտ, հանճարեղ |
| Պակասութիւն, նուաղութիւն | Դնել (մատը), արկանել (է մատն) |
| Խելացի, իմաստուն | Քթանէ, քթանեղէն |
| Հինգերորդ, հնգերորդ | Վիզ, պարանոց |

Ծնկան վրայ գալ, կրկնել ծունր

---

5.

ՅԱԿՈԲ ԻՒՐ ՈՐԴԻՔԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ՂՐԿԷ

Յովսէփին ըսածին պէս, առատութեան եօթը տարիներն եկան, և անկէ ետքը ուրիշ եօթը տարի պակասութեան։ Ան ատեն սով եղաւ բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ և բոլոր աշխարհի վրայ. և ամէն դիերէ Եգիպտոս կու գային ցորեն գնելու, զոր Յովսէփ ժողվելով պահած էր շտեմարաններու մէջ։ Յակոբ իմանալով թէ Եգիպտոս ցորեն կայ՝ ղրկեց հոն իւր որդիքը որոնք տասն էին, քանզի պզտիկը Բենիամին իր քով պահեց։ Յովսէփ ճանչցաւ իր եղբայրները՝ զինք անոնց առանց ճանչցնելու, և ձեւացնելով թէ լրտես են՝ անոնց ըսաւ. «Դուք Եգիպտոսի ելլելու և մտնելու տեղերը դիտելու եկած էք»։ «Ոչ, տէր,» ըսին եղբայրները, այլ մենք ցորեն գնելու եկանք։ Տասուերկու եղբարք ենք, մէկ մարդու որդիք, որ Քանանացւոց երկիրը կը բնակի։ Մենէ ամենէն պզտիկը մեր հօրը քով է, մէկն ալ մէջտեղ չէ»։ Յովսէփ անոնց ըսաւ. «Ձեզ ասկէ չեմ թողուր, մինչեւ որ ձեր պզտիկ եղբայրը գայ. ղրկեցէք ձենէ մէկը որ զանի հոս բերէ»։ Աս ըսելով զանոնք բանտ դրաւ. ետքը երրորդ օրը զանոնք անկէ հանելով ըսաւ. «Ձենէ մէկը հոս իմ



քովս պատանդ մնայ, միւսները ցորենով մէկտեղ երթան, և երբ կը դառնաք, ձեր պզտիկ եղբայրը բերէք, որպէս զի գիտնամ թէ ձեր խօսքերը ճշմարիտ են»։ Անոնք իրարու կ'ըսէին. «Իրաւամբ կը կրենք այս նեղութիւնները, վասն զի վնասեցինք անոր, և չողորմեցանք իրեն, երբ մեզի կ'աղաչէր». և չէին գիտեր թէ Յովսէփ իրենց խօսքը կը հասկնար, վասն զի անիկա անոնց հետ թարգմանով կը խօսէր։ Բայց Յովսէփ քիչ մը ատեն առանձնանալով լացաւ։ Ետքը նորէն գալով հրամայեց ծառաներուն որ Շմաւոնը վար դնեն, և անոնց քուրձերը (ջուալ) ցորենով լեցնելով՝ ամէն մէկուն ստակն անոր քուրձին բերանը դնեն, և յետոյ զանոնք արձկեց։ Անոնք Քանանացւոց երկիրն հասնելով՝ իրենց բոլոր պատահածներն իրենց հօրը պատմեցին, և Յակոբ ըսաւ անոնց. «Զիս անզաւակ ըրիք. Շմաւոն գերի է, Յովսէփ չկայ, Բենիամին ալ ինէ առնել կ'ուզէք. ոչ այդպէս, չեմ ուզեր թողուլ որ անիկա ձեզի հետ երթայ»։

| | |
|---|---|
| Ըսածին պէս, որպէս ասացն | Ամենէն պզտիկը, կրտսերն, |
| (Բոլոր աշխարհի) վրայ, ընդ | կրտսերագոյնն |
| (ամենայն) | Մէջտեղ, ի մէջ |
| Ժողվել, համբարել | Ետքը, ապա |
| Կայ, գոյ | Իրաւամբ, արդարեւ |
| (Իր քով) պահեց, առնէր | Նեղութիւն, վիշտ |
| (առ իւր) | Վնասել, մեղանչեմ |
| Պզտիկ, կրտսեր | Հասկնալ, իմանալ |
| Զինք ճանչցունել, ծանօթս | Քիչ մը ատեն, վայր մի |
| տալ | Նորէն, միւսանգամ |
| Ձեւացունել (կեղծել), | Վար դնել, առնել |
| պատճառել | Պատահել, դիպել |
| Ելլելու և մտնելու տեղերը, | Անզաւակ, անորդի |
| ելս և մուտս | Չեմ ուզեր, չառնում յանձն |

**Ե.**

## ՅԱԿՈԲԻՆ ՈՐԴԻՔԸ ԵԳԻՊՏՈՍ ԿԸ ԴԱՌՆԱՆ

Երբ սովը բոլոր երկրի վրայ սաստկացաւ, Յակոբ ըսաւ իր որդիներուն. «Նորէն Եգիպտոս գացէք»։ Յուդա ըսաւ իր հօրը. «Եթէ կ'ուզես որ երթանք, Բենիամինը մեզի հետ ղրկէ. ես երաշխաւոր կ'ըլլամ տղուն, զանի ինէ ուզէ»։ «Եթէ այնպէս է,» ըսաւ Յակոբ, «ըրէք ինչպէս որ ձեզի հաճոյ է, բայց երկրիս ամենէն ընտիր պտուղներէն առէք որ ընծայ տաք տիրող մարդուն. առջինին կրկինն ալ ստակ առէք. ձեր քուրձերուն մէջ գտնուածն ալ տարէք, չըլլայ որ դաւաճանութիւն մ'ըլլայ»։ Եւ թողուց որ երթան՝ յանձնելով զանոնք Աստուծոյ խնամքին։ Յովսէփ լսեց որ եղբայրներն եկան, և թէ Բենիամին ալ անոնց հետ է, հրաման տուաւ իր գործակալին որ ճաշ պատրաստէ։ Երբ եղբայրներն անոր ներկայացան, իրենց ընծայներն անոր տուին, և մինչեւ գետինը ծռելով բարեւ տուին։ Յովսէփ ալ անոնց մեծ քաղցրութեամբ բարեւ տուաւ, և հարցուց անոնց. Ո՞ղջ է ձեր ծերունի հայրը որուն համար կ'ըսէիք թէ Քանանացւոց երկիրն է»։ Ետքը նայելով Բենիամինին որ իր մէկ մօրէ եղբայրն էր՝ ըսաւ. «Ա՞յդ է ձեր պզտիկ եղբայրը. Աստուած քեզի ողորմի, տղաս, և քեզ պահէ», և փութալով դուրս ելաւ, քանզի սիրտն ելաւ, և ալ չէր դիմանար արցունքը բռնելու։ Երեսը լուալէն ետքը դարձեալ եկաւ՝ ինքզինք բռնելով. և երբ կերակուրը պատրաստուեցաւ, իր եղբայրներուն հետ սեղան նստաւ։

| | |
|---|---|
| Նորէն, անդրէն | Ամենէն ընտիրները, զըն–տիր ընտիրս |
| Ուզել, խնդրել | Ալ, և, եւս |
| Տիրող, որ տիրէ | |



| | |
|---|---|
| Առջինին կրկինը, կրկին քան զառաջինն | Տղաս, որդեակ |
| Գտնուածը, որ գտաւ | Փութալ, աճապարել |
| Չըլլայ որ, գուցէ | (Սիրտը) ելլել, փղձկել (սրտի) |
| Դաւաճանութիւն, դաւ | Դիմանալ, հանդուրժել |
| Յանձնել, յանձն առնել | Բռնել, առնել |
| Լսեց, լու եղեւ (տրականով) | Արցունք, արտասուք |
| Ներկայանալ, յանդիման լինել | Դարձեալ, միւսանգամ |
| Ծռել, խոնարհել | Ինքզինք բռնել, բռնան առնել անձն |
| Բարեւ տալ, տալ ողջոյն | Պատրաստուիլ, պատրաստ լինել |
| Մէկ մօրէ, համամայր | |

---

**Զ.**

## ՅՈՎՍԷՓ ԶԻՆՔ ԿԸ ՃԱՆՉՑՆԷ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ

Կերակուրէն ետքը պատուիրեց Յովսէփ իր գործակալին որ հիւրերուն քուրձերը ցորենով լեցունէ, անոնց բերած ստակն ալ հոն դնէ, իր գաւաթն ալ Բենիամինին քուրձին մէջ։ Անոնք հազիւ թէ քաղքէն դուրս ելած էին, գործակալն անոնց վրայ հասնելով՝ արգելեց զանոնք, և իր տիրոջը գաւաթը կ'ուզէր անոնցմէ։ Քուրձերը բացուեցան, և գաւաթը Բենիամինին քուրձին մէջ գտնուեցաւ։ Անատեն անոնք զարմանալով և զարհուրելով՝ իրենց լաթերը պատռելով քաղաք դարձան։ Յովսէփ անոնց ըսաւ. «Ինչո՞ւ համար գաւաթս գողցաք. չէ՞ք գիտեր որ չկայ մէկը որ կորուստ գիտնայ ինծի պէս։ Հիմա գաւաթը գողցողը ինծի ծառայ ըլլայ, և դուք խաղաղութեամբ ձեր հօրը գացէք»։ Անատեն Յուդա պատասխան տալով ըսաւ. «Քու ծառադ, մեր հայրը, պիտի մեռնի, եթէ այդ պատանին անոր չդարձունենք, քանզի ես մինչեւ ցմահ

երաշխաւոր եղած եմ անոր համար, ես ծառայ ըլլամ քեզ տիրոջս, և այդ պատանին թող երթայ իր եղբայրներուն հետ։ Յովսէփ այլ եւս չկրնալով համբերել, բոլոր Եգիպտացիները դուրս հանել տուաւ, և մեծ ձայնիւ լալով՝ ըսաւ իր եղբայրներուն. «Ես Յովսէփն եմ. հայրս դեռ ո՞ղջ է»։ Եւ որովհետեւ անոնք վախէն պաղած և թմրած էին, կրկին ըսաւ անոնց քաղցրութեամբ. «Մօտ եկէք ինծի. ես Յովսէփն եմ, ձեր եղբայրը, զոր դուք ծախեցիք. բայց մի վախնաք. Աստուած զիս Եգիպտոս ղրկեց որ ձեզ կերակրեմ։ Գացէք հօրս և պատմեցէք անոր ձեր տեսածը, և աճապարեցէք ինծի գալու։ Գեսեմ պիտի բնակիք, և ես ձեզ կը կերակրեմ, վասն զի այդ սովը տակաւին հինգ տարի պիտի տեւէ»։ Եւ համբուրեց Բենիամինի վիզն իյնալով՝ համբուրեց զանի լալով. նոյնպէս միւս եղբայրներն ալ մեծ գորովով. և անոնք հաւատացին անոր։

Զինք ճանչցունել, տալ ծա– նօթս
Պատուիրել, պատուէր տալ
Հազիւ թէ, այն ինչ
Քաղքէն դուրս, ըստ քաղաքն
Զարհուրել, զահի հարկանել
Կորուստ գտնել, հմայել
Գողցողը, որ գողացաւն
Պատանի, պատանեակ
Մինչեւ ցմահ, կենօք կայ
Համբերել, ծոյծ առնել
Մեծ ձայնիւ, մեծաձայն
Լալ, յարտասուս հարկանել
Դեռ, տակաւին
Պաղած և թմրած, պաղեալ և ընդարմացեալ
Կրկին ըսաւ, յաւել ասել
Մօտ գալ, մատչել
Ձեր տեսածը, զոր տեսէքդ
Աճապարել, փութալ
Վիզն իյնալ, անկանել զպարանոցաւ
Նոյնպէս, և
Միւս եղբայրներն ալ, զայլ եւս յեղբարց իւրոց
Գորով, խանդաղատանք

---



Ց.

## ՅԱԿՈԲ ԵԳԻՊՏՈՍ ԲՆԱԿԵԼՈՒ ԿՈՒ ԳԱՅ

Յովսէփ հրաման տուաւ որ իր եղբայրներէն ամէն մէկուն համար երկերկու հանդերձ շինուի. իսկ Բենիամինի համար հինգ, շատ գեղեցիկ հանդերձներ շինել տուաւ, և երեքհարիւր արծաթի դահեկան տուաւ անոր։ Նոյնչափ դահեկան և ուրիշ շատ բան ղրկեց իր հօրը։ Նոյն իսկ թագաւորը կառքեր տանել տուաւ որ զՅակոբ բերեն իրեններովն ու բոլոր ունեցածովը։ Յակոբ իր որդւոցը բերնէն բոլոր եղած դէպքերը լսելով, թագաւորին կառքերն ու Յովսէփի ընծաներն ալ տեսնելով՝ գոչեց. «Այսուհետեւ բանի մը չեմ փափաքիր, վասն զի որդիս Յովսէփ կենդանի է. դեռ չմեռած երթամ զանի տեսնելու»։ Ճամբայ ելաւ Յակոբ իր ընտանիքովը և բոլոր կարասիներովը, որ Եգիպտոս երթայ։ Յովսէփ դիմաւորեց իր հայրը, ու անոր վիզն իյնալով, արցունքովը կը թրջէր զանի։ Յետոյ զանի ներկայացուց Փարաւոնին, որ հարցուց Յակոբին թէ քանի՛ տարուան էր. ան ալ պատասխան տալով ըսաւ. «Երկրի վրայ իմ պանդխտութեանս տարիներուն թիւը հարիւր և երեսուն է. իմ հայրերուս տարիներուն թիւէն քիչ, և ցաւով ու հեծութեամբ լեցուն»։ Յովսէփ Փարաւոնին հրամանաւը Գեսեմի, բոլոր Եգիպտացւոց երկրին մէջ ամենէն պտղաբեր երկիրն, իր հօրը և եղբայրներուն տուաւ իբրեւ ստացուած։

Շինել, առնել (հանդերձ), յօրինել
Ամէն մէկուն, մի մի
Շատ, յոյժ
Նոյն իսկ, ինքնին
Ունեցածը, աղխ
Եղած դէպքերը, զոր ինչ որ անցին
Փափաքել, ցանկալ
Դեռ չմեռած, մինչչեւ մեռ– եալ իցեմ
[Նաւաւորք
Ճամբայ ելլել, ելանել ի ճա–

Կարասի, կաց և կարասիք
Դիմաւորել, ելանել ընդ առաջ
Թրջել, թանալ
Ներկայացունել, հանել առաջի
Ստացուած, ժառանգեալն
Ամենէն պտղաբեր, պտղաբեր յոյժ

## 9.

## ՅԱԿՈԲ ԻՐ ՈՐԴԻՆԵՐԸ Կ'ՕՐՀՆԷ ՈՒ ԿԸ ՄԵՌՆԻ

Յակոբ Եգիպտոս տասնուեօթը տարի ալ ապրեցաւ։ Ան ատեն տեսնելով որ պիտի մեռնէր՝ երդում ընել տուաւ Յովսէփին որ զանի իր հայրերուն գերեզմանը թաղէ. ետքը օրհնեց Յովսէփին երկու որդիքը Եփրեմ և Մանասէ։ Յետոյ իր բոլոր որդիքն անկողնին բոլորտիքը կանչելով՝ անոնց ամէն մէկուն խօսեցաւ և օրհնեց զանոնք։ Ռուբէն որդին յանդիմանեց անոր գործած մէկ մեծ յանցանքին համար. Շմաւոնն ու Ղեւին ալ՝ անոնց Սիւքեմացիներէն առած անօրէն վրէժխնդրութեանը համար։ Երբ Յուդային եկաւ, ըսաւ անոր. «Դուն գովուիս քու եղբայրներէդ, և ձեռքդ քու թշնամիներդ լծոյ տակ դնէ»։ Յակոբ խօսելէն դադրելով՝ ոտուըներն անկողնին մէջ տարածեց ու մեռաւ։ Յովսէփ տեսնելով որ հայրը մեռաւ, ինկաւ անոր վրայ և արցունքով համբուրեց զանի։ Ետքը Եգիպտացի դի պատողներուն պատուիրելով որ անոր մարմինը մոմեայ ընեն երկրին սովորութեանը համեմատ, զանի անձամբ եղբայրներուն հետ Քանանու երկիրը տարաւ, ու մեծ պատուով դրաւ զանի Մակփելայ քարայր կոչուած գերեզմանին մէջ, Քեբրոնի մօտ։

Տասնուեօթը, եօթնևտասն
Ապրիլ, կեալ
Երդում ընել տալ, երդմնեցուցանել
Ետքը, յետ այնորիկ
Անկողնին բոլորտիքը, ըմահ–
Ծօք խարովք
Ամէն մէկը, մի մի
Գործած մեծ յանցանքին համար, վասն ոճրոյն մեծի զոր նա գործեալ էր
Անոնց առած վրէժխնդրու–



թեան համար, վասն վրէժուն զոր խնդրելու էր նոցա
Լծոյ տակ դնել, արկանել ընդ լծով
Մեռնել, վախճանել
Դի պատող, դիապատիկ, ոկն,
Մոմեա ընել, պատել [ոկաց
Համեմատ, ըստ
Պատիւ, շուք
Գերեզման, շիրիմ

## 10.

## ՅՈՎՍԵՓԱՅ ՄԱՀԸ

Յակոբին մահուընէն ետքը Յովսէփին եղբայրները վախնալով թէ չըլլայ որ Յովսէփ իրենց ըրած գէշութիւնը յիշէ, աղաչեցին անոր որ իրենց ներէ. անիկա ալ զանոնք քաղցրութեամբ և սիրով հանդարտեցուց։ Յովսէփ ան ատեն յիսունուվեց տարուան էր, և յիսունուչորս տարի ալ ապրեցաւ՝ միշտ սիրելի և յարգելի ըլլալով Եգիպտացւոց առջեւ որոնց փրկիչ եղած էր։ Իր մեռնելէն առաջ ըսաւ իր եղբայրներուն. «Աստուած օր մը ձեզի նայելով՝ պիտի հանէ ձեզ ասկէ որ մեր հայրերուն տուած երկիրը տանի։ Երդում ըրէք ինծի որ ոսկրներս ձեզի հետ կը տանիք». անոնք ալ անոր երդում ըրին։ Երբ Յովսէփ հարիւր տասը տարուան վախճանեցաւ, անոր մարմինը զմռսուեցաւ (մոմեա եղաւ) ու դագաղի մէջ դրուեցաւ՝ Իսրայելի որդւոց Եգիպտոսէն մինչեւ ելլելը Քանանացւոց երկիրը երթալու համար։

Վախնալ, երկնչել, երկուա–ցել
Ձըլլայ որ, գուցէ
Յիշել, յուշ լինել (տրակնով.)
Գէշութիւն, չարիք
Իրենց ըրած գէշութիւնը, չարիքն զոր արարին
Յարգելի, մեծարոյ
Առջեւ, յանդ
Առաջ, յառաջ քան զ...
Նայել, այց առնել
Ասկէ, աստի
Տուած երկիրը, երկիրն զոր ետ
Երդում ընել, երդնուլ
Հարիւր տասը տարուան, հարիւր և տասնամենի
Դագաղ, տապանք
Ելլելը, ելք

# ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

## Ա.

### Շ Ն Ի Կ

Տղայ մը օր մը առուի մը քով պտըտելու կ'երթայ, և կը հանդիպի հոն քանի մը չար տղոց որ պզտիկ շուն մը առուին ջուրերուն մէջ խեղդել կ'ուզէին։ Տղան խեղճ պզտիկ անասուն կը գթայ, զանի կը գնէ և իրեն հետ տուն կը բերէ։ Շունը շուտով իւր բարերարին այնպէս կը վարժի, որ ամէն ուր որ կ'երթայ՝ անոր ետեւէն կը պտըտի, անոր հետ խաղալու և վրան լյնալու։ Գիշեր մը երբ տղան անկողին մտնել կ'ուզէր, շունը սկսաւ հաչել, և չէր թողուր անոր որ քնանար։ Պատանին շունին ինչու համար հաչելը գիտնալ ուզելով՝ ճրագ մը առաւ, և երբ ասդին անդին կը պտըտէր բան մը տեսնելու, մէկէն անկողնին տակ ահռելի տեսքով մարդ մը տեսաւ, և հասկցաւ որ գող էր։ Վախէն պոռալուն պէս, բոլոր տունին մէջ եղողները եկան գլուխը ժողվուեցան, և գողը բռնելով դատաւորին մատնեցին։ Երբ հարցուփորձ եղաւ, խոստովանեցաւ մարդը թէ միտքը դրած էր բոլոր տունին մէջ եղողները մէկիկ մէկիկ սպաննել՝ պատանիէն սկսելով, յետոյ տունը կողոպտել։

Անատեն շնորհակալ եղաւ տղան Աստուծոյ որ այնպէս անմիաս ազատեց զանի, և ըսաւ. Ո՞վ երբեք կրնար երեւակայել թէ շունի ձագ մը որուն ես կեանքը փրկեցի՝ նա ալ պիտի փրկէր իմ կեանքս։

| | |
|---|---|
| (Առուի մը) քով. [illegible] | Խեղճ, [illegible] [ընդ... |
| Խեղդել (Ջուրի մէջ), [illegible]- | Վարժել մէկուն, ընտելանել |
| [illegible] | Ետեւէն, [illegible] |



| | |
|---|---|
| Պտըտել, [illegible] | Վախէն, [illegible] |
| Վրան լյնալ, [illegible] | Բոլոր տունին մէջ եղողները, |
| Սկսիլ, [illegible] (չէզ.) | [illegible] |
| Քնանալ, [illegible] | Գլուխը ժողվուեցան, [illegible]- |
| Գիտնալ ինչու համար հա- | [illegible] |
| չելը, [illegible] | Միտքը դնել, [illegible] |
| [illegible] | Մէկիկ մէկիկ, [illegible] |
| Ասդին անդին պտըտել, | Սկսիլ, [illegible] (ներգ.) |
| [illegible] | Կողոպտել, [illegible] |
| Մէկէն, [illegible] [[illegible] | Շնորհակալ ըլլալ, [illegible] |
| Ահռելի տեսքով, [illegible] | Անմիաս, [illegible] |
| Հասկցաւ, [illegible] | Ազատել, [illegible] |
| Պոռալուն պէս, [illegible] | Երեւակայել, [illegible] |
| [illegible] | (Շունի) ձագ, [illegible] |

## Բ.

### ԼԱՒ ԴՐԱՑԻՆԵՐ

Ջաղացպան մը պզտիկ տղայ մը ունէր, որ առուի մը եզերքին մօտ խաղալու ատենը՝ ջուրն ինկաւ։ Ատաղձագործ մը որ առուին անդին դին կը բնակէր՝ եղածը տեսաւ, և իսկոյն ջուրը նետուելով տղան ողջ հանեց ու հօրը ներկայացուց։ Տարի մը անցնելէն ետքը՝ յանկարծ գիշեր մը ատաղձագործին տանը մէջ կրակ պատահեցաւ։ Բոցը տունը բռնելէն ետքը ատաղձագործն իմացաւ, և հազիւ ազատեց զինքը, կինը և որդիքը։ Բայց ազատելու աճապարելէն մոռցան առնուլ ամենէն պզտիկ տղան որ իբր երկու տարեկան աղջիկ մըն էր։ Տղուն աղաղակը բորբոքած կրակին մէջէն կը լսուէր. հայրն ու մայրը դառն կերպով կու լային, բայց չկար մէկը որ մտնելու և տղան ազատելու համարձակէր։ Անատեն Ջաղացպանն աճապարելով և կրակին մէջ դի-

մելով կ'առնու կը բերէ տղան անարատ. և հօրը կու տայ ըսելով. «Օրհնեալ ըլլայ տէրը որ ինծի պատեհութիւն տուաւ քու ինծի ըրած երախտիքդ հատուցանելու. դուն իմ մանչս ջուրէն հանեցիր, ես ալ Աստուծոյ օգնութեամբը քու աղջիկդ կրակէն ազատեցի»։

Նրբ երկու տղաքն ալ չափահաս եղան, ջուրէն հանուողը կրակէն հանուածն իրեն կին ըրաւ։

| | |
|---|---|
| Ջաղացպան, մլղաց | Դառն կերպով, դառնապէս |
| Անգլիի դին, յայնկոյս | Համարձակել, իշխել |
| Եղածը, որ ինչ եղեալն | Կրակին մէջ դիմելով, արշաւ- |
| Իսկոյն, իսկ և իսկ | եալ 'ի հրդեհն անդր |
| Նետուիլ, արկանել զանձն | Անարատ, անապական |
| Ներկայացուց, ած կացոյց | Պատեհութիւն, ժամ դիպող |
| Կրակ, հրդեհ | Ինծի ըրած երախտիքդ, զե- |
| (Բոցը) բռնել, ճարակել (բոցն) | րախտիսն զոր ինձ արարեր |
| Ազատել, զերծուցանել | Մանչ (զաւակ), ուստր |
| Ջինքը, զանձն | Աղջիկ (զաւակ), դուստր |
| Ազատելու աճապարելէն, | Չափահաս ըլլալ, յարբունս |
| առ փութոյ զերծանելոյ | հասանել |
| Ամենէն պզտիկ, կրտսերագոյն | Կին ընել, առնել կին |
| Երկու տարեկան, ամաց երկուց | Ջուրէն հանուողը, որ հա- |
| Լսուիլ, լսելի լինել | նեալն 'ի ջրոյ |

---

## Գ.

## ՎԱՐԴԻ ԾԱՌԸ

Աղքատ կին մը աղջիկ մը ունէր, որ վարդի մատաղ տունկ մը տնկեց հողէ ամանի մէջ, և բնակած խուցին պատուհանին առջեւ դրաւ։ Գարնան օրեր էին, և տունկը վարդի կոկոններով (գօնչա) լեցուն էր։ Օդն աղէկ եղած ատեններ՝ աղջիկը վարդին ծառը պատուհանէն դուրս կը թողուր, և իրիկուան դէմ, երբ արեւը մարը մտնելու վրայ կ'ըլլար, ներս կ'առնուր։ Պա-



տահեցաւ որ իրիկուն մը փոյթ չըրաւ տունկը պահելու, ինչպէս որ սովոր էր ընել, քանզի ըսաւ թէ հարկ չէ, վասն զի օդը տաք և մեղմ է։ Բայց երբ առտուն ելաւ, վարդին տունկը ցուրտէն չորցած տեսաւ։ Կու լար, երբ տունկին կը նայէր, ու տրտմութենէն կ'ըսէր. Ահա մէկ անմտութիւնն այնչափ աշխատութեանս արդիւնքը ջնջեց։ Անատեն մայրը պատասխան տուաւ անոր ըսելով. Այդ պզտիկ դիպուածը որ քեզի այնչափ ցաւ կը պատճառէ՝ կրնայ քեզի մեծ երջանկութեան պատճառ ըլլալ։ Ասկէ սորվէ թէ ինչ որ ցուրտը ծաղկած վարդի տունկին ըրաւ՝ նոյնը կ'ընէ բարուց ապականութիւնն անմեղութեան, և թէ ինքզինք մոլութենէ զերծ պահելու համար շարունակ փոյթ և միշտ զգուշութիւն պէտք է։

| | |
|---|---|
| Հողէ աման, անօթ խեցեղէն | Տրտմութենէն, առ տրտմու- |
| Բնակած խուցին, խցկանն | թեանն |
| յորում բնակէր | [վարդից Ջնջել, եղծանել |
| Կոկոններ (վարդի), բողբոջ | Աշխատութիւն, վաստակ |
| Օդն աղէկ եղած ատեններ, | Դիպուած (արկած), պատահար |
| 'ի ջերմ ժամանակս | Ցաւ, վիշտ |
| Իրիկուան դէմ, ընդ երեկս | Պատճառել, գործել |
| Արեւը մարը մտնելու վրայ | Կրնայ, մարթի |
| կ'ըլլար, ուրեմն 'ի մուտս լինէր | Երջանկութիւն, երանութիւն |
| Պատահեցաւ, դէպ եղեւ | Ասկէ, աստուստ |
| Փոյթ տանել, առնել փոյթ | Սորվիլ, ուսանել |
| Պահել, դնել 'ի պահեստի | Ցուրտ, սառնամանիք |
| Հարկ չէ, չէ ինչ պիտոյ | Ծաղկած վարդ, վարդ որ |
| Մեղմ, քաղցր | 'ի ծաղկի է |
| Ելնել, յառնել | Բարք, բարոյք, բարք [տից |
| Առտուն, ընդ առաւօտն | Մոլութենէ զերծ, սուրբ յախ- |
| Չորնալ, ցամաքել | Շարունակ, յաճախ |
| Ցուրտէն, 'ի սառնամանեաց | Միշտ, հանապազորդ |

## Դ.

### ԸՆԿՈՒԶԻ ԿԵՂԵՒՆԵՐ

Տէր կոմսը Ա. ճշմարտութիւնն ու արդարութիւնը շատ կը սիրէր։ Քանի մը չար մարդիկ աս բանիս համար անոր բարկացած էին, այնպէս որ մէկտեղ երդում ըրին և զանի կորսնցնելու ետեւէ էին։ Եւ արդարեւ շատ սատակ տուին չարագործ մարդու մը որ զանի հետեւեալ օրը գիշերանց սպաննել խոստացաւ։

Ազնուական կոմսը վերահաս վտանգին ամենեւին չէր սպասեր։ Անոր քեռորդիները, սիրուն տղաք, իրիկուան դէմ անոր եկան։ Կոմսն անոնց գալուն վրայ ուրախանալով, հանեց պտուղ՝ խնձոր, տանձ և ընկոյզ։ Երբ տղաքը մեկնեցան, կոմսն ուզեց քնանալ, և ինքզինք Աստուծոյ պաշտպանութեանը յանձնելով՝ անկասկած քնացաւ։ Բայց կէս գիշերուան ատենները չարագործը որ գաղտուկ տունը մտած էր՝ կամացուկ մը կոմսին սենեակը մտաւ, մինչ անիկա աղէկ մը քնոյ մէջ էր, պզտիկ լապտեր մ՚ալ անկողնին քով կը վառէր։ Չարագործը դանակը հանելով, և ձեռքը վեր վերցուցած անոր կը մօտենար։ Բայց մէկէն սենեկին մէջ այնպէս սաստիկ շառաչիւն մը լսուեցաւ, որ կոմսը քունէն արթնցաւ։ Երբ ելլելով տեսաւ մարդը դանակը ձեռքը, շուտով առաւ զէնքերը որ անկողնին գլխուն վերեւը պատէն կախուած էին, և սպառնացաւ զանի սպաննել։ Մարդը սարսափելով դանակը ձգեց ու թողութիւն կը խնդրէր։ Ետքը բանը մոնելու ստիպուելով՝ իրեն խրատ տուողներն յայտնեց։

Կոմսը կը մտածէր թէ այն շառաչիւնը պատճառողն ինչ էր որ զանի քունէն արթնցուց։ Աչուըներն աս-



դին անդին պտըտցուցած ատենը տեսաւ որ տղաքը գետինը ձգած էին ընկուզի կեղեւ մը, որուն վրայ կոխած էր չարագործը։ Կոմսը զարմանալով ըսաւ. Աստուծոյ խնամքովը ընկուզի կեղեւ մը զիս ազատեց, և անզգամներն արդարութեան սուրին մատնեց։

Բարկանալ, զայրանալ
Ետեւէ ըլլալ, ի խնդիր լինել
Հետեւեալ օրը, ի վաղիւ անդր
Գիշերանց, գիշերայն
Սպասել, ակն ունել
Վերահաս վտանգին, վտան-
  գին որ ի վերայ կայր
Իրիկուան դէմ, ընդ երեկս
Գալը, գալուստ
Պտուղ, միրգ
Ինքզինք յանձնել, յանձն
  լինել է...
Կէս գիշերուան ատենները,
  ընդ հասարակ գիշերաւ
Գաղտուկ, գաղտ
Կամացուկ մը մտնել, սպըր-
  դել մեղմով
Աղէկ մը, քաջ
Անկողնին քով, առ անկողնոյն
Հանել (դանակը), մերկանալ
Դանակ (սպաննելու համար),
  դաշոյն
Ձեռքը վեր վերցունել, ամ-

բառնալ զձեռն
Մօտենալ, մերձենալ
Մէկէն, յանկարծ
Լսուիլ, լսելի լինել
Շառաչիւն, դղրդիւն
Այնպէս . . . որ . . . մինչեւ
Արթննալ, զարթնուլ
Ելլել, յառնել [առ
Շուտով առաւ, աճապարեաց
Պատէն (կախուիլ), (կախեալ
  կայէն) զորմոյն
Գլխուն վերեւը, ի սնարից
Սպաննել, հարկանել
Սարսափել, ահի հարկանել
Ձգել (դանակը), ընկենուլ
Թողութիւն, շնորհք
Ստիպուիլ, բռնադատել (իլ)
Ցայտնել, ի վեր հանել
Իրեն խրատ տուողները,
  որք խրատիչք լեալ էին նմա
Պատճառել, գործել
Ասդին անդին պտըտցունել,
  յածել (զաչս) շուրջանակի

## Ե.

## ՍԱԽՈՒՂԻ ԷՇԵՐԸ

Երեք հոգի Ամստերդամ քաղքէն ճամբայ ելլելով գործի մը համար մէկտեղ գեղ մը կ'երթային ։ Ճամբուն վրայ կը տեսնեն գեղացի մը որ շտապով անոնց կու-գար , և դէմքին տեսքէն կ'երեւար որ վերջին աստի-ճան տգէտ և ապուշ էր ։ Երեք հոգի իրարու կ'ըսեն . Եկէք ասիկայ ծաղր ընենք ։ Աս կ'ըսեն ու հեռանալով՝ իրր քարընկէց մը իրարմէ զատ ճամբուն վրայ կը կե-նան ։ Երբ գեղացին առջինին կը մօտենայ , անկէ սա խօսքը կը լսէ . Բարեւ , հայր Աբրահամ ։ Այս խօսքը լսե-լով գեղացին անոր բարեւ կու տայ գլխով , և կ'ըսէ . Բարեւ ։ Անկէ քիչ մը հեռուն կը տեսնէ առջինին միւս ընկերը , որ անոր կ'ըսէ . Բարեւ , հայր Իսահակ ։ Ասոր ալ գեղացին նոյն պատասխանը կու տայ ։ Ետքը անկէ առաջ երթալով կը գտնէ երրորդը որ կ'ըսէ . Բարեւ , հայր Յակոբ ։ Ան ատեն գեղացին անոնց միտքը հասկը-նալով , անոր կ'ըսէ . Կը խաբուիք , պարոններ , ես Աբ-րահամ չեմ , ոչ Իսահակ , ոչ ալ Յակոբ , այլ Կիսեայ որդին Սաւուղն եմ , որ ելած եմ հօրս էշերը փնտռե-լու . բայց զարմանք , մերիններն էգ էին , իմ գտած-ներս արու են ։

| | |
|---|---|
| Հոգի , այր | Շտապով , շտապաւ |
| Ճամբայ ելլել , յուղի անկանել | Տգէտ և ապուշ , տխմար և պանդոյր |
| Ճամբուն վրայ , ընճանապար-հայն | Վերջին աստիճան , քան զա-մենայն մարդիկ |
| Գեղացի , շինական | Ծաղր ընել , ծաղր ընել ն . . . (գործիական) |
| Դէմքին տեսքէն , յերեսացն տեսլենէ | |



| | |
|---|---|
| Իրարմէ զատ , բացաճոյն է միմեանց | Առաջ երթալ , յառաջ մատչել |
| Բարեւ , ողջ լեր | Հասկնալ , ի վերայ հասանել |
| Այս խօսքը լսելով , առ այս բան | Միտք , խորհուրդ |
| Բարեւ տալ , տալ ողջոյն | Պարոն , տէր |
| Գլխովը , նշանացի գլխովն | Զարմանք , բաբէ |
| Միւս , միւս եւս | Էգ , մատակ |
| | Իմ գտածներս , զորս եսն գտանեմ |

---

## Զ.

## ՅՈՎՍԷՓ ԿԱՅՍՐ

Յովսէփ երկրորդ , Գերմանացւոց կայսրը , իբր ան-ծանօթ մը ըրած առջի ճամբորդութեան ատեն սուր-հանդակներու կայան մը հասնելով՝ ձիերը փոխելու համար ախոռին մէջ ձի չգտաւ ։ Սուրհանդակապետն անծանօթ անձին ըսաւ որ քիչ մը սպասէ . խոստովա-նելով թէ ձիերը ղրկած էր իր որդւոյն կնունքին հրա-ւիրուած ազգականներն ու բարեկամները բերելու ։ Կայսրը մարդուն հետ խօսակցութեան սկսելով , և զանի ողջամիտ և հայրենասէր գտնելով՝ յայտնեց անոր թէ կը բաղձայ տղուն կնքահայր ըլլալ ։ Սուրհանդակապետն անոր առաջարկութեանը զարմացաւ , բայց և այնպէս անծանօթ մարդը նախամեծար համարելով իր հօրեղ-բօրորդիէն որ երկրագործ էր՝ հաճելով յանձն առաւ ։ Երբ եկեղեցի գացին , պաշտօնը սկսաւ ։ Մկրտող երէցը կայսեր հարցուց . Անունդ ի՞նչ է . ան ալ ըսաւ՝ Յով-սէփ է անունս ։ Մականունդ ի՞նչ է , կրկնեց երէցը ։ Ի՞նչ պէտք է քեզի ասիկա , ըսաւ կայսրը , ինծի կ'ե-րեւայ որ Յովսէփ անունը միայն բաւական է ։ Ոչ , պա-րոն , ըսաւ երէցը . կ'ուզենք ընտանիքիդ մականունն

ալ գիտնալ: Եթէ այնպէս է, ըստ ան ատեն կայսրը, մականունս է Յովսէփ երկրորդ, կայսր Գերմանիոյ: Երէցն ու հոն եղողներն ապշեցան, սուրհանդակապետն ալ թագաւորին ոտքն ինկաւ, որ զանի վերուց մարդասիրաբար, և անոր շատ պարգեւներ տալով խոստացաւ որ իւր սանուն յիշատակը չմոռնայ:

| | |
|---|---|
| Իբրեւ անծանօթ մը ըրած, իբր օտար յանծանօթս | Բաղձալ, ցանկալ |
| Ախոռ, ասպաստան | Երկրագործ, հողագործ |
| Ձի, ջի, երիվար, նժոյգ | Հաճել, հաւանել |
| Քիչ մը, սակաւիկ մի | Մկրտող, կնքաւոր (երէցն) |
| Դրկել, յուղարկել | Մականուն, աւելի անուն, անուն յորջորջանաց |
| Կնունք, կնիք | Բաւական, շատ |
| Խօսակցութեան սկսել, զբանիւ անկանել | Ընտանիք, ազգատոհմ |
| Յայտնել, յայտ առնել | Հոն եղողները, որ անդն կային |
| Նախամեծար համարել, նախամեծար առնել | Ապշել, յապուշ կրթել |
| Հօրեղբօր որդի, հօրեղբօր ուստր | Վերցունել, յարուցանել |
| | Շատ պարգեւներ տալ, մեծապարգեւ մեծարել |

---

# Է.

## ԱՆՑԵԱԼ ՄԵԾՈՒԹԻՒՆ

Դիոն աքսորուելով ապերախտ Սիրակուսացիներէն, ապաւինեցաւ Մեգարացւոց քաղաքը, ուր Պրոդոտոս անունով մէկը կ'իշխէր: Երբ պատահեցաւ որ ասիկա օր մը մէկուն կողմէն իրեն եղած անիրաւութեան մը համար իրաւունք կը պահանջէր, իշխանին պալատն երթալով անոր ներկայանալ ուզեց, բայց մէկուն հոգը չեղաւ այս երեւելի անձին առջի մեծութեանն արժանի անոր պատիւ ընել: Երկայն ատեն զանի սպասել տալէն ետքը՝ պատասխան տրուեցաւ թէ Պրոդոտոս կարեւոր գործերու զբաղած ըլլալով չկրնար այն օրն անոր ընդունելութիւն ընել: Դիոնի բարեկամները որ անոր հետ էին՝ կը զայրանային որ իբրեւ անարգ մէկու մը հետ վարուեցան այն սքանչելի անձին հետ որ իշխանութեան մէջ եղած ատենը միշտ մարդասիրաբար կը վարուէր իրեն դիմողներուն հետ: Բայց Դիոն առանց տրտնջելու հանդարտութեամբ ըսաւ անոնց. Բարեկամներ, թերեւս ես ալ նոյնն ըրած եմ Սիրակուսայի մէջ իշխան եղած ատենս: Ժամանակ անցնելէն ետքը այս մեծ անձն իր հայրենիքն ազատեց Դիոնեսիոս բռնաւորէն որ երկիրը կը հարստահարէր, և խաղաղութիւնն ու արդարութիւնը նորէն հաստատեց. բայց սպաննուեցաւ Աթենացի Կալիպպոսէն որ անոր հիւրն ու բարեկամն էր: Իսկ Դիոնեսիոս բռնաւորը Սիրակուսայէն աքսորուելով եկաւ բնակեցաւ Կորնթոս, ուր վարժապետ ըլլալով աղքատութեան մէջ մեռաւ:

| | |
|---|---|
| Աքսորուիլ, տարագիր լինել | Երկայն ատեն, [illegible] |
| Ապերախտ, ապաշնորհ | Զայրանալ, զայրել |
| Ապաւինել, ապաստան լինել | Եղած ատենը, մինչդեռ էր |
| Իշխել, վարել զիշխանութիւն | Վարուել, գնալ |
| Պատահել, դէպ լինել | Իրեն դիմողներուն հետ, ընդ որս դիմէին առ նա |
| Պալատ, ապարանք | Իշխան եղած ատենս, մինչդեռ էի իշխան |
| Ներկայանալ, յանդիման լինել | Ժամանակ անցնելէն ետքը, յետ ժամանակաց |
| Հոգը ըլլալ, լինել փոյթ (տր.) | Անձ, այր |
| Պատիւ ընել, առնել մեծարանս երեսաց | Նորէն, միւսանգամ |
| Մեծութեանն արժանի, արժանի ըստ մեծութեան (նորա) | Վարժապետ, դաստիարակ |

---

## Ը.

### ԳՈՂՆ ՈՒ ԽՈԶԸ

Երկու մարդ որ արջ մը կը պտտցունէին՝ օր մը իրիկուան դէմ շատ ուշ գեղ մը հասնելով իջեւան մը իջան ուր կ'ուզէին այն գիշերն անցունել: Պանդոկապետը որ իւր պարարեալ (գէրցէ) խոզը նոր ծախած էր՝ արջն այն ախոռը դրաւ ուր առաջ խոզը կը կապէր։ Կէս գիշերուան ատենները գող մը որ ցորեկը եղածին տեղեակ չէր՝ գաղտ պանդոկը մտնելով կ'ուզէր պարարած խոզը տանել: Կամացուկ մը ախոռին դուռը բանալով մութին մէջ խարխափելով ներս կը մտնէ, և փոխանակ խոզին զոր գտնել կը կարծէր՝ կը բռնէ արջը, որ ոտք ելլելով ահռելի ձայնով երկու թաթերը մարդուն վրայ կը նետէ, և այնպէս ուժով կը պնդէ զանի, որ մարդը չկրնար շարժիլ: Վախն ու տագնապն անոր ողբալի աղաղակներ հանել կու տան, այնպէս որ պանդոկին մէջ բոլոր քնացողներն անոր պոռալէն ցատկելով կ'արթննան, և դժուարաւ կրնան արիւնլուայ մարդը գազանին ճիրաններէն ազատել: Բայց անիկա այս վտանգէն ազատելուն պէս արդարութեան ձեռքը մատնուեցաւ:

Պտտցունել, շրջեցուցանել
Իրիկուան դէմ, ընդ երեկս
Շատ ուշ, կարի անագան
Գեղ, շէն
Իջնել (ճանապարհորդի), լուծանիմ
Իջեւան, պանդոկ
(Գիշեր) անցունել, ագանել

Պարարեալ, պարարակ
Նոր, այն ինչ
Դնել (ախոռը), փակել [փոմ
Ախոռ (եզան, ոչխարի եւն),
Խոզ, խող, խոճկոր
Առաջ, յառաջագոյն
Կէս գիշերուան ատենները, ընդ մէջ գիշերաւ



Ցորեկը եղածին, որում դիպեցաւն ցերեկ
Գաղտ մտնել, սպրդել
Կամացուկ մը, մեղմով իմն
Խարխափելով, առ խարխափ
Բռնել, բուռն հարկանել (բց.)
Ոտք ելլել, յոտն կալ
Ահռելի, ահագին
Ձայն, աղաղակ
Թաթ, ճանկ
Նետել, արկանել
Ուժով կը պնդէ զանի, խիզախ արկեալ վարեալ լինի զնմանէ
Վախ, ահ

Աղաղակ հանել, բառնալ զաղաղակ
Ողբալի (ձայն), (աղաղակ) դառն եւ լալոյ
Ցատկելով արթննալ, զարթնուլ ընդոստ
Պոռալու ձայն, աղմուկ
Պանդոկին մէջ բոլոր քնացողները, ամենեքին որ ննջէին ի պանդոկանոցին
Դժուարաւ, հազիւ ուրեմն
Կրցան, հասանէր նոցա (թափել)
Ազատելուն պէս, այն ինչ զերծեալ

---

## Թ.

### ԵՐԵՍԷ ԻՆԿԱԾ ՊԱՇՏՕՆԵԱՆ

Պարսից թագաւորներէն մէկն իր պաշտօնեաներուն գլխաւորին բարկանալով՝ զանի իշխանութենէն կը ձգէ և անոր տեղ ուրիշ մը կը դնէ։ Բայց շնորհք մը ընելու համար՝ թոյլ կու տայ անոր որ բոլոր ընտանեօքը խաղաղութեամբ բնակելու համար իրեն տեղ մը ընտրէ, բոլոր ստացուածն ալ անոր կը շնորհէ։ Բայց պաշտօնեան թագաւորին կ'ըսէ. Ի՞նչ պէտք են ինծի ասկէ ետքը այն ստացուածները զոր ինծի կ'ուզէ շնորհել ձեր վեհափառութիւնը. կ'աղաչեմ, հրաման տուէք որ ամէնն ալ ինէ առնուի. բայց հաճի ձեր վեհափառութիւնը խնդրածս կատարել. ցուցուի ինձ ձեր տէրութեանը մէջ անպիտան և ամայի գեղ մը կամ աւան մը զոր խնամելով շէնցնեմ: Անատեն հրաման տուաւ Թա-

գաւորը որ մարդ հանուի՝ պաշտօնէին փափաքածին պէս տեղ մը փնտռելու․ բայց Թագաւորէն ղրկուողները գալով լուր տուին թէ բոլոր տէրութեան մէջ գիւղ կամ աւան և կամ բնակութեան տեղ մը չկար որ անշէն և անմշակ ըլլար։ Ան ատեն պաշտօնեան Թագաւորին կ'ըսէ․ Աղէկ գիտէի, արքայ, որ ինծի կառավարելու յանձնուած բոլոր երկրին մէջ չկայ բնաւեր ու անբնակ տեղ մը․ այսպիսի տեղ մը խնդրած ատենս՝ նպատակս էր առիթ տալ որ անձամբ հասկնաք թէ ինչպէս շէն և ծաղկած ձեզի կը դարձնեմ երկիրը։ Երանի թէ ձեր վեհափառութիւնը գտնէր ուրիշ պաշտօնեայ մը, որ կարող ըլլար ետքը նոյն վկայութիւնը տալ իւր վրայ։

Մէկը, ոմն                    կունեան
Բարկանալ, ցասնուլ    [նուլ Ղըրկուողները, որ առաքեցանն
Զգել (իշխանութենէ), ընկե– Լուր, համբաւ
Դնել, կացուցանել          Անշէն, ամայի
Թոյլ տալ, թողուլ          Աղէկ (գիտնալ), քաջ գիտել)
Տեղ, վայր       [ուր բնակիցէ Անբնակ, ամայի
Բնակելու համար տեղ, վայր։ Ինծի կառավարելու յանձ–
Պէտք, պիտոյ              նուած երկրին մէջ, յերկ–
Ի՞նչ, զի՞                  րին զոր վարելն ինձ յանձն լեալ է
Ստացուած, ինչք, ստացուած Խնդրած ատենս, 'ի խնդրել
Ձեր վեհափառութիւնը,     իմում
  արքայ                    Նպատակ, խորհուրդ
Հաճել, հաճոյ թուել        Առիթ տալ, տալ պատճառ
Խնդրածս, զոր խնդրեմս     Հասկնալ, հասու լինել
Կատարել, առնել            Ծաղկած, ծաղկաւէտ      [րէն
Անպիտան, անշէն      [դաշտ Դարձունել, դարձուցանել այս–
Շէնցունել, առնել շէն, մար– Կարող ըլլալ, մարթել
Մարդ հանել, հանել խաղաղս Երանի՜ թէ, եթէ
Փափաքածին պէս, ըստ ցան– Ետքը, ապա



**Ժ․**

## ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Կարոլոս ԺԲ. Պետրոս մեծէն Բուլդաւայի քով յաղթուելէն ետքը՝ երեք Սուետացի գիւղականք հայրենասիրութեան զարմանալի օրինակ մը տուին։ Ասոնք իմանալուն պէս որ Սուետի Թագաւորն յաղթուեցաւ և մեծ կարօտութեան մէջ էր, իրենց բոլոր աւելորդ բաները՝ կարասի, հանդերձ, գարի, չոր խոտ և անասուն ժողվելով, զանոնք մօտ քաղաքներէն մէկուն մէջ ծախելու գացին, և անոնցմէ մէկը ծախուածին գինն առնելով և ձի մը հեծնելով՝ աճապարանօք Սուետի բանակն հասաւ։ Ո՞ւր է Թագաւորը, կը գոչէր պահապաններուն հեռուէն, զիս անոր տարէք, անոր բան մը պիտի ըսեմ։ Պաշտօնականներէն մէկն անոր մօտիկ ըլլալով՝ զանի Կարոլոսին առջև տարաւ։ Երբ գեղացին Թագաւորին քով մտաւ՝ մէկէն ծնկան վրայ գալով ծոցէն երկու քսակ ոսկի հանեց, և Թագաւորին տուաւ՝ յայտնելով անոր թէ ինչպէս․ մէկտեղ բերած էր այն գումարը երկու ընկերներովը։ Կ'ըսուի թէ Կարոլոս մարդուն պատմութեանը վրայ յարտօսր շարժեցաւ, և ըսաւ․ Ազնուականներէս և ոչ մէկը հաւատարմութեան այսպիսի ապացոյց մը տուաւ։ Յետոյ խոստացաւ գիւղացւոյն որ անոր հայրենասիրութեանն իբր վարձ՝ զանի ազնուականութեան աստիճան բարձրացնէ, բայց երբ անիկա յանձն չառաւ և ընտրեց յաւէտ իւր վաղեմի բարեկամներուն հետ իր աստիճանին մէջ մնալ, Թագաւորն իր առջև գրել տուաւ հրովարտակ մը որով այն ազնուամիտ գեղացին և անոր երկու ընկերները բոլորովին հարկէ ազատ կ'ըլլէր, և իւր շնորհակալութիւնը ցուցնելու հա–

մար՝ մօրուքէն քանի մը թել փրցնելով հրովարտակը կնքած կնքամամին տակ դրաւ։

Յաղթուիլ, պարտեալ լինել
Գիւղական, շինական
Ասոնք իմանալուն պէս, ընդ առնուլ նոցա համբաւ
Յաղթուիմ, պարտիմ, տեղի տամ
Իրենց բոլոր աւելորդ բաները, զամենայն ինչ որ աւելորդ էր նոցա
Չոր խոտ, խոտ
Ծախուածին գինը, զգինս վաճառին
Աճապարանօք հասաւ, աճապարեալ հասանէր
Պաշտպան (զօրք), պահապանք
Հեռուէն, ի հեռաստ
Զիս անոր տարէք, մուծէք զիս առ նա
Բան մը պիտի ըսեմ, ունիմ ինչ ասել
Մօտիկ ըլլալ, մօտենալ
Ծնկան վրայ գալով, ի ծունր անկեալ

Մէկէն, անդէն
Յայտնել, յայտ առնել
Մէկտեղ բերել, ածել ի մի վայր
Յարատօր շարժեցաւ, յորդորեալ հալած
Ապացոյց տալ, ցուցանել զհանդէս
Վարձ, հատուցումն
Բարձրացունել, ամբառնալ
Յաւէտ, մանաւանդ
Վաղեմի, վաղնջուց
Ազնուամիտ, բարեկիրթ
Հարկէ ազատ ըլլալ, առնել ազատահարկ
Իր շնորհակալութիւնը յայտնելու համար, ի հանդէս շնորհակալութեան իւրոյ
Քանի մը թել, թելս ինչ
Փրցունել, խլել
Հրովարտակը կնքած կնքամամին տակ, ընդ մատով կնքոյն որով կնքէր զհրովարտակն

---



# ԺԱ.

## ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՓԱՐՈՍԸ

Փարոսի աշտարակը որ Պտղոմէոս եղբայրասիրի հրամանաւ շինուեցաւ՝ աշխարհիս եօթը հրաշալեաց մէկն էր, և ուրիշ անոր նման աշտարակներ որ նաւավարներու առաջնորդութեան համար ետքը շինուեցան՝ նոյն անունն առին։ Անիկա քառանկիւն, ճերմակ մարմորէ, բազմայարկ մեծ շէնք մըն էր, և ունէր տանիք որուն վրայ ամէն գիշեր մեծ կրակ կը վառուէր, զոր նաւավարք շատ հեռուէն կրնային տեսնել։ Շէնքին ձեւն հանող և գործը լմնցնող ճարտարապետը կը կոչուէր Սոստրատոս։ Ասիկա իւր ճարտարութեան համբաւը յետնոց թողուլ փափաքելով, և իւր անունը թագաւորին անուան հետ դնել չհամարձակելով՝ այսպիսի միջոց մը խորհեցաւ։ Շէնքին ճակատը կրով ծեփելով վրան թագաւորին համար գովեստի խօսքեր գրեց, իսկ ծեփին տակը քարի վրայ ուրիշ գրուած մը փորագրեց։ Իբր դար մը ետքը ծեփը թափելով՝ Պտղոմէոսի վրայ գրուածը ջնջուելով կորսուեցաւ, տակը փորագրուածը միայն կ'երեւար մեծամեծ նշանագիրներով այսպէս. «Սոստրատոս Կնիդացի, փրկիչ աստուածներուն՝ նաւարկութեան օգտին համար»։

Հրաշալիք, հրաշակերտ
(Հրաշալեաց) մէկն էր, էր ի մին (հրաշակերտաց)
Շէնք, շինուած
Քառանկիւն, քառեանկիւնի
Մարմար, կուճ, կճի, կճէ
Կրակ, խարոյկ
Շատ հեռուէն, բացուստ

Ձեւը հանող, որ արկ զձեւ
Լմնցունել, ի գլուխ հանել
Յետնոց թողուլ, թողուլ առ յապայ
Համարձակիլ, իշխել
Անուանը հետ դնել, կցել [ի բաց անուան
Միջոց, հնարք

| | |
|---|---|
| Կիր , բռու | Կորսուեցաւ , անհետ եղեւ |
| Ծեփ , ծեփած | Պտղոմէոսի վրայ գրուածը , |
| Տակը , ի ներքոյ | որ ինչ զՊտղոմեայն գրեալ էր |
| Ուրիշ գրուած , ձեռն եւս գէր | Տակը փորագրուածը , որ |
| Փորագրել , դրոշմել | ի ներքոյն դրոշմեալ էր |
| Թափել , ջնջել | Փրկիչ , կենարար |

---

## ԺԲ.

### ԴՐՈՇ

Դերձակ մը մեռնելու հիւանդութեան մէջ լինալով՝ երազի մէջ զարմանալի բան մը կը տեսնէ ։ Անոր կ'երեւար թէ վերջին ատեանին մէջ կը կենար , մահուան հրեշտակն ալ կեցած կը բանար անոր առջեւ շատ մեծ դրօշ մը (պայրագ) , տեսակ տեսակ կերպասներու (խումաշ) կտորներէ շինուած , զորոնք անիկա ատեն ատեն իր յաճախորդներէն (մուշդերի) գողցած էր ։ Նոյն վայրկենին անոր կ'երեւէր թէ դժոխքը կը մտնէր ։ Մարդն այն տեսարանէն վախնալով քունէն ցատկելով ելաւ՝ բոլորովին պաղ քրտինքի մէջ ։

Այս երազն իրեն Աստուծմէ ազդարարութիւն մը համարելով , ուխտ ըրաւ որ ալ չգողնար , եթէ ողջնար հիւանդութենէն ։ Քիչ ատենէն ետքը իրաւ հիւանդութենէն կ'առողջանայ , և որովհետեւ իր առաքինութեանը վստահ չէր , կը պատուիրէ իր գործաւորներէն մէկուն որ դրօշն իրեն յիշեցնէ , երբ լաթ մը կտրելու ըլլայ ։ Մարդն ատեն մը իր ուխտին մէջ հաւատարիմ մնալէն ետքը՝ օր մը թանկագին կերպասէ մը լաթ կտրած ատենը՝ ագահութեան հոգիէն փորձուելով կը զիջանի ընչասիրութեան , և կտաւէն մաս մը կը գողնայ ։ Յիշեցնող մարդը պարապ տեղ անոր



ազդարարութիւն կ'ընէ որ դրօշն յիշէ ։ « Դու ալ դրօշովդ չափազանց կը ձանձրացնես ականջներս , » կ'ըսէ անոր դերձակը . « երազի մէջ տեսած դրօշիս մէջ այս տեսակ կերպաս չկար » ։

| | |
|---|---|
| Մեռնելու հիւանդութիւն , ախտ մահացու | Հիւանդութիւն , ցաւք |
| Բան մը , ինչ | Եւ որովհետեւ , և զի |
| Երազի մէջ , յանուրջս | Պատուիրել , պատուէր տալ |
| Կեցած կը բանար , կայր և պարզէր | Յիշեցունել , յուշ առնել |
| Շատ մեծ , ահագին | Կտրելու ըլլայ , պէտ լինի ··· հատանել |
| Շինուած , կազմեալ | Ատեն մը , առ ժամանակ մի |
| Կտոր , կտոր | Հաւատարիմ մնալ , կալ հաստատարմութեամբ [հաստ |
| Տեսակ տեսակ , ազգի ազգի | Կտրած ատենը , ի հատանելն |
| Ամեն ատեն , ընդ ժամանակս ժամանակս | Լաթ , հանդերձ |
| Գողնալ , խորել | Թանկագին , մեծագին |
| Նոյն վայրկենին , ի նմին ժամու | Զիջանիլ , տեղի տալ |
| Մտնել , մտել | Ընչասիրութիւն , ժլատութիւն |
| Տեսարան , տեսիլ | Ազդարարութիւն ընել , ազդ առնել |
| Վախնալ , զարհուրել | Պարապ տեղ , ի զուր |
| Քունէն ցատկելով ելաւ , յառնել ընդոստ ի քնոյն | Յիշեցնող մարդը , այրն յուշարար |
| Բոլորովին պաղ քրտինքի մէջ , համակ ի քրտն ցուրտ | Յիշել , զմտաւ ածել (միտքը [բերել) |
| Ազդարարութիւն , ազդ | Չափազանց , կարի յոյժ |
| Ուխտ ընել , դնել ուխտ | Ականջ , ունկն |
| Ալ , այլ եւս | Երազի մէջ տեսած դրօշիս մէջ , ի դրօշին զոր տեսի յերազի |
| Ողջնալ , ապաքինել , ողջանալ | Այս տեսակ , այս օրինակ |
| Քիչ ատենէն , յետ սակաւ միոյ | Չկար , ոչ գոյր |
| Իրաւ , արդարեւ | |

---

## ԺԳ.

### ՍԱՓՐԻՉՔ

Սափրիչ մը որուն գործն էր մօրուք ածիլել և մազ կտրել՝ շատ յաճախորդներ իրեն ձգելու համար խանութին դուրսը պատին վրայ նկարել տուաւ մարդ մը որ ծովն իյնալով խղդուելու մօտ էր, և ուրիշ մը անոր վրայ գթալով՝ լողալով կու գար զանի ջուրէն հանելու, բայց բռնելու ատեն մազերէն որ ճշմարիտ չէին՝ սուտ մազը միայն ձեռքը կը մնայ, և ազատել ուզած մարդն ընկղմելով կը խղդուի։ Այս պատկերին վրայ մեծ տառերով գրուած էր այսպէս. Վա՜յ անոնց որ կեղծ մազ ունին։ Ասով կ'ուզէր իմացնել թէ կեղծ մազերը վնասակար են։

Ուրիշ սափրիչ մը, որուն գործն էր կեղծ մազեր շինել, երբ տեսաւ որ շատերն իր արուեստակցին օրինակէն համոզուելով կեղծ մազ գործածելէ ետ կը կենային, իրեն եղած վնասին առաջն առնելու համար սա հնարքը խորհեցաւ։ Նոյնպէս իր խանութին ճակատը նկարել տուաւ Աբիսողոմ մազերէն կախուած ծառէ մը. և տակը գրեց այսպէս. Երանի՜ թէ մազերը կեղծ ըլլային։

Պատմութիւնն այս զարմանալի մրցման ([illegible]) ինչ վախճան ունենալուն վրայ բան մը չըսեր, բայց հիմակուան սովորութիւնը կը ցուցնէ թէ կեղծ մազերը խափանուեցան, այլ անշուշտ նորէն կ'ելլեն. պէտք է համբերել։ Ասոր պէս շատ հրաշքներ գործած է նորաձեւութիւնը։

Սափրիչ, վարսավիրայ
Ածիլել, գերծուլ
Մազ կտրել, հերս փետրել
Իրեն ձգել, յինքն կորզել
Խանութ, խանութն, խանիկ
Պատ, որմ



Խղդուիլ, հեղձնուլ
Մօտ, մերձ
Լողալով, ի լող
Բռնել, բուռն հարկանել զ (բացառական)
Սուտ մազ, գիսակ
Միայն, եւեթ
Ընկղմելով կը խղդուի, ընկղմեալ լինէր ծովամոյն
Տառ, նշանագիր
Կեղծ մազ, գիսակ հերք, սուտ վարսք
Իմացնել, յայտ առնել
Գործ, արուեստ
Համոզուիլ, հաւանել
Ետ կենալ, ի բաց կալ
Գործածել, արկանել ի կիր
Առաջն առնուլ, առնուլ զառաջս
Սա հնարքը խորհեցաւ, հնարեցաւ այսպիսի ինչ
Մազերէն, ի հերաց
Ծառէ (կախուած), (կախեալ) զծառոյ
Տակը, ի ներքոյ
Երանի՜ թէ, եթէ՜ երբէ
Մրցում, մրցութիւն
Զարմանալի, նորանշան
(Բանի մը) վախճան ունենալը, ելք (իրաց)
Հիմակուան, այժմու
Անշուշտ, ապաքէն
Նորէն ելլել, յառնել միւսան–
Համբերել, երկայնամիտ լինել
Հրաշք, նշան

---

## ԺԴ.

### ՀԱՆՃԱՐԵՂ ԽՐԱՏ ՄԸ

Մեծ զօրութեան տէր երիտասարդ իշխան մը Հնդկաստան կը թագաւորէր. և որովհետեւ շատ ինքնահաւան և հպարտ էր, իրեն և իր հպատակներուն շատ վնաս կ'ընէր։ Անոր հաւատարիմ ծառաները պարապ տեղ կ'իմացնէին անոր թէ թագաւորի մը ամենէն մեծ զօրութիւնն՝ իր հպատակներուն սիրտը շահելն է։ Անոր այս խրատը տուողներէն շատերն աչքէ ինկան և պատժոյ ենթակայ եղան։ Իմաստուն մարդ մը ուզելով թագաւորը համոզել զանի առանց բարկութեան շարժե-

լու, Նարտի խաղը հնարեց, ուր Թագաւորը, Թէպէտ ուրիշ անձինքներէն երեւելի է, առանց հպատակներուն և զինուորներուն օգնութեանը բան մը չկրնար ընել։ Երիտասարդ Թագաւորը, բնականէն հանճարեղ ըլլալով, խրատին զօրութիւնը հասկցաւ ու վարքը փոխեց, և այնպէս վերահաս չարեաց առջեւն առաւ։

Խաղը հնարող մարդուն երախտեացը հատուցում ընել ուզելով, անոր հարցուց Թէ ի՞նչ փոխարէն կը խնդրէր․ ան ալ ուզեց որ իրեն այնչափ հատ ցորեն տար որչափ որ Նարտին տախտակին վրայ խորշեր կային, սա պայմանաւ որ ցորենի հատերուն Թիւը միշտ կրկնուէր՝ առաջին խորշէն մինչեւ վերջինը որ վաթսուն և եօթներորդ է։ Թագաւորն անմիջապէս անոր խնդիրքը շնորհեց դեռ չքննած․ բայց ետքը հաշիւ ընելով գտաւ որ Հնդկաստանի բոլոր հունձքը բաւական չէին խոստացածը կատարելու։ Ասկէ առիթ առնելով իմաստունը ցուցուց երիտասարդ Թագաւորին Թէ որչափ հարկաւոր է որ Թագաւոր մը իր բոլորտիքն եղողներէն զգոյշ ըլլայ, և անոնց չԹողու որ անոնց ըրած բարերարութիւնները գէշի գործածեն։

Երիտասարդ (կէնճ), մանուկ
Մեծ զօրութեան տէր, մեծազօր
Հնդկաստան, Հնդիկք
Եւ որովհետեւ, և զի
Ինքնահաւան, սէգ
Հպարտ, ամբարտաւան
Շատ, յոյժ
Ըսել, ճառել (մխաս)
Իրեն, անձին իւրում
Հաւատարիմ ծառայք, հա- [ւատարիմ ընկերք
Իմացունել, ազդ առնել
Ամենէն մեծ, քան զամենայն մեծ
Այս խրատը տուողներէն շատերը, բազումք որ զայս խրատ ետուն
Աչքէ ինկան, յաչաց ելանել
Պատժոյ ենթակայ եղան, անկան ընդ պատժով
Համոզել, հաւանեցուցանել
Բարկութեան շարժել, գրգռել ի ցասումն



Նարտի խաղ, խաղ նարդենի
Երեւելի, նշանաւոր
Բան մը չկրնար ընել, ոչ ինչ կարէ առնել
Բնականէն, ի բնէ
Հասկնալ, ի միտ առնուլ
Զարիք, աղէտք
Վերահաս, որ մօտ առ դրունս
Հնարող, որ գտանէ ելս
Երախտեացը հատուցում ընել, երախտահատոյց լինել
Փոխարէն, ի փոխ
Բազմապատել, կրկնել
Անմիջապէս, առժամայն
Դեռ չքննած, մինչչեւ քննեալ
Հաշիւ ընել, ի հաշիւ արկանել
Բոլոր, համօրէն
Հնդկաստան, աշխարհն Հնդկաց
Խոստացածը, զոր խոստացան
Առիթ առնել, պատճառս առ- [նուլ
Հարկաւոր, կարեւոր
Զգոյշ ըլլալ, զգոյշ կալ
Բոլորտիքը եղողները, որ շուրջն կան
Չթողուլ, չտալ
Գէշի գործածել, չարաշահել (գործիականով)

---

## ԺԵ․

### ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Ուէստմինստըրի մեծ դպրոցին աշակերտներուն երկու դասերուն մէջտեղ վարագոյր մը կար զանոնք իրարմէ բաժնելու համար։ Պզտիկ աշակերտներուն մէկը օր մը չգիտնալով (առանց գիտման) վարագոյրը պատռեց, և որովհետեւ տղան բնութեամբ հեզ և վախկոտ էր, կը վախնար որ չըլլայ Թէ պատիժ ընդունէր վերակացուէն որ խիստ մարդ մըն էր։ Տղուն աշակերտակիցներէն մէկը որ անկէ մեծ էր տարիքով զանի հանդարտեցուց խոստանալով անոր Թէ յանցանքն իր վրայ կ'առնէ և ինք կը կրէ պատիժը։

Բաւական տարիներ ետքը ընտանի պատերազմ եղաւ Անգղիոյ մէջ, և այս երկու տղոց որ արդէն չափահաս էին՝ ամէն մէկը մէկ կուսակցութեան կողմնա-

կից եղաւ . մէկը ռամկապետաց կողմէն էր , միւսն ալ Թագաւորական կողմէն ։ Երբեմն մէկ կուսակցութիւնը , երբեմն միւսն յաղթելէն ետքը , ռամկապետականք յաջողելով Թագաւորին զօրքին բոլոր վերին պաշտօնակալները բռնեցին ։ Ասոնց համար դատաւորներ դրուեցան , այն վախկոտ աշակերտն ալ որ դատաւորութեան հետեւած էր՝ այն դատաւորներէն մէկն եղաւ ։ Դատուելու համար ատեան բերուողներուն անուններուն մէջ լսելով իր աշակերտակցին և բարեկամին անունը , զոր դպրոցէն ելլելէն ի վեր տեսած չէր , միտքը շարժեցաւ . ուշադրութեամբ անոր նայեցաւ և իրեն այնպէս երեւցաւ որ ան էր , և անոր քանի մը բան հարցնելով ստուգեց որ իրօք ան է եղեր , և առանց ինքզինք անոր յայտնելու շուտ մը ճամբայ ելաւ Լոնտրա երթալու ։ Հոն պէտք եղած անձանց քով բանեցուցած ազդեցութեամբն ու ջանքովը յաջողեցաւ իր բարերարն ազատելու այն պատժէն որմէ անոր ընկերներէն մէկը չկրցաւ ազատիլ ։

| | |
|---|---|
| Մէջտեղ, ի մէջ | Նշաւ (պատերազմ), յաղթեաւ (պատ.) |
| Իրարմէ բաժնելու համար, անջրպետ | Չափահաս, հասուկ |
| Զգիտնալով, յանգէտս | Ամէն մէկը մէկ կուսակցութեան, մին միոյ կողման |
| Բնութեամբ, ի բնէ | |
| Վախկոտ, երկչոտ | Ռամկապետք, ընկերահաւասարք |
| Վախնալ, դողալ | Կողմ, կոյս, եզր |
| Զըլլայ թէ, գուցէ | Թագաւորական, արքունի |
| Պատիժ, պատուհաս | Կուսակցութիւն, կողմ |
| Տարիք, տիք, տիոց | Բռնել, ձերբակալ առնել |
| Ինք կրէ, անձամբ կրել | Դնել, կարգել (դատաւորս) |
| Բաւական տարիներ ետքը, յետ ոչ սակաւ ամաց | Հետեւիլ, զհետ երթալ |
| | Ատեան բերել, ածել յատեան |



| | |
|---|---|
| Դնել. կարգել (դատաւոր) | Ճամբայ ելլել, անկանել ի ճանապարհ |
| Ելլելէն ի վեր, յորմէ հետէ ելեալ էր | Պէտք եղած անձանց քով, առ որս անկ էր |
| Միտքը շարժիլ, խանդաղատեցաւ ոգի նորա | Բանեցուցած ազդեցութեամբ, ազդեցութեամբ զոր արկ ի վեր |
| Ուշադրութեամբ, ուշի ուշով | |
| Քանի մը բան, ինչ ինչ | |
| Իրօք, արդարեւ | Յաջողեցաւ, յաջողեցաւ նմա |
| Շուտ մը, իսկ և իսկ | Ազատել, ապրեցուցանել |
| Ազատիլ, զերծանել | |

---

## ԺԶ.

### ԴԱՏ ՄԸ

Գեղացի մը քաղաք երթալու համար իր ձին համետելով , տեսաւ որ ձիուն ոտքին գամերուն մէկը պակաս էր . և որովհետեւ երթալու կը փութար , ինքնիրեն ըսաւ . Ի՞նչ վնաս կամ օգուտ կայ ինծի , եթէ ձիուն ոտքը գամ մը աւելի կամ պակաս է ։ Աս ըսելով ճամբայ ելաւ ։ Ճամբան ձիուն մէկ ոտքին պայտը (նալը) խախտելով ինկաւ ։ « Եթէ հոս տեղ մը պայտառ մը ըլլար » , ըսաւ , « կրնայի պայտը տեղը դնել տալ . բայց որովհետեւ հոս այնպիսի մէկը չկայ , ձին կրնայ մէկալ երեքովը ճամբան գլուխ հանել » ։ Բայց ճամբուն վրայի քարերը վիրաւորեցին կենդանւոյն ոտքը , որ սկսաւ քալելու ատենը կաղալ , և այսպէս կաղն ի կաղը ծանր կերպով գացած ատենը , յանկարծ երկու գող ելան մացառներէն դուրս մարդը կողոպտելու , որ ձիուն կաղալէն չկրնալով շուտով պրծիլ , աւազակներուն ձեռքն ինկաւ , որոնք անոր մախաղին և մէջը եղածներուն հետ մէկտեղ ձին ալ առնելով , թողուցին

մարդը որ երթար։ Անիկա ամէն բանէ զուրկ տուն դառնալու ստիպուելով, տրտմած ըսաւ ինքնիրեն. «Ի՛նչպէս կրնայի խորհել որ գամ մը պակաս ըլլալուն համար ձիս պիտի կորսնցունէի»։

Ձի, ճըրաք, երիվար
Գամ, բեռնէ
Փութալ, աճապարել
Ինքն իրեն ըսաւ, ասէ ընդ
միտս իւր
Օգուտ, շահ
Ճամբայ ելլել, անկանել յուղի
Ճամբան, ճանապարհայն
Պայտ, երկաթ
Պայտար, պայտար
Հոս տեղ, աստ
Եթէ ըլլար, եթէ էր
Կրնայի, մարթ էր (տրական)
Ճամբուն վրայի քարերը, քարինսն որ է վերայ ճանապարհին
Վիրաւորել, վէրս դնել
Կաղալ, խոշտալ
Կաղն ի կաղը, կաղ ի կաղ

Ծանր կերպով, յամրագնաց
Մացառներէն, ընդ մացառուտն
Կողոպտել, մերկապերծ առնել
(Ձիուն) կաղալէն, առ կաղալ
Պրծել, խոյս տալ
Շուտով, արագ
Ձեռքը ինկաւ), (անկաներ) ի բուռն
Մախաղ, պայուսակ
Մէջը եղածը, որ ինչ էր ի նմա
Առնել (բռնի), հանել (յումեքէ)
Զուրկ, նափառ
Ինքնիրեն, ի միտս իւր
Խորհել, ածել զմտաւ
Կրնայի, մարթ էր ինձ
Պակաս ըլլալուն համար, առ ի չգոյէ

---

## ԺԷ.

### ԽՈՐ ԾԵՐՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ մեծամեծներէն մէկը՝ տէրութեան գաւառներէն մէկուն իշխանութիւնը կ'առնէ, և գաւառին մէջ այցելութեամբ պտըտած ատենը, կը տեսնէ ճերմակ մազերով մարդ մը որ գեղէն քիչ մը հեռուն եղող տնակի մը դուռը նստած կու լար, և անոր կ'ըսէ.



«Ի՞նչ ունիս, մարդ, ինչո՞ւ համար տրտմած ես և կու լաս»։ «Տէր», կ'ըսէ ծերը հառաչելով, «կու լամ, վասն զի հայրս զիս ծեծելով դուրս ըրաւ»։ Իշխանը զարմանալով այս խօսքին, և շուտ մը ձիէն իջնելով ներս կը մտնէ։ Ոտքը տանը բակին մէջ դրածին պէս՝ հոն ճերմակ մազերով առջինէն աւելի ծեր ուրիշ մարդ մը կը տեսնէ, որ բարկացած ալ կ'երեւէր։ «Ինչո՞ւ համար խռոված ես», կ'ըսէ անոր գաւառապետը։ «Մի հարցուներ, տէր», կ'ըսէ ծերը. «որդիս որ դուռը կը կենայ՝ անզգուշութեամբ գետինը ձգեց ծերունի հայրս, որ քամակին ոսկրը կոտրելով նստած է»։ Գաւառապետն ըսուածները կատակ կարծեց. բայց շուտով հասկցաւ որ կատակ չէր խօսքը, քանզի սենեակ մը տարուելով՝ հոն կրակարանին մօտ մեծկակ աթոռի մը վրայ ուրիշ մարդ մը տեսաւ շատ ծեր, որուն կռնակը ծռած էր ծերութենէն, բայց դեռ աշխոյժ և ուժով էր. «Իրաւ», ըսաւ գաւառապետն ինքնիրեն, «այս մարդիկը նահապետներուն ցեղէն են»։

Մեծամեծք, աւագք
Գաւառին մէջ (պտըտել), (շրջել) ընդ գաւառն
Ճերմակ մազերով, ալեւոր
Տնակ, խղէկ, խղկան
Քիչ մը հեռուն եղող, որ սակաւ ինչ հեռի էր
Լալ, յորդառատս հարկանել
Ի՞նչ ունիս, զի՞ է քեզ
Ինչո՞ւ համար, վասն է՞ր
Հառաչել, յոգւոց հանել
Ծեծել, գան հարկանել
Դուրս ընել, հանել արտաքս

Շուտ մը, վաղվաղակի
Դրածին պէս, այն ինչ եդեալ
Բակ, գաւիթ
Ուրիշ, միւս եւս
Ծեր, հինաւուրց
Բարկացած, սրտմտեալ
Անզգուշութեամբ, առ անհոգութեան
Քամակին ոսկրը կոտրել, բեկանել ողն
Կատակ կարծեց, ընդ խաղ իմն համարեցաւ
Հասկցաւ, ծանեաւ

Կատակ չէր խօսքը, չէին ինչ ծաղու բանքն
Տարուիլ, մուծանիմ
Մեծկակ աթոռ, գահոյք
Շատ ծեր, անցեալ յոյժ զաւուրբք
Կռնակ, թիկունք
Ծռել, կորանալ

Մեռելութենէն, յետ մեռելեանն
Գեռ, տակաւին
Աշխոյժ և ուժով, առոյգ և յաժի
Իրաւ, արդարեւ
Ցեղ, ազգ
Այս մարդիկը, ոյքեարս

---

## ԺԲ.

### ՋՈՐԻ ՄԸ

Բժիշկ մը իր ջորին հեծնելով՝ կոկորդին մէջ խաղաւարտ մը ունեցող հիւանդ մը տեսնելու կ'երթար։ Երթալու տեղը հասնելով և ջորիէն վար իջնելով, հոն դրանն առջին հանդիպեցաւ իր ճանչուորներէն մէկուն որուն հետ սկսաւ խօսիլ։ Երբ խօսքը երկնցաւ, սանձը թողուց, ջորին ալ տանը դուռը բաց գտնելով, ներս մտաւ։ Հիւանդին խուցը, կ'ըսէ պատմութիւնը, բակին վրայ էր և կէս մը բաց թողուած էր, որպէս զի ներս օդ բանէր։ Կենդանին աչքին անդին նայելով, գուցէ ուտելու բան մը գտնելու համար, և բաց դուռը տեսնելով սանձովը և համետովը կը մտնէ հիւանդին խուցը, որ ոտքի ձայն լսելով և կարծելով թէ բժիշկն է, առանց աչքին դառնալու՝ թեւն անոր կ'երկնցնէ որպէս զի զննէ։ Ջորին առանց պատճառը գիտնալու՝ իր առջեւէն երկնցած թեւ մը տեսնելով ակռաներով դաստակէն (դնէն) կը բռնէ։ Հիւանդը սարսափած աչքին կը դառնայ, և ջորին տեսնելով՝ անկողնէն ցատկելով կ'իջնէ որ կենդանին դուրս ընէ, բայց սաստիկ ծիծաղելէն կոկորդին մէջի խաղաւարտը կը պատռի։



Այն միջոցին բժիշկը վրայ հասնելով կ'ուզէր ջորին մորակով (խարազանով) ծեծել. հիւանդը ձայն հանելով կ'ըսէ. «Այդ անասնոյն վնաս մ'ըներ, պարոն բժիշկ, այս դէպքը զարմանալի է. այդ ջորին ըռնտցուց այնպիսի հիւանդութիւն մը, որուն գուցէ արուեստը ճար մը պիտի չկրնար ընել. եթէ նորէն այսպիսի հիւանդութեան մը մէջ իյնամ, այդ ջորին ղրկէ, և դուն անձամբ ինծի գալու մի յոգնիր»։

Հեծնել, ելանել
Տեսնել, այց առնել
Ունեցող, որոյ էր
Երթալու տեղը, ուր դիմէր երթեալ էր
Ճանչուոր, ծանօթ
Երբ (խօսքը) երկնցաւ, յերկարել (բանիցն)
Մտնել (ներս), մտանել ի ներքս
Կէս մը, կիսով չափ
Որպէս զի ներս օդ բանէր, առ ի տալ մուտ օդոյն ի ներքս
Կենդանին, գրաստ
Գուցէ, թերեւս
Համեստ, նոմք
Խուց, խուց սենեակ
Ոտքի ձայն, ոտնաձայն
Կարծել, համարել
Աչքին, յայտնապէս
Թեւ, բազուկ
Երկնցունել, ձգել
Երկնցած, կարկառեալ
Բռնել, առնել

Ակռայ, ատամն
Սարսափած, զահի հարեալ
Ցատկելով իջնել, իջանել ընդոստ
Դուրս ընել, հանել արտաքս
Ծիծաղելէն, ի ծաղուէն
Կոկորդին մէջի, որ ի կոկորդին
Պատռել (խաղաւարտը), պատռել [ազն
Այն միջոցին, մինչ այս մինչ
Մորակ, խարազան
Ծեծել, հարկանել
Ձայն հանել, ձայն բառնալ
Վնաս ընել, առնել վնաս, կամ, մեղանչել
Դէպք, պատահար
Ըռընտցունել, բուժել
Ճար ընել, առնել դարման
Եթէ իյնամ, եթէ դէպ լիցի ինձ անկանել
Հիւանդութիւն, ախտ
Յոգնել, աշխատ լինել

---

## ԺԹ.

### ԹԱՂՈՒԱԾ ԳԱՆՁ ՄԸ

Կը պատմուի թէ երկրագործ մը որ աշխատութիւնը շատ կը յարգէր՝ ուզելով իր մահուանը մօտ գործքով ցուցնել իր որդւոյն թէ որչափ օգտակար է աշխատութիւնը. զանի կը կանչէ իր քով, և գաղտնիք մը յայտնելու պէս անոր կըսէ՝. « Տղաս, մեր արտին մէջ որ կը գործենք՝ թաղուած գանձ մը կայ, բայց թէ ո՛ր տեղն է՝ չեմ գիտեր »: Այս ըսելով՝ անոր խրատ կու տայ որ, առանց մէկուն յայտնելու ինք անձամբ փորէ արտը: « Այսպէս ընելով », կ'ըսէր, « անուղղելի պիտի գտնես գանձը »: Մարդը կը մեռնի, և որդին թաղուած գանձը գտնելու յուսով, կ'առնէ բահ և բրիչ, և շատ օրեր աշխատելով արտը ծայրէ ծայր կը փորէ, և գանձին չպատահելով՝ տրտմեալ և յուսահատ կ'երթայ:

Բայց երկիրն այնպէս գործուելով և ցանուելով, հունձքի ատենը կու տայ առատ բերք, զոր երիտասարդ երկրագործը ժողվելով և շտեմարաններու մէջ դնելով՝ շատ կը հարստանայ: Այն ատեն կը հասկնայ թէ հօրն ըսած գանձը նոյն ինք աշխատութիւնն էր.

Երկրագործ, հողագործ
Յարգել, պատուական համարել
Գործքով, արդեամբ
Ո՛րչափ, քանի՛ն
Յայտնելու պէս, որպէս թէ յայտնեցէ
Տղա'ս, ո՛րդեակ
Արտ, անդ
Գործել, մշակել
Ո՛ր տեղ, յորո՛ւմ վայրի
Յայտնել (մէկուն), ի վեր հանել (ումեք)
Ինք անձամբ, անձամբ անձին
Փորել, բրել
Ծայրէ ծայր, ծագէ ի ծագ
Պատահել, հանդիպել



Երթալ, գնալ
Տրտմեալ և յուսահատ, տրտմութեամբ և յուսահատեալ
Գործել (երկիրը), վարել
Ատենը, ի ժամանակի
Բերք, արդիւնք
Ժողվել, քաղել
Դնել (շտեմարանի մէջ), համբարել
Հարստանալ, մեծանալ
Շատ, յոյժ
Հասկնալ, ի միտ առնուլ
Հօրը ըսած գանձը, գանձն զոր ասէր հայրն

ՀԱՅԿ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная б...
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

# ՑԱՆԿ ԳԼԽՈՑ


ԴԱՍ Ա. Լեզու, քերականութիւն, մասունք բանի . . . 1
» Բ. Անուն և ածական . . . 3
» Գ. Բայ . . . 6
» Դ. Լուծում և յօդ . . . 9
» Ե. Տէր բայի և յօդ . . . 12
» Զ. Հոլովմունք անուանց . . . 16
» Է. Հոլովման մէջ ձայնաւոր գիրերու փոփոխութիւնը . . . 20
» Ը. Անկանոն հոլովմունք . . . 24
» Թ. Սեռական հոլով յատկացուցիչ . . . 25
» Ժ. Ածականներուն տեսակները . . . 30
» ԺԱ. Համաձայնութիւն ածականաց . . . 37
» ԺԲ. Դերանուն . . . 52
» ԺԳ. Ածական բայ, սեռի խնդիր . . . 58
» ԺԴ. Ա. լծորդութեան բայեր, շարադրութեան կարգ . . . 59
» ԺԵ. Բ. լծորդութեան բայեր, անորոշ հայցական բնութեան խնդիր . . . 66
» ԺԶ. Նախադրութիւն . . . 71
» ԺԷ. Գ. լծորդութեան բայեր, մակբայ . . . 76
» ԺԸ. Դ. լծորդութեան բայեր . . . 84
» ԺԹ. Ի, առ, նախադրութիւնք, բայանուն . 89
» Ի. Կրաւորական բայ, բացառական հոլով . 93
» ԻԱ. [illegible], նախադրութիւն, գործիական հոլով 103
» ԻԲ. Անկանոն կամ զարտուղի բայեր, բացառական մակբայ, առ, նախադրութեան ուրիշ գործածութիւնը, ց, նախդիր . 107
» ԻԳ. Անկանոն բայեր. ընդ և ըստ նախադրութիւնք . . . 116

ԴԱՍ ԻԴ. Անկանոն բայեր, տեղւոյ պարագայ ցուցընող նախադրութիւնք . . . . . . 125
» ԻԵ. Անկանոն բայեր . . . . . . . . . . . . 138
» ԻԶ. Զ, նախդրին այլ և այլ գործածութիւնները . . . . . . . . . . . . . . 141
» ԻԷ. Հայցական հոլով բնութեան խնդիր . . . 146
» ԻԸ. Հայցական հոլով բնութեան խնդիր. ի ձեռըն, հանդերձ, նախադրութիւնները . 149
» ԻԹ. Անցողական բայեր, Տամ բայով աներևոյթ . . . . . . . . . . . . . . 152
» Լ. Եմ բային քանի մը գործածութիւնները. Գոմ . . . . . . . . . . . . . . 157
» ԼԱ. Եմ բայն՝ «ունիմ» նշանակութեամբ . . . . 161
» ԼԲ. Շաղկապ . . . . . . . . . . . . . . 163
» ԼԳ. Ածականաց աստիճանները . . . . . . . . 167
» ԼԴ. Ածականաց խնդիրները . . . . . . . . 171
» ԼԵ. Ստորոգելի հայցական, և է նախդրիւ . . 174
» ԼԶ. Բացայայտիչ, կոչական . . . . . . . . 176
» ԼԷ. Միջարկութիւն . . . . . . . . . . . 180
» ԼԸ. Յարաբերական դերանուն . . . . . . . 182
» ԼԹ. Բաղադրեալ ժամանակներ, տէր բայի . . 190
» Խ. Դիմաւոր բայերը փոխել յանդէմ . . . . 196
» ԽԱ. Արմատ և ածանցեալ բառեր . . . . . . 201
» ԽԲ. Բարդ անուններ . . . . . . . . . . . 208
» ԽԳ. Բայանուն, բարդ բառեր . . . . . . . 210
» ԽԴ. Բարդ բառեր, բայանուն և մակբայ . . 217
Նախընթաց դասերուն վերաբերեալ խառն հրահանգներ . . . . . . . . . . . . . 219
Յովսէփ Գեղեցկին պատմութիւնը . . . . . . . 249
Այլ և այլ պատմութիւններ . . . . . . . . . 262
Ա. Շնիկ . . . . . . . . . . . . . . . . 262
Բ. Լաւ դրացիներ . . . . . . . . . . . . 263



Գ. Վարդի ծառը . . . . . . . . . . . . . . 264
Դ. Ընկուզի կեղևներ . . . . . . . . . . . 266
Ե. Սաւուղի էշերը . . . . . . . . . . . . 268
Զ. Յովսէփ կայսր . . . . . . . . . . . . 269
Է. Անցեալ մեծութիւն . . . . . . . . . . 270
Ը. Գողն ու խոզը . . . . . . . . . . . . 272
Թ. Երեսէ ինկած պաշտօնեան . . . . . . . 273
Ժ. Հայրենասիրութեան օրինակ մը . . . . . 275
ԺԱ. Աղեքսանդրիոյ փարոսը . . . . . . . . 277
ԺԲ. Դրօշ . . . . . . . . . . . . . . . . 278
ԺԳ. Սափրիչք . . . . . . . . . . . . . . 280
ԺԴ. Հանճարեղ խրատ մը . . . . . . . . . . 281
ԺԵ. Երկու բարեկամներ . . . . . . . . . . 283
ԺԶ. Գամ մը . . . . . . . . . . . . . . . 285
ԺԷ. Խոր ծերութիւն . . . . . . . . . . . 286
ԺԸ. Ձորի մը . . . . . . . . . . . . . . 288
ԺԹ. Թաղուած գանձ մը . . . . . . . . . . 290

2518
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0061462